

ՄԱՐՏԻ ԱՐՄԵ



891.995.  
6-91

S Z R U S



30 MAY 2011

891-995-

Հ-91

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

Կ.

Ա Բ Ա Զ Ի Ե  
Պ Ա Տ Վ Ո Մ Ն Ե Բ

1005  
39815

ՀՕԴԴ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԵԹ

495

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ց Ո Ւ Ն  
Ց Ե Ր Ե Վ Ա Ն 1935 Մ Ո Ս Կ Վ Ա



Պատ. Խմբ. Ս. ԱԱՐԳՈՅԱՆ  
Շապիկը՝ Հ. ՇԱՎԱՐՇ  
Սրբագրիչ՝ Ա. ԴԱՎԹՅԱՆ

ՅԱՅ. ԱՅԱՀԱՅ

## ԸՆԿԵՐ ՎԱԶԱԳԱՆ ՓՈՇՏՈՅԱՆԸ

Գարնանավերջի մի գեղեցիկ որ, կեսորից բավական անց,  
զնացքից կենինականի կայարան իջավ մի հետաքրքիր անձնա-  
վորություն։ Նա հաղիվ թե տասներկու տարեկան լիներ, բայց  
հազնվել եր այն քսանհինդ տարեկան մարդկանց պես, վորոնք  
ուղում են յերեսունհինդ տարեկան յերեալ։ Նրա անդրավարտիքի  
յերկար փողերն իջել եյին մինչև վոտքերի յերեսները, համարյա-  
մինչև լաքած կիսակոշիկները։ Յերեսում եյին նրա մետաքսե գուլ-  
պաները՝ սև ու սպիտակ մանրիկ քառակուսիներով։ Պինջակի  
տակից նա հագել եր ժիլեթ, իսկ զլսին դրել եր ամենավերջին  
մողայի կեպի։ Թե նրա վողջ կոստյումը և թե զլսարկը հաճելի  
մոխրագույն եյին։ Նույն գույնի յեր նաև նրա փողպատը՝ սա-  
կայն մանրիկ սև պուտերով։

Յերբ զնացքը նորից շարժվեց, նա դեռ կանգած եր կառամա-  
տույցի վրա, մի ձեռքում բռնած իրենից մեծ չեմողանը, իսկ  
մյուս թեփ վրա զցած իր կակասի գույնի նուրբ թիկնոցը։ Նա  
հետաքրքրությամբ նայում եր շուրջը։ Բատ յերեսույթին, կամ  
առաջին անգամն եր գտնվում այդ քաղաքում, կամ վերադարձել  
եր բավական յերկար բացակայությունից հետո։

Վոչ պակաս հետաքրքրությամբ, լնդհակառակը, ավելի մեծ  
հետաքրքրությամբ, նրան եյին նայում մարդիկ։ Նույնիսկ նրանք,  
ովքեր վորեն շտապ գործով անցնում եյին կառամատույցով, կանգ  
եյին առնում մի ըոպե, նայում, ժպառում և հեռանում զլուխներն  
որորելով։ Նրանց զլուխ որորելը կարելի յեր այսպես բացատրել։—  
ափսոս, վոր շտապ գործ ունենք, ապա թե վոչ արժեր մնալ ու  
տեսնել, թե մի և այս պստիկ պմնամոլը և ինչ պիտի անի մի  
քիչ հետո։



Իսկ պատվիկ պահամոլը, վորը բոլորովին չեր նկատում իւր շուրջը հավաքված և իրեն նայող բազմաթիվ մարդկանց, շարունակում եր նայել կայարանի նոր գաճած սպիտակ շենքին, մի քիչ այն կողմ դժուվող մյուս շենքերին, վորոնց լուսամուտներից շատերի ջարդուված ու յերեխ հրդեհից այրված շրջանակների փոխարեն նորերն եյին զցված, թեև գեռ առանց ապակիների: Նայում եր կոռպերատիվի փոքրիկ, տախտակե կրպակին, վորի ներսում կանգնած եր շատ չաղ մի մարդ հաստ բեխերով և ժպտացող աչքերով: Նրա առջեռում, դախիլ վրա շարված եյին հաց, կարագ, ծիրանով ու կեռասով միքը տաշտակներ, ապակիների յետեռում կախված եյին սպիտակ, հաստ մոմեր և վարդագույն բարակ մոմեր, վորոնց վրա կային վոլորապտույտ վոսկեգույն գծեր:

Ինչո՞ւ համար եր կանգնել ու նայում: Նա հո յերեխս չէր, վոր հետաքրքրվեր ինչ վոր գաճած պատով կամ նորովված շրջանակներով: Միենույն ժամանակ նա հո խուժան չէր, վոր թուքը կուլ տալու համար աչքը տնկեր հացին ու մրգերին: Հավաքվածներից վոչ վոք այդպես չեր ել յենթագրում: Բայց և այնպես, վոչ վոք չեր կարող ասել, թե ինչո՞ւ համար եր նա կանգնել ու նայում, փոխանակ քաղաք գնալու:

Հանկարծ կառամատույցով անցավ ծանրոցներով բարձած վաշգոնետկան: Տղան սթափվեց, ճանապահն ավեց նրան և նայելով շուրջը, նոր միայն նկատեց, վոր ինքը դարձել ե լողհանուր ուշադրության առարկա: Նկատեց և շիոթմունքը ծածկելու համար չեմողանը վար դնելով, գրպանից ծխախոտ հանեց: Հավաքվածներից մեկը, դանկանալով նրա հետ ծանոթություն հաստատել, արագ մոտեցավ և լուցկի վառեց: Տղան շնորհակալություն հայտնեց և իր հերթին նրան ծխախոտ առաջարկեց: Ապա ցույց տալով շրջապատը, հայտնեց.

— Շատ և փոխվել: Ճանաչելը դժվար է:

— Իսկ դուք վաղուց ե, վոր այստեղ չեք յեղել, հարցը մարդը՝ հասակակիցի հետ զրուցողի տոնով և իր ծիծաղը հազիվ զսպելով:

— Շատ բան իմանաս, շուտ կծերանաս, — խրատեց տղան ծուխը բերանից դուրս փչելով և չեմողանը գետնից բարձրացրեց: Հասներով կառաջար, նա մոտեցավ ամենազեղեցիկ ձիեր լժած և նոր ներկված կառքին, չեմողանը հրեց կառապանի վոտների տակ, ինքը նստեց փափուկ նստելատեղում և պլաշը ծնկների վրա դնելով կարգադրեց:

— Հյուրանոց:

Կառապանը, վոր զարմանքից գեռ նոր եր սթափվել և ափսոսում եր, վոր չշտապեց ողնել նրան՝ չեմողանը բարձրացնելու կամ կառք նստելու, արագ մտրակեց ձիերին և սանձերն ուժդին թափահարեց:

Կառքը ոլացավ: Հետաքրքրվողների բազմությունը մնաց յետեռում:

Հանդիպող մարդիկ նայում եյին անցնող կառքին և նկատելով նրա մեջ նստածին, ժպտալով ցույց եյին տալիս իրար ու բացականչում: Մի փողոցում նրանք նույնիսկ ուղեցին ինչ վոր բատրվակով կառքը կանգնեցնել, սակայն կառապանը բարկացած գոռաց նրանց վրա և ձիերին ուժեղ մտրակեց:

Հյուրանցում տղային ընդունեցին վոչ պակաս հետաքրքրությամբ: Իսկույն միջանցքում հավաքվեցին բոլոր ծառայողները և սկսեցին դիմել: Տղան, արդեն վարժված իր շռւթը ծավալվող զարմանքին, ուշադրություն չդարձրեց նրանց վրա և մոտեցավ հերթապահին:

— Ինձ համար տվեք:

— Համմար...

— Զլսեցիք:

— Ինչո՞ւ յեք բարկանում, — հարցը հերթապահնը և հյուրանցի մատյանը բաց արեց. — ևս ըսպեյիս...

Տղան նորից բաց արեց ծխախոտի տուփը: Թեև իր զրպանում լուցկի կար, բայց նա վերցը հերթապահի սեղանի վրա դրված լուցկին, անփույթ տոնով վառեց:

— Զեր անունազգանունը...

— Ընկեր Վաչագան Փոշտոյան, — ասաց տղան, լուցկու տուփը նորից սեղանի վրա դցելով:

— Ինչպես...

— Խուլ իս չեք. — ընկեր Վաչագան Փոշտոյան:

Հավաքվածները ժպտացին: Հերթապահնը մատյանում գրեց մի տող և նորից դիմեց նրան.

— Ապա, ձեր փաստաթուղթը տվեք, ընկեր Վաչագան Փոշտոյան...

Վաչագանն ուշադրություն չդարձրեց այն բանի վրա, վոր հերթապահը հատկապես շեշտեց «ընկեր» բառը: Պինջակի ներքին զրպանից հանեց փաստաթուղթը, հանձնեց:

— Ուրիշ վոչինչ, — ասաց հերթապահնը և դիմեց ծառայողներից մեկին, — տուր ութերորդ համարը:

Իսկ պստիկ պճնամոլը, վորը բոլորովին չեր նկատում իլր շուրջը հավաքված և իրեն նայող բազմաթիվ մարդկանց, շարունակում եր նայել կայարանի նոր գաճած սպիտակ շենքին, մի քիչ այն կողմ դանվող մյուս շենքերին, վորոնց լուսամուտներից շատերի ջարդութած ու յերեխ հրդեհից այրված շրջանակների փոխարեն նորերն եյին գցված, թեև գեռ առանց ապակիների: Նայում եր կոսպերատիվի փոքրիկ, տախտակե կրպակին, վորի ներսում կանգնած եր շատ չաղ մի մարդ հաստ բեխերով և ժպտացող աչքերով: Նրա առջեռում, դախլի վրա շարված եյին հաց, կարագ, ծիրանով ու կեռասով լիքը տաշտակներ, ապակիների յետեռում կախված եյին սպիտակ, հաստ մոմեր և վարդապուշն բարակ մոմեր, վորոնց վրա կային վոլորապտույտ վոսկեգույն գծեր:

Ինչու համար եր կանգնել ու նայում: Նա հո յերեխա չեր, վոր հետաքրքրվեր ինչ վոր գաճած պատով կամ նորոգված շրջանակներով: Միենալուն ժամանակ նա հո խուժան չեր, վոր թուքը կուլ տալու համար աչքը տնկեր հացին ու մրգերին: Հավաքվածներից վոչ վոք այդպես չեր ել յենթագրում: Բայց և այնպես, վոչ վոք չեր կարող ասել, թե ինչու համար եր նա կանգնել ու նայում, վոխանակ քաղաք գնալու:

Հանկարծ կառամատույցով անցավ ծանրոցներով բարձած վաշ գոնետկան: Տղան սթափվեց, ճանապարհ տվեց նրան և նայելով շուրջը, նոր միայն նկատեց, վոր ինքը դարձել ե ընդհանուր ուշադրության առարկա: Նկատեց և շփոթմունքը ծածկելու համար չեմոդանը վար դնելով, դրանից ծխախոտ հանեց: Հավաքվածներից մեկը, ցանկանալով նրա հետ ծանոթություն հաստատել, արագ մոտեցավ և լուցկի վառեց: Տղան շնորհակալություն հայտնեց և իր հերթին նրան ծխախոտ առաջարկեց: Ապա ցույց տալով շրջապատը, հայտնեց.

— Շատ ե փոխվել: Ճանաչելը դժվար է:

— Իսկ դուք վաղուց ե, վոր այստեղ չեք յեղել, — հարցը եց մարդը՝ հասակակիցի հետ զրուցողի տոնով և իր ծիծաղը հազիվ զսպելով:

— Շատ բան իմանաս, շուտ կծերանաս, — խրատեց տղան ծուխը բերանից դուրս փչելով և չեմոդանը գետնից բարձրացը: Համնելով կառաշար, նա մոտեցավ ամենագեղեցիկ ձիեր լծած և նոր ներկված կառքին, չեմոդանը հրեց կառապանի վոտների տակ, ինքը նստեց փափուկ նստելատեղում և պլաշը ծնկների վրա դնելով կարգագրեց:

— Հյուրանոց:

Կառապանը, վոր զարմանքից գեռ նոր եր սթափվել և ափսուսում եր, վոր շշտապեց ոգնել նրան՝ չեմոդանը բարձրացնելու կամ կտոք նստելու, արագ մտրակեց ձիերին և սանձերն ուժգին թափահարեց:

Կառքը ուղացավ: Հետաքրքրվողների բազմությունը մնաց յետեռում:

Հանդիպող մարդիկ նայում եյին անցնող կառքին և նկատելով նրա մեջ նստածին, ժպտալով ցույց եյին տալիս իրար ու բացականչում: Մի փողոցում նրանք նույնիսկ ուղեցին ինչ վոր բացարարվակով կառքը կանգնեցնել, սակայն կառապանը բարկացած գոռաց վրա և ձիերին ուժեղ մտրակեց:

Հյուրանոցում տղային ընդունեցին վոչ պակաս հետաքրքրությամբ: Խկույն միջանցքում հավաքվեցին բոլոր ծառայողները և սկսեցին դիմուլ: Տղան, արդեն վարժված իր շուրջը ծավալվող դարմանքին, ուշադրություն չդարձրեց նրանց վրա և մոտեցավ հերթապահին:

— Ինձ համար տվեք:

— Համամի...

— Չլսեցիք:

— Ինչու յեք բարկանում, — հարցը եց հերթապահը և հյուրանոցի մատյանը բաց արեց. — Ես բոպեյիս...

Տղան նորից բաց արեց ծխախոտի տուփը: Թեև իր գըպանում լուցկի կար, բայց նա վերցը եց հերթապահի սեղանի վրա դրված լուցկին, անփոյլթ տոնով վառեց:

— Զեր անուն-աղջանունը...

— Ընկեր Վաչագան Փոշտոյան, — ասաց տղան, լուցկու տուփը նորից սեղանի վրա դցելով:

— Ինչպես...

— Խուլ խո չեք. — ընկեր Վաչագան Փոշտոյան:

Հավաքվածները ժպտացին: Հերթապահը մատյանում գրեց մի տող և նորից դիմեց նրան.

— Ապա, ձեր փաստաթուղթը տվեք, ընկեր Վաչագան Փոշտոյան...

Վաչագանն ուշադրություն չդարձրեց այն բանի վրա, վոր հերթապահը հատկապես շեշտեց «ընկեր» բառը: Պինջակի ներքին գրպանից հանեց փաստաթուղթը, հանձնեց:

— Ուրիշ վոչինչ, — ասաց հերթապահը և դիմեց ծառայողներից մեկին, — տուր ութերորդ համարը:

Ծառայողը դեռ չեր շարժվել, յերբ հանկարծ հերթապահի մտքով  
ինչ փոր բան անցավ և նա ժպիտով դիմեց Վաչագանին.

— Իսկ դուք, ընկեր Վաչագան Փոշտոյան, կարնդ եք հենց  
հիմա փորոշ կանխավճար տալ...

Վաչագանը քմծիծաղ տվեց, ծխախոտի մնացորդը տարավ զցեց  
անկյունում դրված աղբարկղի մեջ, վերադարձավ, հանեց փո-  
ղամանը:

— Ստացեք ինդրեմ յերեք որվա համար սկզբից...

— Վոչ, վոչ — շտապեց հերթապահը իր ասածի համար, —  
եղբան հարկավոր չի...

— Ստացեք յերեք որվա համար... — կրկնեց Վաչագանը:

Ծառայողը վերցրեց նրա չեմոդանը և բանալիների խուրձը  
ձեռքում զնդղնդացնելով, սանդուզքով բարձրացավ վեր: Վաչա-  
գանը հետեւց նրան:

Յեվ հինգ բոսկ հետո, համարը հարդարելով և բարի դիշել  
մաղթելով ծառայողը դուրս գնաց: Վաչագանն անմիջապես հանեց  
իր գլխարկը, պինջակն ու ժիրեթը, քանդեց փողակառ և լվացվեց:  
Կասկածանքով նայեց մահճակալի գլխին զցված հյուրանոցային  
սրբիչի մաքրությանը, ապա չեմոդանը բաց անելով, հանեց իր  
սիփական սրբիչը: Սրբիչի յետելից, չեմոդանից դուրս պրծավ մի  
գեղեցիկ գունավոր կտորի ծայրը: Վաչագանը դուրս քաշեց այն:  
Ինը տարեկան աղջկա շրջապես եր, դեռ վրան կացրած վա-  
ճառքագնի ու գործարանանիշն թղթիկներով: Մոռանալով յերեսը  
ցամաքացնել, Վաչագանը վերցրեց այդ զգեստը, համբուրեց մի  
քանի անգամ և շնչաց.

— Աչիկ ջան, քույրիկ ջան...

## 2

### ՍԿԱՌԻՏ № 89-Ի ՀԱՅՐԵՆԻ ՔՈՒՄ

Վաղ առավոտյան, Վաչագանը միանգամից արթնացավ և  
տեսնելով, փոր լուսացել ե, արագ վեր թուավ անկողնից և սկսեց  
հագնվել: Հազնվելիս փորձեց հիշել, թե յերեկոյան փոր ժամին եր  
քնել, բայց չկարողացավ: Հիշեց, փոր մկանկել եր աչքերը բաց և  
անհամբերությամբ, չափազանց մեծ անհամբերությամբ սպասում  
եր առավոտյան: Իսկ այժմ, ահա արդեն առավոտ ե: Ինչքան  
լավ ե, փոր գիշերն այդպես շուտ անցավ և լույսը բացվեց: Յեվ  
այն ել ինչպիսի որ և սկսվում: — հրաշալի որ: Կարծես որն ինքն

ել և ուրախացել և ժպտում ե, վոր քիչ հետո Վաչագանը պետք ե  
հանդիպի իր քույրիկին...

Նա լվացվեց, արագ, բայց խնամքով սանրվեց և դուրս գալով,  
քայլերն ուղղեց գեղի Կաղաջի Պոստ: Նրա սիրտն ուժեղ բարա-  
քայլերն հուզմունքից այտերը կարմրել եյին և չնայած, վոր նա  
խում եր, հուզմունքով այտերը կարմրել եյին և չնայած, վոր նա  
իրեն ամեն կերպ մեծավարի յեր պահում, թվում եր, թե պատ-  
րաստվում ե լաց լինել...

Նա անցավ շուկայով, ուր դեռ խանութները փակ եյին և հաշ-  
մարյա վոչ վոք չկար: Հեռու մի փողոցում մի աքաղաղ բարձր  
ծղրտաց և նրան արձագանքեց մի այլ աքաղաղ՝ բոլորովին հա-  
կառակ կողմից և բոլորովին ուրիշ ձայնով:

Նա սկսեց ավելի ավելի արագ քայլել: Շուտով հասավ այն  
փայտե կամուրջին, վորի տակից հոսում եր փոքրիկ առուն: Դի-  
մացը կանգնած եր Կաղաջի Պոստի բարձրավանդակը:

Վաչագանը կանգ առավ և ձեռքը տարավ սրտին: Տեսնես վատ  
քան չի պատահել Սչիկին: Ախ, ինչքան լավ կլիներ, յեթե մի  
ծանոթ մարդ գար, հենց այս բոպեյիս Վաչագանին լուր հաղոր-  
դեր իր քրոջ մասին: Իսկ այսպես, առանց վորեւ բան իմանալու,  
նա վախենում և մտնել Կաղաջի Պոստ...

Նա մտածկոտ կերպով նայեց կամուրջին և հանկարծ նրա  
աշքերն արցունքով լցվեցին: Ախը դա ծանոթ կամուրջ ե, դա  
Վաչագանի ընկեր կամուրջն ե, համարյա նրա նախկին բնակա-  
բանը: Նա ինչքան ե քնել դրա տակ... Նրա բոլոր ընկերները  
քնում եյին քաղաքի մեջ գտնվող քարե կամուրջների տակ կամ  
խուժանանոցում, իսկ ինքը մեն-մենակ դալիս եր և այդտեղ գի-  
շերում, վոր մոտ լինի Սչիկին: Շատ անգամ, յերբ կես գիշերին  
հանկարծ արթնանում եր, նա վախենում եր մենակությունից և  
այն ծանծաղ ջրի խցոցից, վորը հոսում եր իր կողքով սև գույն  
առած... Այդպիսի բոպեներին նա մտքում խոսում եր Սչիկի հետ,  
գրանով կամաց-կամաց մոռանում եր, թե ուր և գտնվում և  
նույնիսկ տաքանում եր: Իսկ հետո՝ անհամատելի կերպով քնում  
եր նորից և այս անգամ արգեն՝ մինչեւ լուսաբաց...

Վաչագանը մտերմությամբ շոյեց կամուրջի փայտե կողը և  
մտածեց: — տեսնես հիմա ինչպես ե նրա տակը: Նա արագ շուրջը  
նայեց և իջավ ջրափ: Ախ, ինչքան լավ և հիշում ամեն ինչ: Անա  
այն փոսը կամուրջի քարե հիմքի մեջ, ուր նա դնում եր իր հետ  
քերած հացի կտորտանքը: Ահա և այն տեղը, ուր սովորաբար  
քնում եր: Բայց միթե նա յերբեք քնել և այդտեղ: Այս,

ի հարկե քնել ե: Մի կտոր փալաս ուներ, վոր զցում եր տակը: Սպասիր... Ախը նա փալասը հենց այդտեղ ել պահում եր, վոր մյուս խուժանները չգողանային...»

Վաշագանը նայեց վերև: Գերաններն ու տախտակներն այնտեղ խոնավ եյին և սպիտակ մամուռով տեղտեղ պատած: Ահա այդտեղ եր պահում իր փալասը:

Նա նույնիսկ բարձրացավ մի քարի վրա և սկսեց ուշադրությամբ նայել, թե չի մնացել արդյոք փալասն այնտեղ, վորին խորշում: Փալասն իհարկե չկար, բայց դրա փոխարեն, հանկարծ նկատվեց մի ուրիշ բան, վորը կարծես կայծակի նման խփեց: Վաշագանին: Այնտեղ, խոնավ տախտակներից մեկի վրա, սպիտակ մամուռով կիսով չափ պատած, դեռ կարդացվում եր դահակով փորագրված Աչիկ բառը: Վաշագանը վայրէկյանապես հիշեց, թե ինքն ինչի համար եր յեկել, աբագ վար ցատկեց քարից և վագելով բարձրացավ ճանապարհի վրա:

Նա արդեն կամուրջը յետեն եր թսղել, յերբ հանկարծ մտածեց, վոր լավ չի, յերբ մարդու անունը գրված ե լինում այդպիսի մութ ու խոնավ տեղում, մանավանդ Աչիկի անունը, վորն այնքան շատ արև եր սիրում ու լույս: Ախը նա փոքրիկ ե, կարող ե մրսել, կամ հիվանդանալ: Նա ուղեց յետ դառնալ, քերել քըջ անունն այնտեղից, նույնիսկ ձեռքը տարավ դեպի գրպանը և շոշափեց իր ֆիննական դանակը՝ կաշվե պատյանով, բայց հետո միտքը փոխեց: Նա այդ կըերի մի ուրիշ անդամ, իսկ հիմա հարկավոր ե գնալ Աչիկին տեսնելու... Հարկավոր ե անմիջապես գնալ Մորուքի մոտ և ասել. — Ընկեր վորբանոցների լնդհանուր կառավարիչ. տվեք իմ քույրիկիս, շնորհակալ եմ, ինչքան պահեցիք ու ծնծեցիք...

Ամբողջ Կաղաչի Պոստը միանգամից կանդնեց նրա աչքի առաջ: Հին փշալարերը, վորոնցով ցանկապատված եր Կաղաչի Պոստի այդ մասը, դեռ կանգնած եյին՝ ժանգոտ ու համառ, բայց ճանապարհի վրա այլևս չկար պահակ սկառուտը:

Վաշագանը զարմացավ: Դլսավոր պոստն առանց պահակի:

Նա թեքվեց դեպի աջ, վորովհետեւ իր քըջ վորբանոցը գտնվում եր Կաղաչի Պոստի արևմտյան կողմում, դեռսկառուտանոցին չհասած: Քայլեց փշալարի մոտով, շաբունակ նայելով դեպի վորբանոցները: Սակայն զարմանալի կերպով վոչ վոր չեր յերեսում, չնայած այդ ժամերին փոքրիկ վորբուհիները սովորաբար խաղ եյին անում կանաչների մեջ կամ վորբանոցների նեղիկի մայթերի վրա:

Ահա և Աչիկենց վարբանոցը... Մի զինվորական, կտրուկ քայլերով անցավ շենքի մոտով, զնզգնդացնելով իր սապագների կրունկներին ամբացած շպորները: Ուրիշ վոչ վոր չեր յերեսում, բացարձակապես վոչ վորք:

Նա մոտեցավ սկառուտանոցին: Շենքի առջևի յերկաթե ձողի վրա նա չտեսավ պահակող վորեւ չոկատի դրոշակը: Միթե սկառուտներն այլևս պահակի չեն կանգնում: Ահա նըանք մարտ սկառուտներն անում: Ինչքան են մեծացել — բոլորն ել մեծ են: Ահա դանք են անում: Ինչքան են մեծացել բոլորն ել յերկար անդրավոչ նա չեն: Իսկ այս բնչ բան ե. — բոլորն ել յերկար անդրավոչ նա չեն: Իսկ ինքը մի անդամ նամակ տվեց՝ Աչիկին հանձնելու... Վոչ նա չեն: Իսկ այս բնչ բան ե. — բոլորն ել յերկար անդրավոչ վոչ նա չեն: Իսկ այս բնչ բան են հագնում: Ելլի փողկապ կապթում են: Իսկ զլխարկները... Միթե նորից շուռ տված նավակի ձեռվ զլխարկներ են դնում: Ամսոս, վոր բոլորն ել զլխարաց են ու տակի շապիկով և վոչինչ չի կարելի յեղբակացնելու...

Նորից անցավ մի զինվորական, ապա յերկու կարմիր բանակայիններ յեկան և մտան սկառուտանոց: Մարզանք անողները նկատեցին Վաշագանին և հետաքրքրված մոտեցան: Մոտեցան նաև մի քանի կարմիր բանակայիններ:

— Բարեւ ձեզ, սկառուտներ, — վստահ ձայնով վողջունեց Վաշագանը: — Կարելի՞ յետեսնել ձեր սկառուտապետին:

— Ի՞նչ սկառուտ, ի՞նչ սկառուտապետ, — զարմացած հարցը եց մեկը: — Դու ում ես ուղում...

— Իսկ դուք ովքի՞ր եք, — իր հերթին հարցը եց Վաշագանը:

▼ — Մենք կարմիր բանակայիններ ենք: Սկառուտները շատ վաղուց են չքացել եստեղից:

Վաշագանը մոլորված նայեց նրանց յերեսին:

— Ախը յես ուզում եմ քըջ վարբանոցից դուրս հանել, — մըմնջաց նա: — Ո՞ւմ պիտի դիմեմ...

— Ահա, — յեղբակացը մի կարմիր բանակային, — հասկացաւ յերեսույթին՝ դու վաղուց ե, վոր եստեղ չես յեղել: Շատ բան ե փոխվել փոքրիկ: Եստեղ այլևս վորբեր չկան: Եստեղ հիմի մենք ենք ապրում...

— Վորբեր չկան...

Կարծես Վաշագանի սիրաը կանգ առավ: Քիչ մնաց, վոր նաւաց լինելու: Զոսով թուքը կուլ տվեց և հարցը եց.

— Իսկ ուր են գնացել...

— Նրանք տեղափոխվել են քաղաք: Նրանք հիմի ապրում են պետական մանկատներում:

— Մի լաց լինիր, փոքրիկ, — դիմեց մեկը նրան, տեսնելով, վոր նա ծովում և քիթն ու շվթունքները և թարթում և աչքերը: — Ինչու յես լաց լինում, կոտնես քրոջ:

Վաչագանը վիրավորվեց, վոր յերկրորդ անգամ իրեն փոքրիկ անվանեցին, բայց զսպեց ինքնիրեն, ծխախոտ հանեց և մի հատ վերցնելուց հետո առաջարկեց նաև հավաքվածներին:

— Ե՛, եդ չեղավ, փոքրիկ, — նեղացավ նրանցից մեկը, — դու դեռ յերեխա յես, բայց արդեն ծխում ես:

— Դու ես յերեխան, — վիրավորվեց Վաչագանը. — Ալ վերցնող չկա: Ծիեցեք, լավ ծխախոտ ե:

Նա տուփը դրեց գրպանը, լուցի վառեց և մեկ առ մեկ մոտեցրեց բոլորին: Վերջում վառեց նաև իր ծխախոտը և ծխի հետ միասին մի խոր հառաջանք դուրս թողնելով, հարցրեց.

— Բոլոր վորբերին են տեղափոխել.

— Բոլորին:

— Խո ուրիշ քաղաք չե՞ն տեղափոխել, — նորից հարցրեց նա:

— Վորքան գիտենք՝ վոչ, — պատասխանեցին կարմիր բանակայինները:

— Դե լավ, մնաք բարով և շնորհակալություն, — ասաց Վաչագանը և շատապ հեռացավ: Հասնելով զարիվայրի ծայրին, նա ծխախոտը նետեց, նստեց հողի վրա և հոնդուր-հոնդուր լաց չեղավ:

Փոքրիկ պճամոլից վոչինչ չմնաց: Նա նորից դարձավ նախկին յերեխան, — խուժան Վաչիկը...

### 3

## ՅԵՐԵՔ ՀԱՐՑՈՒՐ ԱՉԻԿ

Քիչ հետո, նա ժպտաց իր թուլության վրա, ինքնիրենից ամաչելով սրբեց արցունքները և մտավ քաղաք: Հարկավոր և դորձնել և վոչ թե նստել ու յերեխայի նման լաց լինել:

Նա մոտեցավ մի միլիցիոների և հարցրեց վորբանոցների գրասենյակի հասցեն: Միլիցիոներն իհարկե կարող եր իսկույն հաղորդել, բայց յերեկ ուղում եր մի քիչ զրուցել այդ մեծավարի հաղնված տղայի հետ, ուստի և, սկսեց մտածել՝ իր թե

վերհիշելու համար, ապա լանգին չվերաբերող հարցեր տվեց: Վաչիկը բարկացած կերպով հիշեցրեց նրան, վոր պոստի վրա չի թույլատրվում այդքան յերկար խոսել Զգաստացած միլիցիոներն իսկույն տվեց հասցեն և շփոթված մի կողմ անցավ:

Գրասենյակը գտնվում եր վոչ այնքան հեռու: Վաչիկն շտամքայլ երով հասավ այնտեղ, մոտավ:

Տափնապղը սրտում, նա մոտեցավ մի ոլատահական սեղանի.

— Յես ուղում եմ վորբանոցից իմ քրոջս... — սկսեց նա:

— Զորբորդ սեղան, — ասաց մարդը:

Զորբորդ սեղանի առջև հերթ եյին կանգնել մոտ քսան տղամարդ ու կին: Նրանք նույնպես յեկել եյին՝ մանկատներից մարդ ու կին: Յերեխ նույնպես յեկել եյին կամ իրենց մեռած բարեկամների յերեխենց յերեխաներին կամ իրենց մեռած բարեկամների յերեխենց հանելու: Յեվ բոլորն ել ուրախ եյին, չափազանց ուրախ:

Յերթ հերթը հասավ Վաչիկին, ծառայողը շարունակելով աբագարակ գրեթե վիմեց նըան.

— Զեր ի՞նչն ե:

— Քույլը:

Վկայական ունեք:

— Զե:

— Պահելու հնարավորություն ունեք:

— Այս:

— Իսկ այդ բանին վերաբերող փաստաթղթեր ունեք:

— Ինչի՞ մասին... — հարցը չհասկացավ Վաչիկը:  
Ծառայողը նայեց նրան և կարծես նոր միայն նկատեց նըանչափահաս լինելը:

— Ասում եմ՝ կարմաղ ես քույլիկիդ պահել, ծնողներ ունես:

— Զունեմ: Յես ինքս կպահեմ, — ասաց Վաչիկը և քիթը ցցեց:

— Անուն-ազգանունը...

— Աչիկ:

— Դա անունը: Իսկ աղքանունը:

Նոր միայն Վաչիկը հիշեց, վոր ինքը չդիմել իր քրոջ աղքանունը և յերբեք ել չել իմացել... Ծառայողը տեսնելով նրա դանակաղելը, զարմացած հարցրեց:

— Ի՞նչ ե, քրոջդ աղքանունը չդիմես:

— Զգիտեմ... — մըմնաց նա:

— Ինչպես թե չզիմես: Զլինի՞ նա քո իսկական քույլը չե: Գու ինքդ աղքանունը չունես:

— Աչիկն իմ հարազատ քույրս ե, — բացատրեց տղան կառըրված ձայնով: — Բայց ախր նրան վոր վորբանոց են ընդունել, նա իր աղքանունը չի իմացել: Իսկ իմ աղքանունս Փոշտոյան ե: Յես առաջ խուժան եյի: Մեր խուժանալետ Զովուռ Անիկն եր ինձ եղ աղքանունը դրել, վոր ջոկի ուրիշ Վաչիկներից:

Ծառայողը, վորն ըստ յերևույթին ելի յեր առիթ ունեցել առանց աղքանունի յերեխաներ փնտրելու, հոգնած հառաջանքով վերցրեց իր կողքին, հենց գեանի վրա դարսված հսկայական մատյաններից մեկը և բաց արեց:

— Վայ վորբանոցումն եր քույրդ:

— Կաղաչի Պոստում:

— Իսկ վայ վորբանոցում, փոքրիկ:

— Կաղաչի Պոստում, — բարկացավ Վաչիկը, ըստ յերևույթին նորից վիրավորվելով «Փոքրիկ» բառից:

— Ախ, — դու վորբանոցն ել չգիտես, — անքաց ծառայողը և մի այլ մատյան վերցրեց. — Իսկ Աչիկ նրա իսկակմն անունն եր, թե դա յել են վորբանոցում դրել:

Այստեղ Վաչիկն դդաց, վոր հարցը վիրաբերում ե իր քրոջը դժունելուն կամ չգտնելուն և կենարոնանալով սկսեց մտածել բարվական յերկար: Հետո աղերսող աշքերը հառեց ծառայողի յերեսին.

— Բնկեր... Յես դեռ շատ մեծ չեմ... Տասներկու տարեկան եմ... Շատ քիչ բան ե միտքս գալիս... Բայց հիշում եմ, վոր յես նրան միշտ Աչիկ եյի ասում...

— Իսկ ճնողներդ ինչ եյին ասում:

— Յես ճնողներիս չեմ հիշում:

Ծառայողը մատյանը բացեց, մատը թղթի վրա սահեցնելով ինչ վոր բան հաշվեց, ապա շուրս տվեց, նորից հաշվեց և տեղից վեր կենալով, մատյանը մոտեցրեց Վաչիկին:

— Նայիր, փոքրիկ ջան, այստեղ մոտ յերեք հարյուր Աչիկ կա: Դրանցից վայրն ե քույրդ: Ում անունն Աչիկ ե՝ Աչիկ են դրել: Ով վոր անուն չի ունեցել կամ ունեցածը չի հիշել՝ նրան ել են Աչիկ դրել: Յես հիմա ի՞նչ անեմ...

Վաչիկը նայեց նրան և զդաց, վոր նա անկեղծ կերպով ցավակցում եր իրեն: Նույնիսկ ուշադրություն դարձրեց այն բանի վրա, վոր նա մոտ քառասուն տարեկան մարդ եր, բարի բժիշկով:

— Հիմի նրանք մուր են, — հարցրեց Վաչիկը, ջղաձգաբար կեղին ձեռքում խաղացնելով:

— Ով իմանա, վիոքրիկ: Քաղաքում աղջիկների տասչորս մանկատուն կա: Ամեն մեկումն ել ինչքան ուզես Աչիկա կա:

Հանկարծ Վաչիկի դեմքը պայծառացավ հույսի մի շողից և նա հուզված ձայնով հարցրեց:

— Ուրեմն կաղաչի Պոստի բոլոր Աչիկները քաղաքի վորբանոցներումն են...

— Այս:

— Բնկեր ջան, հոգուդ մատաղ, ճիշտն ասա, — հանկարծ սկսեց խնդրել Վաչիկը, մոռանալով իր մեծավարի տոնը, — վոչ մեկին ուրիշ քաղաք չեն տարել:

— Վոչ մեկին: Յես դա հաստատ գիտեմ:

— Ուրեմն յես կգտնեմ, — ասաց Վաչիկը վստահ տոնով:

Ծառայողը թղթի կտորի վրա արտաքրեց աղջիկների տասնեւորս մանկատների հասցեն, նույնիսկ տղաների տասնմեկ մանկատների հասցեն և տվեց նրան:

— Շնորհակալություն, — ասաց Վաչիկը և դուրս յելավ:

#### 4

### ՄԱՆԿԱՏՆԵՐՈՒՄ

Վաչիկը մոտեցավ մանկատան, կանաչ ներկված յերկաթաճակ դարպասին: Ուզում եր մտնել, բայց հանկարծ մեկը ձայն տվեց.

— Ուր, բալա ջան:

Մի ծերունի յեր — զննապանը: Նստած իր տախտակե չներկված բուղկայում, չիբուխ եր ծխում:

Վաչիկը բացաբարեց:

— Ճաշաբանումն են, գնա ճաշաբան, — հաղորդեց ծերունին և ցույց տվեց աջակողմյան պատը:

Յերբ Վաչիկը մտավ ճաշաբան, անմիջապես չքացավ այն դատարկության և տիսրություն տպավորությունը, վոր նա ստացել եր բակից: Զուգահեռ դրված յերկու շատ յերկար սեղանների շուրջը նստոտած, ուրախ, բայց կամացուկ ձայնով խոսակցելով ճաշում եյին մոտ յերկու հարյուր աղջիկները: Առաջին բանը, վոր զարմացրեց Վաչիկին, դա նրանց հագուստներն եյին: Նրա հիշության մեջ բոլոր փորբուհիները մնացել եյին իրենց միանման, մոխրագույն հագուստներով: Իսկ այժմ, նրանք նստած եյին գույնդույն թիթեռների նման, տարբեր գույնների, տարբեր ձեղբերի, հասարակի, բայց դուրեկան զգեստներով: Փոքրահասակ աղջիկին էր մատյանը, ինչ ուստի այս պատճենը համար առաջ էր առաջական գույնդույնը:

Յիկների գլուխներն այլևս ածիլված չեին և չունեյին քոսի զըշ-  
վանք պատճառող սպիներ: Նրանց մե ու շադանակագույն խո-  
պոպներն որորվում եյին գառան բոժոժների պես: Վաչիկն աչ-  
քերը հառեց դեպի այն սեղանը, վորի շուրջը հենց այդ փոքրա-  
հասակներն եյին նստուած: Բոլորը դանդաղեցնելով իրենց գդալ-  
ների աշխատանքը, նայեցին դեպի նա:

Նույն ըովեյին, մի ջահել կին, — ըստ յերեսույթին մանկա-  
տան կառավարչուհին, վեր կացավ և մոտեցավ նրան:

— Ի՞նչ ես ուղում, տղա ջան, — ասաց նա: Նա միայն այդ-  
քանն ասաց, բայց այնքան մտերիմ, այնքան գորովալից կերպով  
արտասանեց տղա ջան՝ բառերը, վոր քիչ մնաց Վաչիկը փաթաթ-  
վեր նրա վզովը, կարծես իսկապես նրա տղան լիներ: Մի վայր-  
կյանում նա իրեն այնքան մտերիմ զգաց նրա հետ, այնքան հին  
ծանոթ թվաց կինն իրեն, վոր նա մոռացավ վորեն բան կարգին  
բացատրելը և պարզապես հարցրեց.

— Մեր Աչիկն եստեղ չի:

— Ո՞վ ե ձեր Աչիկը, — անուշ ժպտաց կառավարչուհին:

Այս բնական հարցն սթափեցրեց Վաչիկին: Նա սրտի ցալով  
տեսավ, վոր նա իր քրոջը չգիտեր և չեր ել կարող դիտենալ: Նրա  
սիրտը լցվեց դառնությամբ և նա սկսեց մեկ առ մեկ բացատրել  
իր գալու պատճառը: Կառավարչուհին լսեց, և զլուխն սրուեց.

— Մեղ մոտ կան մի քանի Աչիկներ, բայց նրանք բոլորն ել  
Սկերսկի վորբանոցներից են: Կազաչի Պոստից միայն մի Աչիկ  
կա, այն ել ատանհինդ տարեկան ե: — Աչիկ, — բղավեց նա և մա-  
տով կանչեց իրեն նայող մի քանի աղջիկներից մեկին: — Սա չի  
քու քույրդ, բայլիկ:

— Չե... — կոտրված ձայնով հայտնեց տղան:

Աչիկը ձեռքերն անցկացրեց կառավարչուհու թեր մեջ և  
գլուխը հենց նրա ուսին:

— Ի՞նչ ե ուղում, ընկեր վարսենիկ:

— Քրոջն ե վնարում: Կազաչի Պոստից, իննը տարեկան: Չես  
ձանաչի...

— Իննը տարեկան, — հարցրեց Աչիկը մտածելով և միւսույն  
ժամանակ գլուխը բացասարար որորելով: Ըստ յերեսույթին, նա  
այդ տարիքի վոչ մի աղջկա չեր ձանաչում: Վաչիկը հառաչեց,  
շնորհակալություն հայտնեց ու դուրս յելավ: Դան մոտ նա  
գրպանից հանեց թուղթը, մատիտով նշան արեց մանկատան հաս-  
ցելի կողքին, կարդաց հետեւալի հասցեն և գնաց այնտեղ: Այս

մանկատանն ապրում եյին բացառապես տասչորսից մինչեւ տասն-  
եինն տարեկան աղջիկներ: Վաչիկը միայն մի քանի ըոպե մնաց  
այնտեղ, այն ել՝ կառավարչուհու հարցերին պատասխանելու հա-  
մար և դուրս յելավ: Կառավարչուհին, վոր հիսունն անց մի կին  
եր՝ ակնոցներով և չաղ դեմքով, լսելով Վաչիկի պատմությունը,  
նրան հարց տվեց.

— Իսկ այս քաղաքից հեռանալուցդ հետո ուր եյիր գնացել և  
ի՞նչ եյիր անում: Ուզում եմ ասել՝ ի՞նչ կերպ կարողացար պայ-  
մաններ ստեղծել, վոր քրոջը ուղում ես մանկատնից հանել:

Վաչիկն առանց շփոթվելու և կակազելու, անդիր արած դասի  
նման, սկսեց պատմել, վոր ինքը գնացել եր հեռու քաղաքներ՝  
թուժանությունը շարունակելու, բայց այնտեղ նրան գտել եր իր  
հորյեղբայրը և պահել: Հետո, յերբ նա մեռել եր, իր բոլոր փո-  
ղերը կտակել եր Վաչիկին: Վաչիկն այժմ ուղում ե այդ փողերով  
քաղաքում բնակարան վարձել իր և իր քրոջ համար, հետո մտնել  
ծառայության: Այս, ծառայության մտնել: Ճիշտն ասած՝ հորյեղ-  
բոր կտակած փողերն այնքան ել շատ չեն. իսկ Վաչիկը կարող ե  
հիանալի կերպով գրքեր կազմել ինչու չծառայի...

Մի այլ մանկատնում, Վաչիկի հետ պատահեց տարօրինակ մի  
դեպք: Հաղիկ եր նա ներս մտել բակ, յերբ հանկարծ տեսավ մի  
աղջկա, վորն արագ ներս մտավ ինչ վոր դռնից: Վաչիկին թվաց,  
թե նա իր քսոյրն եր: Գլուխը պատվեց, ծնկները թուլացան, նա  
զգաց, վոր յեթե, որինակ, ուղենա վորեն բան բղավել, չպիտի կա-  
րողանա: Աղջկա յետեկից՝ ինքն ել նետվեց ներս: Դուրս յեկավ,  
վոր դա մանկատան ընթերցարանն եր: Բաղմաթիկ աղջիկներ  
նստոտած՝ դասերն եյին սովորում: Վաչիկն իսկույն գտավ իր  
ուղած աղջկան և դառը կերպով հիանթափկեց: Վոչ, նա իր քույրը  
չեր, նույնիսկ նման ել չեր նրան...

Բոլոր մանկատներում, ուր նա կարողացավ լինել մինչեւ  
մութն ընկնելը, անձամբ տեսավ բոլոր տաս տարեկանից փոքր  
աղջիկներին, բայց վոչ մի տեղ չկարողացավ հանդիպել իր  
քրոջը:

Յերբ մութն ընկավ, նա զգաց, վոր սարսափելի սոված ե: Ամ-  
բողջ որը վոչինչ չեր կերել: Մտավ մի փոքրիկ ճաշարան և ընթ-  
րիք պահանջեց: Ուտելիս, զրպանից հասցեների թերթը:  
Նա արդեն յեղել եր վեց մանկատնում, սակայն առանց արդյունքի:  
Բայց վորքան լավ ե, վոր դեռ մասցել և ութը մանկատուն: Կա-  
րելք չկա հուսահատվելու: Խո բոլոր տեղերումն ել Աչիկը չեր լի-



Նելու: Նա պիտի լինի միայն մի մանկատնում, իսկ դա գուցե ամենավերջինն ե...

Նա ընդհատեց ուտելը, դանդաղ կռւլ տվեց բերանի պատառը և սկսեց մտածել: Յերեմի Աչիկը հիմի իրեն շատ լավ և զգում, վարովինետե այս մանկատները բոլորովին նման չեն հին վորբանոցների: Անշուշտ այստեղ վորբուհիներին չեն ծեծում, նրանց նույնիսկ վորք ել չեն անվանում, այլ սան: Վաչիկը տեսավ, վոր նրանք լավ ճաշեր եյին ուտում, մեծ ափսեներով, լիքը-լիքը... Իսկ ինչպիսի լավ կառավարչուհիներ կային... Նրանցից մեկն ուղղակի մայրիկ եր, ուղղակի մայրիկ:

Ընթրելուց հետո Վաչիկը կարողացավ լինել ևս յերկու մանկատնում և հույսերով լի՝ գնաց հյուրանոց քնելու:

## 5

### ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Հետեյալ որը Վաչիկն արթնացավ շատ վատ տրամադրությամբ. պատճառն այն խառնիխուռը և վատ յերազներն եյին, վորոնք ամբողջ գիշեր հանդիստ չեյին տվել նրան: Յեկ կարծես դիտմամբ, նրա վատ տրամադրությունն ավելի խորացնելու համար՝ որն ամպամած եր և մասյլ: Նա շտապ վեր կացավ և նախորդ որվա նման, առանց վորեն բան ուտելու, գնաց իր փընտըումները շարունակելու:

Դուրս յելնելով փողոց, նա զարմացավ, վոր խանութները փակ եյին: Միթե այդքան շուտ եր... Բայց հետո հանկարծ հիշեց, վոր որը կիրակի յեր:

Նա մոտեցավ մանկատներից մեկին, նախապես համոզված լինելով, վոր միենույն ե, Աչիկին չպիտի գտնի: Կոտրված սրտով մտավ բակ և խկույն նրա աչքի առջև բացվեց մի անհասկանալի տեսարան. — մոտ չորս հարյուր պատկոմուհիներ, թեթև չուստեր ու կարճ գուլպաներ հագած, կարմիր փողկապներ կազմած, շարքային մարդանք եյին կատարում: Նրանց հրահանգում եր մի պատկոմուհի սուլիչը բերանին: Վոչ մի վորբուհի չեր յերեռում: Վաչիկն զգաց, վոր սիսալ տեղ և մտել և շտապեց յետ դառնալ: Բայց այդտեղ մեկը նրան ձայն տվեց.

- Ո՞ւմ եյիր ուղում, յերիտասարդ...
- Ութերորդ վորբանոցը: Վրատեղ ե:
- Սա յե:

— Սա յե, — զարմացավ Վաչիկը: — Բա վորբուհիներն ուր են: Մարդը նույնպես զարմացավ և հարցրեց.

- Բա սրանք ի՞նչ են:
- Մրանք... Պատկամները...
- Դրանք են մեր սաները: Դու ում ես ուղում, յերիտասարդ:
- Մարդը մոտեցավ: Լսելով Վաչիկի լինդիրը, նա բացասարար գլուխն որպես:
- Այստեղ Կաղաչի Պոստից յեկած իննը տարեկան Աչիկ չկա... .

Նույն բոպեյին, ոգտվելով հանգստի կարճատե դադարից, շարքերից դուրս պրծավ մի վեց-յոթ տարեկան աղջիկ և վազ տվեց դեպի Վաչիկը:

- Յես քեզ ճանաչում եմ, — ժպտաց նա: — բարե քեզ:
- Վրատեղից ես ճանաչում, — լարվեց Վաչիկը:
- Կաղաչի Պոստից, — ժպտաց յերեխան: — Դու են խուժանը չես, վոր մի անդամ ծիրան բերեցիր քրոջդ համար ու ինձ ել տվեցիր: Դու ուղում եյիր խոսել Աչիկի հետ, բայց տիկին դաստիարակչուհին յեկավ, մենք փախանք... Տիկին դաստիարակչուհին մեզ բռնեց, ծեծեց, ծիրանհերը թափեց: Դու քարով խփեցիր տիկին դաստիարակչուհու վոտքին, փախար:

- Բա Աչիկը վրատեղ ե, — շնչակտուր հարցրեց Վաչիկը:
- Զգիտեմ, — ժպտաց աղջիկը հանցավորի պես, վոր չի կարող նրա քրոջ տեղն ասել:

- Վրա վնկերուհիներից ում եյիր ճանաչում, — վորձեց այդ կերպ վորենե բան իմանալ կառավարիչը:
- Յես մենակ մեր վորբանոցի աղջիկներին եյի ճանաչում: Վաչիկը, վորի սրտում դեռ շողում եր հույսի նշույլը, ամեն կերպ ուղում եր վորենե բան, գոյն վորենե փոքր բան ևս իմանալ, քանի վոր վերջիվերջո դտել եր կծիկի ծայրը: Նա մտածեց մի քիչ և ապա հարցրեց.

- Իսկ ձեր վորբանոցից ել ով եր ճանաչում մեր Աչիկին:
- Ել վոչ վոք:

Կառավարիչը հուսահատված ձեռքը թափահարեց: Վաչիկը դեռ մի քանի բոպե շարունակեց հարց ու փոքր անել, ապա տեսնելով,

վոր վոչինչ դուրս չի գալիս, նույնպես թողեց: Այս անգամ նա  
ավելի հուսահատվեց, քան առաջ: Նրա շրթունքները դողդողացին  
և նա կես դիմելով կառավարչին, կես ինքնիրեն, ասաց.

— Իդուր բան ե... Ավելի լավ ե՝ գնամ զրասենյակ, հարցնեմ  
թե իո՞ չի մեռել..

— Հենց ցախս այն ե, վոր վոչ մեռածների անուններն են  
պահել նախկին վարբանոցների կառավարիչները, վոչ ել փախած  
ների: — Առա ավելացրեց: — Միւնույն ե, դու մեռածների մեջ  
ել չեյիր գտնի քրոջդ, վորովինետե աղքանունը չգիտես... Դժվար  
ե, յերիտասարդ, շատ դժվար ե...

Աղջիկը նորից գնաց, միացավ շարքերին: Վաչիկն առանց  
հրաժեշտ տալու, մանկատնից դուրս յելավ... Ինչքան լավ կառա  
վարիչներ ու կառավարչուհիներ կան: Նրանք ամեն կերպ ուզում  
են ոգնել իրեն, բայց վոչինչ դուրս չի գալիս... Ել հիմի մեր գնալ:  
Մյուս մանկատները:

Մի խուժան, շվացնելով անցավ Վաչիկի կողքով: Վաչիկն իս  
կույն կանգ առավ, նայեց նրա յետեկոց և ապա կանչեց.

Խուժանը մոտեցավ:

— Հին խուժան ես, — հարցրեց Վաչիկը:

— Շատ հին եմ:

Եստեղից ես:

— Զե, նոր եմ յեկել:

— Եստեղի խուժաններից ում ես ճանաչում:

Սուրբիկը ձայն չհանեց: Վաչիկը հիշեց, վոր գեռ իր ժամանակ-  
վանից, վոչ մի խուժան մյուսի մասին վորեա լուր չեր հաղոր-  
դում:

— Մի վախենա, — բաջալերեց նա: — Յես ել եմ խուժան յեղել:

— Խուժան... նայեց Սուրբիկը կասկածով: — Դու վհնց հարըս-  
տացար:

— Գնացի ուրիշ քաղաքներ... Հորյեղքայրս ինձ դտավ... Մե-  
ռավ... կտակեց... — անդիր արած գասի նման սկսեց պատմել Վա-  
չիկը: Իսկ հետո սկսեց զուտ խուժանային կյանքին վերաբերող  
մի քանի տեղեկություններ հաղորդել, վորից հետո Սուրբիկը  
համոզվեց ու հանգստացավ: Այժմ նա տվեց մի շաբք անուն-  
ներ: Մի քանիսը ծանոթ եյին Վաչիկին: Վաչիկը վորոշեց, քրո-  
ջը գտնելուց հետո հանդիպել նրանց, վորովինետե, նախ կա-  
րստել եք, ապա ուղում եր իր կոստյումը ցույց տալ և հպար-  
տանալ:

Նա շարժվեց: Խուժանը նայեց նրան:

— Բա հացի փող չես տալիս, ընկեր...

Վաչիկը ծոցագրպանից հանեց փողամանը: Խուժանը ագահո-  
րեն մոտեցավ նրան: Վաչիկը մատը թափ տվեց:

— Մաքից չանցկացնես փախցնել: Փախցնելու կամ գրպան  
մտնելու մեջ ինձ հավասարը չկա: Առ Ահա սա յել առ՝ պահիրի  
համար: Դե գնաս...

— Շնորհակալություն, ընկեր ջան, — ժպտաց խուժանը: —  
Ելի խուժանի սիրտն և ցավում խուժանի համար:

— Չարժի: Իսկ դու ինձ խուժան մի ասի, յես այլես խուժան  
չեմ, — չոր կերպով հայտնեց նա, բայց իսկույն զղալով իր կո-  
պիտ տոնի համար: — Իսկ...

Վաչիկը խոսքն ընդհատեց, թեթևակի ցնցվեց, կարծես կախե-  
ցավ և ձայնն ավելի ցածրացնելով՝ հարցրեց.

— Իսկ ձեր պետն ելի Զոփուռ Ռնիկն ե...

Խուժանի յերեսից ժպիտը թուավ: Նույնիսկ թվաց, թե նա  
գունատվեց: Նայեց շուրջը և շշնջաց.

— Ինչն ե:

Ապա արագ հեռացավ...

Բանից դուրս յեկավ, վոր բոլոր մանկատների սաներն ել  
պատկոմներ եյին: Կիրակի որվա առթիվ նրանք հագել եյին իրենց  
համագետեսները. ըստ յերեսւթին, պետք և դուրս գային շքերթի:  
Անցնելով տղաների մի մանկատան կողքով, Վաչիկը լսեց, թե  
ինչպես սաների նվազախումբը քայլերդ եր սերտում: Բոլորն  
ուրախ եյին, բոլորը զգարթ եյին, բացի իրենից:

Մանելով նախավերջին մանկատունը, նա տեսավ տառնյոթ-  
տասնութ տարեկան յերեք աղջիկների, վորոնք իրար փաթթ-  
ված, շրջում եյին բակում: Նրանցից մեկն իր դասն եր պատմում,  
իսկ մյուսները լսում եյին և ուղղում նրան: Տեսնելով Վաչիկին,  
նրանք արագ մոտեցան և շրջապատելով, սկսեցին հարցեր տալ  
կամ բացականչել:

— Վայ, ինչքան սիրուն տղա յե, նվարդ, նայիր:

— Ում ես ուղում, անունդ ի՞նչ ե:

— Նայիր, Արուսյակ, ինչքան լավ և հագնվել:

Նրանցից մեկը, վորին ընկերուհիներն իսկուհի անվանեցին,  
մոտեցավ Վաչիկին և նրա կեպին մի քիչ թեքելով, նայեց:

— Արանից հետո այսպես կղնես, փոքրիկ յեղբայր, քեզ այս-  
պես շատ և սազում:

Բայց Վաչիկը սիրտ չուներ այդպիսի բաների: Նա համառոտ կերպով հաղորդեց, թե ինչ ե ուզում և սպասողական լրեց: Լուս մնացին նաև աղջիկները, իսկ մի բռպե անց, սկսվեց տասներկու անգամ կրկնված հարցուփորձը, անոգուտ, վոչ մի բան չողարդող, վոչ մի հույս չներշնչող: Առաջարկեցին, վոր նա մտնի ճաշարան և իր աչքով տեսնի բոլոր վորբուհներին: Բայց դա ավելորդ եր: Այդ մանկատնում տասնչորս տարեկանից ցած վոչ մի աղջիկ չկար:

Դուրս յելավ կառավարչուհին և ձայն տվեց.

— Աղջիկներ, միտինդի ժամանակն ե, Յեկեք համաղդեստներդ հաղեք: Հիմի Ութսունինը կդա...

Աղջիկներն առանց մի խոսք ասել կարողանալու՝ դանդաղա-քայլ հեռացան: Անմիջապես շուր յեկավ ու գնաց նաև Վաչիկը, վորի հոգնած ուղեղում սկսեցին իրար խառնվել Արուսյակ, Նվարդ, Իսկուհի անունները և տարորինակ Ութսունինն անունը, վորից նա վաչինչ չհասկացավ: Ուղղվելով դեպի վերջին մանկատան կողմը՝ նա ակամայից սկսեց հաշվել իր քայլերը.

— Ութսունինն, իննսուն, իննսունմեկ, իննսունյերկու...

## 6

### ՎԵՐՋԻՆ ՄԱՆԿԱՏՈՒՆԸ

Յերբ Վաչիկը մոտեցավ վերջին մանկատան դարպասին, նրա ամբողջ մարմինը դողում եր և ատամները չխչելում եյին. կարծես նա կամ ջերմ ուներ, կամ մրսում եր: Նա անմիջապես ներս չմտավ, այլ կանգնեց հենց այդտեղ, փողոցում:

Ի՞նչ անել. մտնել, թե վոչ: Դա վերջին բնակարանն եր, ուր կարող եր լինել Աչիկը: Իսկ յեթե նա այդտեղ ել չեղավ, նշանակում ե՝ Վաչիկը նրան ել յերբեք, վոչ մի տեղ չի գտնի: Ուրեմն ի՞նչ անել. մտնել թե վոչ...

Գուցե հիմա, հենց այս բռպեյիս, Աչիկն այնտեղ խաղ ե անում իր նման փոքրիկ ընկերուհների հետ, կամ նորից հիշել ե յեղբորը և դառը լաց ե լինում: Լաց ե լինում... Ուրեմն հարկավոր ե հենց հիմա, անմիջապես մտնել ներս, գրկել նրան, համբուրել և ել յերբեք գրկից բաց չթագնել:

Իսկ յեթե նա այնտեղ չի...

Իսկ յեթե նա այնտեղ չի, ել ինչու մտնել հենց հիմա, անմիջապես: Ավելի լավ ե սպասել մի որ, մի ամիս, մի տարի և մտա-

ծել ու հուսալ, թե Աչիկն այնտեղ ե: Կամ ավելի լավ ե յերբեք չմտնել, վորովհետև, ով գիտե հանկարծ նա մեռել ե...

Վաչիկը կռացավ, դարպասի մոտից վերցրեց մի բուռ մանրախիճ և սկսեց մնկ առ մեկ նետել ցած, հաշվելով.

— Աչիկն եստեղ ե, եստեղ չի, եստեղ ե, եստեղ չի...

Տեսնես՝ վորը պիտի լինի վերջին քարը: Յեկ ինչքան ել շատ ե, չի վերջանում...

— Եստեղ ե, եստեղ չի, եստեղ ե, եստեղ չի...

Նա ընդհատեց հաշվելը: Վոչ, չպետք ե շարունակել: Դա ներս մտնելուց ավելի վատ ե: Հանկարծ քարերը վերջանան «Եստեղ չի» բառի վրա...

Զնայած այդպես մտածելուն, նա մեքենայորեն նորից շարունակեց քարերը ցած նետել և կրկնել.

— Եստեղ ե, եստեղ չի, եստեղ ե, եստեղ չի...

Բայց յերբ վերջապես «Եստեղ ե» ասելով նա նետեց վերջին քարը, մաղաչափ չուրախացավ և չհանգստացավ: Անշունչ քար ե, դրա մեջ ի՞նչ կա վոր... Կարող ե խարել...

Նա մտավ ներս և իր արիությունը չկորցրեց:

Յեկ վորպեսզի արիությունը չկորցնի մինչև վերջ, նա արագ քայլերով մտավ կառավարչուհու սենյակը, վորը միենույն ժամանակ նաև վորբանոցի գրասենյակն եր և դռան վրա ուներ համապատասխան մակագրություն: Կանգնելով դռան մոտ, նա հայտնեց իր գալու նպատակը:

Կառավարչուհին շոյեց նրա գլուխը և ձեռքից բռնելով, դուրս յելավ:

— Յերեխաներ, — բացականչեց նա:

Բոլորը նայեցին դեպի նրա կողմը:

— Ձեղնից ով ե այս տղայի քույրը. — իր անունը Վաչիկ ե, քըոշ անունն Աչիկ: Ապա, Աչիկներ, հիշեցեք — ձեզանից ով ե յեղբայր ունեցելու...

Մի քանի տասնյակ խելոք, սև աչքեր սկսեցին մտածել: Մյուս ները, ում անունն Աչիկ չեր, հետաքրքրությամբ սկսեցին նայել մերթ Աչիկներին, մերթ Վաչիկին, մերթ Վաչիկին բառավարչուհուն:

Աչիկները մտածեցին մի քիչ և սկսեցին բացականչել:

— Յես յեղբայր չունեմ:

— Իմ յեղբայրս մեծ եր:

— Յես յեղբայր չունեմ:

— Իմ յեղբայրս մեռել ե:

— Յես ել յեղբայր չունեմ:  
— Իմ յեղբայրներիս յես ճանաչում եմ:  
— Յես ել յեղբայր չունեմ:  
— Իմ յեղբայրներս կորել են. բայց նրանք սրա պես չեյին.—  
ուրիշ տեսակ եյին: Յես լավ եմ հիշում:  
— Յես քույրիկ ունեմ:  
— Յես քույրիկ ել չունեմ:  
— Յես քույրիկ ունեմ, բայց անունն Աստղիկ ե: Աստղիկ,  
արի եստեղ: Այ սա յե քույրս...  
Վաչիկն այլևս վոչվոքի վրա ուշադրություն չդարձրեց: Իր  
տեղում, կառավարչուհու կողքին կանգնած, նա սկսեց լուռ ար-  
տասվել...  
— Վայ, ընկեր Հրածին, տղան լաց ե լինում:  
— Գնացեք փոքրիկներ,— կարդադրեց կառավարչուհին և դար-  
ձավ դեպի Վաչիկը, — տեսնում ես, աղջիկները քեզ վրա ծիծաղում  
են: Ամոթ ե, Սրբիր արցունքներդ:  
Վաչիկը նրան չլսեց: Նա մոռացել եր և՛ իր վերջին մողայի  
կեպին, և՛ լաքած կիսակոշիկները, և՛ մոխրագույն կոստյումը:  
Նա մոռացել եր նաև ամենագլխավորը, այսինքն իր մեծավարի  
շարժուձեղ և լաց եր լինում իսկական տասներկու տարեկան յերե-  
խայի նման:

Հանկարծ մի փոքրիկ աղջիկ, չարաճճի ժպիտով, ձեռները յե-  
տեղ դրած և մատներն իրար հետ խաղացնելով, մոտեցավ Վաչի-  
կին: Հակառակ մյուսների, վորոնք կանգնել և տիսուր դիտում  
եյին լացող տղային՝ կարծես պատրաստվելով իրենք ել լաց լի-  
նել, նա ուրախ եր և ծիծաղում եր:

— Վաչիկ, յես եմ քու քույրիկը, — ասաց նա կանգնելով նրա  
դեմ և ուսերն որորելով:

Վաչիկը թեք-թեք նրան և գլուխը բարկացած շուռ  
տվեց:

— Յես եմ քույրիկդ, Վաչիկ...  
— Վաչիկ, — բացականչեց կոմյերիտուհին: — Նայիր: Ահա քույ-  
րիկդ:

— Սուտ ե ասում, — մոայլ պատասխանեց տղան:

— Դուցե չես ճանաչում: Լավ նայիր:

— Սուտ ե ասում: Իմ քույրիկս սրա պես սուտ խոսան չեմ:

Աղջիկը վիրավորվեց և ավելի համառելով իր ասածի վրա  
պնդեց.

— Զե, յես եմ քույրիկդ:  
— Սուտ մի խոսիր, Աչիկ, — ասաց կառավարչուհին:  
— Յես եմ իրա քույրիկը...  
— Գնա, — բարկացավ Վաչիկը, բայց կառավարչուհին սկսեց  
կասկածել: Նա բռնեց աղջկա ձեռքից և հարցընց.  
— Ապա, յեթե սուտ չես խոսում, հորդ անունն ասա...  
— Չեմ հիշում:  
— Մորդ անունը:  
— Ասի չեմ հիշում, ընկեր Հրածին: Բայց յես նրա քույ-  
րիկն եմ:  
— Ընկեր Հրածին, սուտ ե ասում, — մեջ մտավ մի ուրիշ  
սանուհի: — Նա մեր Սեվերսկուց ե: Նա Կազաչի Պաստում սկի-  
չի յել յեղել:

Կառավարչուհին բարկացած նայեց նրան, նա ծիծաղեց ու  
փախավ: Վաչիկին ուրիշ վոչինչ չեր մնում անելու, քան գնալ:  
Նա դանդաղապայլ դիմեց դեպի դարպասը և յերեխաների մեծ  
մասը գնաց նրա յետեղից:

Դարպասի մոտ նորից հանդիպեց այն փոքրիկ աղջիկը և նո-  
րից պնդեց:

— Յես եմ քույրիկդ, Վաչիկ:

Հստ յերեսույթին նա սկզբում ուզում եր միայն կատակ անել,  
բայց տեսնելով, վոր իրեն բանի տեղ չեն դնում, սուտ խոսան  
են համարում, նա վիրավորվեց, համառեց և ուզում եր անպայ-  
ման իր ասածը պնդել:

— Յես վոր քեզ նման քույրիկ ունենամ, կծեծեմ, — ասաց  
Վաչիկը չարացած աչքերով:

Աղջիկն ավելի շատ վշտացավ, բայց ավելի անուշ ժպտաց և  
ավելի յեռանդով պնդեց.

— Զես ճանաչում: Մոռացել ես: Յես եմ քույրիկդ...  
Կառավարչուհին, վոր մոտեցել եր դարպասին՝ Վաչիկին ճա-  
նապարհ գցելու, հանկարծ դիմեց նրան:

— Լավ, Վաչիկ, թող սա լինի քեզ քույրիկ, ի՞նչ կա վոր: Զե  
վոր դու բոլոր վորբանոցներում փնտրել ես և չես գտել...

— Չեմ ուզում, — բղավեց Վաչիկը, նրա կղակը դոզդողաց և  
նա աչքերը թարթեց:

Աղջիկը, տեսնելով, վոր իրեն այդքան կոպիտ կերպով մերժե-  
ցին, մի անգամ ել կրկնեց իր ասածը, բայց նրա դեմքից յերեսում  
եր, վոր յեթե նորից Ժխտեն, նա լաց պիտի լինի: Այնքան պարզ

Եր յերեում նրա լացի պատրաստվելը, լացը հաղիվ զսպելը, վոր Վաչիկն ու կառավարչուհին նկատեցին այդ: Վաչիկը մեղմացավ և մի ըսպե նույնիսկ մտածեց, թե արդյոք իսկապես լավ չ՞ լինի, յեթե դրան իրեն քույր անի: Իսկ կառավարչուհին դրկեց նրա գլուխը, շոյեց մազերը և ժամաց: Աղջիկն յերեսը դրեց նրա շըրջաղղեստին, կարծես թագնվում եր, ասլա պոկ յեկավ և արագ փախավ: Այժմ Վաչիկը համարյա համոզված եր, վոր նա գնաց լաց լինելու: Կառավարչուհին ժամաց և վաղեց նրա յետելից: Սանուհիները նույնպես շուր յեկան ու գնացին, մանավանդ վոր այդ ըոսեյին խփեց ճաշի զանգը:

Վաչիկը կոտրված, շշմած, կարծես քնի մեջ, դուրս յելավ փողոց.

Ամեն ինչ վերջացավ:  
Աչիկը չկա...

## 7

### ՀԻՇԱՏԱԿ ՅԵՎ ՀՈՒՅՍ

Կոտրված, շշմած, կարծես քնի մեջ, Վաչիկը վերադարձավ հյուրանոց: Ել ինչի՞ յե պետք հյուրանոցը... [Ել ինչի՞ յեն պետք իր գնած նվերները քրոջ համար՝ — շրջաղղեստը, գլխարկը, կոշիկները... Հարկավոր ե այդ բոլորը փողոց նետել կամ վառել, քանի վոր Աչիկը չկա և չի յել լինի...]

Ցեվ նա բաց արեց չեմողանը, հանեց այնտեղից քրոջ համար գնած դգեստներն ու կոշիկները և ֆիննական դանակով ճղճեց, կտոր-կտոր արավ:

Պատառուած կտորտանքը տանելով աղբարկը նետելով ու վերադառնալով, Վաչիկն սկսեց ծանր շունչ քաշել, կարծես մարդ եր սպանել: Սեղանի վրայից վերցրեց իր Փիննական դանակը, նորից հացցրեց կաշվե պատյանի մեջ և դրանը դրեց: Իսկ այժմ, հետաքրքիր ե, չկա արդյոք Աչիկից մնացած փորեւ առարկա, վոր Վաչիկը պահի իր հոգու պես, պահի իրբեւ իր թանկապին քրոջ հիշատակը...

Նա սկսեց մտածել տաս ըոսե, քսան ըոսե, թեև հենց սկզբից հիշեց, վոր այդպիսի վոչ մի առարկա չկա, վոչ իր մոտ և վոչ ել ուրիշ վորեւ տեղ:

Հանկարծ Վաչիկը ցնցվեց, դունատվեց և կենտրոնացավ: Սպասիր... նա յերեկ ի՞նչ եր ուղում անել իր դանակով, Կաղաչի

Պոստի ճանապարհին... Նա ուղում եր կամուրջի գերանի վրայից քերել քրոջ անունը... Այդ անունը նա փորագրել եր առաջ, յերբ Աչիկը դեռ կենդանի յեր:

Վաչիկը տագնապով մատները շարժեց, ապա շըրունքները լիզեց: Սպասիր... Ախր դա միակ, միակ հիշատակն և Աչիկի կենդանի ժամանականից: Հետո այն, վոր նա ուղում եր դանակով քերել: Իսկ չքերեց... թե քերեց...

Վոչ մի կերպ Վաչիկը չկարողացավ վերհիշել. — Ծնջել ե նա իր քրոջ անունն այնտեղից, թե վոչ: Ցերե Ծնջել ե, ուրեմն բռնուվին վերջացավ, կորավ Աչիկի հիշատակը:

Նա գլխարկը դրեց և արագ դուրս թռավ: Պետք եր գնալ, ստուգել, հավաստիանալ: Ախր այդ անունը համարյա Աչիկն ինքն եր, Վաչիկը նույնիսկ մտածում եր, վոր նա կմրսի և կհիվանդանա այնտեղ, ահա հենց դրա համար ել ուղում եր Ծնջել:

Կիրակի որվա պատճառով, քաղաքի կենտրոնական փողոցներում և հրապարակում շատ մարդ կար: Սրանք բոլորն ել ուրախ եյին: Կային նաև շատ յերեխաներ, վորոնք զբոսնում եյին. և մայրիկ ունեյին և քույրիկ ունեյին...

Շուկայի փակ և անմարդ փողոցներով անցնելիս, Վաչիկը նկատեց մի պատի տակ պանկած յերեք խուժանների, վորոնք արդեն քնել եյին, թեև դեռ ևս արև կար: Վաչիկը գիտեր, թե արդեն քնել եյին, թեև դեռ ևս արև կիրակի յե, խանութինչ դեպքում և խուժաննը շուտ քնում: Ցերը կիրակի յե, խանութինչ դեպքում փակ են լինում, իսկ յերեք խանութները փակ են լինում, ները փակ են լինում, իսկ յերեք խանութները փակ են լինում: Պետք ե շուտ քնես, վոր սովածությունութան փակ են լինում:

Վաչիկը, չնայած շտապում եր, գրպանից արագ հանեց մի թղթաղբամ, ծխախոտի ձևով փաթաթեց, զգուշությամբ կոխեց խուժաններից մեկի պինչը և արագ թեքվեց անկյունից այն կողմէ: Վաչիկը դեպքում փոշտաց ու նկատելով թղթաղբամը՝ շշմած և սուրած ցերը խուժաննը փոշտաց ու նկատելով թղթաղբամը՝ շշմած և սուրած ցերը կատար իշխանաց ընկերներին, Վաչիկն արդեն աչքից կորեւ եր և նրանցից վոչ մեկը չեր ել կարող նրան դանել ու շնորհած կալություն հայտնել:

Դիմացը, հեռվում, յերևաց կամուրջը: Վաչիկն սկսեց համարյա վագել: Վագելիս քանդեց փողպատն ու դրեց գրպանը: Հետո պինչակը հանեց և թեփ վրա առավ: Հասնելով կամուրջին, նա իսպասիր իջավ նրա տակ: Այնտեղ արդեն մութն եր: Կարդալ բառն աչքերով՝ անհնար եր: Հարկավոր եր կարդալ մատներով: Վաչիկը

բարձրացավ քարի վրա, ձեռքը տարավ դեպի այնքան ծանոթ գերանը, շոշափեց:

Իր սիրելի, իր անմոռանալի փոքրիկ Աչիկն այնտեղ եր...  
Այժմ կարելի յէ հանգիստ սրտով վերադառնալ:

Դուրեկան մի հով անցավ ճանապարհով: Նա քաղաքի կողմից բերեց նվազի մի քանի հնչյուններ, իսկ յերբ ինքն ուրիշ կողմ թեքվեց, հնչյունները միանգամից ընդհատվեցին: Հետո նույնը կրկնվեց մի քանի անգամ:

Դիմացը, քաղաքում, միանգամից պլալացին կրակները: Ելեքտրակայանն սկսեց աշխատել...

Յերբ Վաչիկը հասավ քաղաքի կենտրոն, վորոշակի լսեց, վոր նվազի և բացականչությունների ձայներ դալիս եյին գլխավոր փողոցից: Մտավ այդ փողոցը: Նրա բաղմաթիվ պայծառ լույսերից յերեկոն ավելի մթնեց, դարձավ միանգամայն մուգ-կապույտ: Այդ ուղիղ ու լայն փողոցի յերկու մայթերի վրա, պատերի պես կանգնել եր ժողովուրդը, իսկ փողոցի մեջտեղից անցնում եյին պատկաների անվերջ անհամար շարքերը: Շարքերի կողքերով գնում եյին ջահակիրները, յերկար փայտերի ծայրին ամրացված ջահերն ողում բարձր բռնած: Շարքերում, պատկաները բռնել եյին բարակ, նուրբ փայտե նիզակներ, ծայրերին կարմիր յեռանելունի փոքրիկ կտորներ, Յուրաքանչյուր ողակի առջեմից գնում եր ողակավարը՝ յեռանկյունի փոքր դրոշով, իսկ յուրաքանչյուր կոլեկտիվի առջեմից՝ կոլեկտիվի դրոշակակիրները՝ մեծ, քառանկյունի դրոշակներով: Դրանց ծայրերին մուրճ ու մանգաղներ և աստղեր կային, վորոնց մոտից ցած եյին իջնում վսսկեգույն կամ արծաթագույն ծովեր: Ջահերը լուսավորում եյին մերթ այս դրոշակները, մերթ այն, մերթ նրանց մի մասը, մերթ ամբողջովին: Ջահերի ծուխը, բոցից լուսավորված, պալար-պալար բարձրանում եր վեր և այնտեղ, մթության մեջ, կորչում:

Անցավ աղջիկների մի կոլեկտիվ: Հետո անցավ տղաների կուլեկտիվ, վորի առջեմից գնում եյին յերկու թմբկահարներ, տըկտկացներով իրենց թմբուկները: Հետո նորից աղջիկների կոլեկտիվ, վորն այնքան մեծ եր, կարծես, վերջ չպիտի ունենար: Հա անցնում եյին շարքերը վեցնյակներով, ուղիղ, ինչպես քանօն: Անցնում եր ողակավարը, ապա յերկու վեցնյակ. նորից ողակավարն իր յեռանկյունի դրոշակով, նորից յերկու վեցնյակ, յերգելով, և այսպես շարունակ, Վերջապես յերեսց նրա ծայրը, ապա ջահերի լույսով փայլեցին նրա յետերից յեկող նվագախմբի դեղին դոր-

ծիքները: Նվագախմբից հետո, մի ամբողջ անտառի նման, լուսվ, անցավ գրոշակների մեծ խումբը, վորի յետերից գալիս եյին նոր կոլեկտիվները: Դրոշակներն այնքան շքեղ եյին, այնքան լիւտ շարքերով և հախուռն, նրանց ծանր, փայլող կտորներն այնպիսի հաղթական ծալքեր ունեյին, վոր պատերի պես կանգնած ժողովուրդն սկսեց վոգերպած ծափահարել ու բացականչել: Նույն ըսպեյին, թնդալով սկսեց նվազել նվագախմբը և վոգերությունը հասավ բարձր աստիճանի:

Հեռվից, փողոցի անկյունից, վոր չերևում խիտ բաղմության և անցնող շարքերի պատճառով, խուլ լսվում եր մի ուժեղ, առողջ ձայն: Այդ պատկոմապետն եր, վոր ընդունում եր շքերթը:

Հանկարծ ժողովուրդն սկսեց գուրգուրանքով ծիծաղել: Փողոցով սկսեցին անցնել փոքրահասակ պատկոմները, վոտները լայնայն ձգելով: Մերթմերթ նրանց հետ գնում եյին շատ ավելի փոքրահասակներ, վորոնք համարյա վազում եյին: Վաչիկը նույն պես ժամանակ և հանկարծ բարձր ծիծաղելով, ցնցեց իր կողքի կանգնածի թեր, առանց անգամ հայելու, թե ով եր նա:

— Տես, տես...

Անցնում եր մի ողակ, — կոլեկտիվի վերջին ողակը, — ուր տասներեք պատկոմներ կային: Տասներկուսը գնում եյին յերկու վեցնյակով, իսկ տասերեքերորդը գալիս եր նրանց յետերից, մեն-մենակ, մի քիչ ամաչելով, մի քիչ բարկացած: Ամբողջ փողոցով, նրա հետ միասին, վերև բարձրացված աշխուժ ծիծաղը՝ հետզհետե խլանալով նվազի և ուռաների ավելի բարձր ձայների մեջ:

Վաչիկին թվում եր, թե այդ փոքրիկ պատկոմները վերջիններն են: Ուստի և մեծ յեղավնրա զարմանքը, յերբ հանկարծնրանց յետերից, բազմության, լույսերի և խավարի միջից առաջացավ դրոշակների մի նոր խումբ, վորի առջեմից գալիս եյին յերեք շեփորաներ և շեփորում եյին՝ մեկը դեպի մի քիչ աջ, մյուսը՝ մի քիչ ձախ, կենաւրնինն ուղիղ դեպի առաջ: Շեփորները շատ յերկար եյին ու նուրբ, նրանք մաքուր փայլում եյին և նրանցից կախված եյին դրոշակները՝ «Միշտ պատրաստ ենք» լոգունդով: Վաչիկը նորից բռնեց իր կողքի կանգնածի թեր և բղավեց.

— Տես, ելի յեն գալիս...

Մարդը բռնեց նրա ձեռքը և կոպիտ շարժումով շպրտեց մի կողմ: Վաչիկը զարմացած նայեց, տեսավ, վոր նա չար դեմքով մի յերիտասարդ եր և իր տեղը փոխեց:

Քանի վոր վերջին նվազախումբն արդեն շատ առաջ եր անցել իսկ յետեկից յեկողը դեռ շատ հեռու յեր և յերկուսի ձայնն ել չեր հասնում շարքերին, այդ պատճառով ել, կոլվարները սուլիչները բերաններին, քայլքի հրահանդ եյին սուլում, վորպեսպի պատկոմները վոտքերը չփառնեն: Իրարից բավական հեռու, բայց միաժամանակ, լսվում եյին սուր և մի քիչ ել խոպոտ շվոցները.

— Ֆատ, ֆատ, ֆատ:

**Այսինքն՝**

— Մեկ, յերկու, յերեք:

Հանկարծ, այդ շարքերի յետևում, ուժեղ թնդաց քայլերդը:

Բանից դուրս յեկավ, վոր նվազախումբը շատ մոտիկ եր, բայց չեր նվազում: Հենց վոր քայլերդը թնդաց, մի րոպէ պատկոմների վոտները խառնվեցին, վորովհետև նվագը սուլիչների տակարի հետ չընկավ: Խսկույն բոլոր սուլիչները լուցին և շարքերն սկսեցին իրենց վոտքերն ուղղել նվագի հետ:

Իրանը հիանալի կերպով ուղիղ պահած, կտրուկ ու գեղեցիկ քայլերով՝ մի կոլվար անցավ Վաչիկի մոտով, համարյա քսվելով նրան: Վաչիկը միայն մի վայրկյան տեսավ նրա դեմքը, բայց այդ ել բավական եր, վոր ճանաչեր նրան և ճշալով, սրտապատառ կերպով ճշալով նետվեր առաջ: Անցնում եր այն սկառտը, վորի միջոցով նա մի անդամ նամակ եր ուղարկել Կաղաչի Պոստ, իր քըոջը...

Նվագի և բացականչությունների ձայների մեջ Վաչիկի ճիչը չլսվեց ուժեղ կամ տարորինակ և գուցե թվաց, թե նա վորեն լողունդ բաց թողեց՝ անցնող շարքերին ուղղված: Սակայն դրա փոխարեն, շատ տարորինակ թվաց նրա վարմունքը, յերք նա մոռանալով ամեն բան, մայթից ցած թուավ փողոց և սկսեց վաղել: Մի քանի քայլ այն կողմ՝ միլիցիոները բռնեց նրա թմից և հայտնեց, վոր շարքերի անցնելու ժամանակ մայթերից իջնելն արդելվում ե: Վաչիկն աշխատեց բացատրել, հրդեհից դուրս պըրծածի պես նրա լեղուն խառնվեց, կալ ընկավ, նրա արտասանած մի քանի խառնաշփոթ բառերը բացարձակապես վոչինչ չբացարեցին և միլիցիոները մնաց տարակուսած:

Սարսափելի շտապողականությունից իրեն կորցրած Վաչիկը նետվեց դեպի մայթ, վորպեսպի մայթով բարձրանա փողոցն ի վեր և հասնի սկառտին: Խցկվեց կանգնած բազմության մեջ, փորձ ճեց ճանապարհ բաց անել, կոխեց մեկի վարքը, իր կողքի վրա զգաց բոռնցքի բավականին ծանր հարված, շտապի

նկատեց, վոր հարվածողն այն չար դեմքով յերիտասարդն եր, վորի մոտ նա կանգնած եր մի քիչ առաջ, և նորից սկսեց աշխատել ձեռքերով, վատքերով, գլխով ձեղքել բազմությունը և առաջանալ: Մի քիչ հետո սակայն, նա սարսափով նկատեց, վոր շարքերն անցնում են իրենից կրկնակի, յեռակի արագությամբ և ինքն ավելի ու ավելի յետ և մնում: Քիչ մնաց անզոր զայշույթից կծոտեր մարդկանց ու հեկեկար, սակայն հանկարծ տեղի թյութից կծոտեր մարդկանց ու հեկեկար, սակայն հանկարծ բազմությունեցավ մի անսպասելի բան: Մայթի վրա հավաքված բազմությունը հանկարծ խարխլվեց, փխրվեց և նրա միջով անցնելը դարձավ չափազանց հեշտ: Վաչիկն անմիջապես սկսեց վազել բայց դարձավ չափազանց հեշտ:

Նա բռունցքները սեղմեց՝ ինքն ել չգիտենալով, թե ում դեմ և սույնպես իջնելով փողոցի մեջտեղը, շարունակեց վաղել: Փողոցն իր յերկու կողմում սկսեց ավելի մութ դառնալ, զըկվել լուսավոր խանութներից, յերկնարկանի ճոխ շենքերից դառնալ միհարկանի փոքրիկ տների խաղաղ փողոց՝ դոների ճակատներին ավելի մասրիկ լամպերով: Բայց քիչ հետո, դիրին պլալացող նավթի մասրիկ լամպերով:

Վաչիկը միայն մի վայրկյան տիրեց, բայց հետո այդ անմիջապես իջները Վաչիկը հասավ այստեղ, վոչ նրա մեծ բակում, վոչ ել շենքերը Վաչիկը հասավ այստեղ, վոչ նրա մեծ բակում, վոչ ել կարող է հանդիպել: Կարեռն այն ե, վոր նորից գտավ վաղեն ել կարող է հանդիպել: Կարեռն այն ե, վոր նորից գտավ վաղեն ել կարող է հանդիպել: Վաչիկի հետքը և այս անդամ իհարկե՝ ամենահաստատ կերպով:

Յեվ նա, միանդամայն հանգիստ, գնաց քնելու:

### Ց

## ԱՆԱՆՈՒՆ ԿՈԼՎԱՐԸ

Վաչիկը, վոր շատ վաղ եր վեր կացել, յեկավ, դարպասից մտավ ներս և մի քանի քայլ անելով, կանգ առավ արևի տակ նստած մի պիոների մոտ:

— Վարտեղ և ձեր պետը, պատկոմ: — Իր սենյակումն ե: — Իր սենյակը վրոն ե:  
Պատկոմը վեր կացավ և նրան ուղեկցեց: Նրանք մտան շենքի  
դռներից մեկից, սանդուխքով բարձրացան յերկրորդ հարկի մի  
լայն միջանցք: — Առաջին դռուն ե, — ցույց տվեց պատկոմը և վերադարձավ:  
Վաչիկը թակեց: — Մտեք, — լսվեց ներսից և պատկոմապետն ինքը դռուը  
բաց արեց: — Յեկ, — ասաց նա, տեսնելով տղային: — Նստիր տես-  
նեմ: — Յես, ընկեր պատկոմապետ, — սկսեց Վաչիկը, շարունակե-  
լով կանգնած մնալ, — քրոջս եմ փնտրում: Նրան ճանաչում ե մի  
սկառատ, վորը հիմի ձեզ մոտ կոլվար ե: Յես ուղում եմ նրան  
տեսնել...  
Պատկոմապետը բաց արեց դռուը, մատը յերկարեց դեպի մի-  
ջանցքի ծայրում դտնվող մի այլ դռու և սիրալիր կերպով հայտնաց: —  
— Բոլոր նախկին սկառատները, վոր հիմա կոլվարներ են,  
ելի ենտեղ են ապրում: Վաչիկը մոտեցավ ցույց տված դռանը: Այնտեղ, դռան վրա,  
փակցված եր մի սպիտակ խավաքարտ, վորի վրա, խոշոր տառե-  
րով գրված եր. — «Կապույտ պատկոմներ»: Այնուհետեւ, ավելի մանր  
տառերով, գրված եյին այդ կապույտ պատկոմների անունները. —  
Հրաչ, Վաղգեն, Վարդան, Սմբատ, Միհրան:

Նա դռուը բացեց և մտավ:  
Ներսում գտնվողները շուռ յեկան դեպի Վաչիկը և հարցական  
նայեցին: — Դուք Կաղաչի Պոստի սկառատներից եք, — հարցրեց նա:  
— Այո: — Զեղնից հվ ե Աչիկին ճանաչում: — Ի՞նչ Աչիկ...  
— Քրոջս... Կաղաչի Պոստից...  
— Յեմ ճանաչում, — ասաց մեկը: — Գուցե դու գիտես,  
Վաղգեն: — Յես ել չգիտեմ, Հրաչ:  
— Եերեկոյան, — բացատրեց Վաչիկը, — մի կոլվար եր անց-  
նում շարքերի կողքով: Նա ճանաչում ե քրոջս: Վարտեղ և այդ  
կոլվարը:

Բանից գուրս յեկավ, վոր Միհրանը պատկոմական արհեստա-  
նոցի վարպետն եր, իսկ Վաղգենը պատկոմական ակումբի վարիչը:  
Կոլվարներ եյին մնացած յերեքը, բայց նրանք չեյին ճանաչում  
կոչ Աչիկին, վոչ Վաչիկին:  
— Կոլվարի անունը չգիտեմ:  
— Վոչ:  
— Իսկ նրա սկառատական համարը չես հիշում:  
— Զեմ ել իմացել:  
— Իսկ դու հաստատ գիտես, վոր նա կոլվար եր, — հարցրեց  
Վարդանը: — Գուցե կոլվար չեր:  
— Շարքերը գնում եյին... — սկսեց բացատրել Վաչիկը: —  
Շարքերի առաջից գնում եյին գրոշակակիրները, թմրկահարները,  
շեփորահարները կամ ողակավարները: Ճիշտ ե:  
— Ճիշտ ե:  
— Ախր յես եղ բաները գիտեմ: Ուրիշ քաղաքների պատկոմ-  
ների մոտ ել ե եղակես: Շատ եմ նայել... Իսկ շարքերի կողքից  
գնում են միայն կոլվարները: Ճիշտ ե:  
— Ճիշտ ե, միայն կոլվարները, — հաստատեց Հրաչը:  
— Դե, նրանցից մեկն եր:  
Կապույտ պատկոմները մնացին տարակուսած:  
Սմբատն սկսեց բացատրել: Կաղաչի Պոստի սկառատանոցից  
նախկին յերկուհարյուր բառասուն սկառատներ այժմ ցրվել են  
ամբողջ Հայաստանով մեկ, բայց միայն Լենինականում՝ նրան-  
ցից կան մոտ հարյուր հոգի: Նրանց մեծ մասն աշխատում ե  
դեպոյում, գործարաններում կամ տեքստիլի շինարարության վրա:  
Կան նաև գրասենյակային աշխատողներ: Վամանք ապրում են  
իրենց նախկին ճնողների մոտ, ինչպես որինակ, Ալամը. իսկ մե-  
ծամասնությունը, վոր ճնողներ չունի՝ առանձին-առանձին կամ  
մի քանի ընկերներով: Պատկոմական կաղմակերպության մեջ  
նրանցից շատ կան, բայց կոլվարներ միայն այդ յերեքն են:  
— Գուցեմեր Ռւթսունիննին ե ուղում, — յենթադրեց Վարդանը:  
— Իսկապես, — հետաքրքրվեց Հրաչը: — Գուցե դու պատկոմա-  
պետի ողնականին ես ասում: Բայց ախր նա միշտ գնում եր ջա-  
ների առջևից:  
— Զե, չե, — անդեց Վաչիկը: — Նա կոլվար եր: Նա շարքերի  
կողքով եր գնում...  
— Այդ գեղքում, այդպիսի մարդ չկա, — յեղբակացը Սըմ-  
բատը: — Դու սխալ ես տեսել...

— Կարող եւ պատահել, — անկեղծորեն հանձն առավ Վաչիկը և գլուխը կախեց:

Դե, ել ի՞նչ սպասել: Հարկավոր եւ հեռանալ... Աչիկին գըտնելու յերկրորդ ու վերջին թելն ել կորավ և այն ել՝ այդպիսի տարորինակ ձևով: Վերջիվերջո, խո չե՞ր կարող Վաչիկի աչքին յերեալ: Այդ նա յեր — իր ծանոթ սկառւար...

Գլուխը կախ արած, նա գուրս յեկավ: Զնայելով իր աչքի առաջ, դարպասի մոտ նա ընդհարվեց ներս մտնող ինչ վոր մեկի հետ և վեր նայեց:

Նույն յերիտասարդն եր, վորը յերեկոյան բառնցքով խփել եր իրեն: Նա այս անդամ ել կոպիտ կերպով մի կողմ շպրտեց Վաչիկին և բղավեց.

— Վոտքի տակ մի ընկնիր, հիմար...

Վաչիկը գնաց: Յերիտասարդը բարկացած քայլերով մտավ բակ:

## 9

### ԿԱՊՈՒՅՏ ՊԱՏԿՈՄՆԵՐ

Յերիտասարդը տեղյակ մարդու վստահությամբ բարձրացավ զեպի պատկոմների սենյակը: Բատ յերեսույթին, նա առաջին անդամը չեր, վոր գալիս եր պատկոմատուն: Կեռացրած միջնամատով թըխթխկացրեց դուռը և առանց պատասխանի սպասելու՝ մտավ ներս:

— Բարե ձեղ ընկեր պետ, — ժպտալով դիմեց նա դուռը բանալու համար ընդառաջ յեկող պատկոմապետին:

— Բարե, քաղաքացի Դասպար: Նստեցեք:

— Դե, ի՞նչպես յեղավ, ընկեր պետ:

— Մենք, քաղաքացի Դասպար, վորոշեցինք ձեր դիմումը մերժել, — հայտնեց պատկոմապետը:

Գասպարը գունատվեց:

— Իսկ ի՞նչնէ, — կմկմաց նա:

— Բոլոր կապույտ պատկոմները դեմ եյին: Իսկ մենք չեյինք կարող հաշվի չառնել նրանց, վորոնք ձեղ գիտեն դեռ սկառւանոցից:

— Կապույտ պատկոմները, — կրկնեց Դասպարը: — Իսկ մվեր են կապույտ պատկոմները:

— Հրաչը, Վաղդենը, Վարդանը, Սմբատը, Միհրանը... Իհարկե, նաև Արամը:

— Սպասեցեք... Միհրանը, դա՝ ու ջոկատից եր: Սմբատը՝ դա յերբորդ ջոկատի պետն եր: Վարդանը՝ դա այն սկառւան եր, վոր

թքեց մեր նշանի... Ֆու, այսինքն նախկին մեր նշանի վրա ու փախավ: Վաղդենը հեռախոսակայանումն եր աշխատում: Հրաչը յերբորդ ջոկատից եր... Հըմ... լավ ծաղկեփունջ ե: Իսկ մվ և Արամը: Յես նրան չեմ ճանաչում...

— Արամին չըք ճանաչում: Նա սկառւա համար ութսունինն ե:

— Ա՛խ, Ութսունինը, — բացականչեց Գասպարը, և նրա աչքերը փայլատակեցին: — Դե ի հարկե: Առանց նրա, ծաղկեփունջը լրիվ չեր լինի, բայց գիտեք, ընկեր պետ, նրանք բոլորը լարված են իմ դեմ: Դուք ի՞նչպես եք լսում նրանց:

— Լարված են, — Պատկոմապետը Ժպտաց: — Իսկ ի՞նչնէ իրարդեմ չեն լարված: Միթե անձնական հաշվի ունեն ձեղ հետ:

— Այո, անձնական, ընկեր պետ: Մենք յերկուսս, — յես և գուք, հասակալից ենք, յերկուսս ել ծառայում ենք մարմնամարդության դործին: Յեկեք ուշադրություն չդարձնենք ուրիշների խոսքերին և...

— Յես ծառայում եմ վոչ միայն մարմնամարդական դործին, — Վնդհատեց պատկոմապետը, — այլև կոմունիստական: Դուք ել կարծեմ, միայն մկաններով չեյիք զբաղված: Կապույտ պատկոմները միաբերան պնդում են, վոր դուք յեղել եք իսկական հայրի և Վահան Քիրաղի աջ թեր: Հիմա ի՞նչպես պատահեց, վոր սկսեցիք համակրել պատանի կոմունիստներին...

— Ընկեր պետ... Վոչ, յեկեք ավելի անկեղծ խոսենք. ընկեր Բարկեն... Ճիշտ ե, յես յեղել եմ և՛ հայ արի, և՛ Վահան Քերաղի աջ թեր, բայց չե՞ վոր այն ժամանակ յես յերեխա եյի, անդիտակից եյի և նրանց վորով գաստիարակված... Դուք ասում եք՝ հանկարծ: Ի՞նչնէ հանկարծ: Միթե սկառւանոցի քայլայումից հետո քիչ ժամանակ և անցել: Յես փոխվել եմ, ընկեր Բարկեն, սկառւական աղնիվ, այսինքն՝ պատկոմական աղնիվ լսուք...

— Դուք բոլորովին ել չեք փոխվել, — Ժխտեց պատկոմապետը: Տեքստիլի շինարարության բանվորները բոլորն ել գժկոն են ձեզնից: Դուք այնտեղ կոպիտ եք, հայհոյում եք և կարծեմ այնքան ել կոմունիստական մտքեր չեք քարոզում... Այսր ի՞նչնվ եք ապացուցել ձեր փոխվելը...

Գասպարը ջղայնացած կծեց շրթունքը և բռնկվեց:

— Այո, կոպիտ եմ, վորովհետեւ բոլորն ինձ վրա նայում են իրեւ ոտարի: Յես ջղայնանում եմ, նեղանում եմ...

— Սիալվում եք, — ընդհատեց պատկոմապետը: — Համարյա բուլոր կապույտ պատկոմները վարդանի վրա նույնակես նայում եյին վորպես ոտարի, վորովինետև նա սկառատանոցում անկաղմակերպ և փաստում վնասակար յելույթ եր ունեցել:

Դրանից հետո, յերկար ժամանակ նա գաղտնի յեր պահում քայլքայող յեռյակի հարցը, ամաչելով ասել, վոր սկառատանոցում այդպիսի յեռյակ չկար և յեռյակի անունով սիալ յելույթներ ունեցողը միայն ինքն եր: Այո, նրա վրա նայում եյին վոչ վորպես լրիվ ընկերոջ: Բայց նա գրանից չխրանեց, այլ ապացուցեց, վոր ինքը վոտքով-զլխով մերն եւ ֆուք ևս, քաղաքացի Գասպար, ապացուցեցնեք, վոր մերն եք: Ֆուք մարմնամարդության լավ մասնագետ եք և մեղ շատ պետք կգաք, յեթե...

— Յեթե ձեր այդ կապույտ պատկոմները վոտքերիս տակ քարչ չգցեն... Այո, այո: Յեթե չբամբասեն ու չզրպարտեն...

Պատկոմապետը մռայլվեց:

— Քաղաքացի Գասպար, դուք ավելորդ բաներ եք ասում: Արամը ձեր սկառատանոցի կոմյերիտական բջիջի քարտուղարն եր, իսկ այժմ՝ իմ ողնականը: Յեթե նույնիսկ ուրիշ վոչ վոք վոչինչ չասեր, դարձալ նրա խռոքը բավական եր, վոր մենք ձեզ չընդունեյինք...

— Համ, — զոռաց Գասպարը և ձեռքը սեղանին խփեց: — Նրա խռոքը բավական եր, համ: Շատ լավ: Յես կապացուցեմ, վոր իսկական կոմյերիտ եմ... Յտեսություն՝ շատ կարճ ժամանակով...

Նա արագ դուրս յեկավ, դուռը յետենից շրթնակացրեց և վազելով վար իջակ սանդուխքներից: Յեկ այնտեղ, բակում, նա տեսավ սկառատ համար ութսունիննին: Հենց վոր նկատեց, ոճի կծածի նման ցնցվեց մի բողե, քարացավ, ապա դեմքին սիրալիր արտահայտություն տալով, մոտեցավ, բարեց: Բարենց նաև մյուս կապույտ պատկոմներին, վոր նրա շուրջը հավաքված, զբույց եյին անում:

— Դժու յես ինձ խանդարել, Ութսունինն...

— Այո: Յես և մենք բոլորս:

— Ինչո՞ւ:

— Դու մեղնից լավ դիտես:

— Սմբատ, հատկապես դու, կարծեմ հին հաշիվսեր ունես ինձ հետ, — դիմեց նա նրան, կատաղությունը զսպած և նույնիսկ ժպտալով:

— Մի պատասխանիր, Սմբատ, — հորդորեց Արամը, ապա դիմեց Գասպարին. — քաղաքացի, ըստ յերեսութին, Բաբկենն արդեն

պաշտոնական վորոշումը հայտնել եւ ձեզ: Խոսելու նյութն սպառված եւ Գնաք բարով:

Գասպարի այտերի վրա ուռեցին և մի քանի անգամ ցնցվեցին յերկու ամուր, փոքրիկ մկաններ: Նա ծնունները սեղմում եր իրար:

— Լավ, — ժամաց նա, գունատված շրթունքները յետ տանելով: — Խոսելու նյութն իսկապես վոր սպառված ե, հարկավոր ե ուրիշ տեսակ նյութ...

Նա կարմրեց, ուզեց ելի ինչ վոր բան անել կամ ասել, նայեց աչ, ձախ, ապա արագ քայլերով հեռացավ:

— Անհաճելի հիշողություն կազաչի Պոստից, — ձևակերպեց Սմբատը պատահած հանդիպումը:

— Մի ուրիշ հանդիպում ել կաղաչի Պոստից՝ պատահեց միքիչ առաջ, — հայտնեց Հրաչը:

— Ի՞նչ հանդիպում, — հետաքրքրվեց Արամը:

— Մի փոքրիկ յերեխա իր քրոջն եր փնտրում, վորը կաղաչի Պոստում վարբուհի յե յեղել: Աչիկ-Կաչիկ:

— Ի՞նչ... — բղավեց Արամը: — Վաչիկ...

Կապույտ պատկոմներն ապշար նայեցին նրան:

— Խեղճ Վաչիկ, — մընչաց նա: — Գիտե՞ք ով ե. — ոլիմպիադայի ժամանակ սկավառակի հարվածով սպանված այն յերեխայի յեղբայրը:

— Ի՞նչ ես ասում, — զարմացան բոլորը:

— Ուրեմն նա քի՞զ ե տեսել յերեկոյան, — հարցրեց Հրաչը: Ասում եր՝ կոլվար, նախկին սկառատ: Մտածեցինք, մտածեցինք, չգտանք: Ասում ենք՝ գուցե պետի ողնականն եր, ասում ե՝ վոչ, կոլվար եր, գնում եր շարքերի կողքով: Դու յերբ ես շարքերի կողքով դնացել, Ութսունինն... Զե՞ վոր զու առջնումն եյիր:

— Նա ձիշտ ե ասել: Յես մի բողե յետ մնացի, իսկ հիմաց տեսառթյուն...

— Ո՞ւր, — զարմացավ Սմբատը:

— Յես նրան պետք ե հայտնեմ իր քրոջ մահվան մասին: Ավելի լավ ե՝ ինձնից իմանա, քան մի ուրիշեց: Յես զգույշ կերպով կասեմ, կմթիթարեմ, սիրտ կտամ...

— Գնա, — համաձայնվեց Հրաչը, — բայց սպասիր, ուր պիտի գտնես նրան:

— Շատ պարզ: — վոր խուժանին ասեմ, նրա տեղը ցույց կտա:

— Ի՞նչպես թե, — զարմացան կապույտ պատկոմները. — իսկ ինչո՞ւ խուժանները պիտի իմանան նրա տեղը:

— Զե՞ վոր նա յել ե խուժան, — ժպտաց Արամը,  
— Խուժան... Բոլորովին:  
— Ի՞նչպես թե բոլորովին, — այս անդամ զարմացավ Արամը:  
— Այո, այո: Հաղնված եր մեր բոլորից ավելի լավ: Ասում եր,  
վոր ինքն ուզում ե վերցնել իր քրոջը և ինքը պահել: Ուրեմն  
պահելու միջոցներ ունի:

— Սպասեցեք, — մի՛թե նա այլևս խուժան չե:  
— Վաչ:  
— Իր անունը Վաչիկ, իսկ քրոջն Աչիկ: Լավ եք հիշում:  
— Չե, իր անունն Աչիկ, քրոջը Վաչիկ, — ձեռ առավ Հրաչը:  
— Չեղավ... — մտածում մրմջաց Արամը. — Ել ուրեմն վմրտեղ  
գոնեմ նրան... Սոսկալի յե... Նա դեռ կարծում ե, թե իր քույրը  
կենդանի յե և փնտրում է նրան: Ի՞նչ անել...

Բոլորը տարակուսած իրար յերես նայեցին:  
— Բայց գուցե այսպես ավելի լավ ե, — հանկարծ յենթադրեց  
Արամը. — Թող փնտրի քրոջը, փնտրի, չգտնի և մտածի, վոր կեն-  
դանի յե: Նա փոքր ե և այդ վիշտը նրա համար շատ ծանր  
կլինի: Իսկ յերբ մեծանա, արդեն ինքըստինքյան դլսի կընկնի,  
վոր խեղճ Աչիկն այլևս չկա:

Ապա ձեռքը դեպի անդրավարտիքի դրպանը տանելով, ավե-  
լացրեց.

— Յեվ դեռ մինչեւ հիմա պահել եմ նրա նամակը, ուղղված  
իր քրոջը: Սկզբներում չեյի ուզում պահել, վորովհետեւ քանի  
տեսնում եյի, սիրու ձմզում եր, Մտածում եյի՝ տանել թաղել  
Աչիկի գերեզմանում, բայց վոչ վոք ինձ չկարողացավ ասել, թե  
ուր ե թաղված նա: Տարորինակ և խայտառակ հիվանդանոց եր  
կաղաչի Պոստը. այնտեղ նույնիսկ չզիտեյին, թե ով ե մեռնում,  
ժեր ե թաղվում... Յեվ այդպիսավ, նամակը մնաց ինձ մոտ: Յես  
այն պահում եմ մի ուրիշ առարկայի հետ, վորը կապ ունի յերեկ  
յերեկոյան իմ յետ ընկնելուս հետ:

— Ի՞նչ առարկա, ի՞նչ կապ կարող ե ունենալ, — չափազանց  
հետաքրքրվեցին կապույտ պատկոմները:

Արամը գրպանից մի փոքրիկ փաթեթ հանեց.

— Ահա սա Վաչիկի նամակը, — ասաց նա, փաթեթից մի ծրար  
հանելով, վորն անմիջապես ձեռքից ձեռք անցավ: Բերել եմ,  
վոր Վազգենն արտագրի իր պիեսի համար:

— Յես հիշում եմ, — հայտնեց Հրաչը, — դու ինձ կարդացել  
և դեռ սկասածանոցում:

— Իսկ սա չորսհազար վեցհարյուր հիսունչորսերորդ վոր-  
րուհու համարը... — հառաչեց Արամը:  
— Այդ վերջինը չհասկացա, — նորից հայտնեց Հրաչը:  
— Սաթիկի համարն ե: Մթթե չես հիշում:  
— Ի՞նչ Սաթիկ, — հարցրեց Միհրանը:

Արամը պատմեց: Սաթիկն իր լավ ընկերուհին եր, վորի հետ  
ինքը հանդիպել եր ընդամենը մի անդամ, յեթե չհաշվենք մի  
ուրիշ հանդիպում, վորի ընթացքում դեռ հազիվ մի քանի խոսք  
փոխանակած՝ միստր նոնսը յեկավ և տարավ նրան, և յեթե չհաշ-  
վենք մի յերլորդ հանդիպում, վորի ընթացքում նույն նոնսն ու  
պարոն Մոլորքը դուռը ամուսնացըին նրան:

— Հետո, — հարցըին բոլորը, հետաքրքրված:  
— Զահերթի յերեկոյան, — շաբունակեց Արամը տիխուր ձայ-  
նով, — յերբ մենք մտնում եյինք գլխավոր փողոցը, յես նայեցի  
դեպի աջ և լինչ... Մայթի վրա կանգնած եր Սաթիկը...

— Սաթթիկը, — բացականչեցին բոլորը:  
— Յես զնում եյի պատկոմների առջևից, Բարկենի հետ կողք-  
կողքի: — Բարկեն, ասացի նրան, թույլ տուր մի բոպե դուրս  
գամ... — Ի՞նչո՞ւ, — մոմոաց նա ատամների արանքից, աշխատելով՝  
և՛ պատասխանել, և՛ խոսած չլինել: — Գործ կա՝ ասացի: Նա թույլ  
տվեց և յես անմիջապես դուրս նետվեցի և յետ դարձա դեպի այն-  
տեղ, ուր տեսել եյի նրան:

— Հանդիպեցի՞ր, — հարցըին կապույտ պատկոմներն ան-  
համբերությամբ:

— Զկար... նորից անհետացել եր... կարծես վորոշված եր, վոր  
յես նրա հետ յերբեք այլևս չխոսեմ...

Տիրեց լուռթյուն: Բոլորը մտածում եյին:

— Յեվ ահա Վաչիկն ինձ տեսել և հենց այդ ժամանակ, —  
յեզրակացըրեց Արամը: — Խեղճ Վաչիկ, խեղճ Աչիկ...

## 10

### ԿԱՐՄԻՐ ՍԿԱՈՒՏՆԵՐ

Գասպարն արագ ու ջղային քայլերով վերև բարձրացավ պատ-  
կոմատան փողոցով՝ դեպի քաղաքի հյուսիսային մասը: Բավա-  
կան տեղ գնալով, նա կանգ առավ: Մի քիչ հեռվաւմ — դեպի  
աջ — տարածված եր տեքստիլ գործարանի շինարարությունը:  
Էստ յերեսույթին, նա տատանվում եր, գնալ այնտեղ, թե վոյ:

Սակայն դեռ վորոշում չընդունած, նրա յերկընտրանքին վերջ տվեց շակը, վորն սկսեց փչել շինարարության կողմից: Միւնույնն է: յեթե այժմ նա գնա այնտեղ, վոչ վոքի տեսնել չի կարող, քանի վոր բոլորն արդեն ցրված լլինեն:

Յեվ նա շարունակեց ճանապարհը:

Բնակարաններից մեկի դռան առջե, ուր ցանված եր գարու մի փոքրիկ արտ, նստել եր մի խուժան և գարեհատիկների դեռ չպնդացած միջուկներն եր ծծում: Տան դուռն իհարկե փակ եր, այլապես խուժանը չեր հանդպնի արտին մոտենալ:

Գասպարը, տեսնելով նրան, հանկարծ ինչ վոր բան մտածեց և արագ կանգ առավ: Խուժանն զգաստ նայեց նրան, պատրաստվելով դրության վատթարանալու դեպքում վեր թռչել և փախչել: Նրա ձեռքից քաղված կոռւթները մեկ առ մեկ թափվեցին գետնին:

— Խուժան ես:

— Խուժան եմ:

— Հետ հին եմ:

— Անունդ ի՞նչ ե:

— Սուրիկ ե. — Ախմախ Սուրիկ:

— Ո՞վ ե ձեր պետը:

Խուժանն այդ հարցին չպատասխանեց:

— Զես լսում, — ասաց Գասպարը, մոտենալով, — ով ե ձեր պետը:

— Մենք պետ չունենք, ընկեր, — ժպտաց տղան: — Մենք աղատ խուժան ենք:

— Լոխի...

Յեվ Գասպարը կոպիտ կերպով բռնեց նրա ծնոտի տակից:

— Ո՞ւմ ես խարում: Քեզ բան են հարցնում. պատասխանիր: Հարկավոր ե:

— Գուցե թե ուրիշ խուժանները պետ ունեն, բայց յես չեմ ճանաչում, — համառեց Սուրիկը:

Գասպարը ձեռքը տարավ գրպանը, հանեց այնտեղից ամբողջ յեղածչեղածը, — թղթեր, դանակ, թաշկինակ, և շուռ ու մուռ տաւով, սկսեց փող փնտրել: Զգտավ, ջղայնացավ:

Խուժանը, տեսնելով, վոր հարց ու փորձ անողը պատրաստվում եր նույնիսկ փող վճարել իր պատասխանի համար, յենթաքրեց, վոր հարցը բավական լուրջ ե ու վտանգավոր, վախեցավ և մի վերջին անդամ նորից կրկնեց.

— Յես վոչինչ չեմ իմանում...

— Դե դնա, քու հերդ ել անիծած, — կատաղեց Գասպարը, և յերեխային ուժեղ քացի տալով, շարունակեց իր ճանապարհը: Գնաց ևս բավկան տարածություն, թեքվեց մի այլ փողոց և բաց արավ այնտեղի մանրիկ դռներից մեկը: Միջանցքում, ուր նա մտավ, կային յերկու դռներ: Մեկն ըստ յերեսոյթին՝ տանտիրոջ բնակարանն եր, իսկ մյուսի վրա կպցը առ սպիտակ մի խավաքարտ, վորի վրա խոչը տառերով գրված եր. — «Կարմիր սկառուներ»: Յեվ ապա դրա տակը ավելի մանր տառերով. — Մամիկոն, Գասպար, Լեոն, Գարեգին, Սիոն, Ոհան: Նա բաց արեց այդ դուռը և մտավ: Ընկերներն արդեն յեկել ելին:

— Բարեիր, — առաջարկեց Լեոնը կատակով:

Գասպարը վոչինչ չպատասխանեց, հանեց գլխարկը, նետեց լուսամուտի դոդը և նետովեց իր մահճակալի վրա:

— Վատ չեր լինի, յեթե կոշիկներդ ել հանեյիր, — նորից առաջարկեց Լեոնը:

Գասպարը կտրուկ շարժումով գլուխը շուռ տվեց նրա կողմը և գոռաց:

— Շամա պիտի խոսես...

— Սուս կաց, Լեոն, ելի ջղայնացած ե, — խորհուրդ տվեց Ոհանը:

Լեոնը նայեց Գասպարին և նույնպես պառկեց իր մահճակալին: Սիոնն ու Ոհանը մոտեցան սենյակի անկյունում կախված լվացարանին, սկսեցին լվացվել:

— Քեզ չեր խանգարի, յեթե նորից վորեմ տեղ աշխատեյիր, — ասաց Գարեգինը կարեկցար, սրբիչը ձեռին: — Այն ժամանակ ջղայնանալու առիթ չեյիր ունենա:

— Մամիկոնը, վոր մինչ այդ լուռ եր, ակնաբեկով հասկացրեց Գարեգինին, վոր խոսելու ժամանակ չե և մեծ ընկերոջ նման, համարյա հոր նման մատենալով Գասպարին, նստեց, ձեռքը դրեց նրա ուսին և հարցը եց.

— Ո՞նչ ե պատահել...

Սիոնն ու Ոհանը ընդհատեցին լվացվելը և սկսեցին լսել, վոր ըովինետե գիտեյին, վոր Գասպարը չի կարող Մամիկոնին չպատասխանել: Յեվ իրոք, նա վեր կացավ, նստեց և բարկացած աչքերով նայելով լուսամուտից դուրս, հայտնեց.

— Զընդունեցին...

— Յես եղակես ել գիտեյի, — մըմնջաց Մամիկոնը: — Վոչինչ չեր դուրս գա...

— Ի՞նչու պիտի դուրս չգար, — բորբոքվեց Գասպարը: — Դու իզուր ես այդքան հուսահատվել, փալաս դարձել: Շատ լավ ել դուրս կդար, յեթե մերոնք չլինելին:

— Ութսունիննը, — հարցրեց Սիոնը:

— Վոչ միայն Ութսունիննը, այլև բոլոր կապույտ պատկռմները:

— Կապսւյտ պատկռմննը... — տարակուսեց Ոհանը:

— Իե մերոնք, ելի, — նորից ջղայնացավ Գասպարը: — Ի՞նչ կա չհասկանալու: Ասել են՝ նա դեռ չի փոխվել, նա ելի նախկինն ե: Սրիկաներն, ինչպես յերեւում ե, յեկել, բանվորներիցն ել եյին տեղեկություններ քաղել իմ մասին: Ասել են՝ կոսկիտ և վարվում մեղ հետ: Դեռ լավ եր, վոր չեյին իմացել հեռացվելուն մասին...

— Դրանից հեշտ բան, — ժպտաց Լեոնը. — յերեկի հիմի արդեն գիտեն: Դե վերջացրեք, տղաներ, — դիմեց նա Սիոնին և Ոհանին, — քնանք ճաշելու:

Գասպարը գնաց կանդնեց լուսամռւտի մոտ և համարյա ինքնիրեն դիմելով, սկսեց խսնել.

— Նորից Ութսունիննը... Կաղաչի Պոստումն ել Ութսունիննը, եստեղ ել Ութսունիննը: Նա յե մյոււսներին կազմակերպողը: Նա վոր չլինի, մյոււսները վոչինչ: Մի քայլ ես անում, թրըմի, վոտքիդ տակ քար ընկավ: Նայում ես՝ նա յե: Մի քայլ ես անում, ընկնում ես, քիթդ ջարդում: Նայում ես՝ ելի նա յե...

— Մենակ նա չի, — ուղղեց Գարեգինը: — Դու ինքդ ես ասում. — Հրաչ կա, Միհրան կա, Վարդան, Վաղեն, Մմրատ... Ել չեմ խոսում պատկռմական կազմակերպությունից դուրս յեղածների մասին: Նրանց ել և Արամը խրատում: Հենց թեկուղ մեր կողքին, շինարարության վրա: Ես քեզ սե ջոկատի Ռուբենը, ես քեզ սե ջոկատի Ասքանաղը...

— Մի խոսքով, յերկու հարյուր քառասուն՝ հանած քսան-հինդ, — յեղափակեց Լեոնը:

Մամիկոնը, վոր գլուխը ձեռների մեջ առած նստել եր սեղանի մոտ, նայեց Լեոնին:

— Հիմա արդեն՝ վոչ թե քսանհինդ հանած, այլ գուցե միայն մեղ վեցիս: Այն ել՝ կես-հուսահատված, կես-հիասթափված, կես ել, գուցե գեպի կոմունիդմի գաղափարը թեքված...

Գասպարը կատաղարար հարձակվեց նրա վրա, բռնեց նրա ուսերից և սկսեց ուժեղ ցնցել:

— Ի՞նչ ես ջարդվել, եյ, քեզ հետ եմ, ընկեր կես-հուսահատված, կես-հիասթափված: Չես ամաչում: Ի՞նչ որինակ պիտի տաս Սիոնին ու Ոհանին: Յեկ ինչո՞ւ յես կարծում, վոր միայն մենք վեցս ենք մնացել մեր կոչմանը հավատարիմ: Մեղնից ինչո՞վ են պակաս Սև Վահանը, Սեղրակը, բոլոր մյոււսները: Անցած որը չե՞ր, վոր կարդացի Հրանտի նամակը: Ի՞նչ եր գրում: Իսկ դժւ... Եդ միայն դու յես, վոր խիված ագռավի նման թեկողդ քաշ ես արել: Իսկ կոմունիդմի գաղափարիդ ակնարկները, խնդրում եմ ուրիշների նկատմամբ անես: Եստեղ դավաճաններ չկան:

Գասպարը լոեց, նայեց ընկերոջը, վորն ամբողջ այդ հանդիմանությունների ընթացքում գլուխը կախ լսում եր, — ավելացրեց:

— Ահա թե ում և նշանակել Քիրաղը մեր բջիջի գեկավար... Ասենք նա ի՞նչ գիտենար, վոր իր սիրելի հայ արին այսքան շուտ կարող եր փոխվել...

Հանկարծ Մամիկոնը ձեռն ուժեղ խիվեց սեղանին, կտրուկ վեր կացավ, և Գասպարը, խոսքը բերանում կիսատ՝ դարմացած յես քաշվեց: Բոլոր մյոււսները վախեցած նայեցին:

— Քիրաղի անունը չտաս, թե չե ոյին կսաբքեմ, — գոռաց Մամիկոնը: — Քիրաղը չե՞ր այս ամենի պատճառը: Յես թքել եմ Քիրաղի վրա: Զկարողացավ յերկուհարյուր քառասուն սկառուներով գործ տեսնել. խսկ հիմի հույսը դրել և քսանհինդի վրա:

— Մի թքիր... — անվստահ առաջարկեց Գասպարը. — Քսանհինդը, յեթե աշխատենք, կմեծանա...

— Կմեծանա, — զայրույթով քմծիծաղ տվեց Մամիկոնը: — Ի՞նչքմն կդառնա: Յերկուհարյուր քառասունն: Ախր հենց եղ յերկուհարյուր քառասունն եր, վոր Քիրաղը չկարողացավ պահել: Իսկ հետո: Հետո նորից մի Ութսունինն կհայտնվի և ամեն ինչ կը փչացնի: Յես թքել եմ Ութսունինն իրա...

— Տղաներ...

— Բոլորը նայեցին Գարեգինին:

— Լսեցեք, տղաներ, և հատկապես դու, Մամիկոն...

Նրա խոչոր, հաստ շրթունքները տարորինակ կերպով գողոզում եյին և յերկում եր, թե ինչպես նա բառեր եր վինարում սկսելու համար:

— Յես հիշում եմ, տղաներ, թե ինչպես մի անդամ, յերբ մենք Սեկերսկի վարբանոցներն եյինք գնում, — իսկ այդ արդեն սկառուտանոցի քայլաբայման շրջանումն եր, — մոտեցա Քիրաղին և ասեցի: — «Պարոն պետ, հիշում ես արդյոք, վոր իմ հիշատակարանում գրել

Ես. — «Ակառւար յերկու բանով կարող ե փոխարինել իր փայտը. — զենքով կամ գործիքով»: Դու զենքը չտվեցիր, ուստի և նա գործիք ե վերցնում... Ի՞նչ եմ ուղում ասել, տղաները: Ուղում եմ ասել, վոր հարցը միայն Արամը չեր: Ի՞նչ կարող եր անել մեկը յերկուհարյուր յերեսունիննի դեմ, դեռ վեց ջոկատապետ ել ավելի, դեռ վարժապետները, կառավարիչները, դաստիարակչուհիներն ու ամերիկացիներն ել ավելի... Ի՞նչ կարող եր անել մեկը, յեթե... Այս Քիրազն եղ՝ բանը բոլորից ել լավ գիտեր, Նա ինձ պատասխանեց. — Մեր դեմ միլիոններ կան, տղաս... — Ուրեմն, Գասպար և Մամիկոն, հարցը վոչ թե Արամն ե, այլ այն, վոր չորս կողմը խորհրդային իշխանությունն ե:

— Ահա կոմունիստը, Գասպար, — ասաց Մամիկոնը հանգարաձայնով, ցույց տալով Գարեգինին: — Յես միայն մի բանում եյի սխալվել: — Յես կարծում եյի, թե նա կես-կոմունիստ ե, բայց բանից դուրս ե դալիս, վոր արդեն լրացել ե...

— Մի բան ել ավելացել ե, — վրա բերեց Լևոնը:

— Վաչ, տղաներ, — առարկեց Գարեգինը, — յես կոմունիստ չեմ: Յես այն եմ ասում, ինչ վոր ճիշտ ե ու աչքերովս տեսնում եմ: Դուք միթե չեք տեսնում...

Վոչ մեկը չպատասխանեց: Գասպարը նայեց Սիոնին ու Ոհանին և քմծիծաղով հարցրեց.

— Սիոն, Ոհան, պատասխանեցեք մարդուն: Միթե չեք տեսնում: Սիոնն ու Ոհանը նայեցին նրան, ապա հայացքները հառցին Մամիկոնին: Մամիկոնն այդ նկատեց:

— Ընկեր բջիջի քարտուղար, — դիմեց Գասպարը նրան. — Էավ նայիր սրանց: Արանք պատասխանը քեղանից են ուղում:

Բայց նախքան վարեն մեկը վարեն բան ասեր, տեղից վեր կացավ Լեռնը, գլխարկը դրեց և դիմեց դեպի դուռը:

— Գնանք ճաշարան: Առանց են ել սոված եյի, իսկ վեճից հետո՝ վոնց վոր մի ամիս բան կերած չլինեմ: Իսկ յեթե իմ կարծիքս ուղում եք իմանալ, յես կասեմ հատեյալը. — Ավելի լավ ե գլուխներս ցավի տակ չդնենք: Ի՞նչ ե մեղ հարկավոր: Որինակ յես, ուղում եմ հարստանալ, լավ ապրել, ինձնման հազարավորների միջից համառ կերպով բարձրանալ դեպի մետաքսը, փլավը, կոնյակը, սեփական ախոռը, սեփական շտեմարանը... Ես իշխանության սրոք՝ դա կարելի յե, թե չե: Իմ կարծիքով, կարելի յե: Միայն թե, կամքի ուժ ե հարկավոր և հնարագիտություն: Գնանք...

Այս ասելով, նա դուրս գնաց: Բոլորը մեկ առ մեկ դիմեցին դեպի դուռը:

— Գնանք, — դիմեց Մամիկոնը Գասպարին: — Յես քեզ կհյուրասիրեմ:

— Շնորհակալ եմ, — մերժեց նա: — Յես կգնամ Արտուրյանի մոտ: Մամիկոնը բռնեց նրա թիգ:

— Լսիր, Գասպար... Ամսթ ե... Դու բոլորովին կորցրել ես քո բարոյական գեմքը: Գնանք միասին...

— Ասացի վոր շնորհակալ եմ: Դու խնձ պարտավոր չես: — Իսկ նա պարտավոր ե:

— Այս:

— Ի՞նչնեւ:

Պատասխանի փոխարեն Գասպարն իրեն ցնցեց, թէն աղատեց նրա ձեռքից և գնաց: Մամիկոնը բղավեց նրա յետելից:

— Ամաչիր, Գասպար: Եեվ այդ դժու պիտի որինակ տաս Սիոնին և Ոհանին իմ փոխարեն...

Ապա գառնալով դեպի նրանց, խիստ տռնով հայտնեց.

— Տղաներ, լսել եմ, վոր դուք ել՝ եք բռնել Գասպարի ճանապարհը: Այլևս չմեմ-չիմանամ, վոր դուք Արտուրյանի մոտ գոտ կտիեք: Պետք ե լինել աղնիվ, և վոչ թե սրիկա: Այդ պատկոմներն ու կոմունիստներն են ասում, վոր մենք սրիկաներենք: Իսկ մենք պիտի ապացուցենք, վոր վոչ, մենք աղնիվ ենք: Ճիշտ ե, դրանով ել մենք վոչ մի ոգուտ չենք ստանա, բայց ճիշտ ե, պիտի լինել վոչ թե ոգուտի նպատակով, այլ հենց այնպես: աղնիվ պիտի լինել վոչ թե ոգուտի նպատակով, այլ հենց այնպես:

Նրանք նույնպես դուրս յեկան: Գարեգինը դուրս յեկավ ամենից հետո:

Գասպարը միքիչ տեղ քայլեց Լեռնի հետ միասին, ապա հարցրեց.

— Լսիր, դու ինձ չես կարող ասել, թե վարտեղ կարող եմ հանդիպել խուժանապետին:

— Իսկ ինչնեւ յես կարծում, վոր յես նրան ճանաչում եմ, ծիծաղեց Լեռնը:

— Գիտեմ: Նախքան աղնիվ բանվոր դառնալի դու կարծեմ նրա հետ վորոշ կապեր ունեյիր...

Լեռնը կանդ առավ:

— Ի՞նչ ես վախենում ինձանից, հիմար, — հանդիմանեց Գասպարը: — Յես ուղում եմ սրիկա Ութսունիննին մի լավ, սրտիւղածի պես ծեծել տամ...

Լեռնը տվեց խուժանանցի հասցեն:

## ԶՈՓՈՒՄ ՈՆԻԿ

Վաչիկը մնաց աշխարհիս յերեսին բոլորովին մենակ: Թե պատկոմատուն գնալու որը և թե զբա հետեւյալ որը նա սկսեց թափառել քաղաքի փողոցներում և վոչ մի տեղ հանգստություն չգտավ: Այդ յերկու որվա ընթացքում նա համարյա վոչինչ չկերավ և զգալի կերպով գունատվեց: Սկսեց թափառել փողոցներով, բոլորովին հուսահատված, բոլորովին մենակ: Նա այժմ շատ եր ցանկանում տեսնել իր նախկին ընկերներից վորոն մեկին, թե կուզ հենց Անտերին, խոսել նրա հետ, սիրով թեթևացնել: Բայց հակառակի պես, կարծես իր մենակությունը լիակատար դարձնելու համար, իր բոլոր ծանոթ խոռժաններն անհետացել եյին:

Թափառելով՝ թափառելով, Վաչիկն ընկավ դեպի կայարան տանող փողոցներից մեկը: Նոր միայն նայեց շուրջը, սթափվեց, զգաց, վոր վոտքերն արդեն հոգնել են և վորոշեց վորոնե քարի վրա նստել: Հետո հանկարծ հիշեց, վոր այդ որն արդեն չորսորդ որն եր, ինչ նա ատրում եր հյուրանոցում, մինչդեռ վճարել եր միայն յերեք որվա համար: Մտածեց, վոր ավելի լավ ե՞ վերադառնա հյուրանոց: Համ փողը վճարի և հերթապահին քմծիծաղի տեղիք չտա, համ ել հենց այնտեղ կհանդստանա:

Նա յետ դարձավ և արագ քայլերով նորից իջավ դեպի քաղաքի կենտրոնը: Նախքան զլխավոր փողոց մանելը, կանդնեց մի անկյունում, պինջակի ներքին դրանից հանեց փողամանը, փողերը հաշվեց, նորից դրեց տեղը: Հետո հիշեց, վոր Աչիկի համար դնած հագուստները պատառտելուց հետո իր մեծ չեմողանը համարյա բոլորովին դատարկել եր, չհաշված մի յերկու զույգ սպիտակեղենը: Կարելի յե այդ սպիտակեղենը լրագրի մեջ փաթաթել, իսկ չեմողանը վաճառել: Յեվ ընդհանրապես, հարկավոր ե ավելի խնայողաբար ծախսել: իսկ վոր զլխավորն ե՛ վճռել իր անելիքը: Խո չի կարելի հավիտյան մնալ հյուրանոցում: Հարկավոր ե սենյակ և աշխատանք ճարել...

Հանկարծ մի ծանր թաթ կամացուկ իջավ նրա ուսին:

— Վաչիկ...

Վաչիկը յետ նայեց և անակնկալից ու սարսափից քար կտրեց: իր առաջ կանգնած եր Զոփուռ Ոնիկը:

— Բարեւ... — կմկմաց Վաչիկը, զարհուրած կերպով անթաթ նայելով նրա աչքերին:

**Զոփուռ Ոնիկն աչքի տակով շուրջը նայեց ու շշնջաց.**  
— Յետեիցս արի...

Յեվ սկսեց անփույթ քայլերով ճանապարհը շարունակել:

Չնայած, վոր Վաչիկի խոռժանության որերը վաղուց եյին վերջացել և նա վաղուց եր դադարել Զոփուռ Ոնիկի հետ վորեն առնչություն ունենալուց, այնուամենայնիվ հենց նրա տեսքը բավական յեղավ, վոր խելազարի դրության հասցներ Վաչիկին: Իսկ յերբ նա առաջարկեց իրեն հետեւ, Վաչիկի ծնկները թալացան վատ յենթադրություններից և նա պատրաստ եր գետին շրմփաւու: Սակայն Ոնիկն այնպիսի ինքնավստահությամբ ասաց ցյետեիցս արի, վոր Վաչիկն ակամայից, կարծես քնի մեջ, սկսեց հետեւ նրան:

**Զոփուռ Ոնիկը գնաց յերկար, ապա թերվեց, ապա նորից թեքվեց ու գնաց: Մի բոլե Վաչիկի մտքովն անցավ թագնվել վորեն դարպասի յետե, ծլկվել, սակայն խսկույն և զգաց, վոր դա ավելորդ և և խոռժանապետը դրա համար իրենից անպայման վրեժինդիր կլինի: Ավելի լավ ե՞ գնալ: Գուցե վոչ մի վատ բան չկա, գուցե նա պարզապես ուղում ե խոսել իր նախկին խոռժանի հետ...**

Սակայն վոչ այդ միտքը և վոչ ել ուրիշ վորեն միտք, չկարողացան հանգստացնել Վաչիկին: Նա սոսկումով նկատեց, վոր իրենք գնում են հետզետե ավելի և ավելի խոռ փողոցներով: Գուցե կանչել ահա այս միլիցիոներին և ձերբակալել տալ այդ սարսափելի մարդուն... Բայց միթե Վաչիկը կարող և ձայն հանել: Ոնիկն անմիջապես կչքանա, վորպեսզի սակայն շուտով լուծի իր վրեժը Վաչիկից: Ալ, յերանի միլիցիոներն ինքն ամեն ինչ գլխի ընկներ և գալ Ոնիկին ձերբակալելու:

Իսկ Զոփուռ Ոնիկը, վորը, հակառակ իր անվան, բոլորովին ել ծաղրական չեր, շարունակում եր դնալ նույն անփույթ և անտարբեր տեսքով: Նրա սպիտակամբթ, բավական նիհար դեմքը միանգամայն հանգիստ եր և միայն նրա աչքերն եյին, վոր տեսնդահարի աչքերի պես շարունակ շարժման մեջ եյին: Նա հագել եր դեղին կոշիկներ, մուգ-կապույտ անդրավարտիք և գրել եր սովորական գլխարկ, բայց նրան սարսափելի տեսք տվող նրա բաց-կանաչ մետաքսե բլուզն եր, վորի վրա նա կապել եր մուգ-կարմիր ծոպաթել գոտի, Վերնաշապկի կոճակները, վոր ուղիղ առջեիցն եյին և սկսկում եյին համարյա պորտի մոտից, կոճկված եյին ամբողջապես ներքելից մինչև կզակի տակը: Նա բո-

լորովին ջղայնացած չեր, բայց յերբ ծխախոտ վառեց ու դրեց բերանը, յերկու անգամից ավել ծուխը ներս չքաշեց: Իսկույն ամբողջ ծխախոտն առավ բերանը և կոթով, կըակով, մոխիռով միասին սկսեց ծամել: Ծամեց, խառնեց իրար, ապա մի ամբողջ բաժակ թքի հետ միասին հանդարտ դուրս թափեց: Հստ յերեւայթին՝ դա նրա սիրած հնարքներից մեկն եր, վորով նա հիացմունք և հարգանք եր հարուցում իր ընկերների մեջ դեպի իրեն: Թքելուց հետո, նա ուղղեց զստին, այսինքն ինչ վոր հնարքով ձգեց-յերկարացը այն և նրա ծովերը կախ ընկան համարյամինչեւ գետին:

Վոչ մի բան Վաչիկի վրա այնքան լեղաճաք անող տպավորություն չթողեց, վորքան այդ մուգ-կարմիր դոսին բաց-կանաչ բլուզի վրա: Իսկ թե ինչո՞ւ նա չկարողացավ վորոշել:

Հանկարծ Զոփուռ Ոնիկը միանգամից շուռ յեկավ, հարցը եց.

— Ո՞ւր եյիր:

Վաչիկը, չսպասելով, վոր նա պիտի կանգ առնի, վորքն առաջ դրեց և շրմիցով կպավ նրան: Ոնիկը վոչինչ չասաց դրա համար, այլ իր յերկու ձեռքերով բռնեց նրա ուսերից և նրան զգուշությամբ մի քիչ յետ հրեց: Նրա ձեռքերն անհամաչափ մեծ եին, թեև վոչ կոպիտ:

— Ապա, շուտ, բան եմ հարցնում:

— Յես... — կմկմաց Վաչիկը: — Հորյեղբայրս ինձ տարավ... մեռավ... կտակեց...

— Քեզ հետ եմ, — ասաց Ոնիկը և իր յերկու ափերով բռնելով նրա գլուխը, նայեց ուղիղ աչքերին: — Հորյեղբորդ հեքյաթը պահիր հորաքրոջդ համար: Թիֆլիս եյիր, թէ Բագու:

— Ռոստով... — մըմնջաց Վաչիկը, լիակատար կերպով յենթարկելով նրան:

— Արհեստդ:

— Շատ բան եյի անում, բայց ամենից շատ՝ դառ եյի արածացնում...

— Դառ եստեղ ել եյիր արածացնում: Ուրիշ բան սովորեցի՞ր:

— Փուչիկ եյի տրաքացնում:

— Փուչիկ... Մի անդամ եստեղ տրաքացրիր, սապոնն աչքերդ լցվեց:

— Վոչինչ, սովորեցի:

— Ուրիշ ինչ գիտես: Ասենք հետո կիմանամ: Ապա ինչքան փող ունես...

Նա ձեռքը տարավ Վաչիկի ծոցը, հանեց այնտեղից փողամանը, մասնագետի արագ հայացքով մի ակնարկ գցեց նրա ներսը և զարմացավ.

— Ե՞ս ե...

Վ — Ուրիշ չունեմ: Դանակդ վկա:

Դա Զոփուռ Ոնիկի խուժանների յերդումն եր: Լսելով Վաչիկից այդ յերդումը, Ոնիկը գոհ մնաց և փողամանն իր գրպանը դնելով ասաց.

— Լավ! Հիմի յես գնում եմ: Իրիկունը կդաս խուժանանոց:

— Կդամ:

Զոփուռ Ոնիկը գնաց: Վոչ յերդվեցը Վաչիկին, վոչ հասցեն հարցը եց, վոչ սպառնաց: «Իրիկունը կդաս խուժանանոց»: Նամիայն այգքանն ասաց, վորովհետեւ նրա մտքովն անդամ չեր կարող անցնել, թե Վաչիկը, թեկուղ և վոչ-խուժան, կհամարձակվեր իր խոսքին չյենթարկվել Յեվ նա այնպիսի ինքնավստահությամբ կարգադրեց, վոր Վաչիկը ցուրտ զդաց, փշաքաղվեց, բայց յենթարկվեց: Նրա գնալուց հետո, յերբ աչքի առաջից վերացավ կանաչ բլուզն իր կարմիր գոտիով, Վաչիկն զդաց, վոր ուզում և մտածել, թե այդ ինչ պատահեց և թե ուրիշ ինչ կարող ե պատահել, բայց և միենալու ժամանակ զդաց, վոր միենույն և, ինչ ել վոր մտածի, յերեկոյան չի կարող չգնալ խուժանանոց:

12

## Խ Ո Ւ Ժ Ա Ն Ա Ց Ո Ւ Մ

Այժմ արդեն Վաչիկը փող չուներ հյուրանոցի պարտքը վճարելու: Փաղ չուներ նույնիսկ վորեն բան ուտելու, մինչդեռ իրեն զդում եր չափաղանց սոված: Ո՞վ գիտեր, յեթե նա փող ունենար, զուցե դեռ ուտելու կարիք չզգար, բայց այժմ տարորինակ կերպով զդում եր այդ կարիքը:

Յեվ ինչպես իր անցայլի սոված որերին, այնպես ել այժմ, Վաչիկն սկսեց ուժեղ կերպով ցանկանալ, վոր որը շուտ անցնի, վորպեսզի ինքը պառկի քնելու և քաղցը մոռանա: Բայց յերբ հիշեց, վոր յերեկոն իր հետ բերելու յեր նաև մի նոր հանդիպում Զոփուռ Ոնիկի հետ, նրա թուքը բերանում չորանում եր: Վոչ, ավելի լավ ե թող ինքը սովից մեռնի, բայց յերեկոն չի չնի յերբեք, յերբեք... Իսկ յերեկոն, դանդաղ, բայց համառ իշնում եր:

Ամեն որվա նման հիմնարկները փակլեցին. ճետո խանութները, իսկ դրանից հետո՝ սկսեցին զողանջել յեկեղեցիների զանգերը: Ունկընդեռով նրանց ձայնին, հանկարծ վաչիկը հիշեց մի յեկեղեցի, վորի գոներն ամուռ մեխված եյին, և այժմ իհարկե այնտեղ զանդ չեր խփում: Դա պատկոմատան բակի մեծ յեկեղեցին եր: Այ, ինչ լով կլինի, յեթե մարդ զնա նըա նեղ լուսամուտներից մեկից ծածուկ սպրդի ներս և կորչի Զոփուռ Ոնիկի աշքից, մինչև փոր... Մինչև վոր բնչ լինի: Մինչև վոր մեռնի Բայց վոչ, չմեռնի: Մեռնելը լավ բան չի: Մարդ մտնի այնտեղ, պատկոմներից մեկն ու մեկին լոնդը, վոր նա ամեն առավոտ ծածուկ կերպով լուսամուտից ներս նետի մի կտոր հաց.— մի փոքրիկ կտոր հաց, հա, մի քիչ ել ջուր...

Բայց յեթե փախչի, յեթե նա լենինականից հեռանա, նա այլու ընդմիշտ, ընդմիշտ կկորցնի իր քրոջ հետքերը: Իսկ այժմ, հույս ունի դոնե նրա գերեզմանը զտնելու... Վոչ, փախչելն անհնար ե...

Շուկայի կողմից սկսեցին յերեալ խուժաններ, վորոնք խուժանոց եյին գնում: Նրանց կեղտու ու հազար տեղից ճըղճըղված հազուտաների տակից յերեսում եյին մերկ սրունքները, մեջքները, փորը: Նրանք բոլորն ել գլխաբաց եյին ու վոտարորիկ, կեղակից կնճոռտված ձեռքերով և համարյա մուր քսածի նման սեղեմքերով: Կային և այնպիսիները, վորոնց դեմքերը հենց ուղղակի մրից ել սեացել եյին: Յերբ նրանք լուռ եյին, նրանց սեղեմքերի վրա վառվում եյին արյունի նման կարմիր շրթունքները: Իսկ յերբ խոսում եյին՝ սադաֆի պես սպիտակ ատամները: Ամենաանմեղ յերեխայի աչքերն անդամ այդպիսի սեղեմքի վրա պապում եյին սուր ու շեշտակի և վախեցնում եյին մարդկանց:

Վաչիկն սկսեց աչք ման ածել վորպեսդի գտնի Անտերին: Ավելի լավ և նրա հետ միասին դնալ քան թե մենակ: Իր հետ վոր ընկեր լինի, նա սիրու կառնի, իրեն չի կորցնի:

Բայց Անտերը չկար:

Արդեն անցան բոլոր խուժանները, անցան բոլոր խանութպանները և այլ մարդիկ. փողոցը համարյա դատարկվեց: Իսկ վաշչեկը դեռ կանգնել եր: Ըստ յերեսույթին նա շատ եր վախենում խուժանանոց գնալ և դրա համար եր դանդաղում, բայց այսպես եր մտածում, — յես բոլորովին ել չեմ վախենում: յես միայն Անտերին եմ սպասում...

Սակայն հավիտյան սպասել ես չեր լինի: Արդեն լիակատար յերեկո յեր:

Վաչիկն ակամայից սկսեց քայլել: Կարծես վոչ թե ինքն եր քայլում, այլ մի մեքենա յեր շարժում իր վոաքերը: Նա դանդաղ քայլերով քաղաքի կենտրոնն իր յետեւ թողեց...

Այնտեղ ուր քաղաքը համարյա վերջանում եր, ուր չկային վոչ միայն գլխավոր փողոցների ելեկտրական լույսերը, այլև չկային նապիթի ճրապներ, ուր հատուկենտ տնակնելը կանգնած եյին լիակատար խավարի մեջ, փակ դոներով ու փեղկածածկ լուսամուտներով, զանվում եր մի ավերակ բաղանիք: Ինչպես մնակների, այնպես ել այդ բաղանիքի վրա խշշում եյին բարձրահասակ ծառեր: Բաղանիքի վրա, նրանք միենույն ժամանակ ծառաւ յում եյին վորպես կտուր, վորովհետեւ նըա բոլոր սենյակների կտուրները քանդված եյին: Յերբեմն, յերբ քամին ուժեղ տարբեկութիւնում եր յերկու ծառերի ճրապների մուտքում եյին բաղմաթիւվ խուժաններ: Իսկ յերբ լուսին բուրովին չեր լինում, խուժանների ներկայաւթյունը մատնում եյին ծխախոտի այն կարմիր կայծերը, վոր վայլում եյին մերթ այս անկյունում, մերթ այն:

Աչքերը վարժեցնելով մթությանը, կամաց-կամաց կարելի յեր նկատել առարկաների գծազրությունը խավարի մեջ: Այն տեղը, ուր հավաքված եր խուժանների գլխավոր մասսան, իրենից ներկայացնում եր բաղանիքի քարուքանդ յեղած լողաբանը: Նրա չսրս կողմում կիսատ-պատ պատերի յետեսում, կային ավելի մանրիկ տեղեր, վորտեղ նույնական քնում եյին խուժանները: Բաղանիքի հանգերձարանը բուրովին ավերված եր, այնտեղ միայն հողի և աղբի կույտեր եյին կիտված, ուր ցերեկները խողեր եյին հավաքվում, իսկ գիշերները, վետքերն զգուշությամբ փոխելով, մերթ-մերթ գնում ու յետ եյին դառնում խուժանները...

Վաչիկն թվում եր, թե յերեկոն դեռ լիիվ չափով չեր մթնել: Սակայն կես ճանապարհին նկատեց, վոր այդ լիալուսինն եր, վորը պայծառ կերպով լուսավորում եր շրջապատը: Նա քայլերն արագացրեց և հասնելով խուժանանոցին, ավերակ պատերից մեկի վրայով իջավ ներս:

— Ո՞վ յեկավ, — հարցրեց մեկը պառկած տեղից, ծուլանալով նայել: Ըստ յերեսույթին, նրա քունը տանում եր:

— Յես եմ...

— Դու, ով ես, — զարմացավ մեկն անծանոթ ձայնից և դլուխը բարձրացրեց: Տեսնելով մաքուր ու հարուստ հագնված Վաչիկին, նա բացականչեց.

— Խուժաններ, ապուրի մեջ ճանձ ե ընկել...

Բոլորն անմիջապես վոտքի ցատկեցին, տեսնելու համար այն ճանձին, վորը սեփական վոտքով յեկել ընկել եր ապուրի մեջ, Նույնիսկ մյուս սենյակներից խուժանները ներս լցվեցին այնտեղ:

— Ճանձ չե, Փաս, — շշուկով դիմեց մի խուժան մի ուրիշի, վորն իրենից տարիքով մնձ եր, — Կարտոֆիլ ե: Կպճիր...

Վաչիկն անմիջապես հասկացավ, վոր խոսքն իր հազուստները հանելուն ե վերաբերում և հարցրեց.

— Իսկ խոհարարին թնչ պատասխան պիտի տաք...

— Վեցկրականուն, — հարցրեց Փասն ու մի քիչ յետ քաշվեց:

— Չե: Հենց Զոփուռին:

Իսկույն բոլորը սըսկվեցին:

— Ի՞նչ իմանանք, — արդարացավ Փասը, — խո ճակատիդ վրա դրած չէր:

Նույն ըռպեյին, կոկքի սենյակից ներս մտավ Վեցկրականին, վորին Վաչիկը ճանաչում եր իր խուժան ժամանակվանից: Վեցկրականու հետ ներս մտան նաև ուրիշ չորսը, — նրան հասակակից: Բատ յերեսոյթին, նրանք այնպես ծխում եյին և խոսակցում կարենոր նյութերի մասին: Նրանք մոտեցան, նայեցին նորեկին և վոչինչ չասացին: Միայն Վեցկրականին, թեթևակի հարցրեց.

— Զոփուռի բերման եր:

Վաչիկը դրականորեն վլուխը շարժեց: Նա չեր ուղում խոսել, վորպեսզի Վեցկրականին իրեն չճանաչի: Փասը, վոր կանգնած եր մի քիչ այն կողմ, մոտեցավ նոր ներս մտածներին և սկսեց նրանց հետ խոսակցել: Հասարակ խուժանները մեկ առ մեկ հեռացան և նորից պառկոտեցին:

— Փաս, ասա, չքննեն, հիմի Ոնիկը կդա, — կարդադրեց Վեցկրականին, չցանկանալով ինքն անմիջապես դիմել նրանց: Սակայն նրանք բոլորը լսեցին նրա ասածը և մեկը նույնիսկ ձայն տվեց.

— Չենք քնի, Վեցկրականի: Մի քիչ հանգստանանք:

— Աշուալ չեկամ, — հարցրեց Վեցկրականին հատկապես վորեւ մեկին չդիմելով:

— Չե, — պատասխանեցին միաժամանակ մի քանի անկյուն-

— Յես նրա վեղը կկտրեմ, — հանդիսա ձայնով սպառնաց Վեցկրականին: — Վոր փախավ՝ կարծում եր կազմառվի:

— Գաղութ տարած կլինեն. — յենթաղը նրա հետ ներս մտածներից մեկը:

— Գաղութում չկա: Տեղեկացել եմ:

Ապա դաւնալով դեպի Վաչիկը, հարցրեց.

— Նոր ես յեկել:

Վաչիկը նորից գլուխը շարժեց:

— Ի՞նչ ես զանգուլակդ զնդացնում, լեզու չունեմ:

— Նոր եմ յեկել:

Վահանից:

— Վերին տեսակի յե, — յենթաղը Փասը:

— Վոչ ներքին, վոչ վերին, — վիրավորվեց Վաչիկը: — Յես մարդ եմ:

Նորից մի քանիսը զարմացրած բարձրացրին գլուխները:

— Մարդ ես, — հարցրեց Վեցկրականին: — Բա թնչ գործ ունես մեղ մոտ:

— Զպիտեմ: Զոփուռն ե ուղարկել:

Նույն ըռպեյին, մեկը պառկած տեղից ձայն տվեց.

— Վաչիկ...

— Ո՞վ ե, — հարցրեց Վաչիկը:

Խուժանը տեղից վեր ցատկեց: Անտերն եր: — Վաչիկի հին ընկերը:

— Այ քեզ բան: — զարմացավ նա: — Հաստատ վոր դու յես:

Զայնիցդ ճանաչեցի: Ես վկր տեղից ես յեկել, Վաչիկ ջան...

— Ի՞նչ Վաչիկ, — հարցրեց Վեցկրականին Անտերին:

— Փոշտոյանը: Քո խմբիդ Վաչիկը:

Վեցկրականին կտրուկ մոտեցավ, լուսնի լույսով նայեց, ստուգեց նորեկի ով լինելը և համոզվելով, մի շառաչուն ապտակ հասցըրեց նրա ականջին: Վաչիկը վայր գլորվեց:

Նույն ըռպեյին ներս մտավ ինքը՝ Զոփուռ Ոնիկը: Հենց մուտքի մոտ, նա կոշիկի կրունկով արթնացրեց մի քանիսին, վորից հետո մյուռներն անմիջապես վոտքի ցատկեցին:

— Ծխախոտ տվեք:

Անմիջապես Վեցկրականին, Փասը, մյուս չորս մեծահասակները ծխախոտի տուփերը գրպաններից հանեցին:

— Լուցկի յել տվեք:

Վեցկրականին լուցկին մոտեցրեց նրա յերեսին:  
 — Աշուալ յեկավ: — հարցըրեց նա, ծուխը դուրս փչելով:  
 — Զի յեկել:  
 — Փաս:  
 — Ասա, Զոփուռ ջան:  
 — Եղուց մինչև իրիկուն տեղն իմանաս: Ալամախ Սուրիկը  
 քեղ ողնական:  
 — Լավ, Զոփուռ ջան:  
 Ոնիկը շուբջը նայեց: Նրա կողքին, գետնի վրա նստած մի  
 փոքրիկ կերպարանք կծկվեց, ավելի փոքրացավ, բայց Ոնիկը նկա-  
 տեց նրան, բամփով խփեց նրա զլեին, մաղերից բռնելով բար-  
 ձրացրեց, վոտքի կանգնեցրեց.  
 — Ո՞ւր եյիր, Ոլո:  
 — Կայարանում:  
 — Ինչու:  
 Նա ձայն չհանեց:  
 — Քեզ թնջ եյի ասել:  
 Նա նորից ձայն չհանեց:  
 Զոփուռ Ոնիկը ծխախոռը վար առավ բերանից, մոխիրը մա-  
 տով թափ տվեց, ապա կրակը մոտեցրեց տղայի ականջի բլթակին:  
 — Վախ, — ճչաց նա:  
 Ոնիկը կրակը մոտեցրեց մյուս ականջին:  
 — Եղուց չորս հավ կրերես, — կարգադրեց Ոնիկը և նրան  
 շպրտեց գետին:  
 — Ես հիվ ե ընկած:  
 — Վաչիկն ե, — բացատրեց Վեցկրականին:  
 — Թնբել ե:  
 — Զե, յես մի հատ հասցրի:  
 — Եսոր հեւմ եյին բռնել:  
 Այս անգամ պատասխանեց Փասը,  
 — Ինձ:  
 — Արձանագրեցթն:  
 — Զե, Փախա:  
 — Ինչի բռնեցին:  
 — Կովի համար:  
 — Վեցկրականի, տուր դրա վզին:  
 Լովեց մի ուժեղ շրմկոց, վորից հետո Զոփուռ Ոնիկը նորից  
 հարցըրեց.

— Ի՞նչ կոիվ եր:  
 — Զոփուռ ջան, ինչու յես ծեծել տալիս: — լացակումած ալըր-  
 տընջաց Փասը: — Վորբերի խումբն անցնում եր: Տեսնեմ Վեց-  
 կրականու խուժաններից մեկը շարքի մեջ: Ասում եմ՝ բաղնիք  
 գնա: Ասում ե՝ շատ եմ լողացել, շնորհակալ եմ: Ասում ե՝ ինչի պիտի ինամ,  
 կեղտ մաքրիր, բաղնիսպանը չի ծեծի: Ասում ե՝ ինչի պիտի ինամ,  
 վոր ծեծի կամ չծեծի. վոր մորթեն, — մանկատնից դուրս չեմ գա...  
 Դեհ, յես ել մտա շարք ու մի հատ տվեցի...

— Եղ ուրիշ բան, — համաձայնվեց Զոփուռ Ոնիկը. — Վեց-  
 կրականի, վղակոթին տվածդ յետ առ...

Վեցկրականին մոտեցավ և նախկին ուժով մի հատ հասցրեց  
 նրա կոկորդին:

— Ինչու յեք խփում, — լացակումած գոռաց Փասը:

— Դավաճանի հետ հաշիվ տեսնելու համար գիշեր կա, — բա-  
 ցատըրեց Ոնիկը: — Փողերը տուր տեսնեմ, Վեցկրականի:

Վեցկրականին ակնարկով հասկացրեց մի փոքրիկ խուժա-  
 նի, վորը վաղեց և մի քարի արանքից հանելով փողի կապոցը,  
 բերեց.

— Ե՞ս ե:

— Եղ ե:

Ոնիկը կապոցը կշռեց իր ձեռքի վրա, ուղիղ նայեց Վեցկրա-  
 կանուն:

¶— Եսոր շատ շոգ եր, Վեցկրականի:

— Հը:

— Ասում եմ՝ շոգ եր, Զի՞ հալիկել:

— Դանակդ վկա, Զոփուռ...

Ոնիկը կապոցը կշռեց իր ձեռքի վրա, ուղիղ նայեց Վեցկրա-  
 կանուն:

Խուժանների այդ սարսափելի յերգումն այսպես եր նշանա-  
 նակում. — յեթե սուտ եմ ասում, դանակդ փորս խրիր:

— Դու դիտես, — համաձայնվող տոնով յեղրակացրեց Ոնիկը:

Վեցկրականին ընկերական հանգիմանությամբ նայեց Ոնի-  
 կին և շշնջաց.

— Լավ, Զոփուռ՝ հաշիվ մաքրելու տեղ դտար լակոտների մոտ...

Ոնիկն ըստ յերեսութին համաձայնեց: Նա բաց արեց կա-  
 պոցը, վարժ աչքով փողը միանգամից կիսեց, կեսը տվեց նրան և  
 կարգադրեց,

— Փասի բաժինը քանից կտաս:

Փասն իսկույն ստացավ իր թղթադրամը, դըեց իր ծվեներից  
մեկի արանքը: Վեցկրականին, վոր հազնված եր Զոփուռ Ոնիկի  
նման, բայց նրա բոլողը մետաքսից չեր, այլ հասարակ կտորից,  
իր փողը պարզապես բլուզի ոճիքից ներս լցրեց:

— Բնեցեք, — կարգադրեց Ռնիկը խուժաներին:  
Նրանք բոլորն իսկույն պառկեցին:

— Առավտը շուտ, — շարունակեց նա, — տաս հոգի Փասի հետ  
կպնաք անասունների շուկան: Փաս, յերկու հատ մանր յեղջուրավոր... Յերկու հատ վոր բերեք, ամեն մեկիդ միշմի մանեթ կտամ,  
իսկ քեզ՝ վոտներն ու զլուխներն ել կտամ: Մի հատ, վոր բերեք՝  
կծեծեմ:

Յերբ Փասը նույնպես գնաց պառկեց, Ռնիկը դիմեց իր մաս  
նստած չորս հասակալիցներին:

— Գիշերս մեր պիտի գնաք:  
— Տեղ չենք գնա, Զոփուռ: Եսոր վտանգ կա:  
— Ման են գալիս:  
— Այս: Բոլոր փողոցներում:

— Սուտ ե: Դուք ինձանից լավ խռ չգիտեք: Մենակ շուկան  
են ման դալու: Դուք մի վախենաք: Յես ել տուն չեմ գնա, ձեզ  
հետ կդամ:

— Ի՞նչ պիտի անենք:

— Հյուր գնանք: Եստեղ մոտիկ, մի քեռակին կա: Քեռին  
ուրիշ տեղ և գնացել, ինքը մենակ ձանձրանում ե: Տունն ել  
միքն ե, դատարկ տեղ չկա, վոր պար խաղա... Վեր կացեք,  
Վեցկրականին հիշեցրեց Վաչիկի մասին:

— Արթնացըրու, — կարգադրեց Ռնիկը:

Վեցկրականին մոտեցավ: Վաշիկը քնած չեր: Նա կամացուկ,  
լեղդված ձայնով լաց եր լինում:

— Նստիր, Վաչիկ, — առաջարկեց Ռնիկը: — Ապրես, գե պատմիր:  
Վաչիկը հեկեկում եր:

— Շուտ, ժամանակ չկա:

— Այսր ի՞նչ պատմեմ, Զոփուռ:

— Գլխից-զլուխ պատմիր:

Վաչիկը պինջակի ծոցագրպանից թաշկինակը հանեց, չորաց  
ըրեց աչքերը և հանգստացած ձայնով սկսեց պատմել.

— Զեր մոտից վոր փախա, գնացի Թիֆլիս... Մի կազմարարի  
մոտ աշակերտ մտա... Սովորեցի... Բայց շատ եր տանջում: Ուան-  
դան տալիս եր ձեռքս, վոր մամուլի տակ դրած գրքերի թղթերը

տաշեմ-հավասարեցնեմ, վորովհետեւ նա մերենա չուներ: Յես տա-  
շում եյի, թմբերս թուլանում եր, նա ապտակ եր տալիս, հետո  
յես ելի եյի տաշում: Մի քանի ամիս հետո փախա նրաստով...

— Բուն նյութն ասա, ի՞նչ սովորեցիր:

— Հենց մաստավի կայարանում, — շարունակեց Վաչիկը, — մի-  
լիցիսներն ինձ բռնեց... Դուբս յեկավ, վոր նա իսկական չեր. —  
հազած միլիցիսներ եր... Ինձ տարավ իրենց տուն: Մի ժամա-  
նակ դրան եյի մտնում, — փուչիկ եյի տրաքացնում: Հետո  
սկսեցի տուն կարող խմբերին պահապան կանգնել — դառ եյի  
արածացնում: Հետո ասացին, վոր յես ընդունակ տղա յեմ, սար-  
քեցին փոքրիկ ջութակահար: Լավ հագցրին, լավ պահում եյին,  
քաղաքից-քաղաք ման եյին ածում: Աֆիշաները վոր տպում եյին՝  
իմ բոյիս եր: Ամեն տեղ իմ նկարս կար: Մի անգամ՝ լրապէի մեջ  
ել զրեցին... Յես բեմի վբա կանգնում, կնտկնտոցն եյի շարժում.  
իսկ Ժանը բեմի կողքից նվազում եր: Շատ փող աշխատեցինք:  
Բայց մի անգամ, դաշիճի մարդիկ նկատեցին, վոր յեղանակն  
ուրիշ տեսակ ե, իմ ձեռքիս շարժելն ուրիշ տեսակ... Ժանն ել  
փախավ, Յեղիմն ել... Մարդիկ վազեցին նրանց բռնելու, ինձ մո-  
ռացան... Յես տեսա, վոր ինձ չեն բռնում, գնացի բեմի յետեկց  
Ժանի չեմոդանն առա, գնացի կայաբան: Մեր կասսի փողը նըա  
մեջ եր: Թիֆլիս վոր հասա, քրոջս համար բան-ման առա, յեկա  
եստեղ...

Զոփուռ Ռնիկն ու մյուսները լսեցին և գլուխներն որորեցին:

— Եղ սովորածդ մեղ համար չի: Խսկ ուրիշ բան չգիտես:

— Զե:

— Վոր եղանես ե, թող ելի իր փուչիկները տրաքացնի, —  
առաջարկեց Վեցկրականին:

Վաչիկը քար կարվեց: Ո՞վ տրաքացնի իր փուչիկները: Ի՞նքը:  
Սյսինքն՝ թեղչպես թե ինքը...

— Անտեր, — ձայն տվեց Ռնիկը.

Թե Անտեր և թե մյուս բոլորն իհարկե դեռ արթուն եյին, և  
լուռ եյին խոսակցություն: Լաելով, վոր իրեն ձայն են տալիս,  
Անտերն իսկույն վեր ցատկեց:

— Հին շալվարդ ելի տակդ ես զցում:

— Հա:

— Բեր:

— Իմ տղաներիցս մեկի պենջակն ել բեր, — կանչեց Վեցկրա-  
կանին նրա յետեկց, ապա դարձավ դեպի Վաչիկը. — հանիր:

— Զեմ... — զոռաց վաչիկն ու սկսեց իբար յետելից արցունքաբար դլորել աչքերից: — Զեմ հանի... Թողեք գնամ... Զեմ...

— Հանի՛ր, յես քու..., — հայհոյեց վեցկըականին և նրա մի վոտքից բանելով, դեմոնին դլորեց. — հանի՛ր:

Ապա չսպասելով նրան, ինքը հասավ և կոճակները քանդեց:

— Ապա, Չոփուռ, լուցկի վասիր... Տեսնում ես տղան ինչքան և սպիտակել: Փափուկ ապրելուց ե: Վերին տեսակի յե աշխատել թու հանաք բան չի:

Վաչիկն սկսեց կարկուտի հման վոտները թափահարել, բայց վեցկըականին, յերեսը նրա հարվածներից պաշտպանելով, հանեց նախ նրա մի լաքած կիսակոշիկ, — ապա մյուսը, հետո գուլպաները, կաստյումը, սպիտակեղենը... Վոտից զլուխ մերկացնելով նրան, նա Անտերի բերած փալամները դրեց նբա կողքը:

— Հագիր՝ չմրսես: Գարնան վերջն ե, բայց ելի...

Չոփուռ Ոնիկը մոտեցավ նրան և տեսնելով, թե ինչպես նրա մերկ մարմինը դեռ ցնցվում է խուլ հեկեկոցից, գրպանից հանեց իր Փիննական դանակը և դրեց նրա կոկորդեն:

— Ես ի՞նչ ե:

Վաչիկի լեզուն կապ ընկավ: Նա մի վայրկյանում մոռացալ լացը և սարսափից չուած աչքերը հառեց խուժանսպետին:

— Ի՞նչ ե, — կրկնեց նա:

— Դանակը... Քու դանակն ե...

— Պաչիր...

Վաչիկը համբուրեց դանակը:

— Իիր ճակատիդ:

Դրեց.

— Հենց վոր ծպտուն հանեցիր... — սպառնաց Ոնիկը և դանակը դրեց գրպանը: — զնանք:

Նույն ըստելին վաչիկը վեր կացավ, նստեց և իր դրության հետ հաշտվածի ձայնով դիմեց Ոնիկին:

— Չոփուռ...

— Ասս.

— Գոնե դանակս տուր: Քո նվիրածդ ե:

— Տուր դանակը, — կարդադրեց Ոնիկը Վեցկըականուն, տեսնելով վորն և վերցրել:

— Չոփուռ ջան, ալբ յես իմ դանակս կորցրել եմ, — ընդիմացավ նա:

— Նորից կառնես: Մեծ բան չի:

— Վ՞նդ տեղից առնեմ:

Վեցկըականին ճիշտ եր ասում: Յիննական դանակն իբրև դենք, վաճառվում եր հատուկ թույլատվությամբ:

— Կճարենք, — հանգստացրեց Չոփուռ Ոնիկը: — Իսկ ճիմի դանակը տուր իբրեն: Նվերը յետ չեն վերցնի: Ապրես Վաչիկ, վորմինչև ճիմի նվերս պահել ես: Դրա համար ել՝ եղուց դեռ քեղանից վաստակ չեմ ուզի: Դնանք, տղաներ, ուշ ե...

Ոնիկը, Վեցկըականին և չորս մեծահասակները դուրս յելան: Ցերը նրանց ձայները խլացան ավերակների յետեւմ և ապա մարեցին, Անտերը կամացուկ սողաց դեպի Վաչիկը և նրա ականջի մոտ շշնջաց.

— Հագիր...

— Յես չեմ ուզում նորից խուժան դառնալ, — դարձյալ սկսեց լաց լինել Վաչիկն այնպես թախանձագին, կարծես իր բախտը վորոշելն Անտերից ե կախված:

— Ծատ բան չես ուզում, — ժպտաց Անտերը, — բայց քանի վոր Չոփուռն ե ասում պիտի դառնաս: Հագիր, իսո տկլոր չես քնելու:

— Զեմ ուզում, Անտեր ջան, — շարունակեց հեկեկալ Վաչիկը, — յես կիտախչեմ, յես կդնամ ուրիշ տեղ, յես գիրը կազմել գիտեմ, չեմ ուզում...

— Իե հագիր, վոր փախչես, — համոզեց Անտերը:

Քիչ հետո նրանց մոտեցավ նաև Ախմախ Սուրիկը:

— Լսիր, տղա, — դիմեց նա Վաչիկին, — զու են որվա տղան չես, վոր ինձ փող տվեցիր: Ինձ ճանաչնում ես, յես Ախմախ Սուրիկն եմ: Մի լաց լինիր, կսովորես:

Ցերկուսով միասին, մի կերպ հագցրին Վաչիկի նոր հագուստները: Ասենք՝ առանձնապես հազցնելու բան չկար և յեղածն ել դժվար չեր: Բոնեցին տղայի թերերը, անցկացրին պինջակի առաջին պատահած յերկու անցքերի մեջ, հետո նույն կերպ հագցըրին նաև շալվարը: Անտերն իր վրայի դրապանածե կարկատաններից մեկի միջից հանեց մի քիչ թեր և տվեց Վաչիկին՝ իբրև զոտի գործածելու համար: Իսկ հետո, Սուրիկը գնաց և վերադապար բերելով մի մեծ կտոր պանիր:

— Ցեթե սոված ես՝ կեր: Ափսոս վոր հետք հաց չկա...

Վաչիկը, վոր անդադար լալիս եր, ուզեց չվերցնել, բայց չափաղանց քաղցած եր: Կտրեց մի փոքրիկ կտոր ու կերավ: Սկսե-

ցին ուտել նաև մյուս յերկուսը: Փասը, վոր պարկած դիբով  
ծխախոտ եր ծխում, վերջացրեց ծխելլ և աշխատելով մյուսներին  
չարթնացնել, կամացուկ ձայնով կարգադրեց.

— Քնեցեք: Հերիք ե խոսեք: Առավոտը կանուխ շուկա պիտի  
գնաք...

Յեկ ահա մենակ մնալով, Վաչիկն սկսեց նայել աստղերին ու  
մտածել Ալոք վաղն ի՞նչպես դուրս դա փողոց: Մարդիկ չեն շամի  
զարմանքից, — նայելով իր քուրջերին: Չեն ասի, աեր սա յերեկ  
հիանալի հագուստներ ուներ: Սկի վոր չճանաչեն եւ, իր սպիտակ  
փոտներից կհասկանան, վոր նա նոր խուժան եւ: Ալո, յերանի  
հետաքրքրվեն, դան, հարցնեն... Ասենք՝ թող վոչինչ եւ չճարց-  
նեն: Միենույն ե, ինքը չի համարձակվի վոչինչ ասել: Ավելի  
լավ ե՝ գնան և ուզգակի բանտարկեն թե Չոփուռ Ռնիկին, թե  
Վեցկրականուն, թե նըանց հետի չորսին, և թե Փասին...  
Ալո, ինչու յեկա Ռաստովից... Գոնե այնտեղ, նա ուներ հիանալի  
անկողին, ճաշ, փող: Իսկ յերբ ուրիշ քաղաքներ եյին գնում,  
ավելի լավ եր լինում: Ապրում եյին հյուրանոցներում, իրենց  
ուղածի պես...

Բայց հանկարծ Վաչիկը հիշեց, թե ինչպես այնտեղ, վորեն  
հյուրանոցի փափուկ ու մաքուր անկողնում պառկած, նա միշտ  
յերաղել և թողնել այդ կյանքը, փախչել, գալ լենինական: Ճիշտ  
ե, դրա պատճառը գլխավորապես քույրն եր և իր ընկերներ չու-  
նենալը, բայց կար նաև մի ուրիշ, նույնքան կարեռ պատճառ:  
Այդ այն եր, վոր նա սարսափում եր ժանից ու Յեֆիմից և  
նըանց նման բոլոր մյուսներից, վորոնց մեջ ինքն ընկել եր: Ո՛,  
ինչքան վատ, ինչքան սսուկալի յեր, յերբ համարյա ամեն յերեկո  
նա կանգնում եր բեմի վրա, հարյուրավոր մարդկանց աչքի  
առաջ ու խարում այդ բոլորին: Ինչքան եր լարվում Վաչիկն  
այդ բոպեներին, ինչքան եր աշխատում իր ձեռքի շարժումներն  
ամենայն ճշությամբ համապատասխանացնել բեմի կողքից,  
կուլիսներից յեկող յեղանակին... Իսկ յերբ սխալվում եր վորեն  
դեպքում, առաջին շարքում նստած Յեֆիմը շրթունքն եր կծում,  
ապա յերեկութից հետո շան պես ծնծում եր իրեն: Իսկ առա-  
վատյան, վերսկսվում եյին վարժությունները...

Ամենասարսափելին Վաչիկի համար՝ ահա այդ հարյուրավոր  
զույգ աչքերն եյին, վորոնք դահլիճից նայում եյին իրեն՝ սիրա-  
միր, հիացած, նույնիսկ արցունքոտ: Յեկ յերբ Վաչիկը պատկերաց-  
նում եր, վոր ամեն բոպե նըանք կարող են կեղծիքը բոներ, նըա

սիրաը կարծես դաղարում եր բարախելուց և ձեռքերը դողում  
եյին: Դեռ լավ եր, վոր իրենք մեծ քաղաքներ չեյին գնում: Այ-  
լապես, վաղուց արդեն բռնված կլինեյին...

Վոչ, ավելի լավ ե ծիրան փախցնել: Դա ավելի հեշտ է:  
Նույնիսկ ավելի լավ ե մանել Չոփուռի և Վեցկրականու ցույց  
տված վորեն լուսամուտից ներս, քան թե նորից վերադառնալ  
Ռոստովի...

Թեե հյուրանոցների փափուկ ու մաքուր անկողիններից հե-  
տո ավերակ բաղանիքի գետինը շատ անհարմար պառկելու տեղ  
եր, բայց և այնպես Վաչիկը չկարողացավ հաղթահարել և իս-  
կույն քնեց:

### 13

## ՀԻՆ ԾԱՆՈԲՆԵՐԻ ՇՈՒԿԱՆ

Իր խուժանային ցնցոտիները հազին, շուկայի խանութների  
մատ կանգնել եր Վաչիկը՝ Սուրբիկի և Անտերի հետ: Նրանք յերե-  
քով խոսում եյին ինչ վոր կարեռ նյութի մասին, յերեկ դիշ-  
մացի խանութի առջևամասում դրված ընկույզի պարկի մասին,  
դեպի վորը մերթ-մերթ ծուռ ակնարկներ եյին նետում: Վաչիկը,  
վորի մարմինն այդ մի քանի որվա ընթացքում դեռ բոլորովին  
չեր սեացել, ըստ յերեսույթին արդեն ավելորդ եր համարում լվաց-  
վելը: Նրա սպիտակ մորթի վրա, կեղտի զանազանաձեւ քծերը ցայ-  
տուն կերպավ աչքի եյին խփում, բայց նա ըստ յերեսույթին ան-  
տարբեր եր դեպի այդ բանը: Այդ բոպեյին նրան մտահոգում եր  
միայն մի հարց: — Իտոյնել մի քանի ընկույզի իր և իր ընկերների  
համար, քանի գեռ չեր յեկել խուժանապետներից մեկը և իրենց  
դորձի դրել: Սակայն խանութպանն զգաստ նայում եր և վոր  
վլխավորն եւ նրա մոտ մի վտանգավոր բանի կոթ կար դրված:

— Յեկեք հենց բանի կոթը թոցնենք, — առաջարկեց Սուրբիկը. —  
ամուր փայտ ե յերեսում: Փող կարժենա...

Սակայն նախքան մյուսների խոսելը, անկյունի յետեկց յերե-  
վաց Վեցկրականին: Նա մոտեցավ և զգուշ ձայնով, շտապ հայտնեց.

— Կոշկակար Վրթանեսը ճաշելու գնաց... Մենակ նրա կիսն և  
մասցել խանութում... Վաչիկ, դու կաց...

Սուրբիկի և Անտերի յետեկց Վեցկրականին ևս գնաց.

Վաչիկը մնաց մենակ և մենակ մնալով, այլևս չհամարձակվեց  
մոտենալ ընկույզի պարկին: Ամենավատն այն եր, վոր դա շու-

կայի խաղաղ անկյուններից մեկն եր, ուր շատ մարդիկ չկային  
և ոգործ անելը դժվար եր:

Դալով խանութներին, այնտեղ կային ընդամենը չորս սպետ-  
քական» խանութներ, վորոնցից մեկը, ուր ընկույզի տակն եր  
դրված՝ մրգավաճառի յեր, յերկրորդը հին հագուստեղենի, յերրորդը  
նույնպես հին հագուստեղենի, բայց այնտեղ կային նաև քաղցր  
կաթ, թուզ, չամիչ, շոկոլադ, զանազան կոնսերվաներ, իսկ չոր-  
րորդում վաճառում եյին միայն ձուկ: Մնացած խանութներն  
«անպետք» եյին — յերկաթավաճառանոցներ, կահ-կարսուու աշ-  
հետանոցներ և այլն: Վաչիկը վորոշեց փոխել իր ծրագիրը և  
հագուստեղենի խանութներից մեկից մի պլիսարկ թոցնել, վորի  
կարիքն այնպես ուժեղ կերպով դգում եր յերեկվա շոգերի ժա-  
մանակ: Նա մոտեցավ խանութների այն մեկին, ուր նաև շոկո-  
լադ ու թուզ եյին վաճառում և կանգնեց դուան մոտ: Իրեն  
սիրտ տալու համար նայեց շուրջը և ստիպված յեղավ արագ մի  
կողմ քաշվել: Դիմացից ծանոթ մարդ եր գալիս... Դալիս եր այն  
յերիտասարպեր, վորը ջաներթի յերեկոյան խիել եր իրեն, իսկ  
պատկօմական դարալասի մոտ՝ մի կողմ եր հրել: Վաչիկը չեր  
ուղում, վոր նրանք, ովքեր իրեն տեսել եյին կասայումով, այժմ  
տեսնելին այդ խեղճ վիճակում: Նա սպասեց, մինչև յերիտասարպը  
մտավ խանութ, ապա նորից մոտեցավ: — Սկսեց հարմար վայրկյանի  
սպասել: Յեկ քանի վոր բոլոր խանութների նման այդ խանութի  
առջեամասը նույնպես բաց եր և տուանց ապակիների, նա պարդ  
կերպով լսեց ներսում տեղի ունեցող խոսակցությունը:

— Բարե, Արտուրյան...

— Ելի եկամք, Գասպար, — արտնջաց խանութպանը. — Բնչ ես  
ուղում:

— Ասողջությունդ, — ձեռ առավ Գասպարը և ավելացրեց. —  
սագի մսի կոնսերվաներից մնացել ե:

— Մնացել ե, — բողոքեց Արտուրյանը. — վարտեղից մնա, թա-  
լանեցիք ինձ, ինչ եք ուղում: Սիրնը գալիս տանում ե, Ոհաննը  
գալիս տանում ե, Լեոնը տանում ե, դու տանում ես: Սրա վերջը  
պիտի դմ, թե չե: Վոչ ուտելիք թողեցիք, վոչ հագուստ...

— Ո՞ք, — սբանեղեց Գասպարը և սկսեց դարակները զննել. —  
ամեն ներս մտնելիս խո չեմ կրկնելու: Մի անդամ ընդմիշտ  
տան եմ, վոր դու իրավունք չունես ձայն հանելու:

— Ի՞նչպես թե իրավունք չունեմ, — շնչաց Արտուրյանը,  
փոխանակ բղավելու:

— Ճակատիդ քրտինքով չես աշխատել այս բոլորը, — սերտած  
դասի նման արագ պատասխանեց Գասպարը: — Ամերիկական կո-  
միտեյի պահեստներից ես թալանել: Վորքերի բաժինն ն:

— Հետո:

— Ուրիշ վաչինչ:

— Այդ ինչ եր՝ զրպանդ դրեցիր:

Գասպարն առանց պատասխանելու անցավ խանութի խորքը:

— Բա ասում ես սպի միս չունեմ: Այս ինչ կոնսերվաներ են...

— Ավագակ, թալանչի, — մոմոաց Արտուրյանը կատաղած կեր-  
պով: — Յես միլիցիոներ կկանչեմ...

— Ուզմակ ես՝ յես կանչեմ:

— Այս ինչ ես ուղում, այ Գասպար, հոգուդ մատադ, — կակ-  
զելով խնդրեց նախկին պահեստավետը:

— Ինչ վոր ուղում եմ, վերցնում եմ, — պատասխանեց  
Գասպարը սենյակի խորքից՝ նույն հանդարտ ձայնով, ապա  
ընդհատելով հետաղոտությունը, բորբոքվեց: — Գլուխ ես ցա-  
վացնում: Այնպես ես անում, վոր այլևս խանութդ վոտք չկո-  
խենք...

— Յերանի, — մրմնջաց Արտուրյանը, — յերանի:

— Բայց մենք քեզ կներենք. չենք խոռվի, միշտ կդանք...

Վաչիկն սկսեց ծիծաղել անզոր խանութպանի վրա, մոռանա-  
լով պլիսարկ փախցնելը, վորն արդեն բավական հեշտացել եր: Քիչ հետո, լուռ կերպով նրան մոտեցավ ու կանգնեց նաև Փառը,  
բայց տեսնելով, վոր նա զործով չի դրադված, այլ դիտում ե,  
կարգադրեց.

— Գնա պանդոկ: Գյուղացիներ են յեկել:

Վաչիկը շարժվեց: Գնալիս, Փառն իր ձեռքը բամփեց ձկնա-  
վաճառի դախլին, ճարպիկ շարժումով թոցրեց մի մեծ ձուկ և ան-  
հետացավ:

— Բո... բոնեք, — բղավեց ձկնավաճառը, վոր խանութի խոր-  
քում դատարկ կողովներն եր դարսում իրար վրա, և դուրս նետ-  
վեց: Նայելով դես ու դեն և չտեսնելով խուժանին, նա կատա-  
ղած ներս մտավ, մոտեցավ դախլին և մի հատ ուժեղ խփեց իր  
կնոջ մեջքին.

— Բոռ խո չես, աչքիդ առաջից ապրանք են թոցնում...

Վաչիկը յետ նայեց: Վոչ, կինը լաց չեր լինում:

— Գնա դու ինքդ կողովները դարսիր, — ճարմայեց ամու-  
սինը, — իսկ յես կհսկեմ եստեղ:

Կինն անցավ սենյակի խորքը: Վաչիկը դնաց:

Քիչ հետո ւերևացին Արամը, Վաղգենն ու Հրաչը, վոր ուղիղ գալիս եյին գեպի հին կտորելենի խանութները: Տեսնելով համախորդներին, Արտուրյանը դուրս յելավ. դուրս յելավ նաև մյուս խանութպանը, վորին նույնպես կապույտ պատկաներն իսկույն ձանաշեցին:

— Ա՛յ, — բացականչեց Հրաչը, — տեսեք, տղաներ, հարդելի Արտուրյանը, սիրելի Մորուքը: Բարև քեզ, վորբանցների ընդհանուր կառավարիչ՝ բայց նախկին: Այս ի՞նչ ե, բոստվել ես:

— Կյանք ե, կպատահի, — ժպտաց Մորուքը, ցույց չտալով թե վիրափորփեց. — համեցիք:

— Վոչ, — ճայն տվեց Արտուրյանը: — Ավելի լավ ե՞ դուք ի՞նձ մոտ յեկեք: Երա մոտ վոչինչ չկա:

— Ո՞ւմ մոտ վոչինչ չկա, — բարկացավ Մորուքը:

— Ճիշտ ե ասում, — համաձայնեց Արամը, — պարոն Արտուրյանի մոտ ավելի շատ բան կլինի: Չե՞ վոր պահեստապետը նա յեր ե վոչ թե Մորուքը:

Կապույտ պատկաները մտան Արտուրյանի խանութը:

— Զմունաս, Արտուր, — սպանաց Մորուքը և ներս մտավ:

— Ներեցեք, բաղաքացի Արտուրյան, — դիմեց Հրաչը նըան, — մենք չեյինք ուկում ձեր յերևար տեսնել, բայց ստիպված ենք: Իհարկեց ցավալի յե, վոր հիմա ձեզ խորհրդային ուուրիներ ենք տալու, բայց ուրիշ ճար չկա. վոչ մի պետական խանութում կամ կոռոպերատիվում չկարողացանք դանել այն մի շարք հաղուստները, վոր մեզ հարկավոր են Կազաչի Պոստի կյանքից վերցրած պիեսի ներկայացման համար:

— Խնդրեմ, խնդրեմ, — ժպտաց նախկին պահեստապետը. — ինձ մոտ ամեն ինչ կա:

Լսելով ծանեթ ճայներ, Գասպարը մի վայրկյան թողեց իր փնտրումները խանութի խորքում և յետ նայեց:

— Ահա մի հրաշալի կերպարանք ել, — ցույց տվեց Վաղգենը:

— Նա յերեխ վերադաստիարակվում ե, վոր պատկոմ ընդունվի, — յենթագրեց Հրաչը: — Բարե, Գասպար: Ապա, ցույց տուր մեղ մի քանի ամերիկական կաստյում...

— Յես այստեղ չեմ աշխատում, — մոմոաց նա:

— Խնդրեմ դուք ինքներդ ընտարեցեք, հրավիրեց Արտուրյանը:

— Ընտրիր, Վաղգեն, — առաջարկեց Հրաչը. — դու պիեսի հետինակին ես ու ոեժիսյորը: Դու լավ կը նայեաս:

Վաղգենը գրպանից հանեց ցուցակը:

— Վորբանցների կառավարչուհիների հագուստներ: Ունեք:

— Կա:

— Տվեք յերեք ձեռք:

Արտուրյանն սկսեց ջոկել:

— Սկառապետի համազգեստ:

— Կա: Ես բոպեյիս:

— Հայ արու նշաններ: Մի տաս հատ բավական ե:

— Շատ վերցրու, — առաջարկեց Հրաչը: — Պետք կգա: Թանգը բան չի:

— Քաղաքացի Արտուրյան, — շարունակեց Վաղգենը, — մեղ հարկավոր ե նաև այնպիսի մի կաստյում, ինչպիսին դու հաղում եյիր կաղաչի Պոստում: Կմ:

— Իսկ ի՞նչի համար եք ուղում, — զարմացավ խանութպանը:

— Քեզ ել ենք պիեսի մեջ դցել — բացատրեց Հրաչը: — Դերդ պիտի խաղանք...

Արտուրյանը գունատվեց, բայց աշխատեց ժպտաբ:

— Կա, ի՞նչու չե, — կմկմաց նա. — իսկույն:

— Մորուքի կաստյումից ել:

— Մորուքի:

Այդ հանգամանքն Արտուրյանին բավական հանգստացրեց: Ուրեմն ինքը մենակ չի:

— Իսկապես, — հետաքրքրվեց Հրաչը, — իսկ ով ե քեզ մոտ Գասպար խաղում, Վաղգեն...

Գասպարը դլուխն արագ վեր բարձրացրեց արկղների վրայից և կատաղած հայացքով նայեց Հրաչին:

— Յես առաջարկեցի, վոր կոլվար Աշոտը խաղա, — պատասխանեց Արամը. — Նա ե' լավ գոռպառալ գիտե ե' կարող ե իր դեմքին ուղածդ զղվելի արտահայությունը տալ:

Գասպարը փնչաց, զլուխն որորեց ու նորից իր գործին անցավ: Խանութի կենացրոնում հավաքվեց կտորեղենի մի մեծ կույտ:

Վաղգենը ցուցակը գրպանը դրեց և զարմացած նայեց:

— Ի՞նչպիսի տանենք:

— Դու վճարիր վերջացրու, յերեքս ել միմի քիչ կվերցնենք, — ասաց Արամը և մոտեցավ կույտին:

— Դու մի վերցնի, Արամ ջան, — խանգարեց Հրաչը: — Քեզ համար անհարմար ե բեռնավորված կերպով անցնել փողոցով: Դու պատկումապես ես:

— Հենց դրա համար ել պետք եւ վերցնել, — ժպտաց Արամը  
և յերկու թեփով գրկեց հավաքեց կույտի համարյա կեսը: — Կարիք  
չկա ալելորդ փող ծախսել, ուրիշ մարդ վարձել:

Յերկար սակարկելու կարիք չեղավ: Արտուտյանը չհամար-  
ձակվեց բարձր գին պահանջել, վարովհետեւ կապույտ պատկոմները  
գիտեյին, թե ինչ ձեփով ձեռք բերված հագուստներ են դրանք:  
Բնդիակառակը, նա պահանջեց շատ համեստ մի գին և Վաղդենն  
իսկույն վճարեց:

— Յտեսություն, քաղաքացի Արտուտյան, — քաղաքավարի  
կերպով հրաժեշտ տվեց Հրաչը. — հուսով եմ, շուտով մեր կոռուկ-  
պերատիվները քեզ այս բերդից ել դուրս կը քեն:

— Հին ցիլինդրների և ամերիկական մաշված կասայումների  
վաճառքի մեջ վոչ մի պետական խանութ Արտուտյանի հետ չի  
կարող մըցել, — հականառեց Վաղդենը:

Յերբ նրանք դուրս յեկան խանութից, Գասոլարը ձայն տվեց:  
— Ութսունինն...

Արամը յետ նայեց:

— Լսում եմ:

— Դու ինձ չես մոռանա, Ութսունինն:

— Ինարկե չե, — սպառնալիքը հասկանալով, հայտնեց Արամը:

— Ուզում եմ ասել, — յերկմիտ կերպով ավելացրեց Գասո-  
լարը, — դու իսո չես մոռանա, վոր յես Բարկենին խոսք եմ տվել  
կամաց-կամաց ուղղվել և ապա պատկոմ ընդունվել:

Տեսնելով ծանրաբեռնված յերեք պատկոմներին, Սուրբիկը վոր  
Անտերի հետ կանգնած եր այդտեղ, վաղեց մոտեցալ և իր ծա-  
ռայությունն առաջարկեց.

— Տվեր յես տանեմ:

— Ծանը ե, չես կարող, — խոսեց Արամը, դունչը հագուստ-  
ների մեջ խրած:

— Կարող եմ, կարող եմ, — սկսեց վաղել Սուրբիկը նրանց յե-  
տելից, մերթ մեկին մոտենալով, մերթ մյուսին

— Հրաչ, դրան մի քիչ փող տուր, — ասաց Վաղդենը:

Սուրբիկը դեռ քաշքում եր Արամի դոտուց, դրանից, բլուզից.

— Դունե կեսն ինձ տուր, քու բերդ շատ ե:

— Ահա քեզ փող, — ասաց Հրաչը. — առ և դին:

Սուրբիկը վերցրեց, շնորհակալ յեղավ ու յետ մնաց: Բայց նա  
դրանով չեր բավարարվել: Նա Արամի դրանից հանել եր մի  
փոքրիկ փաթեթ...

— Տղաներ, — հայտնեց Վաղդենը, յեր նրանք շուկայից դուրս  
յեկան. — այժմ այս հաղուստները տանենք վորեվե կար ու ձեվի  
ալենեստանոց: Հարկավոր ե դրանք մի քիչ փոքրացնել տալ, հար-  
մարեցնել խաղացողների հասակին...

Հանդիպող մի միլիցիոներից նրանք վերցրին մոտակայքում  
գտնվող մի կար ու ձեվի արհեստանոցի հասցե և գնացին այն-  
տեղ: Բնակարանի պատի վբա փակցված եր ցուցանակը. — «Եսոր-  
հրդային կար ու ձեվի կարմիր արհեստանոց» — Ս. Պիճիկյան: Յերբ  
կապույտ պատկոմները ներս մտան, նրանք դարմանքից քարա-  
ցան. — Ս. Պիճիկյանն ամերիկական կոմիտեյի գլխավոր աշխա-  
տակցունի որիորդ Սիրանույշն եր...

Սիրանույշը, ժպիտը գեմքին և մանրիկ քայլերով՝ ընդառաջ  
շտապեց: Սենյակում աշխատող ութատաս աղջիկները նայեցին  
ներս մտնողներին:

— Ախ, այդ դժուք եք, — բացականչեց Հրաչը, իր բեռը հա-  
տակին լցնելով. — իսկ դուք մեղ ձանաշնում եք: Մենք ձեր  
բարեկամ Վահան Քիրաղի սկառտանոցը քարուքանդ անող-  
ներն ենք:

— Շաա ուրախ եմ, նստեցիք, — նորից ժպտաց Սիրանույշը: —  
Ինչո՞վ կարող եմ ծառայել:

Վաղդենն սկսեց բացատրել, իսկ Արամն ու Հրաչը նայեցին  
շուրջը: Սենյակը փոքր եր, բայց վոչ շատ: Սեղանների շուրջը  
կամ լուսամուտների մոտ նստուած, աշխատում եյին աղջիկները:  
Նրանցից վոմանք ասեղնագործ եյին անում, վոմանք հարթու-  
կում և վոմանք մեքենաներով կար եյին անում: Նրանք բոլորն  
ել հագել եյին վորբուհու գորշագույն շրջաղեսաներ, վորը մի-  
յելնույն ժամանակ նրանց արտհագուստ եր: Գետնի վրա, սեղան-  
ների վրա, ամեն տեղ լցված եյին մանր ու մեծ կտորներ, ամ-  
բողջ թոփեր, անպետք պատառներ, բաղմաթիվ գույներով, նախ-  
շերովի: Անդապար լսվում եյին մեքենաների չեչիկոցները իսկ  
անկյունում վագում եր անկանոն կերպով վառվող կերոսինկան,  
տաքանալու համար իր վրա դրած հարթուկով: Աղջիկները մերթ-  
մերթ վեր եյին կենում իրենց տեղից, մոտենում որիորդ Սիրա-  
նույշն և վորեն բան հարցնում կարին վերաբերյալ: Սիրանույշը  
քաղաքավարությամբ ընդհատում եր իր խոսակցությունը Վաղ-  
դենի հետ և պատասխանում իրեն դիմողին:

— Յերեք ծալ այստեղ կտաս, իսկ չորսը՝ այստեղ: Հասկացար,  
աղջիկա: Բայց շուտ կվերջացնես, գա շտանք դործ ե:

— Սա քանդիր և ահա այն մյուսը կպցրու: Ախ, անուշ ջան,  
դու դեռ թեվերն ել չես միացրել...

— Սխալ ես ձեվել... Այդ արդեն՝ չեղավ: Դու պետք ե ոռօի-  
կիցդ վճարես: Յես ուրիշի անփութության համար պատասխա-  
նատու չեմ: Չեղավ, աղախյակս...

Հանկարծ Հրաչը նկատեց, վոր աշխատողներից մեկը դեռ ան-  
չափահաս ե, — հազիվ տայերեք տարեկան: Անմիջապես նրա  
դեմքը կարմրեց, նա բարկացած մոտեցալ Սիրանույշին և հարց-  
րեց.

— Այս լոնչ ե: Քեզ ով ե իրավունք տվել, վոր յերեխաներ  
աշխատացնես...

Անմիջապես լոեցին բոլոր կարի մեքենաները:

— Ի՞նչ ես գունչդ ցցել ու ժպտում ես, — իրեն կորցրեց նա: —  
Քեզ պատժել ե հարկավոր, հին չարչարող...

Ապա դառնալով դեպի աղջիկները, հանդիմանությամբ հարցրեց.

— Ի՞նչու մինչև հիմի պլոփմիությանը չեք հայտնել:

— Ո՞ւմ, — զարմացան աղջիկները:

— Սրանք պլոփմիությունից ել գաղափար չունեն, — ապշեց  
Վաղգենը: — Այս լոնչ բան ե....

— Ծնողներդ ուր են:

— Վորր եմ:

— Ի՞նչպես թե վորք, — զարմացավ Արամը: — Ուրեմն մանկա-  
տան սանունի՞ յես:

— Վոչ, — մեջ խառնվեց մի ուրիշ աղջիկ: — Նա մեզ հետ և  
ապրում:

— Իսկ դժուք վորտեղ եք ապրում:

— Այստեղ, այս տանը:

Արամն արագ նայեց որիորդ Սիրանույշի սպիտակ մաղերին և  
ապա յերեսին:

— Զեմ հասկանում, — ասաց նա, ըստ յերեսույթին սպասելով,  
վոր Սիրանույշը պատասխանի:

— Ապասեցեք, — բացականչեց Հրաչը: — Հինի՞ դուք Կաղաչի  
Պոստից եք:

— Այս:

— Իսկ ինչու մանկատուն չեք տեղափոխվել:

— Որիորդ Սիրանույշը չթողեց: Մեղ զործ տվեց:

— Ախ, դործ տվեց, — բորբոքվեց Վաղգենը: — մենք նրան գործ  
ցույց կտանք:

Հրաչը կտապաղությունից իրեն կորցրած, կռացավ դեպի հա-  
տակը և միանգամից հավաքեց: — գրկեց իրենց բերած բոլոր հա-  
զուսաները, զայբույթից չնկատելով, վոր գրանց հետ միասին  
բարձրացրել ե նաև մի ծակ կոչիկ:

— Գնանք, — տասց նա ատամներն իրար սեղմած: — Գնանք տղա-  
ներ: Իսկ պառավ զայլերի հաշիվը մենք շատ շուտով կտեսնենք...

Աղջիկներից մեկը վաղ ավեց, վերցրեց իր կոշիկն ու վերա-  
գրածավ: Հրաչն իր քեռան հետ դեմ առավ դռանն ու մնաց:

— Հուպ տվեք ինձ, — դիմեց նա ընկերներին: — Շուտ, յես  
այլես այստեղ մնալ չեմ կաբոց:

Սիրանույշը քաղաքավարույթյամբ բաց արեց նաև դռան մյուս  
վեղկը: Կապույտ պատկումները դնացին:

## 14

### ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքի զանազան կողմերում արգեն խփում եյին յեկեղեցի-  
ների յերեկոյան զանգերը, բայց արեք համառ կերպով շարունա-  
կում եր մեխաված մնալ սարերից մեկին և իր վերջալույսային  
կարմիր զաղն անդրադարձնել հեռու և մոտիկ ապակիների վրա:  
Խուժանանցում արգեն չորս կողմից հավաքվում եյին խուժան-  
ները: Նրանք գալիս նստուած եյին իրենց մշտական տեղերում  
կամ անմիջապես՝ պառկում եյին քննելու: Ովքեր մրսկան եյին,  
իրենց մոտ հավաքել եյին փայտի և թղթի կտորներ՝ կես գիշերվա-  
ցրափից արթնանալիս վառելու համար: Կային այնպիսիները, վոր  
ովախ եյին արել և յեղան ստամոքս եյին տապակում, իսկ յերեք  
հոգի նույնիսկ թեյ եյին գրել թիթեղյա չըրսանկյունանի ամա-  
նով: Այնտեղ եր նաև Փասը, վորը Վեցկրականու մոտ նստած,  
պատմություն եր անում: Վեցկրականին, վորի կանաչ բլուղի  
վեց ճղվել եր յերեկի վորնե կովի մեջ, ծխաթոտ եր ծխում և  
լսում նրան: Եերը ծխաթոտը վերջանում եր, նա հանում եր նորը,  
եսկ նախկինը գեն զցում: Փասը դեռ ողի մեջ բռնում եր  
այն և բերանը դնում:

Վաչիկը նույնպես արգեն վերադարձել եր շուկայից: Նա մեն-  
մենակ նստած, սպասում եր Սուրբիկին և Անտերին, վորսնց նա  
շեր տեսել այն բաղեցից, յերբ Փասն իրեն պանդոկ տարափ:

Յեկավ Զոփուռ Ոնիկը: Կարգադրեց, վոր Փասը վերցնի իր  
խուժաներից մի քսան նողու և գնա քաղաքային այգում դիշե-

ըելու, վորակեսղի վաղ առավոտյան կարողանաւ հարձակվել այդու  
մոտի շոսսեյով պյուղ գնացող մի ֆուրզոնի վրա: Այս, ուղղակի  
հարձակվել: — Ձուրդոնի վրա լինելու յեն ընդամենը յերկու հոգի,  
բայց շատ կտորեղեն: Վերջացնելով այդ հարցը, նա անձամբ ծե-  
ծեց յերկու տղայի, վորոնը խարել եյին, թէ ուսուցչի դրանից  
հանած փողն ընդամենը մի քանի կոպեկ եր, մինչդեռ ինքը մո-  
տենալով ուսուցչին և ցավակցելով տեղեկացել եր, վոր հանել  
եյին բավական մեծ դումար: Ուսուցիչն արդեն ծեր մարդ եր և  
հաղիվ թե պարծենալու համար դումարը չափազանցներ:

Նա դեռ հերթական կարգադրություններ եր անում և հեր-  
թական ծեծեր եր տալիս, յեր Սուրբիկն ու Անտերը յեկան: Նըանք  
անմիջապես աչքերով դուան վաչիկին և վաղ տվեցին նրա մոտ:

— Ես ի՞նչ բան ե վաչիկ, — հարցրեց Սուրբիկը և իր քուրչերի  
միջից հանելով վաչիկի նամակը Սաթիկի համարի հետ տվեց  
նըան: — Ես դու յես պըել կորած քըոջդ:

— Վարտեղից դուաք, — հարցրեց վաչիկը, հաղիվ մի քանի  
բառ կարդալով և տեղից վեր ցատկելով:

— Պատկոմապետի ողնականի գրանումն եր, — պատասխանեց  
Սուրբիկը: — Փող եյի փնտրում, դա ընկալ ծեռքս: Յերբ ես ուրեմ

— Հին բան ե, — ասաց վաչիկը մտքերի մեջ ընկած և իր փոք-  
րիկ մատներով սկսեց խառնել արդեն խճճված մազերը: Պատկո-  
մապետի ողնականի գրանից... Ուրեմն դա յեր այն սկառութը...  
— Վար սկառութը, — հետաքրքրվեց Սուրբիկը:

Պատասխանի փոխարեն, վաչիկն սկսեց կարդալ ու վերակար-  
դալ իր գրած նամակը, մինչև վոր արցունքները նըան խանդա-  
րեցին: Այն ժամանակ նա վերցրեց համարը և համբուրեց:

— Ես ել յերեկի քըոջս համարն ե:

— Ուրեմն քըոջդ դանում ես, զարմացալ Անտերը:

— Վար տեղից: Քույրիկս, վոր կենդանի լիներ, սկսուան իմ  
նամակս վաղուց նըան տված կլինեք: Նա մեռել ե...

Նա սկսեց աղիողորմ լաց լինել: Սուրբիկն ու Անտերը լուս  
կերպով իրար յերեսի հայեցին: Մի քիչ այն կողմից, լսելի դար-  
ձավ Զոփուռ Ռուի ձայնը.

— Լսիր, Վեցկրականի, կամուրջների տակ նոր խուժաններ են  
հավաքվել: Գյուղերից, ուրիշ տեղերից: Եղուց բոլորին եստեղ  
կմերես, քանի դեռ փրփրած Գեռը չի հավաքել: Չըերեցիր՝ փո-  
ղեդ մի որվա բաժինը չեմ տա: Բերեցիր՝ հինգ խուժան յես կառ-  
նեմ, մեկը կտամ քեզ...

— Յերեք ու մեկ, — ընդդիմացավ Վեցկրականին:

— Շատ վոր խոսես, վեց ու մեկ կանեմ:

— Զոփուռ, զու ինձ հետ կատակ մի անիր, — սպառնաց Վեց-  
կրականին: — Կվերցնեմ իմ խուժաններս, կդնամ:

— Ցոթ ու մեկ:

Վեցկրականին մոռեցավ նըան, կանդնեց ուղիղ դեմուղեմ և  
սկսեց նըան յերեսն ի վար փնչալ:

— Ութ ու մեկ, — հայտնեց Ռուիկը:

— Խմած խո չես, Զոփուռ:

— Ինչ ու մեկ...

Խուժանները, բերանները բաց արեցին և սկսեցին անթարթ  
նայել:

— Թանիս, Ռուիկ, — սպառնագին հարցրեց նա:

— Տաս ու մեկ:

Վեցկրականին բոռւնցքը վեր բարձրացրեց, բայց խկույն  
աբեկի վերջին շղերի տակ, Զոփուռ Ռուիկի ձեռքում փայլեց Փին-  
հական դանակը: Վեցկրականին զինաթափ յեղավ:

— Դըա համար չթողեցիր, վոր Վաչիկի դանակն ինձ վերց-  
նեյի, — մոմուց նա: — Բայց յես կճարեմ... Շատ շուտով կճարեմ:  
Դու ինձ հետ եղակս վարվելու իրավունք չունես. յես ել եմ խու-  
ժանապետ:

— Դու խուժանապետ չես, — հանդիսաւ տոնով հայտաբարեց  
Զոփուռ Ռուիկը. — դու իմ ողնականս ես: Յես եմ քեզ տվել յերե-  
սուն խուժաններիդ, յես ել յետ կվերցնեմ ուղածս բոպեյին...  
Խուժաններ, — զիմեց նա անապաստաններին հույն հանգիստ  
ձայնով. — ով ինձ հալվատարիմ ե՝ թող մոտս դա...

— Լավ, Զոփուռ, — ժպատաց Վեցկրականին. — հաշիվ մաքրելու  
ժամանակ դտար լակունների մոտ...

— Հինգ ու մեկ, — հայտնեց Ռուիկը:

Վեցկրականին լուռ կերպով համաձայնվեց:

Վաչիկը, վոր դեռ լաց եր լինում, կամացուկ կերպով գլուխը  
բարձրացրեց.

— Անտեր, Սուրբիկ...

— Ասա:

— Իմ քույրիկս անպայման մեռել ե: Հիմա հաստատ գիտեմ:

— Ինչից իմացար:

— Համարից... Սկառութը համարը հանել ե Աչիկի վզից, վոր բերի  
ինձ հիշատակ: Յես եղուց անպայման, անպայման կդնամ նըան մոտ...

Յեկ նորից, ավելի դառնազին կերպով սկսեց լայք:  
— Ո՞վ և ենտեղ գոռում, — բրալեց Վեցկրականին, վորոն առանց այդ ել սոսկալի չարացած եր: — Կարիք ձայնդ:  
Կաչիկը վոչ մի ուշադրություն չդարձրեց նրա վրա:  
— Զայնդ կարիք, յես քու... — Վորոտաց նա և գետնից մի քար վերցնելով, վազեց դեպի տղան: Յերեխ շատ վատ բա՛ր կդար, յեթե նույն ըսպեցին չպատճենը մի անակնկալ միջամտություն: Խուժանանոց մտավ Գասպարը. Չոփուռ Ոնիկն անմիջապես անհետացավ պատերից մեկի յետեռմ: Վաչիկը նամակն ու համարը գրեց դրանը և չձանաչելու համար՝ կծկվեց:  
— Ո՞ւմ ես ուղում, — հարցրեց Փասը, տեղից վեր ցատկելով:  
— Զեր պետին:  
— Ի՞նչ պետ, — Ժպտաց Փասը: — Մենք իսու պատկոմ չենք:  
— Եյ, քեզ հետ եմ, — բարկացավ Գասպարը և նրա քիթը բռնեց: — Յես հայ արի յեմ և թույլ չեմ տառ, վոր ինձ յերեխայի տեղ դնեն:  
— Հայ արի յես, — հետաքրքրվեց Չոփուռ Ոնիկը, ներս մըտնելով: Նրա կանաչ մետաքսե բլուզը պայծառ կերպով հաքեցած եր՝ արեգակի լույսով, իսկ ալ կարմիր զոտին կարծես աբյուն եր, վոր յերկու յերկար շիթերով իջնում եր դեպի պետին:  
— Միք վախենա, յես գործով եմ յեկել ձեղ մստ, — հանդըստացրեց Գասպարը: — Ո՞վ և ձեր պետը:  
— Չոփուռ Ոնիկը թերահավատ նայեց:  
— Պետը յես եմ, ինչ կա, — ասաց Վեցկրականին, մոտենալով: Անշուշտ նա ուղում եր վտանգի դեպքում ինքը տուժել, աղատելով Ոնիկն: Ոնիկն այդ զբաց և նիացմունքով նայեց նրան:  
— Սխր սա Կաղաչի Պոստի առաջին ջոկատապետն ե, — բացականչեց մի խուժան, դետնից վեր ցատկելով: — Բարեն ձեղ պարոն Գասպար:  
— Դու ինձ վմբռտեղից դիտես, — դարմացավ Գասպարը:  
— Յես սկառատ համար յոթանասուն չորսն եմ. — յերեխորդ ջոկատից: Ինձ հիմա վողլոտ են ասում: Մի անգամ յես պահակ կանդնած, փայտս գրել եյի մոտս և լվացվում եյի, դու իմ եյի կանդնած, փայտս գրել եյի մոտս և լվացվում եյի, դու իմ եյի կանդնած, փայտս գրել եյի մոտս և լվացվում եյի, դու իմ եյի կանդնած, փայտս գրել եյի մոտս և լվացվում եյի, դու իմ եյի կանդնած, փայտս գրել եյի մոտս և լվացվում եյի, դու իմ եյի կանդնած, փայտս գրել եյի մոտս և լվացվում եյի, դու իմ եյի կանդնած, փայտս գրել եյի մոտս և լվացվում եյի:

— Սա ի՞նչ դադտնապահություն ե, — ծիծաղեց Գասպարը, — ահա քանի որ և վնաբում եմ քեզ: Յեթի Նաոնը չվներ, չեյի դոնիս... Վոչ մի խուժան տեղդ չի ասում...  
— Ո՞վ կհամարձակվի, — նույնակա ժպտալով ասաց Ոնիկը: — Վզները կթոցնենք:  
— Յես քեզ հետ զործ ունեմ...  
— Գնանք, — առաջարկեց Ոնիկը: — Դու յել արի Վեցկրականի: Իսուղես քեզ ասաց՝ սա յել և խուժանապետ: Սրան կարելի յե: Բայց նրանք դեռ չեյին դուրս յեկել լողաբանի ավերակներոց, յերբ այնտեղ մտավ մի տղա՝ մանկատան սանի հագուստներով, մաղերը կարճ խուղված, մաքուր յերեսով ու ձեռքերով, Չոփուռ Ոնիկը կանգ առավ և սկսեց սպասել նրա մոտենալուն: Կանդ առան նաև Վեցկրականին ու Գասպարը:  
— Բարեն, Չոփուռ, — անդստահ վողջունեց նորեկը:  
— Բարեն, Աշոտ...  
Տղան վոչինչ չգտավ ասելու և լուռ մնաց:  
— Ի՞նչպես եր մանկատանը...  
Տղան մատներով խաղաց բլուզի փեշի հետ և ուսը շարժեց: — յեսիմ: — Թվում եր, թե նա զապում եր իր լայքը:  
— Ճիշտն ասա, — հարցրեց Ոնիկը, — ճիշտը վոր ասես, շատ չեմ ծեծի, քեզ բռնել տարել եյին, թե դու կամավոր եյիր դնացել...  
— Կամա...  
Բոռնցը ճարվածը բառի մյուս կեսը նորից ներս խցկեց նրա բերանը: Անմիջապես տղայի ատամներն արնոտվեցին և վերին շրթունքը բոլորի աչքի առաջ միանգամից կապտեց:  
— Ծորերդ հանիր, հանձնիր Փասին, — կարգադրեց Ոնիկը: — Գնանք ընկեր հայ արի...  
Յերեր նրանց ձայները խլացան, յերկրորդ ջոկատի նախկին սկառատ վողլոտը մատեցավ Աշոտին և հարցրեց:  
— Ենսեղ ինչ ճաշ եյին տալիս, Աշոտ...  
Բայց Աշոտը պատասխանելու սիրտ չուներ: Նա սպառնապին նայեց գեղի խուժանապետի դնացած կողմը և թաշկինակով բերանը սրբելով, մոմաց.  
— Սպասեցեք... Յես ձեղ կմատնեմ... Բոնել կտամ... Բավական ե...  
— Դե, գե, գե, — նախազգուշացցրեց Փասը: — Լեզուկ բերանդ պահիր: Իսկ թաշկինակով հերիք և արնոտես: Ախտոս ե: Տուր ինձ... Ծորերդ ինչն չես հանում...

Տղան հիշեց, վոր ինքը այլևս սան չի: Նա հանկարծ այնպես սրափաց, վոր բոլորը փշաքաղվեցին: Թեև ցուրտ չկար, բայց նրա ատամներն սկսեցին չեւչփակալ: Պարզ եր, վոր դա ցրտից չեր: Նրա կղակն այնքան արագ-արագ եր բարախում, վոր թվում եր, թե այլևս կանգ չպիտի առնի: Աշոտը վեր կացավ հանվելու համար և այժմ բոլորը տեսան, վոր ցնցվում եր նաև նրա ամբողջ մարմինը: Նույնիսկ Փասը խղճաց նրան և հայտնեց, վոր նա կարող է իր հագուստաները հանել վոչ թե հիմա, այլ առավույան: Նույնիսկ ձեռքը մեկնեց, վոր արդելի նրան հանվել, բայց հենց վոր ձեռքը կպավ նրա թերին, թեվէն այնպիսի ուժեղ մի ցնցում արավ, կաբծես ուղում եր պոլվել: Աշոտը կենդանու նման շրթունքները յետ տարավ, ատամները զնջրատցրեց և շարունակեց հանվել: Իսկ հետո, բոլորովին մերկ պառկեց դեանին, քնեց: Քնի մեջ նույնպես շարունակվեցին նրա ցնցումները: Փասն ինչ վոր անկյունից զտավ մի քանի քուրջ ու փալաս և բերեց լցրեց Աշոտի վրա: Դրանք, հենց հետեւյալ առավոտից պետք է դառնային նրա հազուստները:

Չոփուռ Ռնիկը չվերագրածավ: Ինչպես ամեն գիշեր, նա գնաց ձաշարան քեզ անելու և հետո տուն՝ քնելու: Վեցկը ականին վերագրածավ մենակ: Նա թունդ հարրած եր, չեր կարողացել դանել իր տան ձանապարհը և յեկել եր խուժանանոց՝ այդտեղ գիշերելու...

Փասը տեսնելով նրա հարրած լինելը, իսկույն սողաց դեպի նա, զանազան գաղտնիքներ իմանալու և դրաց նաև մի քիչ փող գրպանից հանելու համար: Մինույն ե, Վեցկը ականին առավոտյան իր ասածներից վոչինչ չի հիշի, իսկ փողի մասին կկարծի, թե ծախսել ե...

✓ Փասն սկսեց կամացուկ ձայնով հարցեր տալ: Վեցկը ականին պատասխանում եր բարձրածայն, բայց բոլոր խուժանները քնած եյին և վոչ վոր չեր լսում նրան: Բանից զուրս յեկավ, վոր Գասպարը խնդրում եր Չոփուռ Ռնիկին՝ մի քանի խուժանների միջոցով ծեծել տալ պատկոմապետի սղնական Արամ Գրիշ գրյանին: Մի տաս որ հետո, յերեկոյան, պատկոմատան զահը մուռ ներկայացում կա: Կարելի յե հենց ներկայացումից հետո ծեծել, յերբ Արամն ուշ ժամին տուն վերագանալիս կլինի...

— Իսկ դրա համար հայ արին ինչքան փող տվեց, — հետաքրքրվեց Փասը:

— Փող չավեց: Չուներ: Բայց խոստացավ մի լավ խանութի բանալի բերել...

Փասի հետեւյալ հարցին Վեցկը ականին պատասխանեց զինենում խոմփոցով:

## 15

### ԽԱՆՈՒԹՊԱՆԻ ԿԻՆԸ

Առավոտյան, յերբ Վաչիկն աթնացավ, գեռ վաղ եր, բայց խուժանոցում վոչ վոք չեր մնացել, բայց Անտերից: Վաչիկն աբթնացրեց նաև նրան և նրանք իսկույն վոտքի թռան:

— Անոթի յեմ, — յեղավ Անտերի առաջին խոսքը:

— Յես ել եմ սոված, — հայտնեց Վաչիկը: — Յեկ գնանք մի քիչ հաց ճարենք, իսկ հետո յես կդնամ պատկոմատուն, քույրի կիս մասին իմանալու:

Նրանք դուրս յեկան լողարանի ավելակներից, բայց նախքան դնալը, Անտերը կանգ առավ փաքրիկ սենյակներից մեկի ավերակում, ուր շատ վաղուցվանից մոխիր եր դիպված և մեծ զդուշությամբ հարցրեց Վաչիկին.

— Չուր ուղում ես խմել:

Վաչիկը չնասկացավ:

— Սառը, մաքուր ջուր, — բացատրեց Անտերը:

— Ուղում ես՝ խմենք, — ենկերոջ սիրտը չկոտրելու համար համաձայնից Վաչիկը:

Անտերն իսկույն ուրախացավ և շուրջը հայելուց ու համոզվելուց հետո, վոր մարդ չկա, ծունկ չոքեց մոխրի վրա: Վաչիկը հետաքրքրված մոտեցավ: Անտերն սկսեց յերկու ձեռքով մոխիրը յետ տալ: Քիչ հետո, դուրս յեկավ թաց մոխիր, ապա յերեաց մի պղոսր հեղուկ:

— Հիմի կպարդվի, — բացատրեց Անտերը:

Յեկ իրոք: Չուրն արագ կերպով պարզվեց և նկատելի դարձավ, վոր նա անցնում եր մի կավե խողովակի միջով: Խողովակը մի քիչ տեղ ջարդված եր:

— Եմիր, — հուրասիրեց Անտերը: — Եմ աղրյուրս ե:

Վաչիկը բերանքսիվար պառկեց և մի վայրկյան շրթունքները հպեց ջրին:

— Յես եմ գտել, — շարունակեց Անտերը: — Ծածուկ եմ պառում, վոր Չոփուռը, Վեցկը ականին, Փասը չխմեն: Տղաներին ել

չեմ ասել: Վախենում եմ մատնեն: Մենակ Սուրիկը, Վոջլում ու  
Աշուղ գիտեն որա տեղը...

Անտեղը նույն դիրքով գեռ չոքած, սկսեց ժամուռով գիտել  
վաղող ջուրը:

— Տես, Վաչիկ, ինչքան զուլալ եւ Տեսնես ուր և դնում: Ցես  
ամեն գիշեր ծածուկ դալիս խմում եմ: Ի՞նչ, ել չես ուղում խմել:

— Չե, խմեցի, — հայտնեց Վաչիկը:

Անտեղը ժանդոտ թիթեղի կտորը նորից դբեց խողովակի  
ջարդվածքի վրա և մոխրով ծածկեց: Համովկելով, վար մոխրա-  
կույտը նախկին տեսքն ստացավ, նա Վաչիկի հետ միասին դուրս  
յելավ այդտեղից և ուղեորվեց դեպի շուկա: Վաչիկը շատ եր շտառ-  
պում վորսե բան թոցնել, վորպեսով շուտով գնա պատկրմատուն:  
Ուստի տեսնելով, վոր ձկնավաճառի խանութիւ բաց եւ, շտառեց  
դեպի այնտեղ: Դեռ հեռվից տապակած ձկան հոտը դրդուց նրա  
քիթը: Սակայն մոտենալով, նա տեսավ, վոր բացի ձկնավաճառի  
կնոջից, այնտեղ եր նաև ինքը՝ ձկնավաճառը:

Չուկ ուտելուց հույսը կտրած, նա շուռ յեկավ դեպի Արտօւ-  
տյանի խանութը, ուր դայթակղեցնող կերպով շարված եյին  
քաղցը կաթ, թուղ, չամիչ, շոկոլադ, զանազան կոնսերվներ: Ար-  
տօւտյանն ու Մորուքը, հաճախորդների համար արած իրենց հա-  
ճախակի կոփիլները մռացած, կանգնել եյին Մարուքի խանութիւ  
դուանը և քաղցը կերպով զբուցյ եյին անում:

Վաչիկն ուրախությունից կարմրեց: Այս քեզ հիանալի բան:  
Այժմ արդեն, իր և Անտերի նախաճաշն առանձված եւ նա ինարկէ  
վորեն թանկարժեք բան չի թոցնի՝ վորպեսով խանութպանն իրեն  
չեալածի, այլ կվերցնի մի ափ թուղ կամ չամիչ...

Նու ալդեն ուղում եր մոտենալ խանութիւն, յերբ լսվեց միլի-  
ցիոների սուլիչի ձայնը: Վաչիկը բնազդաբար յետ նայեց, պատ-  
րաստվելով փախչել: Բայց սուլոցը վոչ իրեն եր վերաբերում, վոչ  
ել Անտերին, վորը մի քիչ այն կողմ կանգնած՝ անմեղ-անմեղ  
նայում եր: Նույն բոպեյին արագ քայլերով անցավ Զովուռ  
Ոնիկը:

— Քեզ հետ եմ, քաղաքացի, — կանչեց միլիցիոները, դիմելով  
նրան:

— Ո՞ւմ, ի՞նչ, — զարմացավ Ոնիկը:

— Այս, քեզ, ի՞նչ կա վոր:

— Ի՞նչ պիտի լինի, — ասաց Ոնիկը և կանդ առավ:

Միլիցիոները մոտենավ նրան:

— Յերբ սուլում են, ինչնու չես գալիս:

Զկնավաճառը դուրս յեկալ և սկսեց հետաքրքրությամբ լսել:

Միլիցիոներն ու Ոնիկը կանգնած եյին նրա խանութիւ դռան մոտ:

— Յես ի՞նչ զիտենամ, թե ում ես կանչում, — ժպտաց Ոնիկը:

— Դե լավ փաստաթղթերդ տուր, տեսնեմ ի՞նչ մարդ ես, —

հարցըց միլիցիոները: — Ահա քանի որ ե, վոր յես քեզ տեսնում  
եմ եստեղ, առանց գործի...

— Առանց գործի, — ծիծաղեց Ոնիկը, անցնելով փաստաթղթերի  
հարցի վրայից: — Իմ խանութս եստեղ ե, դրա համար յես ես-  
տեղ եմ:

— Վհրն ե խանութդ, — զարմացավ միլիցիոները:

— Սա յե:

Յել Զովուռ Ոնիկը ցույց տվեց ձկնավաճառանոցը:

— Սա յե, — կրկնեց նա: — Այս մարդու հետ կիսովի յե մեր  
խանութը: Այսինքն՝ խանութը նրա անունով եւ բայց փողի կեսը  
յես եմ դրել...

— Ճիշտ ե ասում, — հարցըց միլիցիոները ձկնավաճառին:

Զովուռ Ոնիկը գաղտնի կերպով այնպես նայեց նրան, վոր  
նրա մազերը բիգրիդ կանգնեցին: Նա, առանց ուշացնելու, պա-  
տասխանեց.

— Հա, ինարկե, նա իմ ընկերս ե...

Վորպեսովի իր խանութպան լինելն ավելի հավանական ցույց  
տա, Ոնիկը, իրը թե այլս ուշադրություն չդարձնելով միլիցիո-  
ւա, ների վրա, ըղավեց քիչ հեռվում՝ կանգնած՝ Վաչիկին, Մորուքին  
և մյուս խուժաններին.

— Եյ, խուժաններ, ի՞նչ եք կանգնել, յես ձեր հոգին կհանեմ:  
Ամոթ չի, բան եք թոցնում: Յեկեք մի-մի ձուկ տամ, կորեք  
դնացեր...

Խուժանները վաղ տվեցին դեպի նա: Զկնավաճառը շշմեց,  
չգիտենալով իր անելիքը: Նրա կինն սկսեց քթի տակ ծիծաղել:  
Ոնիկը վերցըց մի մեծ ձուկ, հում ձկներից, տվեց Վաչիկին և  
աննկատելի շշնջաց.

— Տուր Փասին, թող տանի իմ տունս...

Նա վերցըց յերկրորդ ձուկը, յերբորդը, չորրորդը, տվեց  
մյուսներին: Այդպիսի զորավոր փաստից համոզվելով, միլիցիո-  
ները թողեց նեռացավ: Ոնիկը նույնպես, հեռացավ:

Յերբ Վաչիկը վերադարձավ, Արտօւտյանն ու Մորուքը նույն  
դիրքով կանգնած, դեռ խոսակցում եյին: Այս անդամ նրանք

շատ բարկացած եյին: Ըստ յերեսութին, խոսում եյին պատահածի մասին, զղալով, վոր բռնել չտվեցին Զոփուռ Ռնիկին: Բարկացած եր, ավելի շուտ կատաղած եր նաև ձկնավաճառը:

Վաչիկն արագ մոտեցավ Արտուրյանի խանութի առջևամասին և ձեռքը կոխեց չամիչի մեջ:

— Տարավ, բռնէք, — բղավեց ձկնավաճառն ու վաղեց: Բայց նախքան նրա հասնելը, յերկու ցատկումով մոտեցավ Մորուքը և յերեխային դետին դլորելով, սկսեց վոտքով ձեռքով հարվածներ հասցնել:

— Դայ, մայրիկ ջան, մեռա, — նվազ վաչիկը: Նույն վարկանին վրա հասան Արտուրյանն ու ձկնավաճառը և սկսեցին սղնել Մորուքին: Հավաքվեց ժողովուրդ:

— Ի՞նչ եք անում, սպանեցիք, — լսվեց հանկարծ ձկնավաճառի կնոջ ճիչը և նա ձեզքելով հավաքվածներին, նետվեց ծեծողների մեջ: — Թողեք, անամոթներ, սրիկաներ, ավաղակներ...

Նա նրանց վոտների արանքից դուրս քաշեց փոշոտ, արյունվա և համարյա կիսամեռ յերեխային:

— Դու սկսեցիր, շուն, — ասաց նա Մորուքին և մոտեցավ: Բավական չի: Յերեկ զսոսվ ամօւնացնում եյիր վորուհիներին, եսոր ծեծում ես խեղճ անտունանտերներին: Շուն...

— Զսպիր լրբիդ, — դիմեց Մորուքը ձկնավաճառին:

Կինը կարմրեց, կծեց շրթունքը և մի ուժեղ ապահով շջեցրեց Մորուքի յերեսին:

— Առ քեզ լիբր: Դու ինձ ել ես խորտակել, շատերին ել: Շուն...

— Ոխայ, ապրես, աղջիկ, — բացականչեցին ժողովրդի միջից:

Սրտուայանն ապշությունից բղավեց: Մորուքն ափը դրեց իր կարմրած յերեսին և արագ մտավ իր խանութը: Ձկնավաճառը վաղ տվեց նրա յետեց: Սաթիկը վերցրեց վաչիկին և տարավ իր մոտ, խանութի: Անմիջապես հավաքված խուժանների միջից առանձնացան Սուրեկն ու Անտերը և նույնպես գնացին ձկնավաճառանոց: Յեկավ միլիցիները: Ժողովրդից տեղեկացավ բանի յեղելությունը և անմիջապես ձերքակալելով յերեք խանութպաններին, տարավ: Մորուքը շատ խնդրեց, վոր գոնե իրեն թողնեն Արտուրյանի և իր բաց խանութներին հսկելու, բայց բան դուրս չեկավ: Ստիպված՝ նրանք փակեցին խանութները: Յերբ միլիցիները նրանց անցկացրեց ձկնավաճառանոցի մոտով, ձկնավաճառը նայեց ներս և մոմուաց.

— Սպասիր, այ կին, յես բու հաշիվը տանը կմաքրեմ...

Կինն ուշագրություն չդարձրեց նրա վրա և շարունակեց թաց շորով մաքրել վաչիկի քերձված և արյունոտված տեղերը: Վաչիկը պառկել եր անզգա, աչքերը փակ: Նրա մոտ, կեղտոտ, արցունքներն այտերին, կանգնել եյին Սուրեկն ու Անտերը:

— Վայ, մայրիկ ջան, — մրմնջաց Վաչիկը նորից և աչքերը բաց անելով, թույլ հայացքով նայեց շուրջը:

— Մի վախենա, բալիկ ջան, — հանգստացրեց կինը մայրական տոնով, թեև ինքը նույնպես շատ ջահել եր:

— Միլիցիոները բոլորին հավաքեցարավ, Վաչիկ, — փորձեց ուրախացնել Անտերը:

Սուրեկը հառաչեց:

Հանկարծ Վաչիկը վերկացավ նստեց և դունատված, սկսեց յերկու ափով քուրջերը շոշափել:

— Ի՞նչ ես փնտարում, — հարցրեց կինը:

Առանց պատասխանելու, Վաչիկը շարունակեց փնտել: Յերբ վերջապես գտավ հանեց, ստուգեց:

— Ի՞նչ բան ե, — հետաքրքրվեց կինը:

Վաչիկը թուղթն ու թիթեղը մեկնեց նրան: Կինն արագ կարդաց նամակը, բան չհասկացավ, ապա նայեց կլոր թիթեղի կտուրին և ճաց:

— Իմ համարս...

— Քուր, — զարմացավ Վաչիկը:

— Իմ համարս ե, — կրկնեց Սաթիկը, նորից ու նորից նայեց նրա վրա փորազրված թվանշաններն: — Չըսնազար վեց հայով հիսուն չորս... Վարտեղից ես գտել անուշ ջան... Յերբ հիսուն չորս... Վարտեղից:

— Վարտեղից:

— Պատկոմապետի ողնականի գըպանից,

— Յերբ: Մի քանի որ առաջ Ուրեմն Ութսունինն եստեղ ե: Ախ, իմ համարս... Նա մինչեւ հիմա պահել ե...

Սաթիկն արտասկից: Անտերը, տարակուսած, աչքով արեց Վաչիկին ու Սուրեկին, վոր գնա: Նրանք վերկացան:

— Սպասեցեք: Միք գնա, — ընդիմացավ Սաթիկը: — Ահա ձեզ տապակած ձուկ: Իսկ դու, դեռ չասեցիր, թե դա ինչ նամակ ե.

Վաչիկը վերցրեց մի փոքրիկ կտոր ձուկ. սկսեց ուտել և պատ-

մել. Սաթիկն անթարթ լսում եր նրան: Յերբ նա վերջացրեց, Սաթիկը շոյեց նրա գլուխը և խնդրեց.

— Փոքրիկ ջան... Կաչիկ ջան... Յերը կդնաս Ութսունինսի  
մոտ՝ քրոջդ մասին իմանալու, ասա, թե վորտեղ եմ յես: Թող նա  
հանդիպի: Ասա, վոր ամուսինս ինձ չի թողնում տնից կամ խա-  
ռութից ջոկ ուրիշ տեղ գնալու...

— Լավ, — խոսք տվեց Վաչիկն ու գնաց:

Սրագ քայլերով շուկա մտան Ռնիկն ու վեցկրականին:

— Եստեղ ի՞նչ ե պատահել, — հարցրեց Ռնիկը:

Անտերը համառոտակի պատմեց նըան:

— Իսկ Վաչիկն ուր ե, — հարցրեց Վեցկրականին:

— Գնաց պատկոմատուն...

— Պատկոմատուն: Ի՞նչու պատկոմատուն:

— Չդիտեմ, — խուսափեց պատասխանելուց Սուրիկը. — գնաց  
պատկոմապետի ողնականի մոտ...

— Պետի ողնականի, — բացականչեցին Ռնիկն ու վեցկրակա-  
նին միանգամից:

— Այս:

Խուժանապետներն արագ վաղ տվեցին:

## 16

### ՀԻՆ ԸՆԿԵՐՈՒԽՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Կապույտ պատկոմները դեռ չելին արթնացել: Արևը դեռ նոր  
եր բարձրանում: Սպասվում եր հիանալի պայծառ որ: Սմբատը  
մերթամերթ բերանով փստփստացնում եր, ապա շուռ գալով մյուս  
կողքի վրա՝ լուս: Վաղենը քնել եր իր սիեսը բարձատակին  
դրած, փորով, ըստ յերկույթին, զբաղվել եր մինչև ուշ զիշեր:

Միհրանն ագվել եր յերկար ու լայն և նրա վոտները դուրս ելին  
ցցվել մահճակալի յերկաթների արանքից: Վարդանն այնպես եր  
փաթաթվել վերմակի մեջ, կարծես ձմեռ լիներ: Հրաչի ամբողջ վեր-  
մակը հավաքվել եր նրա զլիքի վրա, իսկ մարմինը մնացել եր բո-  
լորսվին բաց: Վոչ ճանճերն ելին խանգարում նրան, վոչ Սմբատի  
յերբեմնակի փստփստոցը: Սակայն յերբ սենյակի դուռը թակեցին,  
բոլորից ավելի շուտ ինքը լսեց այդ և գնաց բաց անելու:

— Ի՞նչ կա, Բարկեն, — հարցրեց նա, բանալին պտտացնելով:

— Յես Բարկեն չեմ, — լսեց մի կանացի ձայն գուան յետեցի:

Հրաչն իրար իշառնվեց: — Մի ըովե, — ասաց նա, անդրավար-  
տիքը՝ հագավ, վաղեց գեսի ընկերների մահճակալները, ուղղեց  
նրանց վերմակները: Միհրանի վոտքերը մահճակալի ճաղերից

ներս հրեց, սուլիչը դրեց Սմբատի կիսաբաց շրթունքների արանքը  
և վերադարձավ, դուռը բաց արեց:

— Բարե, Հրաչ, — ասաց մի աղջիկ չեմոդանը ձեռքին և ծի-  
ծաղելով ներս մտավ:

— Արշալույս, — բացականչեց Հրաչը դարձացած հայելով: Դու  
յես, թէ աչքիս ես յերեկում:

Սղջիկը մոտեցավ, բռնեց Հրաչի ճակատի վրա թափված մա-  
զերը, ցնցեց, ապա ծիծաղելով շոյեց նրա յերեսը:

— Ինարկե դու յես, Արշալույս: Յես այդ զգացի իմ սեփական  
մազերիս վրա: Այդ ի՞նչպես, վհրատեղից...

Հանկարծ Միհրանի մահճակալից լսվեց ծիծաղի պառթկոց:  
Միհրանը, առանց աչքերը բաց անելու, դիմեց Վաղդենին.

— Լսում ես վաղեն, Հրաչը բանաստեղծ և դարձել: Խոսում  
ե Արշալույսի հետ...

— Վաղենն ել և այստեղ, — բացականչեց Արշալույսը և մո-  
տեցավ մահճակալներին:

Միհրանն անչափ զարմացած՝ վոր Արշալույսը խոսեց, աեղից  
վեր թռավ և ցից նստեց:

— Արշալույս, — հարցրեց նա, դեռ աչքերին չհավատալով

— Այս: Արշալույս՝ մեծատառով, — բացատրեց Հրաչը:

Սնմիջապես անկողիններից վեր թռան Վարդանն ու Վաղենը  
և վերմակների մեջ փաթաթվելով, մոտեցան իրենց հին ընկերու-  
ունում: Բռնեցին նրա ձեռքերից և սկսեցին այնպես ցնցել, կար-  
ծես պոկել ելին ուղղում: Արշալույսն ուրախությունից սկսեց,  
բարձր ծիծաղել, իրար վրա հարցեր տալ, վորոնց պատասխանելու  
վոչ մի ժամանակ չկար, քանի վոր տղաներն ել իրենց հերթին  
ելին հարցեր տալիս: Նրանք մի վարկյանում իրենց զգեստները  
հաղան: Դրանից անմիջապես հետո, Սմբատի մահճակալից, հեր-  
թական փստփստոցի փոխարեն լավեց սուլիչի ուժեղ շվոց և Սըմ-  
բատի այդպիս աղջիկա ձայնից հանկարծակիի յեկած, վեր կացավ ու  
զգաստ նստեց: Բոլորն սկսեցին բարձր ծիծաղել ու հոհուար բացի  
ինարկե Հրաչից: Սմբատը բարկացած, նորից պառկեց և հանկարծ  
լողությունը լարելով, հարցրեց:

— Ո՞վ և այդպիս աղջիկա ձայնով քրքջում: Վերջ տվեք...

Բնդանուր ծիծաղը կրկնվեց: Նույն բոպեյին, ներս մտավ Արշալույ-

սին թագցրին իրենց յետեւմ: — Յեթե գիտենաս, թե ով և յեկել,  
ութսունինն...

— Ուր և Ութսունինը, — բացականչեց Արշալույսը և թագուցից դուրս թռավ:

Արամն ու Սմբատը զարմացան միանդամից:

— Արշալույս... — չհավատաց Արամը: — Միթե դու յես: Այս ինչքան ես մեծացել, գեղեցկացել: Ուղղակի դժվար և ճանաչելը: Վարդեղ ելիք: Անհետացար այնպես հանկարծակի ու հետքդ ել կորավ:

— Կպատմեմ, Ութսունինն ջան, ամեն ինչ կպատմեմ, — ժըպտաց նա: — Բայց նախ և առաջ դուք ինքներդ ասացեք. — իմ ընկերուհիներս այստեղ են:

— Բոլորն ել եստեղ են, — պատասխանեց Սմբատը: — Իսկուհին ել, Նվարդն ել, Արուսյակն ել...

— Ճիշտ եք ասում, — ուրախացավ Արշալույսը. — ախ, ինչքան եմ կարուել, ինչքան եմ կարուել:

— Նրանք երեքն ել մի մանկատնումն են, — հայտնեց Հրաչը: — Մեր դասարանի համարյա բոլոր աղջիկները մի մանկատնումն են: — Իսկ մեր վորբաննցը...

— Զեր վորբանոցի աղջիկներն այժմ ապրում են մի քանի տարրեր մանկատներում, — ասաց Միհրանը

— Բոլորին պիտի տեսնեմ, բոլորին, — հուզված բացականչեց Արշալույսը. — հենց հիմա քիչ հետո կղնամ: Այլևս չեմ կարող համբերել: Իսկ Վարդուհին դեռ խելազարանոցներն ե, — հարցեց նա հանկարծ:

— Այս... — ասաց Արամը կոտրված ճայնով: — Այնտեղ ե: Բժիշկն ասում ե, վոր նա կարող ե բուժվել բայց դա չափազանց դժվար ե: Համենայն դեպս, մինչև հիմի նա մաղաչափ չի առողջացել: Ելի նստում ե, ինքնիրեն լաց ե լինում կամ մտածկոտ, առանց բառերի, ինչ վոր բան մընջում: Մըրիչ տեսնել չի կարող: Գաղաղում ե, կարմրում, կապտում, սկսում ե ճշաւ, կարծես մեր խելոք, անուշ Վարդուհին չլինի...

— Նրան ել կդնամ տեսնելու... — մրմնջաց Արշալույսը: Զի ճանաչի, Ութսունինն, ինչ ես կարծում...

— Նա վոչ վոքի չի ճանաչում, — ցավակցարար պլուխն որուեց Հրաչը. — վոչ մեղ, վոչ իր ընկերուհիներից վորես մեկին: Մենք իսկուհու, Նվարդի և Արուսյակի հետ մի քանի անդամ յեղել ենք նրա մոտ, բայց նա մեղ չեր ել նայում:

— Ի միջի այլոց՝ լավ ժամանակ ես յեկել, — ասաց Վարդը: — Մի տաս որ հետո մեր ակումբում խաղալու յեն վաղ-

գենի պիեսը՝ կազաչի Պոստի կյանքից: Բոլորս կանք այնտեղ: Դու յել կա:

— Բայց դու այնտեղ մութ կետի նման ես դուրս յեկել — հայտնեց Վազգենը: — Մենք մինչև հիմի չզիտենք, թե ինչ պատահեց քեզ հետ: Միայն լսեցինք, վոր դու վորբանոցից փախել ես:

— Այս, փախել եյի — հաստատեց Արշալույսը, մտասուզվելով: — Ութսունինն և Հրաչ, հիշում եք այն որը, յերբ դպրոցում ժողով յեղավ աշակերտական թերթ հրատարակելու մասին և մենք չհամաձայնվելով վարժապետ Պոլեցյանի խորամանկ ճբագրին, դուրս յեկանք դպրոցի շենքից:

— Հիշում եմ, — ասաց Հրաչը: — Արամն ել և հիշում:

— Արամն ով:

— Յես եմ:

— Միթե քու անունդ Արամ ե, Ութսունինն: — Ժպտաց Արշալույսը. — յես սրանից հետո քեզ միշտ Արամ կասեմ:

— Մենք Արամ ել ենք ասում, Ութսունինն ել, — տեղեկացրեց Հրաչը. — նայած, թե նա իրեն ինչպես և պահում:

— Ուրեմն, — շարունակեց Արշալույսը, — ինչպես հիշում եք, մենք դուրս յելանք դպրոցի շենքից: Դեռ հաղիվ մի քանի քայլ արած, տեսանք դեմից յեկող Մորուքին՝ միստր նոնսի հետ: Նրանց հետ զալիս եյին խնամիներ՝ աղջիկ ընտրելու:

— Այս, — ընդհատեց Արամը. — և նրանք ընտրեցին քեզ: Դու լաց յեղար: Յես քեզ պաշտպանեցի: Նոնսն ինձ մի կողմ հրեց, իսկ հետո կանչել տվեց Սաթիկին, վորը ծառայում եր ամերիկացիների շենքում, — իր տանը: Յերբ սկսում ես պատմել իսկույն ամեն ինչ վերհիշում ես: Նոնսը քու փոխարեն ամուսնացրեց Սաթիկին, իսկ քեզ տարավ նրա փոխարեն իր մոտ ծառայելու... նա անխիղճ մարդ եր, բայց այդ անդամ քեզ խղճաց:

— Խղճաց, — քմծիծաղ տվեց Արշալույսը: — Վոչ թե խղճաց, այլ ուղում եր ինքն ամուսնանալ ինձ հետ, ինչպես ինձանից առաջ, Սաթիկի հետ:

— Այ քեզ բան, — ապշեց Արամը. — իսկ ինչու մինչև հիմի վլիմի չեյի ընկել:

— Յես վոր պլիմի չեյի ընկել, դու վհրտեղից ընկնեյիր, — հարցը հեց Հրաչը: — հետո, Արշալույս:

— Յերբ յես հասկաց նրա մտադրությունը, Կաղաչի Պոստից վախեա: Սարսափից ինձ այնպես եր թվում, թե ահա կգան

յետեիցս, կրոնեն, յետ կտանեն: Նստեցի գնացք, վոր ինչքան կարելի յե՛ շուտ հեռանամ մեր վորբանոցների սարսափելի աշխարհից: Տոմս չունեյի, փող չունեյի, ուտելիք չունեյի... Ի՞նչ կլիներ իմ վիճակս, յեթե մի պառավ ուսուցչուհի հենց գնացքում չհանդիպեր ինձ և չոգներ: Տեղ հասնելուց հետո յևս, նա ինձ համար շատ բան արավ: Նա ինձ մոր պես պահեց, մինչև վոր ընդունել տվեց աշխատանքի ու սովորելու: Յեվ-ահա, — վերջացրեց նա իր պատմությունը, — ինձ մեր գործարանի բջիջն ուղարկել ե այստեղ, իրեն տեքստիլ գործարանի ֆարզործուսի վարպետ... — Վարպետ, — ուրախացավ Միհրանը. — ուրեմն վարպետ ես: — Յեթե վարպետ ե՝ ուրեմն վարպետ ե, — բացատրեց Հրաչը ծաղրելով Միհրանին:

— Իսկ հիմի, — Հրաչի խոսքերի վրա ծիծաղելով առաջարկեց Արշալույսը. — գնացեք լվացվեցեք յեկեք, և թող ձեղանից դոնե մեկն ուղեկցի ինձ:

— Ինչպես թե գոնե մեկը, — նեղացավ Միհրանը. — մենք բոլորս կուղեկցենք քեզ: Դեռ մինչև ժամի տասը՝ բոլորս ել ազատ ենք:

Դեռ հաղիվ հինգ բոպե անց, բոլոր կապույտ պատկոմները կազմ ու պատրաստ, Արշալույսի հետ դուրս յելան շենքից:

— Իսկ ինչո՞ւ յեք դուք կապույտ պատկոմներ կոչվում, — հետաքրքրվեց աղջիկը:

— Ութսունինն ե մեղավորը, — հայտնեց Հրաչը: — Յերբ մենք սկառատանոցը քայքայեցինք ու քաղաք տեղափոխվեցինք, դեռ մի քանի որ շարունակ շրջում եյինք կապույտ փողկապներով: Սև ջոկատի և ոդնող ջոկատի տղաների համար դեռ վոչինչ. — Նրանք իսկույն բանվոր կամ ծառայող ընդունվեցին, քանդեցին փողկապները, հագան սովորական զգեստներ: Հաջողվեց նայե մյաւսների գործը. — հենց վոր նրանք պետական մանկատները տեղափոխվեցին, իսկույն նրանց կարմիր փողկապներ տվեցին: Իսկ մենք վեցս, մնացինք մեր նախեկին կապույտով: — Այ Բարեկեն, — ասում ենք պատկոմապետին, մեղ կարմիր կտօր տուր: Ասում ե՝ չկա, մոտ որերս կստանանք: — Այ Բարեկեն, — ասում ենք նորից. — մեր ակումբում խփված լողունդներից մեկն ասում ե. Շվերացը հայաստանի սկառատիզմի վերջին բունը՝ Կաղաչի Պոստը: Կտրտիր եղ լողունդը, տուր վղներս կապենք: Ասում ե, չի կարելի, մյուս յերեսի վրա ուրիշ լողունդ պիտի գրենք... Իսկ պատկոմներն այդ մի քանի որվա ընթացքում

մեղ սկառուտի տեղ եյին ընդունում, ընկնում եյին յետեներիցս, «կորչի» եյին բղավում: Մի որ, Արամը հավաքեց մոտ հարյուր պլուների և հայտնեց. — լսեցեք, մենք սկառուտներ չենք, մենք կապույտ պատկոմներ ենք: Յեվ այն որվանից, մեր անունը մընաց «կապույտ պատկոմ»...

Նրանք դուրս յելան դարպասից և գնացին: Յերբ արդեն թեքվել եյին անկյունից այն կողմ, փողոցի մյուս ծայրից յերեաց վաչիկը: Նա յեկավ, մտավ պատկոմատուն և տեղյակ մարդու վստահ քայլերով բարձրանալով յերկրորդ հարկ, կապույտ պատկոմների դուռը թակեց: Նրա սիրան այնպես երխում, վոր նա չգիտեր՝ կկարպանամ խոսել, բան հայտնել թե վոչ...

Տեսնելով, վոր բաց չեն անում, նա բանալու անցքից նայեց ներս: Չտեսնելով այնտեղ վոչ վոքի, նա անչափ տիրեց, վոր նորից իրեն չհաջողվեց իր ուղածը: Ստիպված՝ վորոշեց վերադառնալ և գալ մի ուրիշ անգամ: Յերբ-իջավ վար և բակից դուրս յելավ, դարպասի մոտ նրան արդեն սպասում եյին Չոփուռ Ոնիկն ու Վեցկրականին:

— Մատնեցիր, — Փշաց Վեցկրականին:  
— Ի՞նչը մատնեցի, — հանկարծակի յեկավ Վաչիկը:  
— Դու մեղանից լավ գիտես՝ թե ինչը, — աչքերը փայլատակեց Ոնիկը:

— Չոփուռ ջան, յես մենակ իմ քրոջս մասին եյի ուղում հարցնել, — լացակումած արդարացավ Վաչիկը: Յես ուրիշ վոչ մի բան չգիտեմ: Ի՞նչը մատնեյի...

— Քըոջդ մասին...  
— Այս: Նա ծանոթ եր նրան:  
— Հարցըրիր:  
— Վոչ, տանը չեր:  
Խուժանապետերն իրար նայեցին:  
— Ուրեմն դեռ չհարցնես, մինչև վոր մենք քեզ այդ մասին ասենք, — կարգադրեց Չոփուռ Ոնիկը:  
— Լավ: Բայց ինչո՞ւ:  
— Եղ քու գիտնալուդ բանը չե: Ուրեմն չես հարցնի:  
— Վոչ:  
— Դե յերդվիր:  
— Դանակի վկա:  
Խուժանապետերը գոհ սրտով հեռացան:

## ՆՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԵՄՔԻՆ

Քաղաքի հյուսիսային մասում, քաղաքից ավելի բարձր գտընչող տափառակի վրա, լայն փոված եր տեքստիլ գործարանի շինարարությունը: Այստեղ ու այնտեղ բարձրանում եյին բազմաթիվ մեծ ու փոքր շենքեր: Նրանց մեջ իր մեծությամբ աչքի յեր խփում մանվաճքային գործարանի սևաքար ու դեղնաքար շենքը: Ամեն կողմ թափված եյին քարեր, տախտակներ, ավաղ, կիր, յերկաթ: Մի փոքրիկ, միանգամայն պատրաստ շենքի պատի տակ, վոր յերեկի վարչության գրասենյակն եր, շարված եյին հըսկայական արկդներ՝ մանվաճքային ու գործվածքային մեքենաներով լցված:

Կապույտ պատկոմները, Արշալույսը, նրա ամենամտերիմ յերեք ընկերուհիներ և Արամի քույր Մարիամը, զրուցելով և շոււրջը դիտելով, սկսեցին մոտենալ շինարարության վայրին: Նրանք բուրն ել շատ ուրախ եյին: Շարունակ լսվում եր Արշալույսի աշխույժ, վողերպած ձայնը և աղջիկների միահամուռ ծիծաղը: Հրաչը քայլում եր աղջիկների խմբի հետ, Վաղգենն ու Արամը խոսակցում եյին պիհսի բեմադրության մասին, իսկ մյուսները խմբովին յերգում եյին պիհոներական մի քայլերգ: Վարդանը մեկմեկ կուանում եր, գետնից պոկում գույնսպույն ծաղիկներ:

— Ո՞վ կսպաներ,—ժպտաց Նվարդը և նորից, գուցե հարյուրայերորդ անգամ, գրկեց Արշալույսին, — հի կսպասեր, վոր մեր կուրած քույրիկն այսպես հանկարծակի պիտի վերադառնա:

— Յեվ այն ել վարպետուհի դարձած, — ավելացրեց Խսկուհին:

— Յեվ այն ել՝ ձեղ պիտի իրեն մոտ աշակերտուհիներ վերցնի, — ծիծաղեց Արշալույսն ինքը: — Հիմի յես ինչ ասեմ՝ գուք պիտի լսեք:

— Լսելը՝ կլսենք, Արշալույս ջան, — համաձայնվեց Արուայակը, — բայց մյուս ականջով բաց կթողնենք...

Ընկերուհիները դարձյալ ծիծաղեցին:

Մարիամը, վոր առաջ չեր ճանաչում Արշալույսին, այժմ արդեն մտերմացել եր նրա հետ և թվում եր, թե նա ես, մյուսների հետ միասին, Արշալույսի հին ընկերուհին ե:

— Բարե, պատկոմներ, — վողջունեց մի բանվոր շենքի բարձր պատի վրայից. — պատրաստ ե՞ք:

Հրաչը հանեց իր լայնեղը դլխարկը, բանեց բերանը դեպի վեր և պատափանեց.

— Պատրաստ ենք. կարող ես նետվել:

Ամեն տեղ, թե գետնի վրա, թե փորված հիմքերի մեջ՝ թե շենքերի մեջ և թե գրանց վրա, աշխատում եյին բազմաթիվ բանավորներ, մեծ մասամբ յերիտասարդներ: Նրանց կեսից ավելին մանկատների չափահաս սաներ եյին և արդեն իրենց առանձին բնակարաններում ապրող նախկին վորքեր: Նրանք բոլորն իրենց կենսուրախաղ աղմուկ աղաղակով լցրել եյին շինարարության վայրը: Մի կողմում, մանրիկ սելմերի վրայով սլանում եյին դատարկ կամ բարձած վագոնետկաները, մյուս կողմում կրաշրից և ավազից թանապուր եյին պատրաստում, յերբորդ կողմից լսվում եր քարտաշների չակուճների փափուկ ձայնը փուլսր տուֆքարերի վրա: Գարսված եյին ցեմենտի տակառներ, կառուցված եյին տախտակյա ժամանակավոր բնակարաններ, արագ անցնում եյին տեխնիկներ կամ ինժիներներ, ինչ վոր տեղում զնդզնդում եր հեռախոսը, կայարանից դեպի շինարարության վայրը ձգվող յերկաթուղու վրա յերեսում եյին մոտեցող ապրանքատար վագոններ, անասելի շրթուցով, իրենք իրենց ջարդելով դնում եյին: դատարկ ֆուրգոններ կամ ճնշչալով զալիս եյին բեռնավորված սայլեր: Արեն արդեն բարձրացել եր և պայծառ լուսավորում եր այդ ամբողջ յեռուղեռը:

— Գնանք մեր տղաների մոտ, — առաջարկեց Արամը:

Նրանք ուղղվեցին դեպի մի մեծ շենք, վորն ամբողջապես պատրաստ եր, սակայն վորի միայն մի քառորդի դռներն ու լուսամուտներն եյին գրված և աղակիները գցված: Դա ֆարգործուսի յերկհարկանի շենքն եր:

Ցերը պատկոմներն ու պատկոմուհիներն ուրախ կանչելով լցվեցին ներս, բանվորները մի բոսե զարմացած բարձրացրին գլուխները, իրենց մազութու մատների արանքում յուղոտված լաթի կառները պլտտեցնելով:

— Սա ում արշավանքն ե, — հարցրեց Նրանցից՝ մեկը, — ապա նկատելով Խսկուհուն, Նվարդին և Արուայակին, ծիծաղեց. — ախ, ելի յեկաթ: Թույլ չեք տալիս, վոր աշխատենք: Բարե ձեզ:

— Դուք դեռ այս կարպուսնեմ եք, — զարմացավ Արուայակը. — եհ, փնթիներ: Այս ինչ կլինի մի քիչ շուտ անեք...

Բանվորը յուղոտ լաթը մեկնեց դեպի նա:

— Առ... Գուցե դու ավելի արագ անես:

— Մի հպարտանա, — ընդհատեց Մարիամը. — մեր հերթն ել կդա: Մեծ բան ե՝ մեքենաների մոնտաժ: Դու ասա՞ նրանց վրա աշխատել իմանաս: Իսկ դու չես իմանում:

— Արշալույս, — լսվեց հանկարծ բաժանմունքի մյուս ծայրից, և այնտեղից արագ յեկան յերկու յերիտասարդներ:

— Ո՛, Ռուբեն, Ասքանապ, — բացականչեց աղջիկը և մոտեցավ: — Բարե ձեզ: Այս ինչքան եք փոխվել, մեծացել... Պահ, Ռուբեն, դու արդեն բեխեր ել ունես:

— Ասքանապն ել ունի, բայց տանն ե, — հայտնեց Հրաչը:

Արշալույսն ուղեց բոնել սև ջոկատի նախկին սկառուտերի ձեռքերը, բայց նրանք չթողեցին, քանի վոր մեքենայի յուղոտ ելին:

— Ի՞նչ տեսակ դադանեներ եք ստացել, — հարցրեց Արշալույսն իրեն գործին տեղյակ մարդ:

— Անդիմական ել, գերմանական ել: Ե՞ս, ասա տեսնենք, ես մուր եյիր մինչեւ հիմի, լինչ եյիր անում:

— Լավ եմ, դժուք ինչպես եք, — արագ պատասխանեց աղջիկը և մոտեցավ մեքենաներին: — Ահա Ռուբեն սա անդիմական մեքենաների ցեխն ե: Ապա...

Նա սկսեց տնտեղել մեքենան: Կուացավ, նայեց ներքերից, ինչ վոր բան շարժեց, մի ուրիշ բան թուլացրեց, դարմացած Ռուբենի ձեռքից վերցրեց պատուտակի բանալին և ձգեց մի թույլ պատուտակ:

— Քանի որից այս ցեխը պատրաստ կլինի, — հարցրեց նա, յուղոտած մատներն Ասքանապի արտահագուստի փեշի վրա քսելով:

— Տասնհինգ որից:

— Շուտ արեք, լինչ կլինի, շուտ արեք, — սկսեցին լենդրել իսկուհին ու Մարիամը:

— Ինչու յեք շտապում, — ժպտաց Ռուբենը. — ձեզ համար հանդիսաւ պառկեցեք, կերեք մանկատան հացը: Ո՞վ ե խանդարում:

— Իսկ դու ինչու չեյիր պառկում և ուտում, — հարցրեց մի բանվոր ինչ վոր մեքենայի տակ մեջքի վրա պառկած, առանց աշխատանքն ընդհատելու: Ապա սկսեց ուժեղ կերպով թիթիկացնել, այնպես, վոր չկարողացավ լսել իր պատասխանը: Միհրանը մոտեցավ նրան և սկսեց ողնել:

— Մի խանգարիր, Միհրան, մարդը գործ ե անում, — դուշացրեց Հրաչը: — Յեկ այստեղ:

Բաժանմունքի մյուս դոան մոտ յերեացին մի խումբ բանվորներ, վոր դպուշությամբ զլորում եյին մի մեծ, լայն չուզունեանիվ: Հասցնելով շեմքի մոտ, նրանք չկարողացան բարձրացնել

այն և շեմքն անցկացնել: Սկսեցին գոռքուալ, սիրտ տալ իրար, փայտ անցկացրին անիվի առանցքը, ձգեցին վերև, բայց փայտը կորացավ, ապա շառաչով ջարդվեց:

— Աղասեցեք, — բղավեց Մարտաը, թերը վեր քշտելով. — յես այս ըոսելիիս ձեղ ցույց կատամ, թե ինչ և նշանակում սկառուտ, այսինքն՝ մարդկելու փոխարեն ել մարդվիր, աշխարհից բան հասկանալու փոխարեն ել մարդվիր...

Նա մի քանի ցատկումով հասավ դոան մոտ, անիվի չոբս կողմից մաքրեց բանվորներին, ապա զսւյգ ձեռքերը յերկու կողմից անցկացնելով անիվի շառավիրներից մեկի տակ, վեր քաշեց: Բայց փոխանակ բարձրանալու շեմքի վրա, անիվի վողորկ մակերեսը սկըտվեց շեմքի փայտին և անիվը մնաց իր տեղը: Պատկոմներն ու պատկոմուհին պատկանավ ընկավ դեռ չտախտակած հատակի վրա, ապա վլորվեց գեղի մյուս դուռը: Պատկոմներն ու պատկոմուհին կողմը մի կողմ փախան: Միհրանը վրա հասավ և վոաքը դեռ բըռնելով անիվին, կանգնեցրեց այն: Իսկույն լսվեց ուժեղ ծափահարություններ:

— Սիսալ չհասկանա, Միհրան, — բացատրեց Հրաչը, — Մարտին են ծափահարում:

Աղջալույսն իր գրպանից հանեց թաշկինակը և սկսեց Մարտին քրտինքը չորացնել: Մարտին գեմքը, վոր անիվը բարձրացնելիս մի վայրէյան մուգկարմիր գույն եր ստացել այժմ կամացկամաց ստանում եր իր նախկին տեսքը: Բանվորները, վորոնք չեյին կարողացել անիվը ներս բերել, կոտրված կերպով մտան բաժանկարմիր անիվը ներս բերել, կոտրված կերպով մտան բաժանկարմիր մունք: Յեկ այդտեղ միայն, բոլորը նկատեցին, վոր նրանց մեջ եյին Միհրանը, Ռատնը, Լոննը և յերկու ուրիշները, վորոնց նրանք չեյին ճանաչում:

Տեսնելով ծանոթների, կարմիր սկառուտները, բարեկցին և կանգ առան: Միհրանը, վարն այժմ ինքն իր մեքենայի տակ պառկած, հարցրեց:

— Միհրնի ձմյուն ե:

— Այո, — քմծիծաղ տվեց Վարդանը. — հայ արի Միհրնի և մյուս պարսների ձմյունը...

— Վարդմն, — բղավեց Մարտը և սիրես տալով Վազգենին, արագ մոտեցավ: — Ի՞նչ ես ավելորդ բաներ ասում...

Ապա շուրջ դալով դեպի կարմիր սկառատները, ժպտաց.  
— Բարե ձեզ, տղաներ: Արշալույս, ճանաչում ես սրանց. —  
մերոնցից են:

— Ճանաչում եմ, ի՞նչպես չե, — ասաց Արշալույսը, մոտենաւով: — Բարե, Լոռն: Սա յել՝ Ոհանն ե: Քթիցդ ճանաչեցի, Ոհանը Շատ մեծ ե, աղնիվ խոսք, յես մեղալոր չեմ:

Բոլորը ծիծաղեցին, բացի Վարդանից ու Լոռնից:

— Իսկ սա՝ Սիոնն ե: Դու բոլորովին չես փոխվել, Սիոն:

— Այս, — կրկնեց Վարդանը յերկիմաստ կերպով, — նա բոլորովին չի փոխվել:

— Կերջ չպիտի տաս, — դուռաց Միհրանը մեքենայի տակից: — Մի լսի գրան, Լոռն, Սիոն: Դա մի քիչ տաքդուխ մարդ ե:

— Հիվանդություն ե, — բացատրեց Հրաչը, — դիմելով Ոհանին: — Կանցնի:

— Ինչու մեր կողմերը չեք յերեսում, — հարցրեց Վազգենը, մոտենալով: — Շուտով իմ պիեսս ենք բեմադրելու Կաղաչի Պոստի կյանքից: Յեկեք տեսեք, բոլորդ ել կաք մեջք: Ծիշտն ասած, յես ձեղ այնտեղ բոլորովին բացասական տիպ եմ դուրս բերել: Դե դա հասկանալի յե: Բայց հիմա, յերբ դուք աշխատում եք տեքստիլի վրա, տեսնում եմ, վոր դուք իմ պիեսիս մեջ մութ կետի նման եք դուրս յեկել...

— Իսկ պիեսը գրելու ժամանակ դու չզիտելի՞՝ վոր մենք աշխատում եյինք, — հարցրեց Ոհանը:

— Այն ժամանակ միայն Մամիկոնն ու Գարեգինն եյին աշխատում:

— Ուրեմն մեր ամեն մի քայլը ձեղ հայտնի յե, — մոայլ կերպով յեղակացրեց Լոռնը:

— Իսկ ինչու հայտնի չլինի, — ժպտաց Արամը: — Միթե դուք վորեե ծածուկ գործ եք անում:

— Յես քեզ հետ չեմ ուզում խոսել, — դուռաց Լոռն անսպասելի կերպով:

Լոռնի փոխարեն, պատասխանեց Սիոնը:

— Ի՞նչ ծածուկ գործ, Ութսունինն: Ի հարկե վոչ: Ինչպես տեսնում ես՝ բոլորս ել բանվորներ ենք, բացի Գարեգինից, վոր գրասենյակումն ե աշխատում:

— Յեվ բացի Գասպարից, վոր վոչ մի տեղ չի աշխատում, — ավելացրեց Միհրանը, մեքենայի տակից վեր կենալով: — Լավ չի անում, տղաներ, աղնիվ խոսք: Միայն աշխատանքը կդաստիարակի նրան:

Արշալույսը նայեց ժամացույցին:

— Գնանք, ընկերներ, արդեն հիմնարկները բացվեցին: Յեսպիտի ներկայանամ վարչություն...

— Յուսություն, Սիոն, Ոհան, Լոռն, — ասացին աղջիկները և կապույտ պատկոմների հետ միասին դուրս յելան: Ամենավերջում՝ դուրս յելան Վաղենն ու Արամը, վորը ցույց տալով մեքենաները, ասաց:

— Մեր յերկիրը հարստանում ե, Վազգեն մենք բոլորս հարստանում ենք, վոր ավելի լավ ապրենք: Ցեթե ուշ չե, այս ել մացրու պիեսիդ մեջ...

— Բոլորս հարստանում ենք... — հետեւ Լոռնը նրա յետեից: — Բոլորն ի՞նչպես կարող են հարստանալ: Հիմար: Կյանքը պայքար ե, Մելքը պիտի աշխատի. իսկ մյուսը հարստանալ: Դժբախտարար թե բարերախտաբար, ուրիշ կերպ չի կարելի...

Ապա, նայելով Սիոնին ու Ոհանին, ավելացրեց.

— Այսինքն, ճիշտ ե, բոլորի վիճակն ել կամաց-կամաց լավանում ե, բայց յես չեմ ուզում այդ կամաց-կամացը, յես ուզում եմ միանդամից հարստանալ, սեփական տուն ու տեղ ունենալ, սեփական տնտեսություն, մշակներ... Ի՞նչ պիտի տա ինձ եստեղից ստացած ոսմիլս:

Սիոնն ու Ոհանը դրան չպատասխանեցին, այլ առաջարկեցին գնալ պիեսը տեսնել:

Համաձայնվեց նաև Լոռնը:

## 18

### ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ՇՈՒԵՐ

Ուշ լինելու պատճառով, կապույտ պատկօմները, բացի Արամից, գնացին իրենց աշխատանքին, իսկ Արամն Արշալույսի քրոջ մյուս վարրուհիների հետ միասին գնաց խելադարանոց: Ճանապարհին նբանք բոլորը լուս եյին և ընկճված: Բոլորն ել հիշում եյին այն որը, յերբ խեղճ, միամիտ վարդուհուն, իրենց վորբանոցի ննջարանում ընկած ավելորդ սրբիչը թագցնելու համար, կառավարիչն ու դաստիարակայդ փոքրիկ գողության համար, կառավարիչն ու դաստիարակչուհին հրապարակով խայտառակ արեցին և նա խելադարվեց: Այդ որվանից ի վեր Արամը միայն մի անգամ եր տեսել նրան: Իսկուհու, Նվարդի և Արուսյակի պատմածի համաձայն, նրանք առաջներում յերեմն լինում եյին նրա մոտ, սակայն տեսնելով,

վոր նա վոչ խոսում ե իրենց հետ, վոչ նույնիսկ ճանաչում, ցավով ու կսկիծով դադարել եյին նրան այցելելուց: Արշալույսն անչափ տիտոր եր և նույնիսկ լաց յեղավ: Իր սիրելի Վարդուհին՝ իրեն ևս չի ճանաչելու: Արամի այն հույսին, թե գուցե նա ճանկարձ հիշի վորեն մեկին, յերբ աղջիկները միասին պատասխանեցին դառը ժաղանդակ:

Յել իրոք, յերբ բժիշկը նրանց ներս տարավ Վարդուհու պատը, նա նույնիսկ գլուխն ել չբարձրացրեց նայելու համար:

— Բարե, Վարդուհի ջան, — ձայն տվեց Արշալույսը և մոտենալով, բռնեց նրա ձեռքը:

Վարդուհին չնդիմացավ, բայց վոչինչ չպատասխանեց: Նրա դեմքը, չնայած վոր նիհար չեր, գունատ եր և թախծոտ: Նրա յերկար մազերն այդ գեմքի շուրջը յերեւմ եյին բնականից ավելի սև: Աչքերը սարսափելի դատարկ եյին և չունեյին վոչ մի արտահայտություն, վոչ մի միաք: Կարծես ապակյա լինեյին կամ կույզի աչքեր: Նայելով նրա աչքերին, Վարդուհին ցնցվեց: Մթթե այդպիսի աչքերը ունեցողը կարող ել վորեն բան հիշել, վորեն բան մտածել:

Արամը, իր քույրը և մյուս աղջիկները բկշկի մոտ կանգնած, սառած և անթաշը նայում եյին: Բժիշկն այնպիսի դիրքով եր կանգնել, կարծես ասելիս լիներ. — գնանք, սիրելիս, դժբախտաբար վոչինչ դուրս չի դա...

— Մթթե չի կարելի առողջացնել, ընկեր բժիշկ, — հարցրեց Արամը:

— Յես նբա նկատմամբ իմ հույսս յերեք չեմ կորցնում. — ասաց բժիշկը, — թեև վոչ մի փոփոխություն չեմ նկատում:

— Իսկ այն դեպքում ինչի՞ վրա յեք հույս դնում, — հարցրեց Մարիամը:

— Նա, աղջիկս, — բացատրեց բժիշկը, — չնայած իր յերկարատեկ հիվանդությանը, խելադարի դեմք չի ստացել, բացի իհարկե աչքերից, վորն ինքնըստինքյան հասկանալի յե: Իսկ քանի վար նրա դիմագծերը մնացել են նախկինը, ապա յես սիրում եմ հավատալ, վոր նրա ուղեղի մութը, հեռու մի անկյունում գեռ ապրում ե գիտակցության սաղմը: Ո՞վ գիտե, գուցե այնտեղ, նրա զլիսում, պտտում են մտքեր՝ թեև խառը, թեև թույլ, բայց իսկական: Ի՞նչ գիտենալ, գուցե այնտեղ գիտակցությունն ու խելագարությունն իրար հետ պայքար են մղում... Այո, աղջիկներս, նրա դեմքն ինձ ներշնչում ե վորոշ հեռավոր հույսեր և այս դեպ-

քում բժշկական գիտությունն իհարկե ինձ չի հուսահատեցնում: Համենայն դեպս՝ նա կտրուկ կերպով չի ժխտում իմ յենթագրություններս...

— Հիմի... ճաշ կտան... — մրմնջաց հիվանդը:

Արշալույսը, վոր դեռ նույն դիրքով կանգնած եր նրա մոտ, անասելի ուղախացավ և հարցրեց:

— Ի՞նչ ասացիր, Վարդուհի ջան:

— Հիմի ճաշ կտան, — կրկնեց նա:

— Արդեն սովոր ես, — նորից հարցրեց Արշալույսը:

Վարդուհին չպատասխանեց:

— Ուզնում ես, յես քեզ կանֆետ տամ, մինչև վոր ճաշը բերեն, — առաջարկեց Արշալույսը մեղմ ձայնով և գրպանից կանֆետ հանելով, մեկնեց նրան:

— Առ...

Վարդուհին չնայեց: Արշալույսը կանֆետը մաքրեց թղթից, տվեց նրա ձեռքը: Աղջիկը նույնիսկ չղդաց, թե իր ձեռքը բան տվեցին: Արշալույսը փորձեց մի ուրիշ կանֆետ մոտեցնել նրա շրթունքներին, վորպեսզի նա զգա համը: Սակայն այդ ևս չոգնեց: Նրա շրթունքները մնացին անշարժ, նույն կիսարաց վիճակում:

— Բժիշկ, — դիմեց Արշալույսը նրան, թրջված աչքերով. — մթթե նա ինձ չի լսում:

— Վոչ...

— Իսկ ինչու առաջին անգամ պատասխանեց...

— Նա պատասխանում և մի անգամ, աղջիկս: Միայն մի անգամ: Սկզբից մինչև հիմա իմ ամբողջ ջանքերս լարված են յեղել այն ուղղությամբ, վորպեսզի կարողանամ նբան պատասխանել կեհետանա:

Բուլորը լուռ եյին:

— Յեվ հետո, աղջիկս, — շարունակեց բժիշկը, — նա վոչ թե խօսեց այսորվա ճաշի մասին, այլ կրկնեց հնուց, դեռ Կաղաչի Պոստից իր ուղեղում մնացած բառերը, առանց նույնիսկ հասկանալու նրանց իմաստը...

Յեվ Արամի աչքերին պատկերացավ Կաղաչի Պոստի իրենց վորբանոցում նստած կիսաքաղց Վարդուհին, վորն իր ընկերուհիների հետ միասին անհամբեր սպասում ե սմբած ճաշին: Հանկարձ նա առնում ե բացվող կաթսայից յեկող հոտը և կամաց շնչառում:

— Հիմի ճաշ կտան...

Արշալույսն իր հայացքն իջեցրցեց հիվանդ ընկերունու դեմքից և տեսավ, թե ինչպես նրա քնքույշ, անմեղ ձեռքի մեջ, դեռ մնացել եր կանփետը: Նույնիսկ այդ կիսաբաց ձեռքից յերեսում եր, վոր ինչն Վարդուհին վոչինչ չի զգում, վոչինչ չի մտածում... Արշալույսը փղձկաց և արագ մոտեցավ ընկերներին:

— Գնանք, աղջիկներ, յես այլիս չեմ կարող...

Նրանք շուռ յեկան և դանդաղ քայլերով դիմեցին դեպի դուռը:

— Արուս... — լսվեց հանկարծ մի թույլ ձայն:

Աղջիկները, Արամը, բժիշկը, կանգ առան և հարցական նայեցին իրար:

— Աղջիկներ...

Կայձակի արագությամբ բոլորը նայեցին Վարդուհուն: Յեկամնանսպասելի, ամենաանվստանելի բանը, վոր նրանք տեսան, այդ նրա աչքերն եյին: Վարդուհին նայում եր նրանց և նրա աչքերի մեջ պսպղում եր դիտակցությունը: Ինչպես հանկարծ, մթին դահլիճում հանկարծ վառվի ելեկտրական լույսը, այնպես այդ անիմաստ, դատարկ ապակիների յետեռում այժմ վառվում եր միտքը:

— Վարդուհի ջան, — հեկեկալով վրա հասավ Արյուսակը և գրկելով, սկսեց անթիվ, անհամար անգամ համբուրել նրան: — Ինչի՞ յես... ինչի՞ յես... լաց լինում...

Արագ մոտեցավ բժիշկը, ծածուկ շշնջաց նրան՝ անմիջապես ընդհատել լացը, ապա պահանջելով բոլորից իրենց դարձացած ցույց չտալ, հաղճեալ կարգագրեց.

— Մոտեցեք նրան այնպես, ինչպես կմոտենայիք Կաղաչի Պոստում, վորեև սովորական որ: Վոչ մի խոսք, բացարձակապես վոչ մի խոսք նրա խելագարության մասին: Յեկ յեթե նա ձեղ համար թանկ ե, զգուշացեք սրբիչ բառը գործածելուց...

Յեկ անհետացավ դռան յետեռում, իր յետերից քաշ տալով Արամին:

Անմիջապես բոլոր աղջիկներն ուրախ վազվզողով գնացին դեպի սենյակի խորքը և առանց ուշադրություն դարձնելու Վարդուհու վրա, պատկռտեցին դատարկ մահճակալներին:

— Ինչո՞ւ յեք ուրախացեք... — թույլ ժպիտով հարցըց Վարդուհին. — իսկ Արուսը լաց եր լինում:

— Մենք նրան ծեծեցինք, — ծիծաղեց Արշալույսը. — կատակով ծեծեցիմք: Միթե խսկական եր լաց լինում:

— Զգիտեմ, Արշալույս: Լաց եր լինում:

— Դիտմամբ եյի անում, — խոստովանեց Արյուսակը: Ձեզ եյի խաբում...

Նույն ըոպեյին, Վարդուհին հանկարծ սոսկալի ցնցվեց, դաշաց և մոայլվեց: Բոլորն իսկույն գլուխ ընկան, վոր նա հիշեց իր խելագարության առիթ դարձած դեպքը: Բոլորի սրտերը կարծես կանգ առան, քանի վոր յետ յեկած դիտակցությունը նորից հեռանում եր Վարդուհուց... Յեկ գուցե նա նորից, և այս անգամ ընդմիշտ, կորցներ իր դիտակցության ամենավերջին նշույլը, յեթե Արշալույսի ուղեղում զարմանալի արագությամբ չձագեր մի փայլուն, հրաշալի միտք:

— Աղջի, — դիմեց նա հիվանդին. — եդ ի՞նչ վատ յերազ եյիր տեսել...

— Յերաշ... ի՞նչ յերազ... — ցնցվեց Վարդուհին:

— Յես ի՞նչ իմանամ: Ամբողջ գիշերը քնիդ մեջ շուռ ու մուռ եյիր գալիս, լաց եյիր լինում. — և զանց առնելով բժիշկի կարգադրությունը, հանկարծ ավելացրեց. — ինչ վոր սրբիչ եյիր ասում...

— Սրբիչ, — ճչաց Վարդուհին և իր մահճակալի վրայից վերցատկեց:

Բոլորը ծիծաղեցին:

— Աղջի վատ յերազ և տեսել, վատ յերազ և տեսել...

Վարդուհին մտածկու կերպով աչքերը թարթեց:

— Ուրեմն դա յերազ եր...

— Ի՞նչը, աղջի, — հարցըց Նվարդը զարմացած:

— Յես սրբիչ չեմ գողացել...

— Դու, հանդիմանական ժպատապ Արյուսակը. — իս չես գժվել: Դու յերբ ես գողություն արել...

— Աղջիկներ... — հուզված, և սրտի արագ բարախելուց շնչակուր յեղած, ընկերուհիներին դիմեց Վարդուհին. — ճիշտն ասեք՝ յերազ եր, թե ճշմարտություն...

— Ե՞ս, — բարկացավ Արշալույսը, — ել չեմ ուղում եղ մասին խոսել. հիմարհիմար բաներ ես ասում:

Յեկ անփույթ կերպով նորից պատկեց:

— Մի նեղանա, Արշալույս, — թախծառ ժպատապ նրան դիմեց Վարդուհին: — Ալ շատ վատ յերազ եր... Յեկ ենքան պարզ, վոր քիչ մնաց հավատայի, թե իսկապես պատահել ե: Լսիր Արուս ջան, լսեցեք, Նվարդ, իսկուհի, պատմեմ...

Յեկ նա, ապշեցուցիչ ճշտությամբ պատմեց ամբողջ դեպքը:

— Խեղճ Վարդուհի, — ժպտաց Արյուսակը, նրան գրկելով. — Կարգին վախեցել ես... Այսր հենց նոր՝ կառավարիչն եստեղ եր, դաստիարակչուհին ել եր եստեղ: Յեկան, մեզ արթնացըին, գնացին...

— Եսորվանից մեր վորբական հագուստները վոխում են, — բացականչեց Վարդուհին. — Ես ի՞նչ սիրուն շորեր եք հագել... Բա ի՞մ շորերս ուր են...

Ապա նայելով իր վրա և տեսնելով հիվանդանոցային խալաթը, նորից սոսկալի ցնցվեց, դողաց և մոայլվեց:

— Ես ի՞նչ ե., Ո՞վ ե հազցըրել...

— Ե՛յ, իսկուհի, Նվարդ, — բարկացած դիմեց նրանց Արշալույսը. — Դե հիմի պատասխան տվեք ձեր կառակի համար: Յես չասացի՞, վոր արթնանա՝ կվախենա...

— Դժուք եք արել... — հարցրեց Վարդուհին, տարակուսանքուկ մի աչքերը նրանց վրա հառելով:

— Այս... — հանձն առավ Նվարդը:

— Սուտ ե ասում, — բողոքեց իսկուհին:

— Դե լավ, կատակը բավական ե, — ընդհատեց Արյուսակը: — Նվարդ, գնա թագրածդ տեղից Վարդուհու շորերը բեր...

Նվարդի յետեկից՝ անմիջապես դուրս յելավ Արշալույսը և դիւմեց դռան յետեր կանգնած բժշկին:

— Ասա, հոգուդ մատաղ, ի՞նչ պատասխանենք, յեթե նկատի, վոր սա մեր մանկատան ննջարանը չե...

Բժիշկը մոայլվեց: Զեռք բերված հաջողությունը կարող եր մի վայրկյանում ողը ցնդել... Հարկավոր եր մի բան հնարել՝ խկույն, անմիջապես...

— Մտածիր, — շնչաց բժիշկը և համբուրեց Արշալույսի ճակատը. — դու հրաշալի կերպով վարվեցիր: Դու յել, ընկերուհիներդ ել Մի նոր բան մտածիր:

Նվարդը մյուս սենյակում մերկացը հիվանդանոցի քույրերից մեկին և նրա հագուստները թեկի տակ՝ մտավ ներս: Արշալույսը նույնպես, մտավ նրա յետեկից: Վարդուհին խկույն խլեց հագուստները, նայեց, դուրդուրեց և սկսեց հագնվել:

— Վարդուհի, — դիմեց հանկարծ Արշալույսը. — բա չես ասում սա մեր վարբանոցը չի...

Վարդուհին ապշած նայեց շուրջը. դուլպան ձեռքին, սառեց, մնաց.

— Աղջի... Ես ուր ենք... Ես ի՞նչ բան ե...

— Մի վախենա, վատ բան չի պատահել, — ծիծաղեց Արշալույսը, նրան դրկելով: — Հազիր, հետո ամե ինչ կպատմեմ: Գիշերը, յերբ դու քնած եյիր, կազաչի Պոստում շատ բան պատահ էեց: Բոլոր վատ կառավարիչներին ու դաստիարակչուհիներին վոնդեցին, բոլոր հայ արիներին ու ջոկատապետներին վոնդեցին, իսկ մեղ, վորիս քնած, վորիս արթուն, տեղափոխեցին քաղաք, աղատեցին... Հազիր, անուշ ջան, հազիր քույրիկ ջան...

## 19

### ԶԵԶՈՔ ԱԼԲԵՐՏՅԱՆՆ ՈՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Վաղքենի պիեսի լուրը տարածվեց պատկռմական բոլոր կուկատիմներում, բոլոր մանկատներում: Վորոշված եր ներկայացումը դնել բազմաթիվ անգամներ, մինչև վոր բոլոր պատանիները կարողանային տեսնել: Առաջին ներկայացումից մի քանի որ առաջ, կոլեկտիվներում և դպրոցներում սկսեցին վաճառել տոմսերը: Հրաչը վերցրեց մի մեծ դաստա տոմս, իրենց դպրոցում տարածելու համար:

— Այնպիսի հետաքրքրություն պիտի առաջ բերեմ, — խոստացավ նա, — վոր տոմսերն իրար ձեռքից խլեն, իսկ ում վոր չհասնի, քիթ ու պունդս ջարդեն...

— Ասա նրանց, — խորհուրդ տվեց Վաղքենը, — վոր պիեսը մի մութ կետի նման բան ե: Ամեն մարդ պետք ե այդ մութ կետն իր համար պարզի...

— Այդ չեղավ, — ժպտաց Արամը. — մութ կետ ասելով, մենք հասկանում ենք անհասկանալի բան:

— Յես լույս կետ կասեմ, — հանգստացը Հրաչը: Վերջին որերին, Վաղքենն իր պիեսում կատարել եր մի քանի փոքրիկ փոփթառություններ: Նա պարզել եր Արշալույսի, Սիսնի կոքըիկ փոփթառություններ: Նա պարզել եր Արշալույսի, Սիսնի Ոհանի «մութ կետերը»: Վերջին յերկուսին նա դուրս եր բեռեր իրեր վատ աղդեցության տակ ընկած անդիտակից հայ արիւրելի վարդը կարելի յե ապագայում վերադաստիարակել:

Մտնելով դպրոցի շենքը, Հրաչը տեսավ, վոր մի քանի վայր կանոնից հետո դասի զանդը պիտի խփի, դրա համար ել տոմսերի հարցը հետաձգեց մյուս դասամիջոցին:

Իրենց առաջին դասը հայոց լեզու յեր: Սովորելու եյին քերականական մի քանի կանոններ: Հրաչը, վոր դեռ սկառտանոցից,

յերը կեղծած ձեռագրով դրում եր դադանի պատի լրագիրը, վարժվել եր մի քանի տեսակ գեղեցիկ զբությունների: Յերը հարկ յեղալ գրատախտակի վրա վորևս նախադասություն գրել՝ քննության առնելու համար, ուսուցիչը կանչեց նրան:

— Ի՞նչ դրեմ, ընկեր ուսուցիչ:

— Ինչ վեր ուզում ես, միայն թե այնտեղ լինեն դոյականներ, բայեր, ածականներ:

— Գոյականներ, բայեր, ածականներ, — ժպտաց Հրաչը, — դատարկ բան եւ Յենց այս ըստեցիս կդրեմ...

Եեկ կավիճը վերցնելով, գրեց.

— Ընկերներ, այն պիեսը, վորի մասին այս յերեք ամիս ե, վոր ձեղ ասում եմ, վերջապես մի քանի որ հետո բեմադրվելու յեմեղ մոտ, ընդ վորումն ըրանից ստացված ոգություններու յեանապատահան մանուկների բարեկամների ընկերությանը՝ ձեղ հայտնի նպատակների համար...

— Բավկական ե, — գոռաց Ալբերտյանն իր տեղից:

— Նախադասությունը գետ չեմ լրացրել, — աչքերը նրա վրա ծոեց Հրաչը: — Նայիր, վորտեղ եմ վերջակետ դրել... — Յեկ շարունակեց — ...Ձեղ հայտնի նպատակների համար, վորոնց ոժանդակելու պարտավոր պիտի դգա իրեն ամեն մի պատկոմ, ամեն մի դպրոցական, սակայն դրանով յերեք չեմ ուզում ասել, թե դուք պիտի դաք պիեսը դիտելու լոկ այդ պատճառով, քանի վոր նա ինքըստինքյան չափաղանց հետաքրքիր ե ևս...

— Սա հայոց լեզվի դաս ե, վոչ թե ապիտացիայի, — նորից գոռաց Ալբերտյանը:

— Ալբերտյան, — սաստեց ուսուցիչը, — մյուս անդամ այդպիսի բան չլսեմ... Իսկ Հրաչը, հուսով ենք, վոր իսկույն կվերջացնի...

— Այս բոպեյիս, — ասաց Հրաչը, շատապ շարունակելով: — ...Հետաքրքիր ե և արժեքավոր, վորովհետեւ նկարագրվում ե սկառտիդմի վախճանն ու մեր հաղթանակը:

Վերջացնելով, նա այնպիսի ուժեղ շրթկոցներով դրեց վերջակետը, վոր կավիճը փշրվեց: Աղա հաղթական կերպով նայելով Ալբերտյանին, նստեց իր տեղը:

— Այնուամենայնիվ, նախադասասությունը մի քիչ յերկար ե, — ժպտաց ուսուցիչը: — Մենք կքննենք միայն նրա առաջին մասը, մինչև «բեմադրվելու յեմեղ մոտ»:

— Հա, — տեղից վեր կացավ Հրաչը. — մոռացա դրել — տոմսերը կարելի յե գնել ինձանից:

Բարձրացավ միահամուռ ծիծաղ: Ալբերտյանը բարկացած մըումըուց ե ինչ վոր բան ասաց իր կողքի նստածին:

Դասամիջոցի ժամանակ, կոլվար Աշոտի և մի քանի ուրիշ պատկոմների միջոցով տոմսերը մյուս դասարաններում ես տարածելուց հետո, Հրաչը մոտեցավ Ալբերտյանին, վորը շըրջում և խոսում եր իր մոտիկ ընկերներ Անուշավանի և Ժաննայի հետ:

— Դու ի՞նչ եյիր ասում, Ալբերտյան...

— Վոչինչ չեյի ասում, ընկեր պատկոմ...

— Զե, դու ի՞նչ վոր բան եյիր ասում հայց լեզվի և ազիտաշիայի մասին: Ուրեմն քու կարծիքով՝ հայերեն լեզվով ազիտացիա անել չի կարելի...

— Կարելի յե, — բայց կարիք չկա, — հաշտեցնող տոնով ասաց Անուշավանը:

— Կարիք չկա: Ի՞նչու...

— Աշակերտը չպիտի խառնովի բաղաքական կյանքին, — բացատրեց Ալբերտյանը:

— Ահա, — բացականչեց Հրաչը: — Հասկացա: Ուրեմն չպիտի խառնովի: Գլուխու, Ալբերտյան, մեղ սկառտանցումն ել եյին նույն բանն ասում, բայց ամենից առաջ հենց իրենք, ասողները խառնըց վեցին...

— Մենք չեղոք ենք, — քաղցր ժպիտով բացատրեց Անուշավանը. — մենք հենց դրա համար տոմս չենք վերցնում, վոր քաղաքական կյանքին չխառնվենք...

— Խուժաններին ցեխի միջից բարձրացնելը քաղաքական կյանք ե, — հեղնեց Հրաչը:

— Այդ... — խրատական և ներողամիտ շշունչով հաստատեց Անուշավանը: — Զի՞ վոր ցեխից բարձրանալով, այդ խուժաննը պատկոմ պիտի դառնա... Մենք չեղոք ենք...

— Զեզոքություն չկա, — վճռական տոնով պնդեց Հրաչը և ձեռքություն պատկոմ տոմսերը դրպանը դրեց: — Հենց տոմս չգնելով, գուք խառնվում եր քաղաքական կյանքին:

— Այդ ի՞նչպիս, — քմծիծաղ տվեց Ալբերտյանը:

— Դուք խանդարում եք անապատահաններին պատկոմ դարձնելու գործը: Զեք ոժանդակում ուրեմն խանդարում եք...

Ժաննան շըթունքները ծովուց և նայեց Ալբերտյանին, թե նա ինչ պիտի ասի: Բայց նա վոչինչ չասաց, վորովհետև նույն բոպեյին զանդը ավեց և նրանք բոլորը մտան դասարան:

Հըաչը բաց արեց հանրահաշվի տեսրակը և սկսեց նայել: Ներս  
մտալ հին ծանոթ, կազմչի Պոստի կրօնի դասատու Մելիք-Զհան-  
գուլյանը: Ժամանակից նրա մեջը մի քիչ սապատավոր եր դար-  
ձել և մաղերն սպիտակել ելին: Նա անմիջապես նստեց, դրեց ակ-  
նոցները, սովորականի նման իսկույն դեմքը շուռ տվեց դեպի  
Հըաչի կողմը և շարունակ իրեն ուղղումներ անող պատկումը: Նկա-  
տելով նրան, նա մոայլվեց, մի ըոպե վլուխը կախեց դրբի վրա,  
ապա դիմեց դասարանին:

— Ուշագրություն... Սկսում ենք հանրահաշվի դասը: Տես-  
րակները հիավաքեմ դասից հետո: Այժմ՝ կթելադրեմ ևս մի խըն-  
դիր՝ հենց տեղում լուծելու համար: Կըկնում եմ. — այժմ՝ կթե-  
լադրեմ ևս մի խնդիր՝ հենց տեղում լուծելու համար:

Հըաչը, վորին շատ ելին վրդովել Ալբերտյանի կեղծ չեղորսւ-  
թյունն ու Անուշավանի ներողամիտ ժպիտները, վորոշեց դասա-  
րանի առաջ վարկարել անել չեղորսւթյուն անված բանը, վորն  
աշակերտների մեջ համառ կերպով քարոզում եր Ալբերտյանի խըն-  
դրակը: Նա ուշագրությունը լարեց, պատրաստվեց, լավ դիտենա-  
լով, վոր Մելիք-Զհանգույանն իսկույն իրեն կտա հակածառելու  
վորեն առիթ:

Յեվ իրոք, Աչքերն առաստաղին հառելով ու մորուքը շոյելով,  
վարժապետն սկսեց.

— Առաջին ժամկոչը ծախեց իքս քանակությամբ կերոններ...  
Յերկրորդ ժամկոչը ծախեց զեթ քանակությամբ կերոններ...

— Ներեցեք, ընկեր ուսուցիչ, — ընդհատեց Հըաչը, — Դուք  
սիալ սկսեցիք: Պետք եւ լինի — առաջին պատկումը ծախեց իքս  
քանակությամբ ներկայացման տոմս, վորը մոտ որերս պիտի բե-  
մադրվի... Յերկրորդ պատկումը ծախեց զեթ քանակությամբ ներ-  
կայացման տոմս, վորն շատապեցեք տեսնել...

— Տեղի նստիր, — բարկությունը զապած կարգադրեց Մելիք-  
Զհանգույանը. — դու հանրահաշվից միշտ թույլ ես յեղել:

— Ժամկոչն ինչ զործ ունի հանրահաշվի հետ, — բացական-  
չեցին այս ու այն կողմից:

— Ինչու յեք աղմկում, — արդեն բարկացավ վարժապետը. —  
միենույնը չե՞ ժամկոչ, թե պատկում...

Բարձրացավ աղմուկ, աղաղակ, իրարանցում: Հըաչը վերկա-  
ցավ և բացականչեց.

— Ինչպես թե միենույնը... Պատկումը զանգ խփմամ եւ Կամ-  
ժամկոչը կարմիր փողկապ կապում ես...

Մի բանիսը ծիծաղեցին: Վեր կացավ Անուշավանը և մեղմ ժպի-  
տով հանգստացրեց:

— Ընկեր ուսուցիչն ուղում եր ասել, վոր նրանք միենույն  
են վոչ թե ընդհանրապես, այլ հանրահաշվի համար...

— Յեթե նրա համար միենույն ե, թող փոխի, — առաջարկեց  
մեկը. — իսկ մեղ համար միենույնը չե:

Ալբերտյանը մոայլ, գունատված, դիմեց Մելիք — Զհանգու-  
յանին:

— Շարունակեցիք դասը... Թող պատկոմ լինի...

Յեվ դասարանն սկսեց լուծել այն խնդիրը, թե վորքան գու-  
մար կստացվի անապատան մանուկների ոգտին, յեթե առաջին  
պատկումը ծախում ե իքս, իսկ յերկրորդը զեթ քանակությամբ  
տոմս...

Խնդրի վրա յերկար ժամանակ գլուխը հոգնեցնելուց հետո,  
Ժամանան լսելի ճայնով մրմնչաց.

— Սա ինչ բան ե, հայոց լեզվի փոխարեն ադիտացիա յենք  
անցնում, հանրահաշվի փոխարեն ագիտացիա յենք անցնում: Ի՞նչ  
պիտի սովորենք վերջինին...

Յերկրորդ դասամիջոցին, Ալբերտյանը մոտեցավ Մելիք-Զհան-  
գուլյանին և վստից-զլուխ չափելով, կոպիտ կերպով ասաց.

— Դու վոչ թե ուսուցիչ ես, այլ հիմարի զլուխ... Դու վոչ  
միայն նրանց համար ես անպետք, այլև մեղ...

Յերկրորդ դասամանակ Ալբերտյանը չքացավ: Հըաչը նկա-  
տեց, թե ինչպես Գասպարը յեկավ և շտապ կանչեց նրան:

## 20

### ԳԱՂՏՆԻ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Կաըմիր սկառուտների սենյակում նստած եր կազմչի Պոստի  
նախկին վարժապետ Պոլսեցյանը: Նա պլաշչով եր ու գլխարկով,  
և նրա կողքին դրված եր մի շատ փոքրիկ չեմողան: Մամիկոնը  
նրան հարցեր եր տալիս և անթարթ, ուշադիր լսում:

Յերբ Գասպարն Ալբերտյանի հետ միասին ներս մտավ, Մա-  
միկոնը վեր կացավ, տեղ առաջարկեց Ալբերտյանին, ապա լու-  
սամուտի գոգը մի բարձ դնելով՝ վոր դրսից վոչինչ չնկատվի, բաց  
արեց հավաքույթը.

— Սկառուտներ, մենք ապրում ենք ծանր ժամանակաշրջան:  
Ժամարյա վոչ մի հույս չկա, թե մեր գործը կհաղթի: Մենք մո-

լորված դրության մեջ ենք... Ուստի և մեղ համար չափաղանց հնատաքը իր և պարոն Պոլսեցյանի այցելությունը: Չափաղանց հետաքրքիր և, թե նա ինչ ծրագիր ե բերել մեղ համար... Պարզ ե, մոր մենք չենք ուզում պարտվել: Բայց յեթե նա բերել և անվոր մենք հույս ուզում պարտվել: Բայց յեթե նա բերել և անհույս ծրագիր, ապա... Մի խոսքով, ճայնը առաջ եմ իրեն:

— Տղաներ, — սկսեց իսկույն Պոլսեցյանը, գլխարկը հանելով: — Վոր մենք դժվար ժամանակ ենք ապրում՝ այդ ճիշտ ե, սակայն հուսահատվելու կարիք չկա: Վեր գործն ե գլուխ գալիս առանց դժվարության, մանավանդ այս գործը, վորի համար հարկավոր ուժերի հսկայական լարում, մեծ ճիպ և վոր գլխավորն ե՝ ժամանակ...

Նա ծխախոտ վառեց:

— Ինչպես գիտեք, Վահան Քիրաղը Յերևանում ե: Ճիշտ ե, դուք նրա հետ գրավոր կապ պահում եք, բայց դա քիչ ե, մանավանդ վոր, վերջերս ձեր զեկավար Մամիկոնն անհայտ պատճառով դրդված, համարյա ընդհատել եր իր նամակապրությունը: Յերեկ նա այդ արել եր հուսահատությունից դրդված... Յեղ ահա, Քիրաղը նպատակահարմար համարեց ինձ անձամբ ուղարկել ձեզ մոտ՝ դրությունը պարզելու և ծրագիր հանձնելու համար: Հուսով եմ, վոր դա ձեղ կփոքնորի և պայքարի ճանապարհ ցույց կտա...

— Յերբ քանդվեց սկառատիզմի վերջին բերդ Կաղաչի Պոստը, — Պոլսեցյանը, — ինչպես գիտեք, մեղ բոլորիս տիրեց մի մեծ ու ծանր հուսահատություն: Դա բնական եր: ԶԵ վոր կործանվում եր ամենառոշակավոր, ամենաորինակելի սկառատանոցը, ել մուր մնացին Պոլտոնի կամ քաղաքի վորբերը, վերոնք յերբեք և վոչ մի կերպ չեյին կարող հավասարվել Վահան Քիրաղի սկառատաների հետ... Եյս, ինչպիս ասեցի, հուսահատությունը մեծ եր: Բայց...

Սյստեղ նրա ծխախոտը վերջացավ: Նա վառեց նորը և շարունակեց: Բոլորն անթարթ և ակնապիշ լսում եյին:

— Բայց հետո տեսանք, վոր ուրիշ կերպ չեր ել կարող լինել, վոր Կաղաչի Պոստը պետք ե խորտակվեր: Ինքներդ ասացեք, տղաներ, միթե խորհրդային իշխանության մեջ յերկար ժամանակով կարող եր սկառատական առանձին կազմակերպություն գոյություն ունենալու...

— Զեր կարող, ճիշտ ե, — բացականչեց Դարեգինը. — Նա պետք ե վերանար: Կյանքն ուրիշ բան եր պահանջում:

Մամիկոնն ու Գասպարը զարմացած և բարկացած նայեցին նրան:

— Դու խոսքը մի քիչ ուրիշ կողմ ես ծոռւմ, սիրելի Գարենին, — նկատեց Պոլսեցյանը. — իմ ասածս այդ չե: Յես ուզում եմ ասել, վոր մենք կղզիացած եյինք և դա շատ վատ եր: Մենք կղզիացել եյինք, վոր դրսի պղղեցությունը մեղ վրա չներգործի, իսկ մենք ներգործենք դրսի վրա, բայց բանից դուքս յեկավ հաշկառել: Մեր համարյա բոլոր սկառատաները պատկոմներ դարձան, իսկ դրսի վոչ մի պատկոմ սկառատ չդարձավ... Յես կարծում եմ, վոր Կաղաչի Պոստի քայլքայվելը վոչ թե վատ եր, այլ լավ...

— Ի՞նչպես թե, — ապշեց Գասպարը:

— Սպասիր տեսնենք ինչ ե ասում, — տարակուսեց Մամիկոնը:

— Տես, Մամիկոն, — դիմեց Պոլսեցյանը նրան, — ուզում եմ ասել, վոր քայլքայվով Կաղաչի Պոստը, մենք դուրս յեկանք պաշտպանողական վիճակից և անցանք հարձակման: Հարկավոր եր վոչ թե կծկվել, զգուշանալ դրսի աղղեցությունից, այլ գրոհել այդ դրսի վրա, մտնել տասնյակ հաղարավոր պատանիների մեջ, աշխատել նրանց վերադաստիարակելու, Կորցնելով յերկու հարյուր քսան հօդու, մենք հնարավորություն ստացանք ձեռք բերել տասնյակ հաղարներին...

— Ճիշտ ե, — վոզերվեց Գասպարը. — շատ ճիշտ ե, պարոն Պոլսեցյանը...

Մամիկոնը լւառ և անշարժ նստած, լսում եր:

— Յեթե մենք մտնենք պատանեկության մեջ, — ավելի վոգեվորված շարունակեց վարժապետը, — յեթե մենք մեր ուզած ձեռով դաստիարակենք պատանիներին, հաստատ դիտցեք, տղաներ, վոր ապագան մերը կլինի... Կոմունիստները կմեռնեն, կոմյերիտականները կոմունիստ կդառնան և ապա նույնպես կմեռնեն, իսկ յերբ բոլոր սերունդը, դաստիարակված մեր կողմից՝ վեր կլինա և իր կամքը կկատարի: Միանդամից թե աստիճանաբար կանի այդ բանը, մենք այդ չփառենք և այդ կարենը ել չե: Կարենը այն ե, բանը, մենք այդ չփառենք և այդ կարենը ել չե: Կարենը այն ե, բայց իհարկե շատ կլինանի կլինացյանն արդեն հողի տակ կլինան, բայց դուք դեռ կենդանի կլին ներ և ձեր ծերության որոք կտեսնեք այն, ինչի համար այժմ մտեք պատկոմների մեջ, մտեք դպրոցները, մտեք մանկատաները... Յես վերջացրի:

Նա դեռ իր բերանը չփակած, հանկարծ Մամիկոնը պոսթկաց մի անդուսպ ծիծաղով, գրավելով բոլորի ապշտությունն և ուշագրությունը:

— Հավաքիր ե, Պոլսեցյան, — ասաց նա, մոռանալով գործածել պարոն բառը, — բայց ում միջոցով պիտի իրագործես այդ: Մեր բանհինդիք...

Ալբերտյանը շարժվեց:

— Դե լավ, թող մի յոթանասունհինդ Ալբերտյաններ ել դըպրոցներում ճարվեն: Կլինենը հարյուր հոգի... Սարսափելի կերպով ըիչ չի, Պոլսեցյան... Հարյուրը չի կորչի հարյուր հազարի մեջ այնպես, ինչպես մի կաթիլ թանաքը մի տակառ ջրի մեջ:

— Վոչ, — գոռաց Գասպարը, մոռանալով ամեն զգուշություն, — հարյուրը հիազթի հարյուր հազարի մեջ այնպես, ինչպես մի կաթիլ մակարդը մի տակառ կաթի մեջ...

— Իսկ ի՞նչ բան ե մակարդը, — հարցը Մամիկոնը:

Հարցը բոլորին տարակուսեց: Ի՞նչպես թե ինչ բան ե: Մակարդը՝ դա այն ե, վոր մածուն ե դարձնում կաթը:

— Հասկանում եմ, — ժպտաց Մամիկոնը. — կաթնազործության մակարդը դա յե: Իսկ վհրը պիտի լինի մեր մակարդը: Չի վոր մակարդ լինելու համար պիտի ունենալ մի շարք հատկություններ: Մեր քսանհինդ հայ արիներն ունեն այդ հատկությունները...

— Ի՞նչպես թե... ինչու չունենք, — վիրավորվեց Գասպարը: Մամիկոնը տիտուր կերպով ժպտաց:

— Մեղանից մեկն արդեն հուսահատվել ե: Դա յես եմ: Հուսահատված մարդը կարմղ ե մակարդ դառնալ: Իմ կարծիքով՝ վոչ: Մեղանից մի քանիսի հավատը խախտվել ե: Պարզ խոսենք, Գարեգին, խոսքը քո մասին ե: Ի հարկե դու դավագան չես, բայց այլևս չես հավատում քո նախկին համոզմունքներին, գտնում ես, վոր սկառատիզմը հայատանում հող չունի և հերթը պատկոնիներին: Ե: Պոլսեցյան, միթե այդպիսի մարդը կարող ե մակարդ լինել... Մեղանից յերբորդը, Լեոնը, շարունակ յերազում ե իր անձնական վիճակի մասին, հարսաւթյուն ձեռք բերելու մասին: Նրա մեջ ընդհանուր գործ տեսնելու վագի չի մնացել: Այդպիսի մակարդ կարմղ ե լինել... Զորորդը, Գասպարը, շատ թեթեամիտ ե կարծում ե, թե՝ մեկ, յերկու, յերեք, աշխարհը կարելի յե շուռ տալ: Նա լուրջ գործ անել չի կարող: Հետեարար և նրանից ել մակարդ գուրս չի գա: Մնում են Սիոնն ու Ոհանը... Բայց ախր, Պոլսեցյան, նրանք մեղ չորսիս են նայում: Նրանք վերջի-

վերջո պիտի հետեւ մեղանից մեկնումելին: Վորին ել հետեւ գարձալ մակարդ չեն կարող լինել... Ով ե մեր մեջ այն մարդը, վորը պիտի հազարավոր պատանիներ դաստիարակի...

Յերբ Մամիկոնը վերջացրեց, Պոլսեցյանը վոր անհանգիստ խաղում եր իր զլիարկի հետ, պատրաստվեց շատ յերկար խոսելու, ապա փոխեց մտադրությունը և շեշտակի կերպով դիմեց Մամիկոնին:

— Դու դեմ չես, յեթե քո փոխարեն Գասպարին ընտրենք ձեզ զեկավար...

— Խնդրեմ, խնդրեմ, — անմիջապես վրա բերեց Մամիկոնը, — իհարկե: Այդ այդպիս ել պետք ե լինի: Ով վոր հուսահատվել ե և գործ չի կարող անել՝ նա իր տեղը պիտի վիշի ավելի յեռանդուաներին: Միթե յես ավելի ուրախ չեմ լինի, յեթե Գասպարը վորեն ճանապարհ գտնի... Սուաջինը յես ինքս կհետեւ նըան... Բայց բանն այն ե, վոր վոչ մի ճանապարհ չկա...

— Այդ լավ յեղալ, վոր հաջոտությամբ վերջացրինք, ուրախացավ Պոլսեցյանը — յես և Քիրազը վախենում եյինք, թե այս փոփոխությունը կարող ե ձեղ կովացնել և գործին վնասել... Իսկ դուք համաձայն եք, տղաներ...

— Ինձ համար մինենույն ե, — հայտնեց Լեոնը: — Ով ուղում ե՝ լինի: Ինչ ուղում ե՝ անի: Յես վոչ հույս ունեմ, վոչ հուսահատված եմ: Յես ձգտում եմ ինձ համար լավ կյանք ստեղծել:

Պոլսեցյանը նրա ասածն ընդունեց իրեւ համաձայնության նշան: Սիոնն ու Ոհանը, վոր շարունակ լուռ նստած եյին, պատասխանեցին շատ կարճ:

— Ի հարկե Գասպարն ավելի գործունյա յե:

— Իսկ դու, Գարեգին...

Գարեգինը լիզեց իր հաստ շրթունքները, մի վայրկյան լոեց: Բոլորը հետաքրքրությամբ լարվեցին:

— Տղաներ, — ասաց նա, դիմելով ընկերներին: — Դուք ինձ միք արհամարհի... Սուանց այդ ել՝ պատկոնիներն արհամարհում են: Համենայն դեպս, լսեցեք ինձ, հետո ինչ վոր ուղում եք՝ ասացեք...

— Խնդրեմ, — ասաց Պոլսեցյանը և թեքվեց դեպի նա:

— Ի՞նչի համար ենք մենք պայքարում... Մենք ասելով, յես հասկանում եմ պատերազմի զոհ զարձածների յերեխաներին, աղքատության ծոցից յելած պատանիներին, յերիտասարդներին: Ինչի համար ենք պայքարում... Իհարկե ավելի լավ կյանքի: Վարն ե դա: Կազաչի Պոստի վորբանոցների ծեծը լմվ կյանք եր: Վոչ:

Լավ եր, վոր դպրոցում մեր գլուխը լցնում եյին կըսնավ, վոր պեսզի մենք մեր մի յերեսն ապահովին մյուս յերեսն ել դեմ անեյնք... Վոչ: Լավ եր, վոր սկզբուանոցում մեղ միայն անասունի պես, մարզում եյին, Յուտարոլ ու բոքս սովորեցնում, վազել տալիս, թռչել տալիս, գուշնդ ու սկավառակ նետել տալիս, վորպեսզի մենք չմտածեյինք վոչ մեր ապագայի մասին, վոչ մեր քույրիկների... Իսկ յերբ մտածել եյինք ուզում, ասում եյին սկառաշը պիտի լսի և հնազանդվի իր պետերին: Այսինքն՝ դու մի մտածիր. քո փոխարեն մենք ենք մտածում, քո բախտը մենք վորոշում...»

— Յեղրակացությունդ ի՞նչ ե, — շտապեցրեց Ալբերտյանը:  
Վոչ վոր Ալբերտյանին չսաստեց, այլ կարծես լուս կերպով համաձայնվելով նրա հետ, իր աջքերի սպասողական արտահայտությամբ նույն հարցը կրկնեց: Գարեգինը վիրավորված և բարկացած, կարճ կտրեց.

— Ուզում եմ ասել վոր իմ հայրս զյուղացի յե յեղել, իսկ այս իշխանությունը բանվորաւոյուղացիական ե...

— Սկզբից վոր այդ ասելիր, յերկար խոսելու կարիք չեյիր ունենա, — թթատեց Գասպարը:

Գարեգինը չպատասխանեց:

— Դու յերեի կուղենաս նաև մեղ մատնել, — կասկածանքով հարցրեց Պոլսեցյանը:

— Վոչ, — ասաց Գարեգինը հատու կերպով: — Դուք ձեզ համար, յես ինձ համար: Յեկ չկարծեք թե՛ հեռանալով ձեզանից, յես պատկոմների մոտ պիտի դնամ: Նրանք ինձ նույնքան կատեն, վորքան դուք...

Հանկարծ Սիոնն ու Ոհանը շարժվեցին:

— Զե, ինչու, — հակաճառեց Ոհանը: — Մի քանի որ առաջ կապույտ պատկոմները յեկան տեքստի և մեղ հետ շատ լավ վարվեցին՝ բացի Վարդանից:

— Իսկ Վարդանին ժկ պաշտպանեց, — ավելացրեց Սիոնը: — Բոլորն ել մեղադրեցին:

— Ի՞նչ եք ուզում ասել, տղաներ, — տաղնապով լարվեց Պոլսեցյանը:

— Վոչինչ... — մրմնջաց Ոհանը, — ուզում եմ ասել, վոր յեթե նույնիսկ կապույտ պատկոմները մեղ հետ լավ են վարվում, ապա մյուսներն ավելի լավ կվարվեն... Գարեգինի համար եմ ասում...

— Գարեգինի համար, — քմծիծաղ տվեց Գասպարը... — թե՛ ձեզ

համար եք տեղ պատրաստում: Ապա, վերջ տվեք ձեր հիմարություններին: Ով վոր տատանվում ե, դա իր գործն ե: Իսկ ով վոր հավատում ե իր գործին, թող յենթարկվի ինձ: Ճանապարհին Ալբերտյանն ինձ պատմեց, թե ինչպես են իրենք պայքարում դպրոցում, առանց հուսահատվելու: Յեթե մենք ինքներս որինակ չենք կարող տալ նրանց, զոնե որինակ վերցնենք, թեև դա ամոթ ե մեղ համար...

— Խմբակ ունեք, — հարցրեց Պոլսեցյանն Ալբերտյանին, վորին անձամբ ճանաչում եր:

— Այո: «Վերջին կայծեր» ե կոչվում:

— Անունը կիմսիսնք, — վճռեց Գասպարը: — Թող լինի «Առաջին կայծեր»:

✓ — «Վերջին կայծեր» ավելի հաջող ե, — հեղնեց Մամիկոնը:

— Մենք, — գիմեց Գասպարը նրան, — կիմսիսինք, վոր այսուհետեւ քու հուսահատ մտքերդ պահեյիր միայն քեզ համար և մեղ վոչինչ չասեյիր: Մանավանդ վոր, դու այլևս մեր զեկավարը չես և...

— Լավ, լավ, հասկանալի յե, — ժպտաց Մամիկոնը:

— Իսկ դու, Գարեգին... սկսեց նա:

— Յես արդեն մտածել եմ, — հայտնեց Գարեգինը: — Հենց վոր առանձին սենյակ դատ, կտեղափոխվեմ ձեր մոտից: Յես այժմ վարակիչ եմ...

Գասպարը դարձավ դեպի կեսը և ժպտալով խփեց նրա ուսին:

— Իսկ քեզ՝ վազ թե ուշ, կհարսացնենք: Անհոգ կաց:

Լեսնը ձայն չհանեց: Նա մութ կերպով մտածում եր:

Հավաքութը վերջացավ: Բոլորը վորոշեցին գնալ Վազգենի պիեսի ներկայացմանը, բացի Պոլսեցյանից, վորը պետք և իսկույն վերադառնար:

## 21

### ՅԵՐՐՈՐԴ ՍԵՐՈՒԻՆԴԸ

Պատկոմատան դահլիճը, վոր գտնվում եր առաջին հարկում, պայծառ լուսավորված եր: Ուժեղ ելեկտրական լամպեր եյին վառվում նաև միջանցքում ու մյուս սենյակներում: Բազմաթիվ պատկոմներ, մանկատան սաներ, աշակերտներ, տղա և աղջիկ, խոնը վել եյին այդ միջանցքում ու սենյակներում և սպասում եյին ներկայացմանը: Մուտքի դրան մոտ, Արամի իզուր եր համոզում բակում կանգնած բազմաթիվ այլ պատանիների.

— Գնացեք, տղաներ, վոչ տոմս և մնացել, վոչ աղաւ տեզտ՝ վաղն ել կներկայացնենք, մյուս որն ել...

Բոլորն շապառմ եյին տեսնել և անհամբեր եյին։ Միջանցքում շրջողներից վոմանք, յերբեմն մոտենում եյին դահլիճի դռանը, կիսաբաց անում և նայում գեղի բեմ, վարաեղից ինչվոր թիվթըլուկոցի ձայներ եյին գալիս, բայց փակ վարագույրի յետեսում վոչինչ չեր յերեւմ։ Վաղենը, պիեսը ձեռքին, սլանում եր միջանցքով, գեղի դահլիճ, այնտեղից գեղի բեմ, հետո յետ, բարձրանում եր յերկրորդ հարկը, իջնում, նորից եր բարձրանում։ Մի անդամ նույնիսկ կտուրը բարձրացավ, բայց յերբ հիշեց, վոր այդտեղ վոչինչ չունի անելու, իջավ վար։ Այնուամենայնիվ, նախքան իջնելը, խարխափելով թիթեղածածկի տակի խավար տարածության մեջ, գտավ հատակի յերկու անպետք խողանակները և նրանց կոթերը հանելով՝ իջեցրեց ներք։ Դրանք հարկավոր եյին իրեն սկառտական փայտեր, վորոնց պահանջը վերջին ըովելյին մեծացել եր։

Պակաս իրարանցման մեջ չեր կուլտուրական բաժնի դեկավար Աստղիկը։ Մեկմեկու յետելից մտնելով բոլոր սենյակները, նա պատկոներից մեկի գլխից գլխարկն եր վերցնում, մյուսի մեջքից գոտին քանդում, յերրորդի կոշիկներն եր հանում և փոխարենը մի քանի ժամով ոգնելու համար քըքրված չուստեր տալիս, իսկ յերբ մոտեցավ կոմյերիտթյան գավկոմի քարտուղար Հրայրին, պահանջեց նբա բլուզը։

— Յերեակայիր, Հրայր, համարյա ամեն ինչ կա, բայց միստը նոնսը բլուզ չունի...

— Իսկ չի կարելի այնպես ցույց տար, թե նա շողից և բլուզը հանել — առաջարկեց Հրայրը։ — Թող մի քանի անդամ ռոփա անի, թաշկինակով յերեսը սրբի, լիմոնադ լամի...

— Ի՞նչպես, — զարմացավ Անհայտը։ — չորս գործողության մեջ մի ամբողջ տարի յե անցնում և նա շարունակ առանց բլուզի մնամ... Խո Աֆրիկայում չի, անձրե կա, ձմեռ կա... Հանիր բլուզդ...

Ովնության հասավ Բարկենը։ Հանած բլուզի փոխարեն նա բերեց, Հրայրին տվեց իր պատկոմական բլուզներից մեկը։ Հրայրը, վոր մարմնով շատ ալելի փոքր եր Բարկենից, կորավ բլուզի մեջ, բայց և այնպես դա ավելի լավ եր, քան առանց բլուզի։

Անյակներից մեկում հավաքվել եյին պատկոմական կոլվարներ, մանկատան սաներ, Սմբատը, Միհրանը։ Կոլվար Աշոտը պատմություն եր անում, իսկ նրանք լսում եյինև անդադար ծիծաղում։

— Աշոտ, ձիշտն ասա, դրա կեսն և սուտ, թե ամբողջը, — դիւմում եր նրան տղաների չորորդ մանկատան սաներից մեկը։ Բուլորը ծիծաղում եյին նրա նկատողության համար, իսկ քիչ հետո, նա նորից եր շփոթեցնում Աշոտին։ — ձիշտն ասա, դրա կեսն և փչոց, թե ամբողջը...

Վաղգենն իր անդադար արշավանքների ընթացքում գտավ մի աղաւ վայըլյան, ներս նետվեց սենյակներից մեկը, ուր հավաքաված եյին վարդուհին, Արշալույսը, Նվարդը, Արուսյակը, Իսկուհին, կայարանի դպրոցի պատկոմները, շտաբի ֆիդկուլտ բաժնի վարիչը, Վարդանը։ և ելի շատ ուրիշները և ուղղակի մոտենալով Վարդուհուն, հայտնեց։

— Վարդուհի ջան, դու իմ պիեսիս մեջ մութ կետի նման եյր դուրս յեկել։ Հենց նոր, յես ուղղում կատարեցի...

— Ի՞նչ ուղղում, — ժամաց Վարդուհին։

— Ուղղում, վոր դու քնել — արթնացել ես և մի գիշերում շատ բան և փոխվել կազաչի Պոստում...

— Գնա մի անդամ ել փոխիր, — ծիծաղեց Վարդուհին։ — Բը ժիշին ինձ արդեն ամեն ինչ հայտնել եւ Յես յերկար ժամանակ խելագարանոցումն եմ յեղել...

Վաղգենն ապշեց։

— Նոր փոփոխություն, — մրմնջաց նա. — վոչ մի գեղքում։ Արդեն ուշ եւ Տաս ըոպին հետո, ներկայացումը կսկսվի...

Ապա հանկարծ միտքը փոխեց.

— Բայց, ով դիտե, դուցե հասցնեմ...

Յեկ շտապ դուրս թռավ։

Աղջիկները ծիծաղեցին։

— Իսկապես, աղջիկներ, — թախիծով ժամաց Վարդուհին, — ենքան եմ ափսոսում են ժամանակը, վոր խելագարանոցումն եմ յեղել ու վոչինչ չեմ զգացել.. Յեկ են ել մի անպետք սրբիչի համար...

— Դե լավ, — ժամաց Արուսը, — Ի՞նչ ես մտածում, քույրիկ ջան, կարեռն են եւ, վոր առողջացար։

Յեկ համբուրեց նրան։

— Սյո, առողջացար, — հանկստացած շունչ քաշելով ժամաց Վարդուհին։ — բայց յեթե կազաչի Պոստի այն միաչքանի բժիշկը նորից ընկնի, յես նրան պիտի ապտակեմ։ Նա յե յեղել ինձ անձեռք ընկնի, անձրե կա, ձմեռ կա... Հանիր բլուզը և ամարողը։ Յեթե նա չիներ, ինձ վաղուց կառողջացնեին...

Հետո, միանդամից թողնելով այդ անախորժ մտքերը, նա դիմեց ընկերուհիներին.

— Սպասեցեք, հարգելի դասընկերուհիներ, դուք ինձանից առաջ եք անցել, համար կամ շուտով կհասնեմ: Ել հույս չունենաք, թե նորից պիտի խելազարվեմ...

Ընկերուհիները ժպտացին նրա կատակի վրա և դրկելով նրան, նորից, դուցե հաղարյերորդ անդամ, սկսեցին համբուրել:

Մի ուրիշ սենյակում, հավաքվել եյին կոմյերիտականներ, ելի մի քանի կոլվարներ, պատկոմուհիներ, բաղմաթիվ դպրոցականներ: Նրանցից անջատված, մի անկյունում, խիտ կերպով իրար դլեւի հավաքված, կանգնել եյին կարմիր սկառատներն ու ռվերջին կայծերը»: Նրանք կիսաճայն խոսում եյին իրար հետ և մեկմեկ ել շուրջը նայում, տեսնելու համար՝ թե ուրիշ լսող չկա իրենց: Գասպարը, վոր բացի շուրջը նայելուց, հաճախ նայում եր նաև դեպի փողոցը բացվող լուսամուտներից, մեկի կողմը, հանկարծ մոտեցավ, բաց արեց մի փեղկը և կախվեց ներքեւ:

— Յեկել եք, — շնչաց նա:

— Յեկել ենք, — պատասխանեց վեցկրականին:

— Են խուժանին ել եք բերել:

— Վաչիկին: Հա, բերել ենք: Արամի արդեն եղանեղ և:

— Եստեղ եւ:

— Դաշտակ չկա մոտը...

— Զե: Ականջովս ընկավ, վոր տվել և Միհրանին, նորոգելու, Ընկերները կատակ եյին անում՝ լսեցի:

— Դա լավ ե, վոր նա դանակ չունի:

— Դու ունե՞ս:

— Զունեմ:

— Կարիք ել չկա: Բանը վոր դանակի հասցնեք, միլիցիան կուսի ուժեղ կերպով հետաքննություն կատարել և դուցե բոլորիս դանի...

Դուք միայն ծեծեցեք, բայց, վեցկրականի, լավ ծեծեցեք, շատ լավ՝

— Իսկ բանալին, — հարցրեց վեցկրականին:

— Բերել եմ... Կտամ:

Վեցկրականին հեռացավ դեպի իր խուժանները, իսկ Գասպարը նորից լուսամուտը փակեց:

— Այդ հիշ եր, ինչ եր ասում, — հետաքրքրված մոտեցավ Մամիկոնը:

— Վոչինչ: Պատկոմ եր: Խնդրում եր, վոր լուսամուտից իրեն ներս թողնեմ: Տոմս չուներ...

Մի ուրիշ սենյակում հավաքվել եյին կաղաչի Պոստի բազմաթիվ նախկին սկառատներ, վորոնք աշխատում եյին գործարաններում և հիմնարկներում, հավաքվել եյին բազմաթիվ նախկին վորուհիներ, ներկա եյին Արամի ու Հրաչը:

— Տեսեք, — ծիծաղում եր սև ջոկատի Սուրենը. — համարյա ամրողջ կուղաչի Պոստն եստեղ ե:

— Բացի մեր պարօններից, — որիորդներից, — ավելացնում եր Ասքանազը:

Մկրտիչը, Սարգիսը, Գևորգը, Գրիգորը, Ռնիկը, Պետրոսը, — բոլորը, բոլորն այնտեղ եյին: Քիչ հետո, յերբ ներս լցվեցին այն փոքրահասակ սկառատները, վորոնք այժմ մանկատան սաներ եյին, բոլորն սկսեցին բարձր ծիծաղել ու բացականչել, իրար ծափահարել:

— Սա ինչ սկառատական դավագրություն ե, — հարցրեց կուշար Զավենը, իր կոլեկտիվի մի բանի պատկոմների և Բարկենի հետ ներս մտնելով:

— Առանձնապես վոչինչ չկա, հայ արիներ, — հանգստացրեց Հրաչը: — Մենք մտածում եյինք, թե ինչ կերպ ընդունենք պարոն սկառատապետին...

— Այս ասելով, նա ցույց տվեց Բարկենի կողմը և աչքով արեց: Անմիջապես տեղից վեր ցատկեցին բոլորը և սկսեցին ուռաներով ու բացականչություններով պատկոմապետին ողում ճոճել:

Աղմուկի վրա, մյուս սենյակներից յեկան բազմաթիվ ուրիշները: Սենյակն այնքան լցվեց, վոր անկարելի դարձավ վորեւ տեղ Բարկենին վար իջեցնել: Զեռքերի վրա նրան հանեցին միշտ հանցք, ճոճեցին, հետո տարան մի ուրիշ սենյակ, նորից ճոճեցին և այդպես ման ածեցին համարյա բոլոր սենյակները: Յերբ մտան այստեղ, ուր կանգնած եյին կարմիր սկառատները, Գասպարը կես-կատակ, կես-լուրջ դիմեց Գարեգինին:

— Գիտ ճոճիր... Ձեր պետն ե...

Գարեգինի հասա շրթունքները բարկությունից ավելի ուռեցին: Նա նայեց Գասպարին, հետո կեսնին, վոր ժամանում եր, և առանց այլայլության մտնելով պատկոմների մեջ, սկսեց ճոճել Բարկենին:

— Թեև յես այլիս ճեր դեկավարը չեմ, — ասաց Մամիկոնը Գասպարին ու մյուսներին, — բայց իմ կարծիքով, դուք ճեր այդ վերաբերմունքով Գարեգինին ավելի հեռու յեք մղում...

— Նա մեղ պետք չի, Մամիկոն, — պատասխանեց Ալբերտյանը: — Պետք ե գուրզուրենք, վորպեսպի չխռովի գնա: Ներկցեք:

Ով վոր մեր դործն իս գործն ե համարում, առանց դուրսուրանքի յել կգա մեր յետելից:

— Այո, դա ճիշտ ե, — մեղմ ժպտաց Անուշավանը և հաշտեցնող տանով ավելացրեց. — բայց դուրսուրելը յերբեք չի խանգարի:

Վերջապես Բարկենն իջավ վար: Յերբ նրան ճոճողների աղմուկը լուեց, անմիջապես լսվեց, թէ ինչպես սենյակներից մեկում, պատկաները յերդում եյին իրենց մարշը...

— Իսկ Նազիկի դործն ի՞նչպես յեղավ, — հանկարծ հարցրեց Արամը Հրաչին:

— Նազիկին տեղափոխել ավեցինք մանկատուն, — հայտնեց Հրաչը: — Որիորդ Սիրանույշը դատի տակ ե: Այժմ նրա մոտ աշխատող աղջիկներն առանձին կար ու ձեմ արտել են հիմնել: Ապա նայելով շուրջը և ինչ վոր բան փնտրելով, ավելացրեց. — Նրանցից մի քանիսն եստեղ են: Նազիկն ել և եստեղ:

Հանկարծ յերևաց Վազգենը դանդը ձեռքին:

— Յեկ այստեղ, — կանչեց Հրաչը:

— Ի՞նչ կա:

— Դու գիտե՞ս, յերբ վերացավ վերջին վորբանոցը: Վազգենը մտածեց:

— Զեմ հիշում, — ասաց նա քիչ հետո. — հին բան ե: — Յեկ ուղեց գնալ:

— Սպասիր: Հին բան չե: Վերջին վորբանոցը, դա որիորդ Սիրանույշի կար ու ձեմ արհեստանոցն եր: Նա վերացվեց միայն մի քանի որ առաջ: Դու այս մութ կետը մտցրել ես պիեսիդ մեջ:

— Ի՞նչ եք ուղում ինձանից, — բողոքեց Վազգենը, — յես լոռ չեմ կարող պիես հավիայան փոփոխել... Հերիք ե: Ել վոչ մի տող չեմ ավելացնի: — Ապա, ավելի հաշտ ձայնով, ավելացրեց. — Ճիշտ ասած, ժամանակ չկա... Գոնե մի յերկու բոպե առաջ ասեյիր...

Յեկ զանգը տվեց:

22

## ԿՅԱՆՔՆ ԱՉՔԵՐԻ ԱՌՁԵՎ

Վարագույրը ճեղքվեց, բացվեց և դահլիճում անմիջապես տիրեց լուսթյուն: Նույն վայրկյանին լսելի դարձավ, թէ ինչքան շատ մարդիկ եյին դեռ սպասում փողոցում, լուսամուտների տակ, հույս ունենալով վերջին բոպեյին մտնել ներս:

Դանդաղ քայլերով բեմ մտավ մի նիհար ու սոված պատանի, — ապագա սկառուտ համար Ութսունիննը: Նա յեկել եր կազաչի Պոստ, սկառուտ ընդունվելու: Սկառուտանոցի մոտ պահակ եր կանգնած Միոնը:

Արամի աչքի առաջով անցավ իր կյանքը, բոլորի աչքի առաջից անցավ իրենց կյանքը՝ ինչպես դա կար: Հետո մեջտեղ յեկան սկառուտապետը, ջոկատապետերը, հայ արիները, սկառուտները... Մոտ հարյուր համակին սկառուտներ, անթարթ, մտասուզված, լարված, նայում եյին բեմին, նայում եյին իրենց:

Փչեց շեփորը: Սկառուտները գնացին պահակ կանգնելու: Ութսունիննին նշանակեցին հիվանդանոցի պոստը: Հետո յեկան վորբուհու ծնողները և քույր Սիրուշից տեղեկացան նրա մահվան մասին... Ամեն, ամեն ինչ հարազատությամբ, ճշտությամբ նկարագրված եր այնտեղ... Սիրոնը, վոր իր մանրիկ աչքերը հաճախակի թարթելով, կլանվել եր բեմով, հանկարծ շշուկով դիմեց իր կողքը նստած Ոհանին:

— Յես եղքան ուժեղ չեյի խփում մարդկանց, աղնիվ խոսք... Զնայած նա այդ ասեց շատ կամացուկ, շատերը լսեցին նրա ասածը, դարձան դեպի նա և ծիծաղեցին: Նույն բոպեյին, բեմի մի բարձր մասում, վորը զանգակատունն եր, Ութսունիննը գտավ Սաթիկին և ծանոթացավ նրա հետ:

— Սա յել մութ կետ ե... — լսեց Արամն իր ականջի վրա Վազգենի ձայնը: — Սաթիկը կորավ վատով-զլիթով:

— Իսկապես, մուր և Սաթիկը, — նորից անցավ Արամի մաքով և նա նորից ախտոսաց, վոր կորցրել են նրա համարը՝ Վաչիկի նամակի հետ միասին: Կամ գուցե չի կորցրել, այլ գրպանից հանել են:

Ութսունիննը ծանոթացավ Հրաչի հետ, նրանք խռոսեցին աստծու գոյություն չունենալու մասին, հետո նույն Ութսունինն իրենց դասարանում դուրս յեկավ կրոնի դասի դեմ, սկառուտապետն իմացավ և ուղեց վոնդել նրան: Յերբ Ութսունիննը խռորամանկությամբ դուրս պրծավ, չվոնդվեց, դահլիճում ուրախության աղաղակ բարձրացավ, բալորը վողերված ծափահարեցին և վարագույրը փակվեց:

Դահլիճից դուրս գալու ժամանակ, Հրաչն իբր թէ միայն նոր նկատեց Ալբերտյանին ու նրա ընկերներին և մոտենալով, հարցրեց.

— Լսեցեք, դուք վերջնականապես եք վորշել ներկայացմանը չգաւ... Ալբերտյանը հասկացավ ծաղը և պատասխանեց.

— Մենք չեյինք ել դա, յեթե Գասպարը չինդրեր։ Նա մեզ համողեց, վոր պիեսը շատ ծիծաղաշաբժ եւ Մենք ել՝ յեկանք...

— Նայած ում համար եւ ծիծաղաշարժ, — ասաց Հրաչը. — սկառատանոցի վախճանը մի քանի տարի առաջ Գասպարի համար լացաշարժ եր։ Իսկ յեթե հիմի ընդհակառակն եւ, ապա յես ուրախ եմ...

— Իսկ մեզ համար ի՞նչպես, — ծիծաղաշաբժ եւ թե վոչ, — քաղցր ժպիտով հարցրեց Անուշավանը։

— Պիեսը քու ի՞նչդ շարժի, — զարմացավ Հրաչը. — դու հենց սկզբից ծիծաղաշաբժ ես ծնվել, վորովհետև միշտ ժպտում ես։

Ալբերտյանը կոպիտ կերպով ընդհատելով խոսակցությունը, դիմեց Հրաչին.

— Կարծեմ դու բան եյիր ուղում ասել, Հրաչ։

— Այս Ասում եմ՝ միք համառի, անպայման յեկեք պիեսը տեսնելու։ Հետաքրիր եւ Կարող եք դաս առնել, թե ինչպես ե հաղթում պատկոմական վոգին և ինչպես ուրիշ ամեն տեսակ վոգի դատապարտված ե պարտության...

Յերկրորդ գործողությունն սկսվեց նրանով, վոր Արամը, Հրաչն ու Վաղգենն իմացան սկառատանոցում կոմունիստական գաղափարների դեմ պայքարող միության գոյություն ունենալու մասին և հիասթափված ու դայրացած, կաղմակերպեցին կոմյերի տական բջիջ։ Մինչեւ դահլիճի մեծամասնությունն սկսեց բուռն կերպով ծափահարել և բացականչել. վերջին կայծերն ու կամիր սկառատները մնացին լուս, անշարժ։

Յերրր սկառատապետի շան թաղման պատճառով սկսվեց սև ջուկատի խռովությունը, Միհրանը լաբվեց, ձգվեց, վողեռությունից նրա քունքերն սկսեցին արագաշարագ խփել և հանկարծ նա բացականչեց.

— Թույլ ավեք յես խաղամ իմ դերս, շատ եմ ինդրում։

Յեվ թուավ բեմի վրա։

— Դու մի ըոպե թույլ տուր ինձ վաչո ջան, — խնդրեց նա իր դերակատարին, վորը զարմացած և տարակուսած ցած իջավ։ Վաղգենը բարկացած վազեց Միհրանին խանդարելու, դահլիճում շատերը ծիծաղեցին Միհրանի յերկար հասակի վրա, բայց նա, կանգնելով սև ջոկատի գլուխը, բարկացած դիմեց Գարեգինին.

— Ինչու զահրումար, Ակառութին գլշերցերեկ աշխատեցնում են, շան պես ծեծում են. մեռնելիս քաշ են տալիս, գցում են փոսի մեջ, իսկ շան համար սուր են հայտարարում, դրոշակ են իջեցնում, նվազում են... լրբեր...

— Ո՞ւմ ես ասում, — գոռաց Գարեգինն իր հաստ շրթունքների միջից։

— Քեզ ել, քու պետիդ ել։ Յերկուսիդ հերն ել անիծած...

— Այս, անիծած, Յերկուսինն ել, — բղավեց Գարեգինը դահմիցից։

Բոլորն յետ դարձան և շատերը նրա հաստ շրթունքներից ճանաչեցին, թե ով եր նա։ Մի ըրպե մոռանալով բեմը, նրանք բուռն ժափահարեցին նրա հասցեյին։

— Ապրես, Գարեգին, — շշնջաց Արամը։

Հրաչը մոտեցավ Վաղգենին՝ վորը կանգնել եր բեմի մոտ և ցույց տալով Միհրանին, կեղծ բարկությամբ ասաց։

— Տեսմը, ինչ արեց եղ մութկետը...

Միհրանը շարունակեց խաղալ։

Հրաչը կուղեկուղ մոտեցավ Գասպարին և շշնջաց։

— Յեթե պիեսում քու կողմից ինձ ծեծելու վորեւե տեսարան լինի, կդաս միասին խաղանք։ Գոնե մեկնումեկիս կծափահարեն...

— Կորիր, — բարկացավ Գասպարը։

— Նայիր, — առանց վիրավորվելու ցույց տվեց Հրաչը դեպի բեմը. — Իմիմ քեզ պիտի ցույց տանք...

Վարդանն անասելի հուղված եր։ Պալիգոնի նախկին սկառատների հետ նստած, նա շարունակ ծափահարում եր կամ բացականչում։ Սակայն մեկ-մեկ, յերբ հիշում եր, վոր շուտով դուրս պիտի սև քայքայող յեռյակի պատմությունը, կոտրված լուսմ եր։ Հրանտը, Բարեկենի բլուզը հագին, Բարեկենի և շտարի Ֆիզկուլտրամի ղեկավար Գուրգենի հետ նստած, մեծ հետաքրքրությամբ դիտում եր խաղը։ Այստեղ, բեմի վրա, սկսվեցին բջիջի զաղանի հավաքույթները, ժողովները. կոմյերիտական խմորումն սկսվեց նաև աղջիկների մեջ, հետո պատի լրագիր, գրքեր, գաղտնի կապ քաղաքի հետ... Գասպարը նայում եր հետաքրքրությունից ինքն իրեն մոռացած, և յերբ բեմի վրա տալիս եյին ժողովի վայրի անունը կամ բացվում եր բջիջի խորամանկություններից մեկնումեկը, նա սեղմում եր ատամները և փնչացնում։

— Ախ, յեթե այս ժամանակ իմանայի... Ախ, հիմար, ի՞նչպես չեյինք գլխի ընկնում...

Յերկրորդ գործողությունից հետո, ընդմիջման ժամանակ, միքանի հոգի մնացին դահլիճում և դուրս չեկան միջանցք։ Նրանցից մեկը Վարդուհին եր, վոր հուզմունքից լաց եր լինում և դառը կերպով ցավում, վոր ինքը խելագարվել եր և զրկվել պատանի-

ների այդ պայքարին մասնակցելուց: Ընկերուհիները գգվում եյին նրան և հանդիմանում, վոր դադարի լալուց:

Դահլիճում մնացած մյուսները՝ կարմիր սկառատներ եյին: Գասպարը կանգնել եր Մամիկոնի դեմ և ասում եր.

— Այ, տեսամբ, թե ինչպես են կաղմակերպվել: Հարկավոր և որինակ վերցնել և վոչ թե հուսահատվել...

— Մի քիչ ուշ չե՞— հեգնում եր Մամիկոնը:

Հանկարծ Գասպարը նայեց ընկերներին և հանգստանալով, վոր Գարեգինը հեռու յե կանգնած, փայլող աչքերով մոմռաց.

— Յես այս գիշեր Ութսունիննին մի լավ դաս կտամ...

— Դու չես համարձակվի, — միանգամայն անսպասելի կերպով բռնկվեց Մամիկոնը:

— Ոհմ... — Ժպտաց Գասպարը. — Նորություն: Իսկ ինչու չեմ համարձակվի, պարոն պետ...

— Մի հեգնիր, Գասպար: Ճիշտ ե, յես այլևս ձեր զեկավարը չեմ, չեմ կարող պարտադրել, բայց և այնպես դու չես համարձակվի:

— Սպառնում ես...

— Վճչ, հասկանալ ե պետք, վճչ: Յես չեմ սպառնում, այլ խորհուրդ եմ տալիս: Յեթե չես հուսահատվել պայքարելուց, յեթե սւզում ես գործ անել, լուրջ գործ արա, իսկական գործ: Միթե վորեւ բանի կհասնես Ութսունիննին ծեծելով... — Յեվ ավելացրեց.

— Հիմար...

Գասպարը գունատվեց, կարմրեց, բայց վոչինչ չասաց:

Վարդուհին հանգստացավ, ծիծաղեց: Արշալույսը հեռացավ նրանից և գնաց զեպի Գարեգինը:

— Ինչու յես մենամենակ կանգներ, — հարցրեց նա նրան:

— Ի՞նչ անեմ, Արշալույս, — ասաց Գարեգինը. — Նըանց հետ գժտված եմ, ձեզ հետ խորթ...

Արշալույսն զգացվեց այդ խոստովանությունից, և սիրալիր նայեց նրան: Ընդմիջման մնացած մասը նա անցկացրեց նրա հետ զրոյց անելով:

Յերրորդ գործողությունն անցավ իշաղաղ, բայց յերբ վարագույթ փակվեց, Գասպարը բարձրացավ բեմ:

— Մի բոպե, ընկերներ, միայն մի բոպե նստեք տեղերդ...

Պատկոմները, վոր գուրս եյին գնում, կանգ առան:

— Յես նախկին հայ արի յեմ... Յես այժմ զղացել եմ: Ուղում եմ պատկոմ ընդունվել: Այդ մասին գիտեն ընկեր Բարկենը, Աշոտը և շտարի մյուս անդամները: Սակայն յես պետք ե ասեմ,

վոր այս պիեսում սկառատները գուրս են բերված շատ սիալ ու ծիծաղելի ձեռվ... Ընկերներ, մի քանի խոսքով տեսնենք, թե ինչ ե սկառատիզմը:

— Միթե մինչև հիմի չգիտենք, — ձայն տվեց մի կոմյերի տական:

— Գիտեք, — հաստատեց Գասպարը, — բայց գիտեք նրա վատը: Իսկ լավլը... Ապա վոգերվելով, մոռանալով չափ պահպանել, շարունակեց. — Ընկերներ, սկառատիզմը նույն բանն ե, ինչ վոր պատկոմական շարժումը: Զրպարտություն ե, թե մենք ուրիշ վորվով ենք դաստիարակել պատանիներին: Յեթե դուք մեզ հետ ծանոթանաք վոչ թե այսպիսի խայտառակ պիեսներով, այլ ճշմարիտ խոսքով, այն ժամանակ...

— Կար իշիր, — գոռաց մի պատկոմ:

— Չենք ուզում լսել, — բղավեց յերկրորդը:

— Կորչի սկառատիզմը, կորչեն նրա ուշացած պաշտպանները, — բացականչեց յերրորդը:

— Դուրս, դուրս, դուրս արեք հայ արուն, — լավեցին բազմաթիվ ձայներ: Գասպարն անդոր կերպով շուրջը նայեց և ցած իշավ: Իսկույն դահլիճից լսվեց Ալբերտյանի ձայնը.

— Ինչու յեք խեղողում: Միթե խոսելն արգելված ե:

— Յեթե մենք ենք լսողը՝ ապա չենք ուզում լսել, — բղավեց Մարտը: — Գնացեք ուրիշ տեղ խոսեցեք:

— Դուք նրան զրպարտությունը, — գոռաց Ալբերտյանը և թռավ բեմ. — զուք նրան հայ արի անվանեցիք: Իսկ այժմ լսեցեք ինձ: Յես ել հո հայ արի չեմ: Յես խորհրդային աշակերտ եմ և ահա ասում եմ, վոր սկառատիզմը, դա իսկական պատանեկական շարժումն ե: Ի՞նչ ե ասում սկառատիզմը: Նա ասում ե՝ տվեք պատանուն վոչ թե քաղաքականություն, — դա մեծերի գործն ե, — այլ գիտելիքներ, խաղեր զվարճություններ, մտավոր և ֆիզիկական մարդանք: Նա ասում ե՝ դեռ փոքր ժամանակվանից նրան միք մոցնի անմիտ պայքարների մեջ: Յերբ վոր մեծանա, նա ինքը կընտրի իր նպատակը: Ինչպես տեսնում եք, ընկերներ, սկառատառ կան շարժումը քաղաքական շարժում չե. Ի՞նչպես կարող ե նա լինել հեղափոխական կամ հականեղափոխական: Իսկ այն լոզունդը, թե յեղիր հավատարիմ աստծուն ու հայրենիքին՝ դիսցիպլինայի համար ե ասված և իհարկե անված ե հեղափոխությունից առաջ: Այժմ մենք դա կարող ենք փոխել՝ յեղիր հավատարիմ բնոււթյանը և իշխանությանը, — դա հեշտ ե: Սակայն սկառատիզմի

եյությունը կմնա և պետք ե մնա: Յես վերջացրի. կեցցե սկառտիզմը...

— Լոյնը, դուրս կորիր, — լսվեցին չորս կողմից: Բարձրացավ այնպիսի աղմուկ, վոր այլևս վոչ մեկը չկարողացավ մյուսին հասկանալ: Կոլվար Անահիտը թռավ բեմ, բայց տեսնելով, վոր իրեն վոչ չի կարող լսել, ցած իջավ: Վաղգենը պիեսը ձեռքին, սկսեց զանգահարել, բայց դարձյալ անոգաւառ: Վերջապես բեմ բարձրացավ կոմյերիտմիության քարտուղար Հրայրը, Բարկենի լայն բլուզը հաղին:

— Ընկեր պատկոմներ...

Տիրեց լուսթյուն:

— Ընկեր պատկոմներ, — կրկնեց Հրայրը, — դում միք հուզվի, վերովհետև դժվար չե այդպիսի հակախորհրդային քամի փչողներին պատասխանելը: Նրանք արդեն ջախջախված են և այն, վոր ասում են, ծիծաղելի յե, և վոչ թե համոզիչ, ի՞նչ և ասում, որինակ, այս, ամոթ և ասել՝ խորհրդային աշակերտը: Նա ասում ե, վոր սկառտաները քաղաքականությամբ չեն զրադվում: Միթե դա ճիշտ ե... Ճիշեցեք այս պիեսի մեջ կատարվող դեսքերը...

— Պիեսը դեսքերը ճիշտ չի ցույց տալիս, — ծըռտաց ժաննան:

— Միթե, քաղաքացուհի: Այստեղ կան մոտ յերեքհարյուր նախկին սկառտաներ՝ թե Կաղաչի Պոստից և թե Պալիգոնից, այդքան ել վորուհիներ կան: Ասացեք, ընկերներ, տալի՛ս եյին ձեզ կրոնի դաս, թե վոչ, ասում եյին, վոր հարկավոր և մեր ոտար հարկանաներին կոտորել, թե վոչ, համոզնեմ եյին, վոր հեղափոխությունը սխալ ե, վոր հարուստը պետք ե աղքատին դործ տա, իսկ աղքատը հարուստին յենթարկվի այդ բանի համար... համոզնեմ եյին, թե վոչ: Յեթե այս, ապա ձեռք բարձրացրեք:

Վեցհարյուրից ավելի ձեռքեր գրոշակների պես բարձրացան:

— Իսկ այժմ, — վերջացրեց Հրայրը, — գնանք մի քիչ թարմանանք, վորպեսզի դիտենք վերջին գործողությունը: Պատկամներ, այսպիսի ջուր պղտորողներին հակահարված տալու համար պատրմատ եք:

Յեվ դահլիճը թնդաց.

— Միշտ պատրաստ ենք:

Զորորդ գործողությունն սկսելիս, նկատելի դարձավ, վոր Ալբերտյանն իր ընկերների հետ թողելդնացել եր, բայց Գասպարն ու մյուս կարմիր սկառտաները նստած եյին իրենց տեղերում:

Այդ չորրորդ գործողությունն ամենահուղիչն եր, Ռոպե առ ըսպէ պոութկում եյին ծափահարությունները: Ընդմիջումի ժամանակ պատահած դեպքն ավելի եր տրամադրել պատկոմներին՝ ամբողջ կրծքով ու ափերի ամբողջ ուժով վողջունել իրենց հաղթանակի նկարագրությունը: Իսկ յերբ գործողության վերջում սկառտ համար Ութսունինն նախկին սկառտաների ամբողջ շըքերթը գեկավարեց դեպի քաղաք, դեպի պատկոմները, բազմաթիվ պատկոմներ վաղ տվեցին դեպի Արամը և ձեռքերի վրա առնելով, բարձրացրին թեմ: Սկսեցին ճոճել, բացականչել, իսկ հետո, բռլորը միասին, թե բեմում, թե դահլիճում՝ պատվի առան և ինտերնացիոնալ յերգեցին:

Գասպարն աննկատելի կերպով դուրս գնաց:

— Իսկ այժմ, մենք քեզ կուղեկցենք մինչեւ ձեր տուն, — ասաց սև ջոկատի Գեվորգը, մոտենալով Արամին, ապա վոտների ծայրերին կանգնելով, ձայն տվեց: — ապա սկսեցեք, յես լավ ձայն չունեմ...

Թնդաց պատկոմական քայլերգը: Պատկոմները, պատկոմուհիները, մանկատան սաներն ու սանուհիները, դպրոցականները, բոլորը շըքապատեցին Արամին և դուրս յելան: Հանդիպելով բակի մթության հետ, Հրաչը գլուխն որորեց:

— Յեթե ցերեկով գլխի ընկած լինեյինք՝ շահերը լցնեյինք, հիմի մի լավ ջահերթ կունենայինք:

Նրանք դուրս յելան փողոց շարունակ յերգելով պատկոմական հաղթ քայլերգը, իրենց յերգով և իրենցով վողողելով արդեն քնած փողոցները:

— Ի՞նչ անենք, Վեցկրականի, — տարակուսեց Գասպարը:

— Ի՞նչ պիտի անենք: Հետաձենք մի ուրիշ որ:

— Ափսոս, յես ուզում եյի, վոր անպայման այսոր լիներ: — Ապա մի բողեք մտածելուց հետո, ավելացրեց: — Ասենք, յեթե այսոր լիներ, գուցե շատերը կասկածեյին իմ ու Ալբերտյանի վրա:

— Գնանք, — ասած կելոնը, մոտենալով:

— Զե, դուք դնացեք, — խռուսափեց Գասպարը: — յես մի քիչ գործ ունեմ:

Յերբ իր ընկերները հեռացան, նա դրպանից հանեց մի բանալի և տվեց Վեցկրականուն:

— Առ: Արտօնույանի խանութի բանալին ե: Նա յերկու հատեւներ, վորոնցից մեկն իրեն ավելորդ եր: Իմ բաժինս չմոռանաք...

Յեվ դանդաղ քայլերով գնաց մյուս կարմիր սկառտաների յետելից:

## ԱՌԱՋԻՆ ԵԼ ԿԱ, ԱՌԱՋԻՆ ԵԼ

Մի որ առավտայան, տղաների յսթերորդ մանկատան մի քանի սաներ գնացին պատկոմատուն և խնդրեցին Բարկենին, Աստղիկին, Աշոտին, Արամին, Հրաչին և ուրիշներին՝ ցերեկվա ժամի տասներկուսին իրենց մանկատուն գնալ՝ մի կարեռ զործով: Բարկենի հարցին թե, ինչ գործ ե դա, նրանք վոչինչ չպատասխանեցին, ասելով վոր ուղում են անակնկալ պատճառել:

Քանի վոր ցերեկվա այդ ժամին պատկոմական շտարի ղեկավարները շատ զբաղված եյին լինում և իհարկե չեյին կարող միաժամանակ բացակայել, դրա համար ել, մանկատուն գնացին միայն Բարկենը, Արամը, Աշոտը և Հրաչը: Մոտենալով մանկատանը, նրանք դարձանքով նկատեցին, վոր նրա մուտքը զարդարված եր դրոշակներով, ճյուղերով ու ծաղիկներով: Իսկ այն տեղը, ուր միշտ մանկատան ցուցանակն եր խփված, այժմ դատարկ եր: Գուցե ցուցանակն իջեցրել եյին հատուկ նկատառումով, վորպեսզի նրա գրաված տարածության վրա հեղափոխության ղեկավարների նկարները փակցնեն:

Բակում վոչվոք չկար: Դրա փոխարեն, ընթերցարանի մեծ սենյակի կողմից գալիս եյին շատ մարդկանց ձայներ: Պատկոմապետները մտան ներս: Մտան և իսկույն դարձանքով նկատեցին, վոր ընթերցարանը վերածել են դահլիճի, ուր խիտ շարված աթոռների վրա նստել են մանկատան սաները և բաղմաթիվ հրավիրվածները: Սենյակի առջևամասում դրված եր կարմիր մահուդով ծածկված մի սեղան, վորի յետեր նստած եյին մանկատան վարչության անդամները, մանկատների ընդհանուր վարիչ Դամբիշչյանը և կայսերիտմիության գավկոմի համարյա ամբողջ կազմը:

Տեսնելով ներս մտնող պատկոմապետներին, դահլիճը վոտքի կանգնեց և պատվի առավ: Բարկենը բացականչեց.

— Պատկոմներ, պատրամստ:

Յեվ դահլիճը պատասխանեց.

— Միշտ պատրաստ ենք:

Յեվ բոլորը նորից նստեցին, սեղանի յետերից յեկավ մանկատան մեծահասակ սաներից մեկը և Բարկենին ու Արամին հրավիրեց իրենց մոտ: Հստ յերեսութին բոլորը նրանց եյին սպա-

սում, քանի վոր նրանց նստելուց հետո նույն սանը, վոր նախագահում եր, վեր կացավ կանգնեց և սկսեց.

— Ընկերներ... Տղաների նախկին, համար յոթ մանկատան սաների հանդիսավոր նիստը՝ մանկատունը կոմունայի վերածելու առթիվ, համարում եմ բացված:

Թնդաց նվազը: Բանից դուրս յեկավ, վոր նվազախումբը, աննկատելի կերպով տեղափոխվել եր դահլիճի յետին աթոռների վրա: Ծափահարություններով և ուռաներով բոլորը վոտքի կանգնեցին:

— Ընկերներ, — շարունակեց սանը նրանց նստելուց հետո, — խորհրդային իշխանությունը մեղ ևս ժառանգություն ստացավ այն ավերակների հետ միասին, վոր թողել եր դաշնակցական կառավարությունը: Ավերակների նման, մեղ հետ նա ստացավ համառ պայքարից հետո: Այս, համառ և գժվար պայքարից հետո:

Նա մոտեցավ, յետ տարավ մազերը ճակատի վրայից և շարունակեց:

— Դեռ դաշնակցության ժամանակից, վորբերի ինամության զործը, ինչպես գիտեք: հանձնված եր ամերիկացիներին: Հեղափոխությունից հետո ևս այդ գործը մնաց նրանց ձեռքում, վորով հետև մեր իշխանությունը դեռ մեղ պահելու հնարավորություն չուներ: Բայց յեթե դաշնակցականներն ու ամերիկացիներն իրար հաշտ յոլա եյին գնում, ապա մեր իշխանության հետ սկսեցին տեղիանատեղի կովել, գծավել, սպանալով մեղ սոված ու մերկ թողնել և հեռանալ... Յեվ իրոք, կարծես նրանք իրավունք ունենալին: Իրենց ինչ ոգուած՝ ձրի կերպով պահել տասնյակ հազարար վորբեր ու վորբուհներ...

Նա նորից ձեռքը տարավ մազերին:

— Բայց ահա, յերբ յեկավ ժամանակը և մեր իշխանությունը նրանից վերցրեց մեղ բանից դուրս յեկավ, վոր դա այնքան ել նրանց սրտովը չեր: Այս, նրանց սրտովը չեր: Հարց և առաջանում: ինչնեւ: Պարզ ե, վորովհետեւ նրանք հույս ունեյին հետզհետեւ կիրը գաղութ դարձնելու...

— Այսոր, — շարունակեց նա ավելի վագնորված, — յերբ արդեն վաղուց ե, վոր սաներն աղատ ապրում են մեր իշխանության մանկատներում, նրանց բոլորին մի հարց և հուզում: Թյան մանկատներում, նրանց բոլորին մի հարց և հուզում: ինչպես անեն, վոր դադարեն սան լինելուց, դադարեն պետության վրա ծախս նստելուց... նրանք ամեն մի պատառ հացն

ռւտում են դժվարութլամբ, քանի վոր իրենց սեփական ձեռքով չեն աշխատել այս: Յեկ այդ բանից դրդված, նրանք շտապում են գտնել իրենց համապատասխան աշխատանք և ապրել սեփական ճակատի քրածինքով...

Նա մի սանի ակնարկ արեց, վորն իսկույն բերեց նրան հանձնեց թղթով փաթաթված ինչվոր տափակ բան և դնաց: Նա շարունակեց.

Մեր մանկատան սաները, վորոնք համարյա առանց բացառության արդեն մեծահասակներ են, այժմ բոլորն ել աշխատում են, չհաշված մեր մի քանի սիրելի փոքրիկների: Յեկ ահա, դժունելով, վոր այժմ արդեն մենք կարող ենք ապրել ինքնուրույն և պահել մեր մի քանի սիրելի փոքրիկներին, վորոշեցինք դիմել ընկեր Դամիրչյանին, վոր վաղվանից մեր մանկատունը դուրս հանի իրենց բոլոր ցուցակներից, չուղարկի մեզ վոչ մի կտոր հաց կամ մթերք և կամ ուրիշ բան, յեթե չի ուղում, վոր իրեն ծեծենք...

Բարձրացավ ծիծաղ, բուռն, անզուսպ ծափահարություններ, նվագեց նվագախումբը: Սանը պատուց իր ձեռքում բռնած տափակ իրի վրա փաթաթված թուղթը և իրը յերկու ձեռքով բռնեց բարձր, վոր բոլորն ել տեսնեն: Դա մանկատան ցուցակն եր, վորի վրա այժմ գրված եր.—Պատանի կոմունարների աշխատանքային կոմունա № 1:

— Առաջին ել կա, առաջին ել,—բղավեց սանը.—Եյ, առաջին մանկատան սաներ, մենք ձեր համարը խլեցինք: Դե դուք ել խլեցեք մեր անունը...

Խոսեց կոմունայի կոմյերիտական բջիջի ներկայացուցիչը: Նա կարդաց բջիջի վորոշումը կոմունայի մասին: Բջիջն ավելորդ եր համարում ոռնիկով կառավարիչ և այլ ծառայողներ ունենալը և խոսք եր տալիս կոմունայի վարչությանը, վոր կոմյերիտականների և ցանկացաղ անկուսակցական պատանիների միջոցով կըստեղի կանոնավոր հերթապահություն, որինակելի դարձնելով կոմունան:

Վորոշումն ընդունվեց յերկար ժամանակ չլուղ ծափերով ու նվագով:

Կոմունային վողջունեցին բոլոր մանկատները: Նրանց որինակին հետևելու խոսք տվեցին վոչ միայն առաջին մանկատունը, այլև ուրիշները: Վերջում խոսեցին Հրայրը, Արամը և Բարկենը:

— Դուք, սիրելի պատանիներ, — ասաց Հրայրը, — վարվեցիք այնպես, ինչպես պետք եր: Դուք մեր իսկական և լավ փոխարինողներն եք, կեցցեք դուք, կեցցեք ձեր կոմունան:

Արամը վեր կացավ հայտնելու, վոր ահա մի քանի որ ե, ինչ իր ոռնիկն ավելացել ե և այժմ նա հնարավորություն ունի մանկատնից վերցնելու իր յեղորը, իր միջոցներով պահելու: Նա հենց այդտեղ Հարությունին կանչեց իր մոտ և ասաց, վոր զնա պատրաստվի: Նրա խոսքերը վերջացան ծափերի տակ:

Բարկենը նույնպես, յերկար չխոսեց: Վերջացնելուց հետո, նա հաղորդեց, վոր ինքը կիսնդրի կուլտկրթական բաժնին, հենց այսոր յերեկոյան, կոմունայի այս դահլիճում բեմադրելու վազգենի պիեսը, վորը և չափազանց ուրախացրեց կոմունարներին:

Վերջում Դամիրչյանը շնորհակալություն հայտնեց կոմունային և հայտարարեց, վոր մանկատների վարչությունը խոստանում ե յոթերորդ մանկատան փոխարեն հավաքել քաղաքի անապատաններից մի քանի տասնյակ հոգի և նոր մանկատուն հիմնել:

Դահլիճը թնդաց ծափերից: Սպասելով մինչև լոելը, Դամիրչյանը շարունակեց: Միենույն ժամանակ, մանկատների վարչությունը, կոմյերիտմիության կենտկոմի և այլ կազմակերպությունների և հիմնարկերի հետ միասին՝ վորոշել և ընդուածել թե կենինականի և թե Յերևանի մանկատների մեծահասակ սաների կազմելու թյուղատնտեսական կոմունա կազմելու համար: Ով վոր սիրում ե գործարանը, թող քաղաքում աշխատի, իսկ ով վոր հոգն և սիրում՝ այնտեղ: Կեցցեն կոմունաները...

Նրա խոսքերին հաջորդող վորոտընդուած ծափերից, բացականական հաջություններից և նվազից հետո, Փասը, վոր հետևելով Արամին, յեկել կանգնել եր դահլիճի լուսամուտների մոտ և նայում եր յեկել կանգնել եր դահլիճի լուսամուտների մոտ և նայում եր վաղ տվեց Զոփուո Ռոկիկին և Վեցկրականուն հաղորդելու ներս, վաղ տվեց Զոփուո Ռոկիկին և մասին, այնպես ել յերեկոյան ինչպես Դամիրչյանի խոսքերի մասին, որին կամ Արամը: Վերներկայացման, վորին ներկա պիտի գտնվեր նաև Արամը: Վերներկայացման, վորին ներկա պիտի գտնվեր նաև մի հարմար առիթ՝ նրան ծեծելու:

24

## ՀԻՆ ՈՉԱԽԻ ՇՈՒՐՋԸ

Յերկար ժամանակի ընդմիջումից հետո, Արամենց ընտանիքը նորից հավաքվեց մի հարկի տակ: Հենց նույն որը, Արամը մանկատնից հանել եր վոչ միայն իր յեղայր Հարությունին, այլև

քույր Մարիամին: Գալով միջնակ յեղբայր Արտաշեսին, նա դեռ ավելի առաջ արդեն ապրում եր տանը:

Յերբ իշխավ ուրախ յերեկոն, Արամը, իր քույրը, յեղբայրները, մայրը և տատը հավաքվեցին սեղանի շուրջը և սկսեցին թեյել: Նրանք շատ քիչ եյին խոսում, բայց լցված եյին մեծ ուրախությամբ և նրանց դեմքերը ժպտում եյին: Արամը նայում եր մոր դեմքին և տեսնելով նրա զսպած ուրախ արցունքները, զգացվում եր: Տատը, վոր իր թեյը խմելուց հետո նստել և գուլպա յեր գործում՝ միաժամանակ քթի տակ յերդ եր մոմուռմ. մի բան, վոր նրա հետ տեղի չեր ունեցել վաղուց ի վեր: Հարությունն անդադար խոսում ու պատմում եր իրենց մանկատան մասին և զարմանում, վոր տատը չի ճանաչում վոչ իրենց կառավարչություն, վոչ իր ամենամոտիկ ընկերոջը: Արամն ու Մարիամը խոսում եյին դեսից-դենից և Արտաշեսն ուշադիր լսում եր նրանց:

— Մի որ, — սկսեց մայրը՝ և տիուր և ժպտալով, — Արամը յեկավ Կազաչի Պոստից. և տեսնելով ձեր անտեր մնացած գրքերն ու խաղալիքները, նստեց, նայեց, նայեց: Հետո, ամեն անդամ, յերբ գալիս եր, նստում եր ու նայում, հա նայում: Յես գիտեյի, թե ի՞նչ եր անցնում նրա մտքով, բայց նա ինձ վոչինչ չեր ասում...

Արամը ժպտաց: Մարիամը նայեց դեպի անկյունը, ուր այժմ գրված եր գրքերի մի պահարան, իրենց գրքերով և խաղալիքներով լցված: Տատը նույնպես նայեց, սակայն նայելիս, նրա դեմքը մոայլիք և նա դառնալով դեպի Արամը, խրատական տոնով ասաց.

— Վորդիս, տնից հեռացրու եղ անորեն թղթերը: Փորձանք կդա: Մեր տեսած փորձանքները բավական չեն...

— Վո՞ր թղթերը, — ծիծաղելով հարցըին Արամն ու Մարիամը, թեև յերկուսն ել գիտեյին, թե ինչի մասին ե խոսքը:

— Տատի, — ավելացրեց Արամը լուրջ տանով. — հենց եղ թղթերը՝ նոր կյանքի ծրագիր են...

— Զե, վորդի ջան, կորցրու, — պնդեց տատը: — Յերևում ե, վոր անորեն մարդու գրած եւ թագավորին ու տերտերներին հայհոյում են՝ հերթիք չե, աստծուն ել են ձեռք առել:

Մայրը, վոր հետեւում եր վորդու և կեսրոջ վեճին, մայրական սիրով բռնել եր իր վորդու կողմը: Ինչպես միշտ, այս անդամին ես, նա փորձեց մի ընդհանուր լեզու գտնել, բայց անհաջող: Տատն իրենն եր պնդում, թոռն իրենը: Ոգնության հասավ Մարիամը

— Լսիր, տատի ջան... Յեկ քեզ հետ մի պայման կապենք: Վոչ գու մեզ վրա բարկանաս անորենության համար, վոչ մենք քեզ ծաղրենք հավատացյալ լինելու համար: Ազնիվ խոսք, տատիկ, պատերազմն ել, աղքատությունն ել, վորքերն ել, — եղ բոլորը նրանից եր, վոր մարդիկ գեռ հավատում եյին աստծուն... Ուրեմն կաղմամ ենք պայմանը: Մի կողմից դու, իսկ մյուս կողմից՝ Արամն ու յես: Մայրիկն առայժմ չեղոք ե:

— Բա յես, — հալցրեց Արտաշեսը. — յես ել եմ պայման կապում:

— Դու ի՞նչ ես հասկանում վոր, — ջղայնացրեց Մարիամը:

— Ո՞վ չի հասկանում, — վիրավորվեց Արտաշեսը: Ո՞ւմ եյին ուզում վարդապետ դարձնել՝ ի՞նձ, թե քեզ. Ում տարան Բաթում՝ ի՞նձ թե քեզ. Ում եյին զուով յեկեղեցի տանում, մոմ բռնել տարիս, պատժում...

— Դե լավ, լավ, ժպտաց Արամը, — դու ել մեզ հետ:

— Բա յես, — ձայն տվեց Հարությունը: — Յես մարդ չեմ, ի՞նչ ե: Տատի, սրանք ինձ չեն ընդունում, դու ընդունիր...

Մարիամը նայեց ժամացույցին:

— Ի՞նչ ե, տեղ ունես գնալու, — հետաքրքրվեց Արամը:

Մի ըստեւ Մարիամը դարձավ թաղծոտ: Մոռացավ իր զվարճությունը, լոեց, նայեց լուսամուտից դուրս, ապա աչքերը հանեց սեղանին:

— Վոչ... — պատասխանեց նա... Ո՞ւր պիտի գնամ. վոչ մի տեղ չունեմ: Արդեն մութն ե... Ուշ ե... — Ալա հանկարծ, փոխված ձայնով ավելացրեց.

— Գիտես, Արամ, յես ենքան եմ սովորել իմ ընկերուհիներիս, մեր ննջարանին, մեր կյանքին, վոր հիմի եստեղ քիչ երիս, մեր կյանքի հանդիպում լացու գա... ի՞նչ վատ ե մենակ...

— Մենակ, — վիրավորվեց մայրը. — ուրեմն մեզ բոլորիս մարդ չես հաշվում:

— Ախ, յես ուրիշ բան եմ ասում, — բողոքեց Մարիամը, — յես ասում եմ, թե ինչ վատ ե քննել առանց ընկերուհիների, փոքրիկ սենյակում, միայն մի քանի հոգով: Ախը մեր կյանքն ավելի սենյակում, աղջիկների մոտ: Դեռ մի որ չկա, վոր յեկել եմ, բայց ի՞նչ ըստ, աղջիկների մոտ:

— Անտեր մնալ պատերազմը, — մոմոաց տատը, գլուխը գուր պայի վրա կախած և ճաղերն արագ-արագ շարժելով. — յերեխաների պատը կտրեց իրենց ընտանիքից...

— Սիալվում ես, տատի ջան, — վշտացավ Մարիամը. — մի՞թե  
յես ամեն որ չեյի գալիս ձեղ տեսնելու... Յես միշտ ել ձեղ սիրել  
եմ: Բայց ախը դուք իսո ինձ ընկերուհի դառնալ չեք կարող: Բն-  
կերուհին ուրիշ բան ե, դուք ուրիշ բան...»

Մայրը վեր կացավ տեղից, շոյեց աղջկա մազերը, ապա մոտե-  
ցավ Հարությունին, վորն Արտաշեսի հետ նստած, թղթե խաղա-  
լիքներ եր սարքում:

— Կքնիս, Հարություն, — հարցրեց նա:

— Շուտ ե, — ժպտաց Հարությունը ներողամիտ կերպով. —  
դեռ մեր քննելու դանդը տված չի լինի...

— Յես միշտ ասում եյի, միշտ մտածում եյի, վոր ինչքան  
լավ կիխի, յեթե նորից բոլորս միասին հավաքվենք մեր ոջախի  
շուրջը, — մրմիջաց մայրը: — Յես գիշերներն ինչքան եմ լացել,  
յերբ արթնացել եմ ու ձեր քնի մշտոցը չեմ լսել:

— Յեթե ձեր հայրը կենդանի լիներ, շատ պիտի ուրախանար, —  
ավելացրեց տատը: — Դուք բոլորդ ել մեծացել եք, խոշորացել: Ոյ,  
աստված հեռու տանի են որերը, պատերազմը, սովոր, տիֆը... Այս,  
աստված, յեթե ես իշխանությունը քեզ չուրանա, նա ամենից  
լավն ես...

— Տատի, — ընդհատեց Մարիամը նրան, — շուտով մեր տեքս-  
տիլ գործարանը պատրաստ ե լինելու: Արդեն շատ քիչ բան ե  
մնացել:

— Ելի՞ պատրաստ ե լինելու, — հեղնեց տատը:

— Հեշտ իսո չի, տատի. ահապին գործ ե: Յես ել եմ ենտեղ  
աշխատելու, մեր բոլոր աղջիկներն ել... կտոր ենք գործելու,  
դուլպա...

— Գուլպա... Տատը դարձացած նայեց: — Եղ չկար ախր: Եղ  
ել նորություն ե:

— Այս, տատի: Ել դու ձեռքով չես գործի, աչքերդ չես փչացնի,  
ժամանակդ չես վատնի...

Տատը մտածմունքի մեջ ընկավ:

— Իսկ ձեռնոց գործելու յեն ենտեղ...

— Ձեռնոց: Կարծեմ վոչ: Գործելու յեն Արամ:

— Վոչ:

— Դե ուրեմն յես ել ձեղ համար ձեռնոց կործեմ, — յելքը  
գտավ տատը:

Մայրն սկսեց աղջկա հետ կամացուկ խոսել: Արամն ականջը  
սրեց, ապա մեջ խառնվեց:

Լուսամուտի տակով, աննկատելիորեն անցավ Փասը և ներս  
նայեց: Ստուգելով, վոր Արամը տանն ե, նա նորից բակից դուրս  
յելավ փողոց և սկսեց նրան անկյունում սպասել:

— Դու կուշանաս, — հիշեցրեց Մարիամը:

Արամը նայեց պատի ժամացույցին և վոտքի կանգնեց:

— Շուտ վերադարձիր, Արամ ջան, — ինքորեց տատը:

— Գուցե մնամ մինչեւ ներկայացման վերջը, — հայտնեց Արամը,  
կլեարկը դնելով:

— Յետ դառնալիս զգուշ յեկ, ցեխերի մեջ չընկնես, — նախա-  
զգուշացրեց մայրը: — Մեր փողոցում լույսը շատ քիչ ե:

— Վոչինչ, — գրկելով նրան, հանգստացրեց Արամը. — Շուտով  
կունենանք նոր, մեծ եկեղեցակայան...

Յեկ դուրս յելավ:

## 25

### ՎՐԵԺՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Պատկոմական առաջին կոմունայի մուտքից քիչ հեռու, մի  
քանդված պատի քարերի վրա, նստածել եյին վեցկանին, Փասը,  
մտնում նախկին մանկատան բակը և վերադառնում:

— Վոր գործողությունն ե, — անհամբերությամբ հարցնոմ եր  
վեցկանին:

Փասը հենց սկզբից գործողությունների թիվը խառնել եր իրար,  
ուստի և հաղորդում եր տեսարանի բովանդակությունը.

— Բոքսով Ութսունինի քիթ ու պուտնդը ջարդեցին...

— Բիրազի սատկած շանն են թաղում...

— Ութսունինն ըսորից տեսավ Սաթիկին, բայց միստը Նոնսը  
հայրոյեց սկասութին և աղջկան տարավ...

Վեցկանին լառմ եր անհամբերությամբ, յերկու մեծահա-  
սակ խուժաններն անտարբեր կերպով ծիռում եյին, իսկ Վաչիկին  
սակ խուժաններն անտարբեր կերպով ծիռում եյին տիսուր, Նրանք յեր-  
ու Սուրբիկը նստել եյին տիսուր, չափազանց տիսուր, Նրանք յեր-  
ու Սուրբիկը նստել եյին տիսուր, չափազանց տիսուր, Նրանք յեր-  
ու Սուրբիկը նստել եյին տիսուր, չափազանց տիսուր, Նրանք յեր-  
ու Սուրբիկը նստել եյին տիսուր, չափազանց տիսուր, Նրանք յեր-  
ու Սուրբիկը նստել եյին տիսուր, չափազանց տիսուր, Նրանք յեր-

թացքում զարմացած եր և տարակուսած՝ թե ինչու Ոնիկն ու  
Վեցկրականին իրեն թույլ չեն տալիս Արամից տեղեկանալու իր  
քըոջ մասին, նստել եր հոգեպես ընկճված և դարձյալ վերհիշում  
եր այդքան անհասկանալի կերպով կորցրած իր քըոջը:

Արագ քայլերով անցավ մի մարդ, փոքր նկատելով նստոտած  
խուժաններին, կասկածանքով նայեց: Յերբ նա կորավ հեռվի  
մթության մեջ, Վեցկրականին դիմեց մեծահասակ խուժաններից  
մեկին.

— Դու լավ նշան բռնել զիտես: Խույսը մարիր...

Խուժանը դետնից վերցրեց մի կլոր քար և մի աչքը փակելով  
շպրտեց դեպի հեռագրասյան բարձրում վառվող ելեկտրական  
մեծ լամպը: Քարը վրիպեց: Խուժանը խփեց յերկրորդ անգամ:  
Այս անդամ քարը դիպավ նրա եմալե լուսամիտրին: Փողոցում  
ուժեղ կերպով տատանվեցին լույսն ու ստվերները:

— Կնկատեն. վերջացրու, — կարգադրեց Վեցկրականին:

Անհաջողությունից ջղայնացած, խուժանը վերցրեց մի նոր քար  
և շպրտեց: Լսվեց չըխկոց և անմիջապես ամբողջ փողոցը մթնեց:  
Մի ըսպե խալարը թվաց շատ ծանր և վոչ վոք վոչինչ չեր կարող  
տեսնել, բայց հետո նրանց աչքերը վարժվեցին մթությանը: Այժմ  
փողոցի հեռավոր ծայրերն ավելի լուսավոր թվացին, բան թե  
առաջ: Խուժանների նստոտած տեղից մի քիչ այն կողմ, բացվում  
եր մի նեղ ու մութ նրբանցքի մուտքը:

— Աշոտի մարմինը դեռ վերցվեր և թռչում, — հանկարծ մըր-  
մընջաց Սուրբիկը:

— Վաչիկը ցնցվեց:

— Ինչու ասացիր:

— Հետ: Միտքս ընկավ:

Իսկ քիչ հետո ավելի կամացուկ, ավելացրեց.

— Յես եսոր ուզում եյի գրապան կտրելու ժամանակ բռնվեմ,  
վոր ինձ ուղղիչ — կըթական գաղութ տանեն... Հետո վախեցա,  
վոր Աշոտի նման ինձ զոռով յետ բերեն, Աշոտի որը գցեն...

— Սուս... Կլսեն...

Մի քիչ այն կողմ, ավելի բարձրաձայն, խոսակցում եյին յեր-  
կու մեծահասակները.

— Մի հատ հասցըրի... Զերաց արյունը քթից-բերանից թափ-  
վեց, ինքն ընկավ վար ել ժամանակ չկորցրինք: Վրա հասանք,  
յեղած չեղածը վրայից հանեցինք...

— Փող շատ ուներ:

— Մենք ել եյինք եղակես կարծում: Բաց անենք փողամանը  
ի՞նչ տեսնենք. — չորս կոպեկ... Թյու: Ափսսս մեր չարչարանքը...  
— Գնա տես, Փաս, — նորից կարգադրեց Վեցկրականին:  
Փասը դնաց և վերադարձավ:

— Ումապիադան ե, — հայտնեց նա: — Ութսունիննը վաշիկ  
անունով մի խուժանի նամակը պիտի տար նրա քըոջը — Աչիկին,  
բայց սկավառակը խփեցին, Աչիկը մեռավ...

— Վայ, մայրիկ, — լսվեց մի սուր ճիչ:

Վաշիկն անդքա փովեց քարերի վրա: Բոլորը վեր ցատկե-  
ցին, մատեցան: Վեցկրականին նույնիսկ մտածեց փախչելու,  
վորովհետեւ ճիչը մարդիկ կարող եյին լսել, ոգնության կանչի  
տեղ դնել և հավաքվել:

— Չինի Վաշիկի քըոջ մասին եր, — գլխի ընկավ Փասը: — Ալբ  
Վաշիկի քույրը...

— Շատ մի խօսի: Գնա պահակ կանգնիր: Կարող ե՝ լսեցին:  
Ախմախ, մոտիկ աղբյուրից գլխարկով ջուր բեր: Շնուտ...

Մեծահասակ խուժանները ծխախոտները նետեցին և սկսեցին  
Վաշիկի մարմինը արորել:

— Մարդ-մուրդ չի յերեսում, — հայտնեց Փասը, վերադառնա-  
լով: — Գիտես, Վեցկրականի, Վաշիկի քույրը...

— Քեզ ասացի գնա պահակ կանգնիր, — գոռաց Վեցկրակա-  
նին ամեն զգուշություն մոռացած:

Փասը դնաց: Սուրբիկը վաղեվազ բերեց ջուրը և խուժաններն  
սկսեցին այն ցնծղել Վաշիկի յերեսին: Վաշիկը ցնցվեց, սթափվեց:

— Վայ, մայրիկ, — կրկնեց նա, կարծես փիզիկական մի սուր  
ցալից գալարվելով. — Վայ, մայրիկ ջան, Աչիկը մեռել ե...

Վոչ վոք վոչինչ չասաց:

— Աչիկ, — գոռաց հանկարծ Վաշիկը և սկսեց սւժեղ, բար-  
ձրաձայն լաց լինել:

— Սնաւ, սնաւ, — ֆշաց Վեցկրականին և համարյա ապտա-  
կի ձեռով ափը զրեց նրա բերանին: — Զայն վոր հանեցիր  
կիսեղդեմ...

Նա դպաց, թե ինչպես իր ափի տակ անզոր դողում եյին յե-  
րեխայի շրթունքները:

— Փաս, — կանչեց Վեցկրականին:

Փասը յեկավ:

— Հիմի վերջին գործողությունը կլինի: Գնա բակ: Հենց վոր  
վերջանա, կպաս, իմաց կտաս...

— Լավ, Վեցկրականի, ևս բոպեյին կդնամ: Բայց թող մի յերկու խոսք ասեմ...

— Ասա, շուտ, — շտապեցրեց Վեցկրականին, ձեռքը Վաչիկի քերանի վրայից վերցնելով:

— Յես են պիտի ասեմ, վոր ներկայացման եղ կետը սիալ և Աչիկը Կաղաչի Պոստում չի մեռել...

— Չի մեռել... Ի՞նչպես թե չի մեռել... — կմկմաց Վաչիկը:

— Չեմ ասում, թե չի մեռել, — ասաց Փասը. — կարող ե պատահել, վոր մեռել ե, բայց ավելի ուշ: Կամ եղ ոլիմպիադայի ժամանակ ուրիշ Աչիկ ե մեռել, բայց վոչ Վաչիկի քույրը...

— Ի՞նչ զիտես, — հետաքրքրվեց Վեցկրականին:

— Ախր յես լավ եմ հիշում, — խոսեց Փասը, — վոր եղ ոլիմպիադայից մի ամիս հետո, մի աղջիկ յեկալ շուկա, ինձ ու մեր խուժաններից մի քանիսին հարցրեց Վաչիկի մասին:

— Ոլիմպիադայից հետո... — շնչակտուր հարցրեց Վաչիկը. — սուտ չես ասում, Փաս...

— Ինչու պիտի սուտ ասեմ... Աչիկը իսո մի անգամ չեկավ. մի քանի ամիս շարունակ գալիս հարցնում եր: Ե՛, մենք թնջիմանայինք, թե վ՞եր Վաչիկին եր ուղում... Մեկը փախել եր, մեկը մեռել, մեկին ցույց երինք տալիս, ասում եր՝ ևս չի... Յես չեյի իմանում, թե նա քու քույրդ ե: Մկի չեյի յել իմանում, թե դու քույր ունես...

— Հետո... Հետո թնջիմակ, — տագնապով հարցրեց Վաչիկը, բռնելով Փասի թերից:

— Հետո մի անգամ եղ աղջիկն ինձ մանրամասն ասեց, վոր ինքը Կաղաչի Պոստից ե. ունի մի խուժան յեղբայր, ուրիշ վոչինչ չունի... Յոթ-ութ տարեկան աղջիկ եր... Լաց յեղակ, զնաց... Յերեխ հուսահատվեց յեղբորը գտնելուց, վորովհետեւ զրանից հետո յես նրան ել չեմ տեսել...

Տիրեց լուսթյուն: Վաչիկը, շշմած ե մոլորված, չզիտեր ինչ յեղբակացություն հանել: Նրա փոքրիկ ուղեղում սկսեցին իրար խառնվել գեղքերն ու ժամանակները. նա ուղում եր վորոշել, թե ինչը ինչից առաջ ե պատահել կամ հետո. բայց ինչ կերպ ել շուռ եր տալիս, նորից նույնն եր ստացվում. — առաջ յեղել ե ոլիմպիադան, իսկ հետո, ամիսներ շարունակ, Աչիկը փնտրել եր իրեն...

— Գնա, գնա, — շտապեցրեց Վեցկրականին Փասին:

Փասը դարձյալ գնաց: Յերկու մեծահասակները նոր ծխախոտ վառեցին: Սուրիկը դիմաց Վաչիկին.

— Ինչու եյիր լաց լինում: Տեսնում ես, քույրիկը չի մեռել..

— Յես բոլոր մանկատները ման եմ յեկել, — հակածառեց Վաչիկը. — քույրիկս չկա:

— Բա Փասի ասամծը...

— Փասի ասամծը... — Վաչիկին սկսեց մտածել. — Փասը սուտ ասեց, — բացականչեց նա: — Սուտ ասեց, վոր լաց չլինեմ, ձայնս չլին...

Յել նորից սկսեց դառնադի լալ, բայց այս անգամ խեղպահձայնով:

Սուրիկը հակածառելու վոչինչ չկտավ:

— Վաչիկ, — կանչեց Վեցկրականին:

Վաչիկը վլուխը բարձրացրեց:

— Արի ինձ մոտ:

Յերբ յերեխան մոտեցավ Վեցկրականին, փոխանակ սպասված ապտակը տալու, սկսեց հանդարտ և գործնական մտերմությամբ նըա հետ փսխալ:

— Ուրեմն, Վաչիկ ջան, քիչ հետո ներկայացումը կվերջանա: Բայց ենտեղից մարդ չի գուրս գա, վորովհետև ներսում բոլորը կոմունայի անդամներն են, վոր հենց եղանակ ել ապրում են: Փասն ասաց, վոր ինքը հետեւել ե և զիտե. — բացի Արամից, ուրիշ դրսի մարդ չկա ենտեղ:

— Արամն ենտեղ ե, — բացականչեց Վաչիկը:

— Սպասիր... Այո, Արամն ենտեղ ե: Նա մեն-մենակ դուրս կդա կդնա: — Ապա մի փոքրիկ ընդմիջում տալուց հետո, ավելացրեց. — Դու իդուր ես նորից լաց լինում: Փասը դժվար թե սուտ ասած լինի: Բայց յեթե ուղում ես ճիշտն իմանալ, ինարկե պիտի հարցնես Արամին իրեն...

— Այո, — համաձայնեց Վաչիկը:

— Դե ուրեմն կհարցնես: Նա այս նըրանցքով ե տուն գնալու: Հենց վոր մտնի նըրանցք ու մի քանի քայլ գնա, կվազես յետեից, կկանգնեցնես, կհարցնես: Հասկացմը, նախքան նըրանցք մտնելը չես հարցնի...

— Լավ: Բայց ինչու:

— Կարող ե պատահել, — շարունակեց Վեցկրականին, առանց նըրան պատասխանելու, — վոր նա ուրիշ ճամբով ուղեղնա գնալ: Են ժամանակ դու կմոտենաս և կասես. — ընկեր Արամ, յես Աչիկի յեղբայրն եմ. թնջիմակ քրոջս մասին, ասա: Բայց հենց վոր սկսի խոսել, կասես. — ընկեր Արամ, ավելի լալ ե գնանք ես

նրբանցքը, մորս կանչեմ տնից, թող նա յել լսի... Ու անմեղանմեղ կրոնես թելից, յերեխի նման կքաշես...

— Իսկ սուտ ինչու խոսեմ, — հետաքրքրվեց Վաչիկը: — Վորդանցք տեսնի, վոր մայր չունեմ, ի՞նչ կասի:

— Վոչինչ չի ասի... Մենք քեզ կոգնենք:

Վաչիկն սկսեց վատ բաներ կասկածել: Նա հարցրեց.

— Բա մենք ի՞նչ գործի համար ենք հավաքվել եստեղ...

— Եստեղ... Ուրիշ գործի համար: Գործը մենք հետո կանենք, գեռ ժամանակ կա: Զլինի՞ կարծում ես հավաքվել ենք, վոր քըոջդ գործով զբաղվենք...

Յեվ բռնազբոսիկ ծիծաղեց:

Նույն բռպելին շտապ յեկավ Փասը և խուժաններն անհետացան նրբանցքի խավարում:

— Զմոռանաս, — շշնչաց Վեցկրականին վերջին բոպելին:

Վաչիկը կանգնեց կոմունայի դարպասից մի քիչ հեռու և սկսեց սպասել: Վերջապես նա վորեւ վճռական բան կլսի իր քըոջ մասին, — վորեւ վերջնական բան... Անա վոտնաձայներ դատարկ բակի մայթերի վրա: Վաչիկի սիրտն սկսեց թպրտալ: Անա և ի՞նքը, Արամը, մեն-մենակ...

Վաչիկը պատրաստվեց մատենալու:

Կես գիշերն անց եր: Փողոցում վոչ վոք չկար: Արամն զգուշությամբ շուրջը նայեց, Վաչիկին նկատեց և քայլեց ուղիղ դեպի նրբանցք: Յերբ մտավ այնտեղ, Վաչիկը ձայն տվեց.

— Բնկել...

Արամը շուրջ յեկավ: Տեսնելով մոտեցող խուժանին, նա արագ կերպով սուլիչը ձեռն առավ:

— Բնկեր Արամ, բարե ձեղ, — տխուր ժպտաց Վաչիկը մոտենալով:

— Դու ով ես: Ինձ վար տեղից դիտես:

— Յես խուժան Վաչիկն եմ:

— Վաչիկը... Այս վար տեղ ես կորեր Վաչիկ: Դու մի անգամ ինձ փնտրել եյիր, իսկ հետո չերեացիր... — Ապա հանկարծ մի բան հիշելով, զարմացած վրա բերեց.

— Բայց միթե դու դեռ խուժան ես: Ինձ ասացին, վոր իբր թե դու շատ լավ ես հագնված յեղել...

Վաչիկը գլուխը կախեց: Արամն սկսեց սուլիչի թելը պլտեցնել մտած վրա:

— Ո՞ւր և քույրիկս, ընկեր Արամ...

Արամն ըստ յերևույթին, սպասում եր այդ հարցին: Նա չպատասխանեց անմիջապես, այլ նայեց լուռ, անորոշ:

— Աչքիլը... — սկսեց նա մի վայրկյան հետո: — Լսիր, Վաչիկ ջան, դու իհարկե խելոք տղա յես և չպետք ե...

Նա թողեց սուլիչի թելը և յերկու ձեռքով բռնեց Վաչիկի ձեռքերը:

— Խփիր, — լսվեց հանկարծ և մի բռունցք իջավ նրա գլխին: Նա անմիջապես ձեռքը տարավ դեպի սուլիչի թելը, բայց մի ուրիշը բռնեց նրա ձեռքերը: Վեցկրականին Վաչիկին հեռու շպրտեց և վոտքի հարվածով Արամին վլորեց գետին: Անմիջապես չորս կողմից, խոր լուռվյուն պաշտպանելով, նրա վրա հարձակվեցին խուժանները և սկսեցին բռունցքներով ու վոտքերով ձեծել:

— Ոդ... նու... — թռավ Արամի բերանից, բայց մեկի վոտքը մի ծանր հարվածով փակեց նրա բերանը: Վեցկրականին ծունկի յեկավ նրա վոտների վրա և յերկու բռունցքով սկսեց կարկտի նման խփել նրա կողերին: Արամը գալարվեց, փորձեց դուրս պրծնել, բայց բոլորովին անսովուտ:

— Ոդ... — նորից փորձեց բղավել նա, բայց այս անդամ նրան խանդարեց բերանում լցված արյունը: Նա արյունը մի կողմ թափեց և ձայն տվեց.

— Վաչիկ, միլիցիոներ կանչիր... Վաչիկ...

Վաչիկը, վոր ապուշ կտրած նայում եր, սթափիվեց, կարծես նոր հասկացալ, թե ինչ եր տեղի ունենում և սարսափից մնաց իր տեղում մեխված:

— Վաչ...

— Վաչիկին ել կսպանեմ, քեզ ել, — զգույշ ձայնով Փշշաց Վեցկրականին. — Ի՞նչ միլիցիոներ, ի՞նչ բան: Առ քեզ մի քանի հատ ել...

— Ճանա... — սկսեց Արամը: — Ճանա... չեցի քեզ... սրիկա... Յես վա... Յես վազը քեզ ձերը... Սպասիր դու...

Տեսնելով, վոր իրեն ճանաչեցին, Վեցկրականին փշաքաղվեց:

— Վաչիկ, — Փշշաց նա ինքնիրեն կորցրած: — դանակիդ տուր, շուտ:

Վաչիկը հասկացավ, թե ինչ են ուզում անել և ձեռքը կոխելով զբանը, թողեց փախափ: Սուրիկը, վորի դերը պահակ կանգնելն եր, հետեւ նրան:

— Մի մեծ քար բերեք, — լեեղդված ձայնով կարգադրեց Վեցկրականին, բարկությունից և ձերբակալելու ահից խելագարված:

Յերկու մեծահասակները վազ տվեցին դեպի ավերակները, վերադարձան յերկու մեծ կտոր քարեր բռնած՝ վոր արդեն ուղղում ելին շպրտել Արամի գլխին, յեր Արամը թելը փաթաթեց Փասի վզով և նրա գլուխը քաշեց դեպի իրեն: Խուժանները, վախենալով ջախջախել նաև Փասի գլուխը, կանգ առան: Արամը, ուրիշ բան անելու անդոր, ատամներով ամուր կծեց նրա ականջը:

— Վայ, — գոռաց նա չափաղանց բարձր ձայնով և գլուխը ցնցելով դուրս պլծավ:

— Ո՞վ ե, ո՞վ ե, — լսվեց նույն բոսելին փողոցից և յերկու պատահական անցորդներ վազեցին դեպի նըրանցք:

Խուժանները թողնելով Արամին այդպես ընկած, իսկույն աներկութացան նըրանցքի հակառակ ծայրում...

## 26

### ԲՈԼՈՐՈՎԻՆ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀԱՆԴԻԹՈՒՄ

Վոտքից գլուխ Արամին ջրելուց հետո, մարդիկ վերջիվերջո նրան ուշքի բերեցին և թեմերից բռնած, տարան մոտակա բժշկի մոտ: Ճանապարհի մեծ մասն Արամը քայլում եր դեռ ինքնիրեն չեկած, անդա: Քիչ հետո սակայն, նա գլուխը հոգնած կերպով բարձրացրեց, նայեց իրեն ողնող մարդկանց և փորձեց թեմերն աղատել,

— Յես... ինքս... կղնամ... Շնորհակալություն...

— Դու վոտքի վրա կանգնել չես կարող, ընկեր, — ընդիմացավ մեկը: — Դու հարբածի նման որորվում ես: Քեզ բաց թողնել չի կարելի — կնկնես...

— Փող հափշտակեցին, — հարցրեց մյուսը:

Բայց Արամը նորից գլուխը խոնարհեց և համարյա կախ ընկալ նրանց ձեռքերից: Մարդիկ քայլերն արադացրին:

— Պետք ե միլիցիոներ կանչել վոր նրանց հետեւն, — խորհուրդ տվեց մեկը:

— Ի՞նչպես հետեւն, ուր գտնեն: Քաղաքում հազար խուժան կա: Վերոնք են նրանք... սպասիր: Ահա: Սա բժշկի տուն ե...

Մուտքի գրան վերելում վառվող ելեկտրական փոքրիկ լույսի տակ նրանք կարգացին բժշկի անվանատախտակը և դանդառըցին: Ինչ վոր հեռու սենյակներում, խուլ կերպով հնչեց այդ դանդառը և ապա նորից ամեն ինչ լուս դարձավ: Մինչ այդ Արամը նորից սթափվեց:

— Այս հւր ենք, ընկերներ, — հարցրեց նա, կարծես քնած վիճակում:

— Սա բժշկի տուն ե:

— Շնորհակալություն... իսկ... իսկ շատ ժամանակ և անցել...

— Ժամի գլշերվա մեկն ե:

Ներսում լսվեց դրան ձայն, ապա տնային հողաթափների չմիշրմփոց տոմետի վրա: Միջանցքի խավարից հայտնվեց մի քանութամյա կին, շուր տվեց ելեկտրականության կոճակը, միջանցքը լուսավորեց և մոտեցավ դռանը:

— Ո՞վ ե, — հարցրեց նա, միենույն ժամանակ բաց անելով:

— Հիվանդ ե: Այսինքն՝ վիրավոր: Խուժանները ծեծեցին...

Կինը նայեց Արամի փոշոտ, արյունոտ, կապտած, անձանաչելի դարձած դեմքին, պատառութած ու կեղտոտված հագուստին և սարսափեց.

— Ներս բերեք, շուտ, — կարդադրեց նա:

Արամը յերկրորդ անգամ սթափվեց և իրենից հեռացրեց մարդկանց ձեռքերը:

— Շատ և շատ... շնորհակալություն... ընկերներ... դուք կարող եք դնալ... Յես մոտիկ եմ ապրում... Այստեղից մենակ կդնամ...

Մարդիկ ուղում ելին հակաճառել, բայց հետո անդրադարձան, վոր իբոք, իբենք այլևս վոչ մի վործ չունեն և բարի գլշեր մաղթեցին: Սակայն նրանց խոսքերից պարզվեց, վոր նախքան տուն դնալը, նրանք ուղում ելին դնալ միլիցիատուն և դեպքի մասին հայտնել:

— Բժիշկն արթնացել ե... — հարցրեց Արամը, միջանցքով դանդաղ կերպով քայլելիս:

— Յես եմ բժիշկը, — հայտնեց կինը: — Յես այս բռպելիս ամեն ինչ կարգի կրերեմ: Մի վախենա: առանձնապես վոչինչ չկա: Խնդրեմ, — մտիր:

Արամը մտավ դեղի հոտով հագեցած և մաքրություն բուրսղ մի սենյակ: Յերբ բժշկուհին լույսը վառեց, առաջին հերթին նրա աչքին ընկան փայլուն նիկելած գործիքներ և ձյան պես սպիտակ ծածկոցներ:

— Նստիր:

Յեվ կինն անմիջապես գործի անցավ: Բամբակի մի կտոր թաթախեց ինչ վոր հեղուկի մեջ, նրանով որքեց Արամի դեմքի արյունը, ապա ունելիսը բռնեց մի այլ կտոր բամբակ, նորից

թաթախեց և մայրական հոգատաբությամբ մոտեցընց բռն պատովածքներից մեկին, մաքրեց։ Հետո մաքրեց յերկրորդը, յերրորդը... Ինչքան պատովածքներ ու քերվածքներ կային, ինչքան ուռուցքներ...

Հանկարծ կինը նկատեց, վոր Արամի զլուխն արտակարգ կերպով խսնարհվում և առաջ։ Նա իսկույն վերցրեց մի սրբակ, բացեց, մոտեցրեց նրա քթին։ Արամն անմիջապես սթափրվեց և ժպտաց։ Դեղը նրան զբաստացրեց։ Սակայն այն կինը, վորին նա տեսավ իր աչքերի առաջ, նրան զգաստացրեց ավել շատ։

— Սիրուշ... — բացականչեց նա և ամուր բռնեց նրա ձեռքից։

— Սպասիր, — մատը դեպի բերանը տարավ կինը, — սա Ութուռիննը չեմ...

Ճանաչելով Արամին, նա գրկեց նրան և ապա մի քիչ յետ գնալով, նորից նայեց։

— Այս ի՞նչ ե դարձել Ութուռինն։ Մեծացել ես, փոխվել Յեթե վերքերը և ուռուցքները չլինեցին եր, դարձյալ չեյի ճաշնաշի քեզ։ Խսկ այս ի՞նչ ե պատահել, սիրելիս...

— Վոչինչ... — ժպտաց Արամը. — խուժանները ծեծեցին... Յերեկի փող ելին փնտրում... Այս քեզ անակնկալ... Ո՞վ կսպասեր քեզ հանդիպել այստեղ... Յես կարծում եյի, թե դու յել ընկար կազաչի Պոստից ինձ համար անհետ կորածների ցուցակների մեջ... Պատմիր, Սիրուշ... Այս ի՞նչպես...

— Խսկ մի՞թե դու պատմություն լսելու վիճակի մեջ ես, — սթափեց քժշկուհին. — ապա, հանիր զգեստներդ։ Մարմնիդ վրա յել ըստ յերեսութին քիչ ֆնավածքներ չկան։ Այս ի՞նչ դժբախտ պատհար ե։ Յեվ, ասում ես՝ խուժանները։

— Այս, խուժանները։ Մեծ մասամբ մեծահասակ, — ասաց նա, հանվելով. — մեկի դեմքը ճանաչեցի և հիմարությամբ ասացի։ Ուզում եր սպանել Յեվ կսպանել եր, յեթե...

Այստեղ նա մտածեց և չկարողացավ հիշել, թե ինչն եր իրեն պատողը...

— Վոտքի հարվածի տեղեր սրուքներիդ վրա, — զլուխը ցավակաբար սրուելով ասաց Սիրուշ. — Բայց լավ ե, վոր արնահոս վստաքեր չեն, այլ միայն ուռուցքներ...

Նա դեղեր դրեց Արամի թե մարմնի և թե յերեսի վրա, բինտերով կապկապեց և գնաց լվացրանի մոտ։

— Հազնվիր, Խս ցավ չես զգում։

— Մինչև հիմի վոչինչ չեյի զբում, խսկ հիմի արդեն սկսում ե ցավել, — ասաց Արամը։

Յեվ հանկարծ դեմքը ծամածուելով, բղավեց.

— Ո՞յ...

Սիրուշը, վոր ձեռքերն եր չորացնում, արագ հասավ նրա մոտ։

— Ի՞նչ պատահեց, Ութուռինն, — հարցը նա հանգստացնող ձայնով։

— Վոչինչ, — անքալով ժպտաց նա։

Յեվ ապա ձեռքը դնելով մերթ մի վիրակապի վրա, մերթ մյուս, սկսեց ցավագին կերպով շրթունքը կծել։

Հարեւան սենյակում շրջոց լսվեց։ Յերեկի Արամի բղավոցից մեկն արթնացել եր. Արամն ու Սիրուշը միաժամանակ լսեցին շրջոցը, ապա Արամն առաջարկեց։

— Թեև ուշ ե և մերոնք կանհանգստանան, բայց մինչև առավոտ համբերությունս չի տանի։ Պատմիր քո մասին, Սիրուշ...

Սիրուշը ծիծաղեց, ուղեց սկսել, բայց այդ բողեյին դուռը բացվեց և ներս մտավ խուժան Վաչիկի քույր Աչիկը։

Արամը վեր ցատկեց տեղից և քաթանի պես գունատված, յետյետ գնաց։ Սիրուշը վախենալով, թե Արամը վերքերից իրեն հանկարծ վատ զդաց, նետվեց դեպի նա։

— Ո՞վ ե, ով ե, — հարցը Արամն ահից գողալով և ցույց տալով Աչիկին, վոր կիսամերկ, զարմացած կանքնել եր և մեկ Սիրուշին եր նայում, մեկ Արամին։

— Ի՞նչ պատահեց քեզ, — տազնապից գողալով, հարցը Սիրուշ նրան։

— Սպասիր... Ո՞վ ե սա, Սիրուշ...

— Աղջիկս ե, — ծիծաղեց կինը — ինչի՞ յես վախենում։

— Ուրեմն սա... Աչիկը չեմ...

— Յես եմ, սկառւտ, — ծիծաղեց Աչիկը և վազ տվեց դեպի նա։ — Բարեկ քեզ։

Արամն արագ դրկեց նրան և սկսեց խելագարի նման համբուրել։

— Աչիկ ջան... Քույրիկ ջան... Ուրեմն դու չես մեռել... Ուրեմն դու կենդանի՞ յես... Աչիկ ջան...։

Սիրուշը բռնկվեց մի անզուսպ, բարձր քբքիջով։ Նրա աչքերից արցունքներ գլորվեցին։ Նա մոտեցավ, նույնակես գրկեց Աչիկին, բայց ծիծաղեց չկարողացավ վոչինչ ասել։ Միայն մի

քիչ անց, նա վերջապես հանդստացավ և խռոնց, իհարկե դարձյալ մեջլնդմեջ ծիծաղելով ու հոհուալով.

— Յես ել ասում եմ ինչու վախեցավ... Դու մի ասի, կարծում ե, թե աչքին ե յերեռում... Աչիկը... իմ բալիկս... աչքին ե յերեռում...

— Դե լմի, — ամաչեց Արամը. — վերջ առւր, Սիրուշ. Ամեն մեկի հետ ել կարող ե պատահել: Որինակ, քիչ առաջ վոր ինձ նրբանցքում ուշքի բերեցին, կարծեցի, թե արդեն մեռել եմ:

— Քեզ ծեծել են, — հարցրեց Աչիկը:

— Այս, Աչիկ ջան, ծեծել են: Բայց սպասիր, յես բոլորովին վոչինչ չեմ հասկանում: Միթե դու կենդանի յես...

Յեվ նորից ու նորից սկսեց համբուրել նրան, գրկել, վախենալով, վոր յեթե բաց թողնի, նա կանճետանա, այլեվս չի լինի...

— Սիրուշ, իշնդրում եմ, շատ եմ իշնդրում, — դիմեց Արամը նրան. — պատմիր վերջապես, թե սա ի՞նչ բան ե: Այս Աչիկը...

Սիրուշը լրջացավ, աթոռը մոտ քաշեց Արամին և նախքան խռուելը, դիմեց աղջկան:

— Դուցե դու դնաս քնիս:

— Վաչ մի գեաքում, — բացականչեց Արամը և ավելի ամուր գրկեց յերեխային — ճիշտ չե, քունդ չի տանում, Աչիկ:

— Չի տանում, իհարկե, — ժպտաց Աչիկը: — Յետ չեմ գնա: Յես ուղում եմ սկառտի հետ խռուել...

Մինչ այդ, Սիրուշն արգեն փորիքում եր իր մեծ ու փոքր հուշերը և տիբել եր, համարյա մոայլել:

— Իմ պատմությունն, Աւթունինն, — սկսեց նա գանդապ, — դա մի սոսկալի պատմություն ե... Նույնիսկ մինչե հիմա, յես առանց փշաքաղվելու չեմ կարող վոչինչ հիշել...

Նա ծխախոտ վառեց և սկսեց վարժ կերպով ծխել: Հստ յերեւյթին ծխում եր վաղուցվանից:

— Ինչպես գիտես, յես Կազաչի Պոստի հիվանդանոցի քույրերից մեկն ելի, — շարունակեց նա: — Հատուկ կրթություն չեյի ստացել, և այն, ինչ վոր գիտեյի, սովորել ելի դործնականում: Մեր բժիշկն այն միաչքանին եր. մենք նրան հենց այլպես ել անվանում եյինք: Մենք բոլորս ատում եյինք նրան, նրանից զզվում, և զարմանում եմ, թե ի՞նչպես եր պատահում, վոր հենց մեր ձեռքով նրան տեղնուատեղը չեյինք սպանում... Յես հենց սկզբի որերից տեսա, վոր նա ավելի շուտ դահիճ ե, քան բժիշկ...

Առաջինը՝ նա ի՛ մասնագիտությունից շատ քիչ բան եր հասկանում, սակայն մեծամիտ եր և ինքնասեր: Յեթե առողջացնող դեղի փոխարեն չգիտությամբ կամ սխալմամբ նույնիսկ սպանող դեղ զբեր, դարձյալ կանոներ, վոր այդ ե հարկավոր: Մանավանդ, յեթե մի ուրիշը մատնանշեր նրա սխալը... Յերկրորդ, նա չեր սիրում վոչ իր հիվանդներին, վոչ ընդհանրապես մարդկանց և կաբծես բոլորովին զրկված եր սրտից ու խղճից: Նա վոչ միայն անտարբեր եր դեպի հիվանդների վիճակը, այլև տեսնելով վոր նրանցից մեկնումնելին յերկար բժշկություն եր հարկավոր, դիտմամբ սպանում եր: Յեվ ահա այդ հրեշը, Աւթունինն, մի քանի տարի շարունակ հանդիսանում եր հազարավոր վորբուհիների գլխավոր բժիշկը... Միաչքանի ուրուրի նման թագնվել եր մեր ահմեղ ձագուկների մեջ և աննկատելի կերպով վոչնչացնում եր նրանց...

Դաժան հիշողություններից նա ծանր հօգոց հանեց և ապա շարունակեց:

— Սկզբում ինձ թվում եր, թե սխալվում ելի, բայց հետո համոզվեցի: Սակայն այս անդամ ել՝ ինձ վոչ վոք բանի տեղ չեր դնում, վորովհետեւ միաչքանին Կազաչի Պոստում մեծ հեղինակություն ուներ: Հիշում եմ, ինչպես նա բոլորովին իզուր նակություն ուներ: Հիշում եմ, ինչպես նա բոլորովին իզուր տեղը վիրահատության յենթարկեց Աղունիկ Ոհանյանին, վորի ծնողները յեկան նրան տեսնելու ճիշտ այն ճամանակ, յերբ նա ներսում արդեն մեռնում եր...

— Հիշում եմ... — մրմնջաց Արամը. — դա իմ սկառուտ ընդունվելու հենց առաջին որն եր:

— Այնուհետև, — շարունակեց Սիրուշը, — նա անբուժելի խելագար համարեց Վարդուհեց Պարզուհուն, վորը, ինչպես լսեցի հոգեկան հիվանդանոցի վլխավոր բժշկից, այս մետ որերս բուրովին առողջացել ե...

— Այս, — հաստատեց Արամը. — և նա հիմա իմ մոտիկ ընկերուհիներիցս մեկն ե:

— Յեվ ահա, — շարունակեց Սիրուշը, — յերբ ոլիմպիադայի ժամանակ սկավառակը դիպավ Աչիկի փորին և նրան կիսամեռ վիճակում բերեցին հիվանդանոց, միաչքանին անփույթ և անտարբեր կերպով նայելուց հետո, կարգադրեց:

— Թաղել...

— Պարոն բժիշկ, — դիմեցի յես նրան, — դուցե կարողանաք փրկել...

— Թաղել, — կրկնեց նա իրեն հատուկ համառությամբ և գնաց...

Յեվ ահա, յես վարոշեցի առաջին անգամ չենթարկվել միաշքանուն։ Անմիջապես արյուն բաց թողեցի Աչիկի թեկից, աշխատելով փրկել նարն։ Յեվ քիչ մնաց լեկապարզեցի, մեռնելի ուրախությունից, յերբ լսվեց նրա շնչառությունը, և սրտի բարախումը դարձավ նկատելի։ Յեվ իսկույն տարա նրան իմ սենյակս և վորոշեցի շարունակել բժշկությունը՝ հրեշից ծածուկ...

Աչիկն ու Սիրուշը նայեցին իրար. Աչիկը ժպտաց և Սիրուշը խանդաղատանքով համրուրեց նրա սե, լենոք աչքերը։

— Դեռ նույնիսկ այդ դեպքից հետո, — նորից շարունակեց նա, — ինձ թվում եր, թե միաչքանու սխալվելը և Աչիկի առողջանալը պատահական բան եր։ Բայց յերբ նա կարդադրեց թունավորել ծանր այրվածքներ ստացած այն վորբին և քու փոքր յեղորդ, վորի կոկորդն ուռել եր, յես վորոշեցի նորից չենթարկվել միաչքանուն։ Սակայն յես ինձ վրա վստահ չեյի, յես թունավորելուց աղատեցի վոչ թե յերկուսին, այլ միայն քու յեղորդ։ Միաչքանին փրփրեց, զայրացավ, բայց յես մի քանի որ սկսեցի նրան սիրաշահել, հետը քաղցր վարվել և նա կակղեց, իսկ յերբ յեղրայրդ բոլորովին առողջացավ, յես վերջնականապես համոզվեցի, վոր իսկապես, միաչքանին վոչ թե բժիշկ ե, այլ դահիճ... Մտածեցի, վոր սիրաշահելով չի կարելի նրա բոլոր հանցանքների առաջն առնել և հարկավոր ե նրան ձերբակալել տալ... Այդպես ել արեցի։ Նրան ընդմիշտ տարան, իսկ յես, դրանից մի քանի որ հետո տեղափոխվեցի քաղաք և կամաց կամաց դարձաբժշկումին...

Նա ծիծաղեց և նորից գրկեց Աչիկին։

— Իսկ Աչիկին գարձրի իմ աղջիկս և բերեցի ինձ հետ։

Նա վերջացրեց, Ութսունինն շունչ քաշեց և թեթևացած ժպտաց։

— Ուրեմն այն ժամանակ, յերբ յես յեկա քեզ մոտ և դու պատմեցիր յեղորս թունավորելու մասին, Աչիկն արդեն քեզ մնա եր... Յերանի իմանայի... Ինչքան եմ լաց յեղել ոլիմպիադայից հետո, ինչքան եմ հիշել ու տերել մինչև այսոր...

Նա նորից ու նորից գրկեց Աչիկին։

— Իսկ հիմի, Աչիկ, յերևի կընես, — ժպտալով դիմեց Սիրուշը նրան։

— Լավ, — ժպտաց Աչիկը մտածկու կերպով և ապա զիմելով Արամին, գողացող ձայնով հարցրեց.

— Սկառաւ, չգիտե՞ս վորտեղ և Վաչիկը...

Վրամը շփոթված վեր կացավ, կանոննեց։

— Յես վոր առողջացա ու մենք քաղաք յեկանք, — շարունակեց Աչիկը, — յես ամբողջ ժամանակ փնտրում եյի յեղորս... Հարցնում եյի լսուժաններին, բայց վոչ մեկը նրա տեղը չգիտեր... իսկ հետո, հույսս կտրեցի...

Նա իր փոքրիկ թաթիկով մազերը յետ տարավ աչքերի վրայից, մեծավարի հառաջնեց։

— Շատ փնտրեցինք, — հաստատեց Սիրուշը, — բայց չգտանք։ Հիմա յել, յերբ յես փողոցում հանդիպում եմ վորեե խուժանի, շարունակ հարցնում եմ Վաչիկի մասին։ Բայց նրանք, ինչպես յերեւում ե, վոչ միայն չճանաչելու կամ չգիտենալու դեպքում են յեցասական պատասխան տալիս, այլև ճանաչելու, տեղն իմանալու դեպքում։

— Այս, նրանք չափաղանց զաղտնապահ են, — մտածկու կերպով համաձայնվեց Արամը։

— Լսիր, սկառաւ, — թախիծը զսպելով չարաճի կերպով ժպտաց Աչիկը. — Իիշնում ես, զու Կաղաչի Պոստում ինձ խոսք տվեցիր յեղորս գտնել... Դի գտիր։

Արամը հիշեց քիչ առաջ պատահած դեպքը և նրա սիրտը լցվեց ցավով։ Ինչքան ե վչացել Վաչիկը, վոր համաձայնվել ե իր քրոջ մասին վորեե բան իմանալու պատրվակով խարել իրեն և հեշտացնել ձեծոյների գործը... Բայց միթե դա պատրվակ եր նրա կողմից և նրան բոլորովին ել չեր հետաքրքրում իր քրոջ վիճակը։ Իսկ զուցեց նա իսկապես ուղում եր վորեե բան իմանալ բայց խուժանները ժամանակից շուտ հարձակվեցին... Ո՛, այս, իհարկե, այդպես ե։ Զե՞ վոր Վաչիկն իր քրոջ մասին տեղեկանալու համար մի անգամ նույնիսկ պատկումատուն եր գնացել, ուր չեր կարող զացել գտնել իրեն։ Ի հարկե, Աչիկի նման, Վաչիկը նույնպես տանջվում ե և շարունակ փնտրում...

Հանկարծ Արամն ուրախացավ, վոր մինչե հիմա նա չեր կարողացել հանդիպել Վաչիկին և հայտնել նրան քրոջ մասին։ Զե՞ վոր ինքը կարծում եր, թե Աչիկը մեռել ե և նրան հենց այդ ել պետք ե ասեր։ Բայց այժմ, նա կդնա ուրախացնելու փոքրիկ անաղաստանին։

— Յես կդանեմ յեղբորդ, — լոսոք տվեց Արամը և իր փռշոտագած ու արյունոտված դլթարկը դրեց: — Հա, Աչիկ ջան, շուտշուտ հանդիպիր ինձ:

Դրսում արդեն բացվում եր առավտալ:

27

## ՈՒՐԵ ՎԱԶԻԿԸ

Արամին ծեծելու լուրը հենց վաղ առավտակ տարածվեց քաշաքում: Գասպարը, վորը անհամբելությամբ սպասում եր այդ բանին, լուրը լսեց շուկայում, յերկու խանութպանների խսակցությունից: Լեռնը, վոր քայլում եր նրա հետ կողք-կողքի, վոչ քաջարեց Գասպարին, վոչ հանդիմանեց: Նա լուրն ընդունեց ի գիտություն, քանի վոր դա իր հարստանալու ցանկության վրա վոչնչով չեր կարող անդրադառնալ:

Ընկերները քաղցր զբուցելով մոտեցան Արտուտյանի խանութին, բարեկցին նրան և իրենց տան նման մտան ներս...

— Ի՞նչ եք ուզում, — հարցըց Արտուտյանը: — Ասացեք ինձ, յես ինքս կտամ...

Կարմիր սկառուտները ծիծաղեցին:

— Յեվ գներն եւ ինքդ կհայտնես:

— Այո, գներն եւ ինքս կհայտնեմ, վողերն եւ ինքս կստանամ- Յես վորոշել եմ այսորվանից եւ ձեզ վոչ մի բան ձրի բաց չժող: Նել, Յես արդեն սնանկանում եմ:

— Իսկ յես, — ընդհատեց Լեռնը, — վորոշել եմ այսորվանից քեզ հանդիպել վոչ թե կիրակեց-կիրակի, այլ ամեն որ, Գասպարի հետ միասին:

— Աշխատանքից դուրս ե յեկեւ — բացատրեց Գասպարը, կարծես ցավակցություն առաջացնելու մտադրությամբ: — Աշխատանքը մեծ վաստակ չի տալիս, իսկ նա ուզում ե շուտով հարստանալ...

— Իմ գործս չե: Տվեք եստեղ, եղ ի՞նչ եք ջոկում: Տվեք եստեղ՝ ասում եմ ձեղ:

— Ապա, լոիր, — սառը կարգադրեց Լեռնը, — գու վորբերի հասանելիքը կոռպատելով և աշխատավորությունը շահագործելով ես հարստացել: Յես, վորպես աշխատավորության ներկայացուցիչ, իրավունք ունեմ ուտելու և այս քաղցր կաթը, և այս... Սա ի՞նչ բան ե, Գասպար: Սապէն... Զեղավ:

Արտուտյանը փլվեց աթոսի վրա և լուս ջղայնությամբ սկսեց իր մաղերը պոկել:

— Ապա, ընդհատիր, — նորից սառը կարգադրեց Լեռնը. — դու իրավունք չունես աշխատավորության մազերը պոկել: Յես համոզված եմ, վոր քու զլիսիդ մազերն ել են դողացված...

— Ի՞նչո՞ւ յեք թալանում: — բողոքեց Արտուտյանը: — Զի՞ք ամաչում: Ինձ ել և ապրել հարկավոր, ինձ ել և փող հարկավոր...

— Հենց հետաքրքիրն ել են ե, վոր մենք փող չունենք, — պատասխանեց Լեռնը:

— Ի՞նչո՞ւ չունեք: Ընկերներդ աշխատում են, ստանում: Բացի ոռօնիկից, յերեկ ճնուց պահած շատ փող կունենաք: Միք խարի, յես լավ գիտեմ, վոր որինակ՝ Սիոնը, մի քանի հարյուր դոլ- լար ունի...

— Միայն նա ունի, — հայտնեց Գասպարը:

— Դե թող նա յել վճարի, — առաջարկեց Արտուտյանը:

— Վճարի՞: Մեր փոխարեն: Եղ եր պակաս, — ժպտաց Լեռնը: — Փառք աստծու, վճարելու առանձին կարիք չկա: — Ապա դառնա- լով գեղի Գասպարը, շնչաց:

— Իսկապես, յես մոռացել եյի Սիոնի գոլլարների մասին: Դու քոնը վազուց ես ծախսել, իսկ նա դեռ վոչ: Ի՞նչո՞ւ չի ծախսում...

— Իր գործն ե, — կարճ պատասխանեց Գասպարը:

Յերեաց Փասը: Տեսնելով նրան, Գասպարն անմիջապես խա- նութից գուրս յեկավ և քաշվեց մի սակավամարդ անկյուն: Փասը մոտեցավ:

— Բարեւ, Փասպար:

— Պատմիր:

— Արամը վեցկուականուն ճանաչեց: Վեցկուականին քաղաքից փախավ: Չոփուոը նրա փոփարեն ինձ նշանակեց իրեն ոգնական և յերկրորդ խուժանապետ:

— Թու մասին չեմ հարցնում: Դու գործի մասին ասա:

— Գործը լավ անցավ: Ուղում եյինք սպանել, բայց ժամանակ չկար: Չոփուոը կարգադրել ե, վոր վաչիկը մի քանի որ շուկա մահաց: Նրան իսկույն կրոնեն և նրա միջոցով բոլորիս մասին կի- մանան...

— Իսկ մյուսներդ...

— Վոչ մեկիս չճանաչեց: Բայց մենք ել, իհարկե, զգույշ ենք մահալու: Ո՞վ գիտե...

— Ուրիշ...

— Ես գիշեր մենք վոր ծեծից վերադարձանք, ամբողջ խուժանանոցն արթնացը ինք, հրամայեցինք ցըվել՝ կամուրջների տակքնելու: Ո՞վ գիտե, կարող եմին շրջապատել, բռնել բոլորիս: Մի քանի անգամ եղակն բան պատահել ե:

— Իմ մասին ուրիշ մարդ ես չգիտե՞ բացի ձեր յերեքիցդ:

— Վոչ վոք չգիտե:

— Շատ լավ, դուա:

Փասի գնալուց հետո, Մորուքը, վոր կանգնել եր իր պլոկված էանութիւ դրանը, կանչեց Գասպարին.

— Տեսմբ ինչ դժբախտություն յեկավ գլխիս, Գասպար ջան...

— Լսել եմ, Մորուք... Ամեն ինչ տարել են, համ:

— Ամեն ինչ: Դատարկ տախտակներն են մնացել: Յեզ զարմանալին են ե, վոր իրենք բանալի յեն ունեցել, քաղաքավարի կերպով դուռս բացել են...

Գասպարը ցավակցաբար գլուխն որորեց:

— Իսկ դու ուրիշ բանալի ունեցիր, վոր կորցրած լինես, — Հարցրեց համ: — Գուցե հենց քու բանալիովդ են բաց արել:

Մորուքը սարսափած վազեց ներս և նայեց պատին: Վոչ, իր ավելորդ բանալին կապված եր այնտեղ:

— Համենայն զեպս՝ պահիր, — խորհուրդ տվեց Գասպարը. — գուցե հենց այդ բանալիով ել բացել են, և հետո նորից իր տեղը կախել...

— Վոչինչ, — հառաչեց Մորուքը. — յես հիմի դրա կողպեքից բացի, ուրիշ չորս կողպեք ել եմ գործածում:

Գասպարը նայեց իրար մոտ շարված կողպեքներին և ծիծաղը չկարողացավ պահել: Մանավանդ վոր, այդ կողպեքներն այժմ պետք ե պահպանեյին ընդամենը մի քանի կտոր սապոն և մի յերկու պարկ աղ:

— Լսիր, — դիմեց նա Մորուքին, նրա ուսին խփելով. — այդ մանր-մունը բաներով խանութ դնել չել լինի: Յես ուղում եմ քեզ ոգնել: Ճիշտն ասած, հնուց մնացած մի քիչ կիսամաշ հաղուստեղն ունեմ... Կարող եմ վաճառել քեզ:

— Ճիշտ ես ասում, — ուրախացավ Մորուքը. — գու զրանով կիրկես ինձ: Իմ բոլոր հաճախորդներս արդեն դեպի այդ սրիկա Արտուրյանի խանութն են շուր յեկել...

— Վոչինչ — հանգստացրեց Գասպարը. — մի որ ել նրա խանութը կիրոպատեն:

Լեռնը, ուտելիքներով բարձված, դուրս յեկավ Արտուրյանի խանութից և նրանք դնացին: Անցնելով ձկնավաճառի խանութի

մոտով, նրանք բարևեցին: Ձկնավաճառը, վոր հավիտենական կովի մեջ եր իր կնոջ հետ, շուր տվեց իր բարկացած յերեսը, ժպտալով պատասխանեց բարեկին, ապա նորից շարունակեց կրիվը: Սաթիկը, վոր նստած եր արցունքու աչքերով, վոչինչ չեր պատասխանում ամուսնուն: Միայն մի անգամ, նա հայացքը բարձրացրեց և ուղում եր ինչ վոր բան ասել, բայց հանկարծ նայեց դեպի դուրս և ասելիքը մոռացավ: Դիմից գալիս եր Արամը՝ գլուխն ու մի թեր թինտերով փաթաթված: Սաթիկը նրան ճանաչեց հենց այդ բինտերից, վորովհետեւ, ինչպես վողջ շուկային, այնպես ել նրան, հայտնի յեր պատկոմապետի ոգնականի ծեծվելու պատմությունը:

Արամի հետ գալիս յեխն՝ կոլվար Աշոտը, Հրաչը, Ֆիզկուլտ բաժնի զեկավար Գուրգենը:

Սաթիկը վախով նայեց ամուսնուն: Յեզ վորպեսզի Արամի ուշադրությունը գրավի դեպի իր կողմը, նա սկսեց չխչխացնել, հետո մի քանի անգամ ամուսնու հետ խոսեց բարձր ճայնով: Սակայն Արամն ու իր ընկերներն անցան առանց նրան նկատելու:

— Ո՞ւր ե, Արամ, ցույց տուր եղ սրիկային, — դիմեց Աշոտը նրան, — յես նրան տեղնուտեղը կիշրեմ....

— Ֆիզկուլտրամնի զեկավարը Գուրգենն ե, Աշոտ, — նկատեց Հրաչը, — Փիշելու խնդրում դու նրան պետք ե յենթարկվես:

— Յես քաղմիլցիայի հետ մի կետում համաձայն չեմ, — շարունակեց Աշոտը բարկացած. — մեկն իրավունք ունի իր ուղածի չափ դնաստելու, իսկ մյուսն իրավունք չունի հենց եղ մեղավորին մի հատ հասցնելու: Իսկ համբերություն վիրտեղից:

— Իսկ գուցե մի ուրիշ կետում ել մեր դատական որենսդրքի հետ համաձայն չես, — յենթարկեց Հրաչը. — որինակ, ենտեղ առվում ե, վոր մենք վրեժ չենք առնում, այլ պատժում ենք:

— Դու ինձ չհասկացար, — փոշմանեց Աշոտը. — յես լոռ չեմ ասում, թե իսկապես պետք ե մի հատ հասցնել, այլ ասում եմ համբերություն չկա՝ չհասցնելու:

— Եղ ուրիշ բան, — համաձայնվեց Հրաչը ժպտալով:

— Խուժան, — կանչեց Գուրգենը:

Մի անգամատան մոտեցավ:

— Նկարագրիր, — դիմեց Հրաչն Արամին. — սկսիր:

Ապա դարձավ դեպի խուժանը.

— Հիմի ես քեռին կնկարագրի ձեր զեկավարներից մեկին, իսկ դու ասա, թե վիրտեղ ե նա հիմի:

— Նկարագրելու վոչինչ չկա, — հայտնեց Արամը. — յես այսոք քաղմիլիցիայում տեսա նրա նկարը: Նա բազմաթիվ անդամ արձանագրվել ե այստեղ: Անունը Վեցկրականի յե...

— Վեցկրականի՞, — բացականչեց խուժանը:

— Այո: Իսկ ի՞նչ կա:

— Վոչինչ... Յես եղակա մարդու չեմ ճանաչում...

— Իսկ Վաշիկը վորտեղ ե, — հարցրեց Արամն իր հերթին:

— Չեմ ճանաչում:

— Սուտ ես ասում:

— Չեմ ճանաչում, ասոված վկա:

Նրանք դիմեցին մի այլ խուժանի, բայց դարձյալ անհաջող: Անհաջող յեղակ նաև յերբորդ փորձը, չորորդը, հինգերորդը...

— Սա ի՞նչ բան ե, — զարմացավ Աշոտը. — վոչ մեկից վոչինչ իմանալ չի կարելի, — Հստ յերեսույթին, նրանք սկզբից ամեն ինչի մասին պայմանավորվել են:

— Նշանակում ե՝ նրանք կազմակերպություն ունեն, — յենթադրեց Գուրգենը:

Արամը կանչեց մի այլ խուժանի:

— Իսիր, — ասաց նա. — յես տեսնում եմ, վոր դուք չեք ուղում ինձ Վաշիկի տեղն ասել: Այն գեղքում, ինդըստ եմ նրան տեղեկացրեք, վոր յես նրա քրոջը դտել եմ...

— Ի՞նչ Վաշիկ, — չափաղանց միամիտ տոնով հարցրեց խուժանը:

— Գնա, — կարգագրեց Հրաչը. — գնա ե քիչ խոսիր: Դու ինձանից լավ զիտես, թե վոր Վաշիկը: Կասես, վոր Արամը պատկամական աղնիվ խոսք ե տալիս նրան, վոչ ուղղիչ-կրթական գաղոթ ուղարկել, վոչ մանկատուն:

Խուժանն առանց պատասխանելու, դնաց:

— Յես ուղղակի չեմ հասկանում, — բարկացավ Գուրգենը, — թե այդ ինչից ե, վոր բոլոր խուժաններն եղան վախենում են մանկատներից: Մաքուր հաղցնում են, կուշտ ուտեցնում, զվարճացնում, ուղած բոպեյին քաղաք են թողնում, իսկ նրանք ելի փախչում են... Անցյալ որը յես անապաստան մանուկների բարեկամների ընկերության ֆուրգոնի հետ շրջում եյի՝ խուժաններին հավաքելու: Յերեակայեցեք, այնպես եյին փախչում ֆուրգոնից, ինչպես մահվանից: Մի քանի բռպեյում ամբողջ քաղաքի խուժանները գետնի տակն անցան և մենք վերադարձանք միանդամայն դատարկ ֆուրգոնով:

— Յես նույնպես չեմ հասկանում դրա պատճառը, — խոստավանեց Արամը:

— Իսկ յես հասկանում եմ, — հայտնեց Հրաչը:

— Հասկանո՞ւմ ես: Ի՞նչն ե:

Բայց նախքան նրա պատասխանելը, պատկոմներին մոտեցավ Փասը:

— Բարե, ընկեր պատկոմներ:

— Բարե:

— Ո՞ւմ եք փնտրում:

— Վեցկրականուն:

— Փախել ե:

— Փախել ե...

— Այո:

— Իսկ մյուսն էրը:

— Ի՞նչ մյուսներ...

— Ինձ ծեծողները:

— Այս, ուրեմն քեզ են ծեծել... Բոլորն ել փախել են:

— Բոլորը:

— Այո:

— Վաշիկն ել, — հարցրեց Արմար:

— Ամենից առաջ հենց Վաշիկը փախավ:

— Ինչու ամենից առաջ:

— Վորովինեան ծեծվող նրան ճանաչել եր:

Փասը գնաց: Մի քանի քայլ անելուց հետո, նա յետ նայեց և խորհուրդ տվեց:

— Ենպես վոր, դուք տեղը միք փնտրի...

— Իսիր, մի բան ել ենք հարցնելու, — կանչեց Աշոտը:

— Ասացեք:

— Խուժանները ինչու մանկատնից խուսափում են:

— Յես ի՞նչ զիտես: Ամեն մեկն իր պատճառն ունի:

— Որինակ, քու պատճառդ վերն ե, — հետաքրքրվեց Գուրգենը:

— Իմ պատճառս խորն ե:

— Վարն ե:

— Փորն ե:

Բոլորը միանգամից ծիծաղեցին ստացված վոտանավորի վրա:

— Ի՞նչպես թե փորն ե, — հարցրեց Արամը:

— Յես շատակեր եմ, մանկատունն ինձ չի կշտացնի:

Յեվ հեռացավ:

— Սուտ ե ասում, — վստահացրեց Աշոտը:  
 — Դե հիմի թող Հրաչն իր յենթադրությունն ասի, — առաջարկեց Գուրգենը:  
 — Յես կարծում եմ, — ասաց Հրաչը, — վոր այդ՝ նրանց կազմակերպությունն ե, վոր նրանց արգելում ե մանկատուն մտնել:  
 Բոլորը միանգամից կանդ առան:  
 — Կարող ե պատահել, — ասաց Աշոտը:  
 — Շատ հնարավոր ե, — համաձայնվեցին Գուրգենն ու Արամը:  
 Սաթիկն ուշադրություն գրավելու համար մի քանի անգամ  
 և թխթիկացրեց և հուսահատված դադարեց:  
 Գատկոնները գնացին:  
 — Ուրեմն յես եղան ել կասեմ իմ խեղճ Աչիկին, — վճռեց  
 Արամը: — Կասեմ, վոր նրան շատ վատ են դաստիարակել, նա  
 մասնակցել ե ինձ ծեծողների խմբին և նրանց հետ փախել... կմխի-  
 թարեմ փոքրիկ քույրիկիս և նորից խոսք կտամ Վաչիկին դանել,  
 իսկ յերբ գտա, այլև ձեռքից բաց չեմ թողնի: Կտանեմ ուղ-  
 ղակի քըզջ մոտ, իսկ հետո մանկատուն և դպրոց... Այս: Յեթէ  
 միայն, նորից դանեմ...

Գարեգինն ուղեց մոտենալ նրան, վոր առաջարկել, բայց նա-  
 խապես գիտենալով, վոր նա իրենից վոչ մի կոպեկ չի վերցնի,  
 փոխեց մտադրությունը: Բայց նրա փոխարեն, Գասպարին մո-  
 տեցավ Մամիկոնը: Նա գրպանից հանեց յերկու թղթադրամ և փոր-  
 ձեց զոռով տալ նրան ու վեր կացնել:

— Գնա ճաշիր... Մենք բոլորս արդեն ճաշել ենք: Դու կարող  
 ես ինձ հետ տարածայնություններ ունենալ, բայց մենք դարձալ  
 ընկերներ ենք: Ամոթ ե...

Գասպարը չկարողացավ կոպիտ կերպով մերժել Մամիկոնին,  
 ինչես այդ արել եր մի քանի անգամ Գարեգինի հետ, բայց և այն-  
 պես, ամենակտրուկ կերպով հրաժարվեց փողը վերցնելուց և իհար-  
 կե չվերցրեց: Այս անգամ արդեն, Մամիկոնն իր տոնը փոխեց.

— Դու պարտավոր ես այս փողը վերցնել, — ասաց նա սառը  
 և խիստ: — իսկ հետո, շուտով, պարտավոր ես զործի անցնել և  
 վերջ տալ քու պարաղիտային կյանքիդ ի հաշիվ Արտուրյանի:

— Արտուրյանն արդեն իմ հոգսից աղատված ե, — անտարբե-  
 րությամբ պատասխանեց Գասպարը:

— Աղատված ե, — նախապատրաստվեց ուրախանալու Մամի-  
 կոնը, — ուրեմն դու այլևս նրա մոտ չես գնա:

— Վոչ Հակառակ իմ կամքի՝ այլևս չեմ գնա, նա իր ունե-  
 ցածչունեցածն առել, ուրիշ քաղաք ե փախել ինձանից...

— Ուրեմն դու դրա համար ես տիպուր, — յեղբակացրեց Մա-  
 միկոնը, — բայց դա լավ ե: Զրկվելով այդ վերջին հույսից, դու  
 ստիպված կլինես ազնիվ լինել... Դե վերցրու և գնա ճաշիր... Յեթե  
 ուղում ես՝ այդ փողը փոխարինարար տված հաշվենք...

Գասպարը ձեռքը տարավ գրպանը, հանեց այնտեղից մի քանի  
 կապոց խոշոր թղթադրամներ, ցույց տվեց նրան և նորից գրպանը  
 դրեց:

— Իսկ վհրաեղից, — զարմացավ Մամիկոնը:

Սիոնն ու Ոհանը նույնպես ապշեցին:

— Մի վախենա, անազնիվ ճանապարհով չեմ ձեռք բերել, —  
 քմծիծաղ տվեց Գասպարը, — յես բավական քանակությամբ հին  
 հագուստեղեն ունեյի, վոր մի քանի որ առաջ վաճառեցի Մո-  
 րուքին...

— Հագուստեղեն... Իսկ ինչու մենք չգիտեյինք:

— Յես դրանք ուրիշի մոտ պահ եյի տվել:

Մամիկոնը ձայն չհանեց:

— Բա ել ինչու յես տիպուր. — հետաքրքրվեց Սիոնը:

Գասպարը լուռ մնաց:

— Յես ինքս կասեմ քեզ, Սիոն, — խոստացավ Մամիկոնը. —  
 Եպուր տեղը դու նրան մի հարցնի...

— Վերատեղից գիտես, — թերահավատորեն ծիծաղեց Գասպարը:

— Գիտեմ: Դու վախենում ես, վոր Վեցկրականուն կարող են  
 ձերբակալել և նա քեզ կմատնի...

Գասպարը ցատկեց տեղից, նստեց, ապա ինքնիրեն տիրապե-  
 տելով, նորից պառկեց:

Մի բողեք յերկուսն ել լոեցին, ապա հանկարծ խոսեց Մամի-  
 կոնը, ցավով, բարկությամբ, հիասթափությամբ:

— Ղեկավար... Թքել եմ քեզ նման ղեկավարի վրա: Դու Գա-  
 րեգինից ալելի մնասակար ես մեզ և գործի համար: Փօխանակ  
 լուրջ պայքար մղելու, մարդ ես ծեծել տալիս: Վաղորմելի... Յերբ  
 դու ինձ մեղադրում եյիր հուսահատվելու համար, կարծում եյի,  
 թե իմ կիսատ թողածս դու պիտի շարունակես: Հըմ... Լավ շա-  
 րունակեցիր: Թքել եմ շարունակածիդ վրա...

— Բայց պատահական բան չե, վոր դու մեր մեծ գործը մարդ  
 ծեծելու վողորմելի գործին հասցըիր, — ավելացրեց Մամիկոնն  
 արդարացնող տառով. — ով ել լիներ քո փոխարեն, կամ պիտի ինձ

Նման հուսահատվեր, կամ քեզ նման վարվեր, վորովհետև մեր դործն ընկել և փակուղու մեջ և այլս յելք չունի... Այդ դեպում իհարկե ավելի լավ և հուսահատվելը, ինքնիրեն վոչնչացնելը...

Տիրեց յերկարաժես լոռւթյուն։ Միայն գարեգինն եր, վոր մերթ-մերթ շուռ եր տալիս ձեռքում բռնած գրքի թերթերը և շրջոց հանում, թեեւ ակներևութերեն, նա չեր ընթերցում։

— Իսկ կեռնն ուր ե, — հարցրեց Ոհանը։

Նախքան Գասպարի վորեւ պատասխան տալը, լսվեց դուռն ուժեղ թակոցը և առանց պատասխանի սպասելու, այլայլված ներս ընկալ Մորուքը, մի շալվար ձեռքին։ Նա վաղ տվեց ուղիղ գեղի Գասպարը և շալվարը թափահարելով ուղիղ նրա քթի մոտ, գոռաց։

— Սրիկա, ավաղնկ, գնդ.. Թալանում ես խանութս և իմ սեփական ապրանքը նորից ինձ ես ծախսում...

Բոլորը քար կտրվեցին լուռ ապշառթյան մեջ։

— Խարդախ, փչացած, այլասեռված, — շարունակեց նա ավելի կտաղի, — իմ բանալիով կողպեքս բաց ես անում ու հետո խորհուրդ ես տալիս բանալիներս զգույշ պահել...

Մամիկոնը կասկարմիր կտրած և ատամներն իրար սեղմած, մոտեցավ Գասպարին, կոպիտ կերպով բռնեց նրա ոճիքից, ցնցեց և հրամայեց։

— Արդարացիր...

Սակայն Գասպարը ձայն չհանեց, նա միայն հանդարտ կերպով բռնեց Մամիկոնի ձեռքը և իրենից հեռացըեց։

— Արդարացիր, թե չե կսպանեմ, — ատամների արանքից շահ Մամիկոնը և կոանալով, իր բարձի տակից վերցրեց ատրճանակը։ Բայց անմիջապես վրա հասավ Գարեգինը և ատրճանակը խլելով, դրեց նրա գրպանը։ Մամիկոնի կատաղությունը տեսնելով, Մորուքը լոեց և միայն շարունակում եր շալվարը ձեռքում բռնած պահել։

— Արդարացիր, — այս անդամ արձագանքի նման, կրկնեց Մամիկոնը, — յես չեմ կարող հավատալ, վոր Կաղաչի Պոստի ամենալավագույն քսանինդ սկառաւտներից մեկն այսքան կեղտոտ կլինի...

Ապա զգալով, վոր ավելուդ ե իր առաջարկը և իդուր, նա մեծ կոպությամբ ձեռքը տարավ նրա գրպանը, հանեց այնտեղից բոլոր թղթաղրամները և տվեց Մորուքին։

— Գնա, Մորուք... Դու յել հալալ չես աշխատել վոչ այն հաշուստեղենը, վոչ այս փողերը, բայց գնա: Միայն մի բան եմ խնդրում։ — այս անսասունի մասին միլիցիային չհայտնես։ Նրա հետ միասին իդուր տեղը պիտի խայտառակվենք մենք բոլորս... Գնաս բարեւ...

Նա դուռն իր ձեռքով բաց արեց և յերբ Մորուքը դուրս յեկալ միջանցք, նորից շրիկալով ծածկեց։

Տիրեց ծանը, հոգտող լոռություն։ Յեվ Ոհանը, այդ անտանելի լոռությունը ցրելու համար, նորից հարցրեց։

— Իսկապես, մեր և կեռնը...

Գասպարը գլխով ցույց տվեց նրա մահակալի կողմը։ Բոլորը նայեցին։ Վոչ մի առանձին բան չկար, միայն թե, նրա բարձի վրա դրված եր մի փոքրիկ կտոր թուղթ։ Ոհանը մոտեցավ, վերցրեց։

— Սա ինչ բան ե... Ապա, լսեցեք տղաներ։ — Սիրելի հին ընկանալիք, և գու, Սիոն... Յերբ այս նամակը կարդաք, յես արդեն կերներ, և գու, Սիոն... Յերբ այս նամակը կարդաք, միայն թե, նրա բարձի շատ հեռու գնացած կլինեմ։ Ներեցեք, վար գնում եմ առանց մնաք շատ բարով։ Բացի դրանից, ներեցեք նաև ընդհանրապես։ Յես գնում եմ իմ բախտի հետ միասին։ Զեր՝ կեռն...»

— Չլինի ինքնասպանություն և գործել — վախեցած յենթադրեց Ոհանը։

— Նա շատ ուրախ եր, — հակաճառեց Գասպարը։ — Թուղթը գրեց իմ ներկայությամբ և բանավոր ինդրեց, վոր ձեղանից վոչ մեկն իրեն չհետեւի, քանի վոր միենույն ե, չի գտնելու։

Գասպարը ամրագովին դրավեց բոլորի ուշադրությունը։ Գասպարը տեսնելով, վոր այդ մասին խոսելով կարող ե փոխել տալ իրեն վերաբերող հարցը, շարունակեց։

— Ինչու պիտի ինքնասպանություն գործեր, Ընդհակառակը, նա ճանապարհի պաշար եր գնել և վերջին բոպեյին ինձ խնդրեց, վոր նրան մի քանի դուլար փող տամ։ Իսկ յես, ինչպես զիտեք, վոր ներկուհարյուր դուլարս ծախսել եմ դեռևս շատ վաղուց։ Այդ պես ել ասացի, բայց տեսա վոր չհավատաց։ Սակայն մենք իհարկե շատ սիրալիք կերպով իրար հրաժեշտ տվեցինք...

— Յես ինքս նրան դուլարներ կուղարկեմ, — ասաց Սիոնն զգացված։ — յես ունեմ յերկուհարյուր յոթանասուն դուլար։ Կեսը կուղարկեմ կեռնին, կեսն ել մեր տան վրա կծախսենք։ Ինչի՞ համար եմ պահել մինչև հիմա...»

Նա վոգեորդած մոտեցավ՝ վոր հենց իսկույն իրագործի իր ասածը, բայց Գասպարը ձայն տվեց։

— Յես չգիտեմ, թե նա ուր զնաց: Սպասիր մի քանի որ, գուցե հասցեն կուղարկի:

Բայց Սիոնը, վոր մինչև այդ ձեռքը կոխել եր իր չեմողանի մեջ, զարմանքից չոեց աչքերը և կմկմաց.

— Դոլլարներս չկան...

— Ի՞նչպես թե չկան, — ցնցվեց Մամիկոնը:

— Չկան... Ահա...

Յեվ նա չեմողանի ամբողջ պարունակությունը շուր տվեց հատակին:

— Զեմ հասկանում... — գունատված շշնջաց Մամիկոնը, վախենալով իր ուղեղը մտած վատ յենթագրություններից:

— Յես հասկանում եմ, — բացականչեց հանկարծ Գարեգինը. — Նա հարստանալ եր ուղում: Նայեցեք, թե ինչպես ե սկսել իր համակը: — Սիրելի հին ընկերներ և դու, Սիոն... իսկ ինչու Սիոնի անունն առանձին.. Յեվ հետո՝ ռներեցեք նաև հնդհանրապես...

— Լոիր, — վորոտաց Մամիկոնը և վոտն այնպես ուժեղ խփեց հատակին, վոր լսելի դարձավ, թե ինչպես անհանդստացած տաճատերն իր դուռը բաց արեց, յելավ միջանցք, յերեխ նույնիսկ մոտեցավ տղաների դռանը և փորձեց վորեն բան լսել, ապա նորից վերադարձավ:

Սիոնը մոտեցավ Գասպարին, նրա ձեռքից նամակը վերցրեց, զննեց և դիմեց Մամիկոնին.

— Մի բարկանա, Մամիկոն: Լևոնն այս նամակը դրել և դու լարներիս փաթաթած թղթի վրա...

— Դու... լավ դիտես... այդ բանը, — սառած, շշմած, հարցրեց Մամիկոնը:

— Ի՞նչպես թե լավ: Խոմ կույր չեմ: Ահա մատիտով գրածս, վոր մի քիչ մաշվել ե, բայց կարելի յե կարդալ. — յերկուհարյուր յոթանառուն. Սիոննա...

— Գասպար, դու ասացիր, վոր նա այս թուղթը քեզ մոտ գրեց, — դիմեց նրան Մամիկոնը, — Ի՞նչպես յեղավ:

Գասպարը վեր կացավ մահճակալի վրայից, մոտեցավ ընկերներին և սկսեց պատմել.

— Ճիշտն ասած, յես վոր յեկա, նա արդեն տաճն եր: Ինձ վոր աեսավ մի քիչ շփոթվեց: Այ, հիմա վոր մտածում եմ, նոր եմ զգում, վոր շփոթվեց: Յեվ իսկույն հարցրեց.

— Թուղթ ունեմ Գասպար...

— Վոչ, — ասացի և մենք սկսեցինք թուղթ փնտել: Յեռ ուղում եյի Գարեգինի տետրակներից պոկել, բայց նա չթողեց:

— Մի անիր, — ասաց. — Նա կոմունիստ ե: Նրան զայրացնել չարժեն: Յես, — ասաց, — նրա թուղթն սկի արտաքնոց ել չեմ տանի...

Յեվ փնտելով գրանները, գտավ այդ թուղթը... Ուրիշ վաշինչ չեմ կարող ասել...

— Զերբարկալել ե հարկավոր, — վճռեց Գարեգինը, գլխարկը դնելով. — պետք ե հայտնել:

— Կաց...

Յեվ Սիոնը տիսուր կերպով բռնեց նրա թեմից:

— Պետք չեմ... Թող իրեն մնա: Նա նամակի մեջ համարյա պարզ կերպով խնդրել ե ձեղ բոլորիդ և ինձ...

Հանկարծ Մամիկոնը վեր կացավ, յերկու ձեռքով բռնեց Սիոնի պլուխը, ճակատը համբուրեց:

— Գարեգին, — դիմեց նա իսկույն Գարեգինին. — թեև յես խուսափում եմ քեզ հետ գործ ունենալուց, բայց հարկն ստիպում ե... Տուր ինձ մի թերթ թուղթ...

Ապա, թուղթն ստանալուց հետո, դուք հեգնանքով դիմեց մյուսներին.

— Թեև դուք յերեկք գրելու կարիք չեք զգում, բայց սրանից հետո գոնե միշտի կտոր թուղթ պահեցեք... Կարող ե ձեղ ևս պետք գալ: Յեթե չունենաք, ստիպված պիտի լինեք լեռնի նման անզգույշ վարվել կամ ինձ նման ստորանալ ե Գարեգինից խնդրել...

Նա նստեց և խոր լոռության մեջ մի քանի վայրկյան արագ արագ գրեց, հետո գրածը ծալեց, դրեց իր բարձի տակ և դուրս յելավ:

— Ո՞ւր, — կանչեց Գարեգինը նրա յետեմից:

Նա ցնցվեց, կանգ առավ կիսաբաց դուռն միջև:

Գարեգինը մոտեցավ:

— Դու հուզված ես: Ասրճանակը տուր այստեղ...

Յեվ փորձեց իր ձեռքով գրպանից հանել: Մամիկոնն արմունկով կոպտաբար նրան ներս հըեց, յելավ միջանցք և դուռը լրվեկացրեց: Դրանից անմիջապես հետո, լսվեց մի ուրիշ, ավելի դաժան շրիկոց: Կապույտ պատկոմները նետվեցին դեպի միջանցք: Տանտիրոջ սենյակում նույնպես լսվեց աղմուկ, իբրաւանցում և բոլորը դուրս թափվեցին:

Մամիկոնը մեռել եր հենց տեղնուտեղը:

## ՓԵՐՎԱԾ ԿԱՊԱՆՔՆԵՐ

Զրոնվելու համար մի քանի որով շուկա պնալուց աղատված լինելով, Վաչիկն սկսեց թափառել ու մտածել Ուրեմն այդպիս: Վեցկրականին խարեց իրեն, իր հետ զրադեցնել տվեց Արամին, վրապեսզի աննկատելի կերպով հարձակվի վրան... Ուրեմն այդ պատճառով եր, վոր մի քանի որ շարունակ Զոփուռ Ռնիկն ու Վեցկրականին արգելում եյին իրեն՝ հանդիպել Արամին և բան հարցնել: Լավ, շատ լավ, խուժանապետներ, ձեր այդ հնարքը դուք հիանալի եյիք մտածել, բայց Վաչիկն ի՞նչ հանցանք ուներ, վոր դուք այդպես սրիկայաբար ոդտագործեցիք նրան տանջող վիշտը: Դուռ, Վեցկրականի, գոնե թույլ տայիր, մինչև վոր Արամը վորեւ բան հաղորդեր նրա քրոջ մասին: Նա արդեն սկսել եր խոռութեալ, յերբ դու վրահասար: Ի՞նչո՞ւ չթողեցիր, ախ, ի՞նչո՞ւ չթողեցիր...

Այժմ արգեն, Վաչիկն այլես վոչինչ չի կարող իմանալ Աչիկի մասին: Յեթե պնա Արամի մոտ՝ Արամը վոչ միայն վոչինչ չի ասի, այլև իրեն բռնել կտա, իր միջոցով կաշեատի գտնել և բռնել տալ նաև մյուս ծեծողներին: Սակայն բռնելը վոչինչ, — թող իրեն բռնեն, թեկուղ և սպանեն, բայց նախ քան այդ, թող վորեւ տեղեկություն տան իր քրոջ մասին: Այժմ Վաչիկը չի յել պահանջի նրա տեղն իմանալ. — Թող միայն այն ասեն, կենդանի յե, թե մեռած... Բայց վոչ վոք չի անի այդ բանը...

Թե ծեծոցի հետեւալ որը և թե դրանից հետո, Վաչիկը մի քանի անգամ խոսել եր Փասի հետ և խնդրել նրան՝ ճիշտն ասել. — տեսել եր նա Աչիկին ոլիմպիադայից հետո, թե վոչ: Փասը նախ բարկացել եր նրա թերահավատության վրա, ապա մեղմանալով, ավելացրել, վոր նրան տեսել և նույնիսկ Կազաչի Պոստի քայքայումից հետո: Վոջլուը, վոր ներկա եր այդ խոսակցություններից մեկն, հաստատել եր Փասի ասածը: Աչիկը նույն խնդրով մի քանի անգամ դիմել եր նաև իրեն:

Ուրեմն ի՞նչ, Աչիկը կենդանի յե... Բայց ի՞նչու ներկայացման մեջ ցույց են տալիս նրա մահը: Չե վոր ներկայացումը, բոլորի ասելով, վոտքից — գլուխ ճիշտ ե...

Ի՞նչ անել... Ո՞ւմնից իմանալ...

Մի յերեկո, յեր Վաչիկը վերադարձավ խուժանանոց, նրան մոտեցավ Անտերը և ծածուկ հաղորդեց.

— Լսիր, Վաչիկ... Քու քույրիկդ կենդանի յե... Ծեծի հենց հետեւալ առավոտը, Արամը գնացել եր շուկա քեզ վնասրելու, վոր ասեր եղ մասին: Զեր գտել քեզ և ասել եր Փըմբած Դմորդի խուժաններից մի քանիսին, վոր քեզ իմաց տան...

— Ե, դու հավատառում ես, — դառը կերպով ժպտաց Վաչիկը. — Նա եղանակ ասում ե, վոր ինձ խարի բռնիր...

Անտերը մտածեց:

— Գիտեմ, Վաչիկ, Ախմախն ել եր նույնն ասում, բայց յես ուրիշ կարծիքի յեմ... Ախը քեզ ի՞նչի՞ պիտի բռնեն: Վոր բռնեն եւ իսո չեն սպանի: Կըննեն, կտեսնեն. յեթե անմեղ ես, մանեւ վոր չեն սպանի: Կըննեն, յեթե մեղավոր ես ուղղիչ կրթական գաղութ, վորը մանկատանից ել լավ ե...

Իր ցնցոտիները հանած և նրա փոխարեն կանաչ բլուզ հագած, Փասն անցավ նրանց մոտով: Նրանք վախեցած լոեցին: Խոկ յերը նա հեռացավ, Անտերն ավելացրեց.

— Զոփուռը սուտ ե ասում, թե պատկոմները մեղ չեն սիրում, մեղ թշնամի յեն, Սպասիր կանչեմ, տես Ոլոն ի՞նչ եր ասում... Ոլոն, Եյ, եստեղ աբի...

Ոլոն ու Աշոտը, մի-մի կտոր ձմերուկ ձեռներին, մոտեցան:

— Պատմիր Վաչիկի համար են որվա բանը, — ի՞նդրեց Անտերը.

— Վաչիկը որվա... Հա, հիշեցի: — Նա ձմերուկից կտրեց յերկու կտոր, ավեց Անտերին ու Վաչիկին, կերավ իրենը, թեով բերանը սրբեց և պատմեց:

Պատկոմները նրան տարել եյին պլատկոմատուն, նկարներ եյին ցույց տվել, պլատմություններ եյին արել, իրատներ եյին տվել, ամողել եյին, վոր նա վերջ տա իր խուժանությանը, մանկատուն գնա:

— Միթե հենց դու ի՞նքդ չես տեսնում, — ասել եր մեկը, վոր մաքուր լինելն ավելի լավ ե, քան կեղաստ լինելը. կուշտ լինելն ավելի լավ ե, քան սոված լինելը: Ել ի՞նչ ես ուղում: Անելն ավելի լավ ե, քան մանկատուն, մարդացներ ինքններս ենք հրավիրում քեզ. — Պատկոմները մանկատուն, մարդացի ապրիր, սովորիր...

— Յես, — վերջացրեց Ոլոն, — քիչ մեաց ասեյի, թե ի՞նչու չեմ ուղում մանկատուն ընդունվել, բայց հետո լոեցի: Ի՞նչպես համարձակվեյի ձայն հանել: Չե վոր յերդվել եյի Զոփուռ Ռնիկի դանակի վրա...

— Պատկոմները ճիշտ են ասել, մանկատունը շատ լավ ե, — հաստատեց Աշոտը:

Նա սկսեց վեր հիշել այնտեղ անցկացրած մի քանի որը և նրա աչքերը լցվեցին արցունքով: Վաչիկն իր փոքրիկ բռունցը ները սեղմեց և մրմնջաց.

— Ի՞նչ են ուզում ախր մեղանից Զոփուռն ու մյուսները...

— Եդ հարցն ինչի՞ ես տալիս, — մեծավարի նկատեց Անտերը: Դու չդիմես ինչ են ուզում: Ուզում են, վոր գրապան մանես՝ փողն իրենց տաս, գողություն անես՝ տպանքն իրեն տաս: Սպանեցին մեղ...

Առավոտյան նրանք խոսակցությունը վերսկսեցին: Պատճառը յեղավ Վաչիկը, վոր նորից հիշելով իր քրոջը, լաց եր լինում: Սուրբիկն ու Վոջլոտը, վոր նույնակն ներկա եյին, առաջարկեցին նրան.

— Ի՞նչ ես տանջվում: Գնա պատկոմատուն, վերջնական կերպով մի բան իմացիր: Արամը խոր քեզ չի ուտի...

— Ուտում ե՝ թող ուտի, — հայտնեց Վաչիկը, — բայց վոչինչ ել չի ասի:

— Կասի, դու մի կասկածիր, — վստահացրեց Ոլոն: — Յես յերեկ քեզ ի՞նչ պատմեցի:

— Դե թող Սնտերն ու Սուրբիկն ել հետո զան, — առաջարկեց Վաչիկը: — Հետո վոր ընկեր լինի, յես շատ չեմ վախենա:

Ընկերները համաձայնվեցին յերեքով միասին գնալ: Յեվ վարովին եռիկը Վաչիկին կարգադրել եր նորից շարունակել շուկա հաճախելը, նա ևս, իր ընկերների հետ միասին, իջավ դեպի շուկա: Հասնելով այնտեղ՝ նրանք տեսան իրար գլխի հավաքված մարդկանց մի բազմություն և իսկույն մոտեցան: Սուրբիկն ու Աշոտն սկսեցին անդույշ կանգնածների գրապանները դատարկել իսկ Վաչիկն ու մյուսները հետաքրքրվեցին տեսնելու, թե ինչուժն եր բանը:

Դուքս յեկավ, վոր իրար եյին ծեծում Փրփրած Գևորգի խուժանները և յերկու աղատ խուժան, այսիքն վոչ մի տեր չունեցող անապաստաններ: Անտերը դեռ նոր եր սկսել հետաքրքրվել կովի պատճառով, յերբ հայտնվեց Փասը: Նա աչքով արեց Զոփուռ Ոնիկի խուժաններին և հեռացավ: Վաչիկն իր ընկերների հետ հետեւց նրան: Յերբ նրանք յեկան Արտուրյանի, Մորուքի, ձենավաճառի խանութի խաղաղ անկյունը, Փասը հայտնեց.

— Յես եսոր Բողար-Ակոփի տեղն իմացա... Վեր և կացել գնացել և գյուղ... Բանից դուրս և գալիս, վոր նա ծնողներ և ունեցել մենակ թե, նրանք առաջ շատ վատ են ապրել... Հիմի

մարդը գնացել և լավ ապրելու... Վաչիկ, Վոջլոտ, Անտեր, եսոր վեր կկենաք, կգնաք գյուղ, եղ շանը յետ կրերեք: Յես ծնող-մնող չգիտեմ...

— Ի՞նչպես թե զյուղ... բողոքեց Վաչիկը: — ախը յես քաղաքում գործ ունեմ... Ուրիշ մարդ ուղարկիր...

— Ի՞նչ, դու իմ հրամանը չես ընդունում, — բղավեց Փասը: — վոր եղակն ե, հենց դու պիտի գնա:

— Ներողություն, Փաս ջան, — ինդը եց Վաչիկը, — ախը յես իս չեյի ուզում քեզ բարկացնել: Յես պիտի գնամ քրոջս մասին...

— Դու գյուղ պիտի գնաս: Իմ հրամանս ե: Իսկ չինի, — համաձայնեցնող տոնով միջամտեց Սուրբիկը, — վոր մենք Բողար-Ակոփի փոխարքեն ուրիշ խուժան ճարենք: Քեզ համար մեկ ե, թե ով կլինի...:

— Դու խրատնել մի տա ինձ, — ընդհատեց Փասը: — Հենց Բողար-Ակոփին ե հարկավոր, վոր պատժեմ: Պատճելուց հետո ուզում ե՝ թող նորից գնա... Վաչիկ, անպայման կրերեք եղ շանը, թե չե ձեղ կպատժեմ...

Հանկարծ Վաչիկը կարմրեց, լարվեց և կարծես մեծ ձիգով՝ դուրս թոցրեց.

— Չեմ գնա...

— Ի՞նչ... — Հնավատաց Փասը. — Ի՞նչ ասեցիր...

— Չեմ գնա, — գոռաց Վաչիկը. — Եղ ասեցի: Կղնամ պատկռմատուն: Յեթե շատ խոսես՝ քեզ ել կմատնեմ, բայց չեմ գնա: Փասը փայլատակող աչքերով նայեց աջ ու ձախ և դիմեց Ոլոյին.

— Գնա Զոփուռին գտիր...

— Չեմ գնա, — հայտնեց Ոլոն:

Փասը քար կտրեց:

— Ի՞նչպես թե չեմ գնա...

— Հենց եսպես...

— Ես չեք գտիել, յես ձեր... — հայհոյեց Փասը. — Զոփուռին կասեմ՝ բոլորիդ կմորթի: Ես ի՞նչ պայման եք կապել...

Սպանալիքը վախեցրեց յերեխաներին: Փասը նկատեց այդ և նորից հարցրեց:

— Դե հիմի նվ կդնա Զոփուռին կանչելու...

Տիրեց լուղթյուն: Վոչ վոք ձայն չհանեց:

— Գնա, Աշոտ...

— Չեմ գնա:

— Անտեր...  
 — Յես ել չեմ դնա:  
 — Մենք ել չենք դնա, — հայտնեցին Վոջլոտն ու Սուրիկը:  
 Փասն իրեն կորցրեց: Նա գետնից մի քար վերցրեց և վրա հա-  
 սավ Վաշիկին:  
 — Դու քո պետին յենթարկվում ես, թե չե, յես քու հերդ  
 անիծեմ...  
 — Մի հայհոյիր, — նախազգուշացրեց Աշոտը:  
 Փասը շուռ յեկավ դեպի նա և քարը բարձրացրեց.  
 — Աշոտ, կդնամս, թե չե...  
 Նախ քան նրա պատասխանելը, Անտերը յետեց մոտեցավ  
 Փասին և քարը խլեց: Իսկույն բոլորը հարձակվեցին նրա վրա և  
 սկսեցին ծեծել:  
 — Դիմերիս նոր խուժանապետ ես դարձել, — բղավեց Սու-  
 րիկը. — առ քեզ...  
 — Զոփուռու... — անողուտ տեղը բղավեց Փասը:  
 — Զայնդ կտրիր, — սաստեց Վոջլոտը՝ մի հարված հասցնելով:  
 — Դե հրամայիր, տեսնենք ի՞նչպես կրամայես, — հեղնեց Ոլոն:  
 — Հերիք ե, տղաներ, — խոնդրեց Վաչիկը, — թողեք դնա:  
 Մի քիչ ևս ծեծելուց հետո, խուժանները յետ քաշվեցին. Փասն  
 իսկույն վոտքի թուավ և փոշին իր կանաչ բլուզի վրայից թափ  
 տալուց հետո արագ հեռացավ, համարյա փախավ: Հաղիկ մի քանի  
 քայլ արած, նա շուռ յեկավ և բղավեց.  
 — Սպասեցեք... Ես բոպեյիս յես Զոփուռին կրերեմ...

Յեվ արագ վազեց, վորպեսպի չըռնվի: Սակայն յերեխաները  
 չեյին ել մտածում նրան հալածել: Ոնիկի անունը լսելով, նրանք  
 քարացան և իրար նայեցին:  
 — Ես ի՞նչ արեցինք, — մըմնջաց Վոջլոտը:  
 — Հիմի ի՞նչ անենքս...  
 — Զոփուռը կսպանի... Աղնիկ խոսք, կսպանի...  
 — Լսեցեք, տղաներ, — շշնջաց Վաչիկը: — Հիմի ուղենք թե  
 չուղենք՝ պատկոմատուն պիտի դնանք...  
 — Հետո, — հարցրեց Ոլոն:  
 — Հետոն վնրն ե, — ասաց Աշոտը շատապելով և չորս կողմը  
 հայելով. — հետո մանկատուն կընդունվենք: Ուրիշ հնար չկա...  
 — Այո, մանկատուն ընդունվենք, — միացավ Վաչիկը. — քըոջս  
 միաբեկիս յես շատ մանկատներում եմ յեղել: Ենտեղ շատ լավ ե:  
 դնանք...

Բոլորը, շարժվել ու պատրաստ՝ իրար նայեցին, բայց հանկարծ  
 Սուրիկը շփոթված ձայնով հիշեցրեց.  
 — Ի՞նչ եք անում: Ախր Զոփուռը մեղ առանց վրեժի չի  
 թողնի...  
 — Վոր զնում ենք, — յեղրակացրեց Անտերը, — ուղենք թե  
 չուղենք՝ պիտի Զոփուռին մատնենք...  
 Յերեխաները սարսափեցին նրա խոսքերից և արագ շուրջը  
 նայեցին: Մոտակայքում վոչ վոք չկար: Խանութպաններն զբաղ-  
 ված եյին իրենց գործով:  
 — Անպայման պիտի մատնենք, — հաստատեց Վոջլոտը: — Դուք  
 միք վախենա, յես ինքս կմատնեմ:  
 — Կրոնեն վոր... Կփախչի...  
 — Բոնելն ել մեղ ողուտ ե, փախչելն ել: Վոր փախչի, մեղ  
 ի՞նչ վլաս պիտի տա: Դա ել բոնելու նման բան ե:  
 — Զե, ինչու, — հակածառեց Վոջլոտը. — կարող ե քաղաքում  
 թագ կենալ ու գիշերները մեղ սպանել:  
 — Նա եղքան սիրտ չունի, — քաջալերեց Աշոտը:  
 — Ո՞վ, Զոփուռը, — ականջներին չհավատացին Ոլոն ու Վոջ-  
 լոտը. — Ի՞նչ ես դուրս տալիս:  
 — Այո, Զոփուռը, — պնդեց Աշոտը: — Մենք Վեցկրականու  
 մասին ել եյինք ասում, թե անհաղթ ե, վեցկրականի յե, բայց  
 տեսանք ինչպես փախավ... Ո՞վ կհավատար...  
 — Ճիշտ ես ասում, — համաձայնեցին Անտերն ու Սուրիկը:  
 — Դե գնանք, — շտապեցրեց Վաչիկը, — քանի դեռ Փասն ու  
 Ոնիկը չեն յեկել...  
 Նրանք արագ քայլերով շարժվեցին, բայց հասնելով ձկնավա-  
 ճառի դռանը, չկարողացան կանգ չառնել և ըստ իրենց սովորու-  
 թյան՝ Սաթիկին բարեել.  
 — Բարե, քույրիկ...  
 — Բարե, ախալերներ ջան:  
 — Կեցցե աղատ կյանքը, քույրիկ, — ուրախ բացականչեց Ոլոն:  
 — Ի՞նչ ե պատահել:  
 — Գնում ենք պատկոմատուն, — բացատրեց Վաչիկը:  
 — Ինչու յեք գնում:  
 — Գնում ենք, վոր պատկոմ դառնանք, սան դառնանք, — հայտ-  
 նեց Վոջլոտը:  
 — Սուտ եք ասում, — չհավատաց Սաթիկը: — Սուտ չեք ասում,  
 զաշիկ...

— Քույրիկիս արել վկա...  
— Ախ, յերանի ձեղ, — փղձլաց Սաթիկը հանկարծ և սկսեց հեկեկալ. — հազար յերանի ձեղ...

Յերեխաները մի քանի րոպե լուռ կանգնելուց հետո, չդիտենալով իրենց անելիքը, դանդաղ հեռացան:

— Տղաներ, — ձայն տվեց Սաթիկը նրանց յետեից և արցունքները սրբեց: — Յետ յեկեք...

Յերբ նրանք վերադարձան, Սաթիկն զգուշությամբ նայեց դուրս՝ ստուգելու համար, թե արդյոք ամուսինը չի տեսնում, և առաց.

— Յեկեք վերջին անգամ ձեղ ձուկ պատվեմ...

Յեկ մի քանի տապակած ձուկ շտապշտապ լրագրի մեջ փաթաթելով, տվեց նրանց:

— Գնացեք... Վոր հագուստներդ վիսխեք, մի անգամ յեկեք տեսնեմ ձեղ: Վաշիկ ջան, Արամին ել կասես, վոր դա... Ասա, վոր շատ եմ խնդրում...

Յեկ նորից սկսեց արտասվել:

Յերեխաները դանդաղաքայլ հեռացան:

Ասմիջապես Մորուքի խանութից դուրս յելավ Սաթիկի ամուսինը և զսպած կատաղությունից արյունված աչքերով՝ մտավեր խանութը:

— Եղ ի՞նչ տվեցիր լակոտներին...

Սաթիկը շիսթվեց, չկարողացավ սուտ ասել.

— Զուկ... — շանցաց նա:

— Ինչու տվեցիր...

— Քիչ տվեցի, շատ քիչ... Ազնիվ վորբական խոսք...

Բամփն ուժեղ կերպով իջավ Սաթիկի գլխին, հետո յերկրորդը, յերրորդը: Զկնավաճառը բաշեց, աթոռի վրայից վար գցեց վորբուհուն և սկսեց վոտներով հարվածել:

— Առ քեզ քիչ, առ քեզ քիչ... Յես քու կողերդ կփշեմ: Մորուքին ես ապահում, համ, ինձ չես սիրում, համ...

Սաթիկը գլորվեց խանութի մի անկյունը, չորեքթաթ տալով բարձրացավ և սպրդնելով իր արյունոտ մազերի վրա, բղավեց:

— Ինչու յես ծեծում շուն... Այս ի՞նչ արեցիր... Խո չես ուղում սպանել:

— Զայնդ, — վորոտաց ամուսինը, ձկան դանակը վերցնելով. — Վնչ մի ձայն:

Սաթիկն ավել իջեցրեց, նայեց նրա վրա քսված արյունին և մտենալով ամուսնուն, թքեց նրա ուղիղ ճակատին: Հետո նոր մորթված, արյունոտ մի ձուկ շպրտեց նրա դեմքին և դուրս յելավ:

— Դու այլես իմ յերեսս չես տեսնի, դադան, — բացականչեց նա դեպի ներս:

Զկնավաճառը, դեռ դանակը ձեռքում բռնած, դուրս թռավ: Սաթիկը սարսափահար ձչաց և փաթաթվեց մի պատահական անցորդի թեկին:

— Ազատիր, խնդրում եմ, կսպանի...

— Ո՞վ, ում, — հարցրեց անցորդը և նայեց ձկնավաճառին. — որը ցերեկնիվ, մեր իշխանության որո՞ք...

Յեկ սպանալի մոտենալով նրան, սառը կարգադրեց.

— Յետ կորիր...

Վրա հասնող միլիցիոներներն իսկույն ձերբակալեցին նըան: Մի քանի վայրկյանում, խանութի մոտ հավաքվեց անդին բաղմություն: Սաթիկը դուրս յեկալ նըանց միջից և գնաց: Հնդմիշտ դուրս գալով շուկայից, նա հարցրեց հանդիպող առաջին պատկոմին.

— Յեղբայր ջան, վժրտեղ և մեր պատկոմատունը...

## 29

### ԶԿՐԱԿՈՂՆԵՐԸ

Գարեգինը, Սիոնն ու Ոհանն այդ որն աշխատանքից աղատ ելին: Տեքստիկի շինարարությունը, վորի վրա նըանք աշխատում ելին, արդեն ավարտվել եր: Բանվորների մի մասը մնացել եր գործարանում աշխատելու, մի այլ մասն ուրիշ շինարարության վրա յեր փոխադրվել, մի յերբերդ մասն արձակուրդ եր վերցրել: Արձակուրդ ելին վերցրել նաև կարմիր սկառտեները: Նըանք մտածում ելին արձակուրդից հետո մի այլ տեղ աշխատելու մասին և միայն Գասպարն եր, վոր շարունակում եր մնալ անգործ ու պարապ: Գարեգինը դեռ ապրում եր նըանց հետ միենաւյն սենյակում, բայց Մամիկոնի մահից հետո Գասպարն այլևս առաջվա նման չեր պնդում նրա հեռանալու վրա: Այժմ նա նստած դիր եր անում, իսկ Սիոնն ու Ոհանը մահճկաների վրա պառկած, լուռ մտածում ելին: Գլըսում շոգ կեսոր եր և նըանք չելին ուղում փողոց յելնել: Գասպարը, վոր դպրոցների փակվելուց իվեր սկսել եր հաճախակի

հանդիպել Ալբերտյանին և Անուշավանին, այժմ նույնպես, գնացել եր նրանց մոտ:

— Այսոր ուղիղ տաս որ և Լևոնի փախչելը, — ասաց հանկարծ Ոհանը:

Գարեգինը զիրն ընդհատեց:

— Այո, — ասաց նա: Տաս որ...

Նորից լոռություն ալիքց:

— Տեսնես վճռտեղ է, հիմի Լևոնը, — հարցրեց Ոհանը քիչ հետո. — լավ թագնվեց բոհվելուց:

— Այո... — նորից զրելն ընդհատեց Գարեգինը: — Թագնվեց... Բայց յեթե Մամիկոնը չխնդրել, յես հենց նույն որը կտեղեկացնելի միլիցիատուն, նրան կրօնելին...

— Յես գիտեմ Լևոնի տեղը... — դանդաղ հայտնեց Սիոնը, շարունակելով առաստաղին նայել:

— Գիտե՞ս, — զարմացավ Գարեգինը, զրելը բոլորովին թողնելով: — Վճռտեղ ե:

— Մի զյուղում... Յեզ և առել, կով, վոչխար, առանձին տուն ունի: Ասում են՝ մշակներ ել ունի:

— Ուրեմն իր նալատակը կատարվեց, հարստացավ, — քմծինաղով յեղակացրեց Ոհանը:

— Այո...

Գարեգինը լիզեց իր հաստ շրթունքները և սկսեց մտածել:

— Բա ի՞նչ ես մտադիր անել, Սիոն, — հարցրեց նա քիչ հետո:

— Վոչինչ: Թող ուտի՝ քթից զա: Մեռնելուց առաջ Մամիկոնն իմացավ, վոր յես նրան վասու չեմ հասցնելու: Ճակատու համբուրեց... Յես վորոշումս չեմ փոխի:

Լոեցին: Գարեգինը փորձեց զիրը շարունակել, բայց հետո թողեց: Սիմոնն առաջվան նման առաստաղին նայելով, կարծես խուսափելով ընկերների հայացքին հանդիպել, ավելացրեց.

— Յես յերեկ նրան մի զրություն ուղարկեցի, — Շեն ջան ջան, ստացիր այս յերկու հարյուր յոթանասուն դոլարը վորպես նվեր իմ կողմից... Թող չկարծի, թե ուղում եմ իրենից վրեժ առնել: Կեղտոտ սրբիկան... Կերակ մեր Մամիկոնի գլուխը...

— Վոչ, Սիոն, — ընդհատեց Գարեգինը: — Մամիկոնին սպան իր ընդհանուր հուսահատությունն եր: Լևոնի գեպքը յեկավ միայն չկերծին կաթիլն ապկելացնելու: Հիշմամ ես Մամիկոնի գրածը. «Սիրելի ընկերներ և հատկապես սիրելի Գարեգին: Յես մեռնում եմ հուսահատված իսկական սկառտիզմից և իսկական

սկառտներից: Յերեկի ճիշտ եր, վոր մեր շարժումը դատապարտված եր մահվան և նրա տեղը պիտի բռնելին պատկոմները: Բայց յես ուժ չունեյի անցնելու նորի կողմը: Ներեցեք...»

— Բայց Սիոնը՝ ճիշտ ե ասում, — պաշտպանեց Ոհանը: — Յեթե Լևոնի գեպքը չլիներ, Մամիկոնը կենդանի կմնար և գուցեկիութեր, կանցներ եղ նորի կողմը...

Գարեգինը մտածեց մի բողե, ապա հարցրեց.

— Յեթե եղաքս ե, դուք ինքներդ կենդանի յեք: Դուք ինչուշեք անցնում նորի կողմը...

Նախքան այդ հարցին պատասխանելը, դուռը բացվեց և Գասպարը նորից մոռյլ, զայրացած, ներս մտալ:

— Տեսամք խայտառակությունը, — վիճաց նա, առանց նստելու:

— Ի՞նչ և պատահել, — հարցրեց Գարեգինը:

— Պատահեց այն, ինչ վոր սպասում եյի: Վերջին կայծերի խմբակները բաց են արված:

Կարմիր սկառտները լուս քարացան:

— Այո, — շարունակեց Գասպարը. — Յես միշտ դպում եյի, վոր եղ բանը պիտի պատահի: Քանի դեռ դպրոցները բաց եյին, լումբակներն ուժեղ աշխատում եյին և թույլ չեյին տալիս, վոր պատմական ապիտացիան թունավորի բոլոր աշակերտներին: Բայց հենց վոր ամառային արձակուրդը յեկավ, խմբակների աշխատանքն այլես անհնար դարձավ, իսկ պատկոմներին ընդհակառագիր առաջ կորովնետեև նրանք կազմակերպություն ունեն, ակումբ ունեն, բազմաթիվ են, համարյա բռլորին իրենց կողմն են քաշել: Ալբերտյանին ու Անուշավանին մատնել ենց ինքը — Ժաննան...

— Ժաննան...

Տիրեց յերկարատե լոռությունը:

— Հետո, — հարցրեց Գարեգինը:

Գասպարը կարծես քնից սթափվեց, նայեց նրան և իր մոտ կանչեց.

— Յես քեզ հետ առանձին խոսելու բան ունեմ...

Նրանք դուրս յելան միջանցք:

— Յես պետք ե գնամ պատկոմատուն, — շտապ հայտնեց Գասպարը:

Գարեգինը սպասողական նայեց նրան:

— Պետք ե անպայման աշխատեմ մտնել պատկոմական կազմակերպության մեջ: Քիրաղն ու Պոլսեցյանը չափազանց ճիշտ են մտածել. — միայն այդ ձեռվ և հնարավոր հաջող պայքարը...

Գարեգինը նորից ձայն չհանեց:

— Բոլոր դպրոցների վերջին կայծերից, — շարունակեց Գասպարը, — ինձ ճանաչում են միայն Ալբերտյանն ու Անուշավանը՝ Յես նրանց վրա վստահ եմ: Նրանք ինձ չեն մատնի... Իսկ դժւ...  
— Ցիս...

— Այս, Գարեգին: Գիտեմ, դու ամբողջ հոգով մյուսների հետ ես, բայց աղնիվ տղա յես: Մի խանգարիր ինձ, Գարեգին: Յեղիր աղնիվ: Պայքարիր՝ վոր կողմում վոր կուղես, բայց ինձ ես թույլ տուր պայքարել՝ վոր կողմում վոր ուղենամ...

Գարեգինն իր հաստ շրթունքն առավ ատամների տակ և սկսեց մտածել:

Գասպարն ակնհայտորեն շտապում եր: Նա քրտինքը թաշկին նակով չորացրեց, ձեռքը զրեց ընկերոջ ուսին և ասաց մտերմությամբ:

— Սպառնալիքի տեղ չընդունես, Գարեգին, բայց յեթե մատնության դիմես, յես ել կարող եմ նույն կերպ վարվել: Զե՞ վոր դու յել ես յեղել աչքի ընկնող հայ արի: Գալով վերջին ժամանակաշրջանին, բոլորովին ել դժվար չե նույն կերպ ապացուցել: Թե դու բոլորից ավելի համառ կերպով շարունակել ես դադանի աշխատանք տանել...

Յեվ Գարեգինի շփոթված ու մտածկոտ լոռությունը համաձայնության տեղ ընդունելով, նա արագ դուրս յելավ և հաստատուն քայլերն ուղղեց դեպի պատկոմատուն: Գարեգինը մտավ սենյակ:

— Իսկ Գասպարն ուր ե, — հետաքրքրվեցին ընկերները:

— Գնաց...

Յեվ նստելով սեղանի մոտ, մտամոլսր կերպով կրկնեց.

— Գնաց պատկոմատուն...

Սիոնն ու Ոհանը լրջացան: Սկսեցին մտածել: Գարեգինը վերցրեց գրչակոթը և սկսեց խաղ անել:

— Մեր տեքստիլի պատկոմներն ու կոմյերիտականները, — կարծես ինքնիրեն, սկսեց խոսել Ոհանը, — առաջարկ են արել՝ գործարանի բացման որն ինձ ել նվեր տալ, երբեւ լավ աշխատողի...

— Ինչու համար ես ասում... — հարցրեց Գարեգինը:

— Վոչինչ... Հենց ենպես...

Սիոնը թեթև ժպտաց.

— Ոհան... Հիշում ես, Ոհան, յերբ Արշալույսն առաջին անգամ յեկավ տեքստիլ... Նա քեզ քու քթիցդ ճանաչեց...

— Կատակով ասաց... — Ժխտեց Ոհանը:

Նորից լոռություն տիրեց:

— Նրանք միշտ ուրախ են... Նրանք միշտ կատակներ են անում... — Հաստատեց Գարեգինը:

— Ո՞վքեր, նրանք...

— Պատկոմները, կոմյերիտականները... Յեվ առհասարակ նոր կյանքի մարդիկ...

— Յես մի բան չեմ հասկանում, Գարեգին, — զիմեց Սիոնը նրան, — ախր կապույտ պատկոմներն ինչու վոխ չեն պահել մեր դեմ... Մի անգամ Վարդանն ինձ վիրավորեց, բոլորը հարձակվեցին նրա վրա... Հենց ինձ մոտ:

— Վ՞ի՞ս...

Գարեգինը մտածեց:

— Ի՞նչ վոխ պահեն, — շարունակեց նա մի քիչ հետո. — Նրանք դեռ հույս ունեն, վոր մենք կուղղվենք: «Դուք ել մեղ նման, — ասաց ինձ Սմբատն այս որը, յերբ Մամիկոնի նամակը տարակապույտ պատկոմների մոտ կարդալու, — աշխատավորների զավակներ եք, ինչու չեք ծառայում աշխատավորների շահերին: Մի կողմից բանվոր եք, մյուս կողմից՝ ով զիտե ինչ տեսակ մութ գործեր եք անում: Անուններդ դրել եք կարմիր սկառուտ, բայց ելի կապույտ սկառուտ եք»...

— Ճիշտ ե ասել... — Համաձայնեց Ոհանը:

Գարեգինն ու Սիոնն իրար նայեցին:

— Բա Գասպարն աշխատավորի զավակ չե՞, — զիմեց Սիոնն Ոհանին. — Ինչու յե շարունակում սկառուտական պայքարը, քանի վոր սկառուտները հարուստների նպատակներին են ծառայում:

— Սկառուտական ազիտացիայով ամենալավ աշխատավորի տղային նույնիսկ կարելի յե մոլորեցնել փչացնել, — Ոհանի փոխարեն պատասխանեց Գարեգինը, — բայց ինչ վերաբերում ե խարեն պատասխանեց Գարեգինը, ինչ վերաբերում է Գասպարին՝ նա մեր գյուղի ամենահարուստ մարդու տղան եր...

Նորից տիրեց յերկարատե լոռություն: Հանկարծ Գարեգինը գնաց — կանգնեց սենյակի կենտրոնում և կարծես գիմելով հաղարավոր մարդկանց, բղավեց.

— Ընկերներ, ինչու յենք թույլ տալիս, վոր այդ սրիկան մտնի պատկոմների շարքը, ներսից քայքայի նրանց, կարի նրանց ուրախությունը, նրանցից ստրուկ պատրաստի: Յես ինքս այդ յուրաքանչյուր չեմ տա, ընկերներ... Մամիկոնի մահը յեկավ ապահուցելու, վոր մեղ յերկու ճանապարհ ե մնացել — կամ կրակել մեղ վրա, կամ չկրակել... Տվեր գլեարկս...

Սիոնն ու Ոհանը վեր կացան:

— Իսկ նրանք մեղ չեն վռնդի... — այնուամենայնիվ, կասկած հայտենց Սիոնը և իսկույն ել զղջաց, բայց արդեն ուշ եր: Ոհանը դայրացավ և հարցրեց.

— Նրանք յերբ են քեզ վռնդել, համար: Եղ՝ քու հարազատ ընկեր, գաղափարակից Ասոնն եր, վոր փողերդ գողացավ... Վերցրու գլխարկդ:

Դուռը փակելու ժամանակ, Ոհանը Գարեգինից մատիտ խընդրեց, «Կարմիր սկառտներ» բառերից ջնջեց «սկառտ» բառը և փոխարենը «պատկոմ» դրեց, իսկ իրենց անվանացանկից, ուր արդեն չկար Մամիկոնի անունը, ջնջեց նաև Գասպարինը:

Նրանք քայլերն ուղղեցին դեպի պատկոմտառն:

### 30

## ԲՈԼՈՐ ՊԱՏԿՈՄՆԵՐԻ ՇՏԱԲԸ

Բարկենի սենյակը լիքը լցվել եյին հրահանդիչներ, կոլվարներ, պատկոմական ակտիվ աշխատողներ: Յեկել եր նաև կոմյերիտմիության գավկոմի քարտուղար Հրայրը, վորը միևնույն ժամանակ պատկոմական շտարի անդամ եր: Սենյակում տեղ չկար: Իսկ յերբ ներս մտան ևս մի քանի ուրիշները, պարզ գարձավ, վոր նույնիսկ բաց արած լուսամուտները չպիտի կարողանան ոգնել՝ տոթից աղատվելու: Մեկն առաջարկեց իջնել ներքեի հարկը, բաց անել ընթերցարանը և այնտեղ կատարել նիստը. բայց բոլորը մերժեցին, վորովհետև դա մի քանի ըռողե պետք ե խելք, իսկ նրանք ուղում եյին վորքան կարելի յե շուտ սկսել:

— Կարիք չկա, նիստը բաց արա, — սկսեցին բացականչել Ասահիտը, Հրաչը, Աշոտը, Միհրանը, Վարդանը: Բարձրացավ աղմուկ:

— Բացված ե, բացված ե, — հանգստացրեց Բարկենը: — Յեղբայր, ձեղ ասում են՝ բացված ե: Յեթե ուղում եք՝ ահա նորից եմ բաց անում... Նստեցեք, ընկերներ, մի կերպ տեղավորվեցեք...

Ամենից առաջ կարդացվեց հեռագիրը, թեև նրա բովանդակությունն արդեն հայտնի յեր դարձել բոլորին. — «Պատկոմական կազմակերպության Լենինականի շտարին: Վորոշված ե պատկոմաների Համահայաստանյան յերկրորդ հավաքը կատարել Լենինականում, հաջորդ գարնանը: Կենտրոնական շտար:

Հետո խոսեց Բարկենը: — Այս հեռազիրը — ասաց ինա, — ծանր ու դժվարին պարտականություններ և դնում մեղ վրա... Մենք պետք ե նախապատրաստենք հավաքը և ինքներս ամենից լավ կերպով հանդես դանը այդ հավաքին: Հարկավոր ե աշխատել յեռանդով, ուժեղացնել մեր բոլոր աշխատանքները, — Փիղկուլտուրա, մտավոր կրթություն, աշխատանք դպրոցներում, մանկատներում, ափառացիա ընտանիքներում, պայքար պատանիներին հակախորհրդային ճանապարհով տանել ցանկացողների դեմ: Դեռ վերջերս եր, վոր վոչնչացը ինք վերջին կայծերի խմբերը, խլեցինք նրանց հետեւից գնացող պատանիներին: Բայց միթե մենք լիազար կերպով հաղթել ենք և այլևս վոչինչ չկա անելու...

Իր խոսքի վերջում Բարկենը հատկապես կանգ առավ անապատան յերեխաների հարցի վրա: Հարկավոր ե նրանց հավաքել, մանկատներում տեղակարգել, վորը ձիշտ ե, դեռ շատ դժվար է պետության համար, բայց անհրաժեշտ ե: Իրենք, պատկոմները, պետք ե առանց բացառության անդամապրվեն Անապատան Մանուկների Բարեկամների Ծնկերությանը և անդամապրվեն Անապատան Մանուկների հարցերությանը և անդամապրել Ճանապարհություններին: Մի խոսքով, հարկավոր և աշխատել բոլոր բնակառներում, վոր յերբ զա համահայաստանյան պատկոմապետը և հարցնի՝ պատրամատ եք, մենք վոչ թե վախվիսելով, այլ ամբողջ ձայնով վորոտանք. — միշտ պատրամատ ենք...

Խոսելիս, Բարկենը վողելորվեց, փոթորկվեց և յերբ վերջացրեց, բոլորը նրան բուռն կերպով ծափահարեցին: Արամի սկսեց նախազաներ և ձայն տվեց կոլվար Աշոտին: Նույն ըոպելին դուռը կիսարաց յեղավ և Աչիկն իր դանդուր գլուխը ներս բերեց:

— Արամ... Բարե: Յեկել եմ:

Բոլորը ծիծաղեցին:

— Գնա մեղ մոտ, Աչիկ ջան, — ասաց Հրաչը. — Արամը ժողով բւնի:

— Շուտ կդմա, Արամ:

Պատկոմները նորից ծիծաղեցին: Բարկենն անհանդիսա շարժումներ արավ: Աչիկն զզաց, վոր խանդարում ե և շտապեց գնալ:

— Լավ, — ասաց նա. — յես կդնամ ձեր սենյակը, Միհրանի շինած խաղալիքին կնայեմ: Ազնիվ խոսք, ձեռք չեմ տա: Դու դեռ վաշիկին չե՞ս գտել, Արամ...

Վերջապես նա դուռը ծածկեց և պատկոմները դադարեցին ծիծաղելուց: Աշոտն անմիջապես սկսեց առաջարկներ անել.

— Յես առաջարկում եմ կադմել հավաքը նախապատրաստող յեղյակ՝ կուսդավկոմի, կոմյերիտգավկոմի բարտուղարների և Բարկենի մասնակցությամբ:

— Ճիշտ ե, — ձայն տվեցին բոլորը:

— Հետո, առաջարկում եմ հենց վաղվանից, մեր շտաբի մի քանի նիստերում լսել զյուղներահանգիչների ու քաղաքի կողմանը ների զեկուցումներն իրենց կոլեկտիվների մասին, վաղգենի զեկուցումն ակումբի մասին, շտաբի ֆիզկուլտ և կուլտկրթական բաժինների զեկավարների զեկուցումներն իրենց աշխատանքների մասին: Գուրգեն, — դիմեց նա ֆիզկուլտ բաժնի զեկավարին, և դու, Աստղիկ, — դիմեց նա կուլտկրթական բաժնի զեկավարին, — բայց զեկուցումներից, պատրաստեցեք նաև հետագա աշխատանքների ծրագիրը...

Նրա խոսքերը ևս ծածկվեցին ծափահարություններով: Դուռն անմիջապես բացվեց և մի պատկոմ, վորը յերեխ վաղուց եր սպասում, բայց ներս չեր մտնում՝ վոր խոսողին չփանգարի, մտավ, մոտեցավ Բարկենին ու Արամին, և փափաց.

— Հինգվեց խուժաններ յեկել են, վոր պատկոմ ընդունվեն: Պատկոմապետներն ուրախացան: Լուրն անմիջապես հաղորդեցին մյուսներին:

— Ի՞նչ ես կարծում, Արամ, — հարցրեց Բարկենը, — չուզարկեմ նրանց Թամիրչյանի մոտ: Թող ընդունի մանկատուն, հետո մենք կգնանք կտեսնենք: Մեր նիստը յերեխ շատ ե յերկարելու: Թող իդուր չսպասեն: Սոված կլինեն...

Հանկարծ Արամի մտքով անցավ, վոր գուցե վաշիկն ել և նրանց հետ:

— Իսկ անուններն իմացմար, — հարցրեց նա պատկոմին:

— Վոչ:

Արամն ուզում եր դուրս յենել մի բոպեյով, բայց նույն ըսպեյին վեր կացավ Անահիտը, սկսեց խոսել: Պատկոմը գնաց:

— Թող մի քիչ սպասեն, — բղավեց Արամը նրա հետեկից:

Իսկ յեթե վաշիկն ել ե յեկել... Արամի սիրտն սկսեց թպըրտալ: Յեթե յեկել ե վաշիկը... Նա դեռ չգիտե, վոր իր քույրն ել ե այստեղ, յերկրորդ հարկում... Բայց հանկարծ նա չիջնի՞ վար և նրանք միմյանց հանդիպեն առանց իր ներկայության... Վոչ,

ինքն ուզում ե անպայման ներկա լինել, անպայման տեսնել... Նա մոտեցավ լուսամուտին և նայեց ներքե, զեպի բակը: Խուժանները հստած եյին այստեղ, քարերի վրա, բայց համարյա բու

զորովին չեյին յերեսւմ, վորովհետեւ պատկոմները շրջապատել եյին նրանց:

Դուռը նորից բացվեց ու վայրկյանապես փակվեց: Բայց այդ մի վայրկյանում նույնիսկ, Արամը ճանաչեց ներս նայող Սաթիկին: Նա արագ վեր ցատկեց տեղից և զարմացնելով բոլորին, նետվեց դեպի գուռը: Վոչ, այս անգամ նա չի ուշանա, վորպեսզի Սաթիկը նորից կորչի...

Նա արագ գուրս յելավ միջանցք և նայեց: Աղջիկը կանգնած եր այնտեղ սպասողական դիրքով:

— Սաթիկ ջան...

— Արամ... — հեկեկաց աղջիկը և փաթաթվեց նրան: Նրանը համբուրվեցին և քիչ մնաց, վոր Արամն ինքն ել արտասվեր: Նա ցույց տվեց իր ընկերների սենյակի դուռը և ասաց:

— Մտիր այնտեղ, Սաթիկ ջան: Մենք ցուտով կվերջացնենք... Այնտեղ մի փոքրիկ աղջիկ կա, զբաղվիր նրա հետ, մինչև մենք գանը: Իմ լավ ընկերուհի Սաթիկ ջան... Զգնաս, վոչ մի տեղ չգնաս, յես հազիվ եմ գտել քեղ...

Սաթիկը գնաց իրենց սենյակը: Իսկ նա նորից մտավ ներս: Խոսում եր զյուղներահանգիչ Ստեփանը: Արամը վորքան աշխատեց իր ամբողջ ուշադրությամբ լսել նրան, չկարողացավ: Շարունակ խանդարում եյին Աչիկն ու Վաչիկը, խուժանները, Սաթիկը:

Դուռը թիթիկացրին:

— Կարելի՞ յե, ընկեր Բարկեն, — լսվեց Գասպարի ձայնը:

— Մտիք, — տարակուսած ձայն տվեց Բարկենը:

Նախկին հայ արին մտավ ներս և իսկույն տեսնելով հավաքույթը, յետյետ քաշվեց:

— Ներեցեք, — մտաց նա. — յես չզիտեյի թե նիստ եք անում: Անհարմար ժամանակ մտա ներս... Կամ գուցե հարմար ժամանակ, վորովհետեւ յես յեկել եմ խնդրելու, վոր ինձ ընդունեք պատկոմական կազմակերպության մեջ աշխատելու: Քննեցեք խնդրեմ նաև իմ հարցը... Մամիկոնի մահն ինձ մեծ խրատներ տվեց և վերջնականապես համոզեց, վոր սկառտալիմը պետք ե վոչնչացնել, իսկ պատկոմներին... Յես այստեղ միջանցքում կսպասեմ, ընկերներ...

Նա դուրս յելավ: Ժողովականներն ուրախացան և քարտուզարն իսկույն ընթացիկ հարցերի մեջ մտցրեց Գասպարի դիմումը: Հավաքի մասին վերջին խոսքը վերցրեց Հրայրը:

— Պատկոմական շտաբի կոմյերիտական բջիջը, — ասաց նա, — յերբեք այնպիսի դժվար ու պատասխանատու գործերի առաջ կանգնած չի յեղել, ինչպես հիմա: Նա իր կոմյերիտական հարահանգիչներով ու կոլվարներով որինակ պետք ե տա մյուսներին. պետք ե հեշտացնի շտաբի դժվար աշխատանքը: Մեր լոգունդներն են. — կատաղի պայքարի սկզբութիղմի մնացորդների և մյուս հակախորհրդային ձգտումների դեմ. վոչ մի պատահի պատկոմական կաղմակերպությունից դուրս. ամեն մի պատկոմ պետք ե կազմակերպության մեջ գրավի մի այլ պատանու. վոչ մի անպարտաճանաչ պատկոմ՝ թե իր կոլեկտիվի կյանքում, թե դպրոցում, թե ընտանիքում. բոլոր անապաստաններին դեպի մանկատները. պատրաստենք կոմյերիտականների լավագույն փոխարինողներ: Պատկոմներ, այս ամենի համար պատրամատ եք:

Ամբողջ նիստը թնդաց. — միշտ պատրաստ ենք: Վորոտացին «ուռա», «կեցցե» բացականչություններ, բայց յերբ նրանք լոեցին, ներքմից լովեցին ավելի ուժգին, ավելի բազմաժեռոր բացականչություններ: Բոլորը զարմացած, մոտեցան լուսամուտներին: Ներքելում մի քարի վրա կանդնած. — Գարեգինը խոսում եր վագործած և հարյուրավոր պատկոմներն իրենց պարապմունքները թողած լուսմ եյին նրան:

— Յեվ ահա, — լսվեց Գարեգինի ձայնը: — մեր ու ձեր սիրելի Արամին ծեծել տալուց հետո, հաղար ու մի քրեական հանցանքներ կատարելուց հետո, այժմ այդ սրիկան վորոշել ե մտնել ձեր շաբքերը՝ Վահան Քիրաղի և նրա նմանների հրահանդները կատարելու, ձեզ քայլայելու համար: Բայց վոչ յես, վոչ Սիոնն ու Ոհանը, այդ բանը չեյինք կարող թույլ տալ... Կորչի...

Սանդուխը աստիճանների վրա լսվեց խուճապային կերպով վար իջնող մեկի արագ վոտնաձայնը: Ժողովականները նետվեցին դեպի դուռը: Յերբ յելան միջանցք, Գասպարն արդեն սլացել եր վար: Իսկ յերբ իջան վար, նա արդեն դուրս եր նետվել դարպասից և անհետացել: Աչիկն ու Սաթիկը, վոր նույնպես լսել եյին հայաթից յեկող բացականչությունները, իսկ հետո ներքեւ շտապող ժողովականների վորոտալի վոտնաձայները, նույնպես շտապեցին իջնել բակ:

Պատկոմները, խուժանները, կարմիր սկզբութիւն իսկույն խմբեցին պատկոմապետերի շուրջը: Բարկենն անչափ վոգեսոր ված, ձեռքը բարձրացրեց, Արամն ու Հրայրն շտապեցին դեպի նոր պատկոմները, բայց նույն բոլեյին լսվեց ուրախության ճիչ:

— Աչիկ ջան, քույրիկ ջան...

Պատկոմների պանդվածը ձեղքելով, փալասներ հազած Վաչիկը նետվեց դեպի քույրը:

— Վաչիկ ջան, անուշ ախպեր ջան...

Նրանք գրկեցին իրար, թուշթշի տվեցին, հետո համրուքվեցին, հետո միանգամբից սկսեցին ուրախ զոռոցով լաց լինել և միաժամանակ ծիծաղել իրենց լացի վրա:

Հրայրը, Արամը, Բարկենը, նետվեցին դեպի յերեխանները, լուսական իրար ձեռքից, սկսեցին համրուքել: Խուժաններն ու պատկոմները, կարմիր սկզբութիւններն ու կապույտ պատկոմները գրկախառնվեցին ընդհանուր ուրախության մեջ և բառեր չգտնելով այդուրախությունն արտահայտելու, միահամուռ ձայնով, նույնութեան պես բացականչեցին:

— Աչիկ ջան, Վաչիկ ջան...



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Ծնկեր Վաչագան Փուտոյանը . . . . .	5
2. Սկառուս № 89-ի հայրենիքում . . . . .	8
3. Ցերել հարյուր աշխկ . . . . .	12
4. Մանկատերում . . . . .	15
5. Հուսահատուրյուն . . . . .	18
6. Վերջին մանկատունը . . . . .	22
7. Հիւատակ յեվ նույս . . . . .	26
8. Անտառուն կողմար . . . . .	31
9. Կապույտ պատկումները . . . . .	34
10. Կարմիր սկառուսներ . . . . .	39
11. Զոփուռ Ռնիկ . . . . .	46
12. Խուժանանցում . . . . .	49
13. Հին ծանոքների տուկան . . . . .	61
14. Համագործակցություն . . . . .	69
15. Խաճուրպանի կինը . . . . .	75
16. Հին ընկերունու վերադարձը . . . . .	80
17. Նոր բաղադրի ժեմֆին . . . . .	86
18. Վերադարձ ողեր . . . . .	91
19. Չեզոք Ալբերտյանն ու իր ընկերները . . . . .	97
20. Գաղտնի վարժապետը . . . . .	101
21. Ցերուրդ սերունդը . . . . .	107
22. Կյանքն աշխերի առջեկ . . . . .	112
23. Առաջին ել կա, առաջին ել . . . . .	120
24. Հին ոչախի տուրզը . . . . .	123
25. Վրեմիսնդրություն . . . . .	127
26. Բոլորովին անսպասելի հանդիպում . . . . .	134
27. Ո՞ւր ե Վաշիլը . . . . .	142
28. Փօրված կապաններ . . . . .	154
29. Զերակողները . . . . .	161
30. Բոլոր պատկումների տարբ . . . . .	166

Отв. ред. С. Саркисян  
Корректор Аи. Давтян

Мкртич Армен

П Е Р В Ы Е  
П И О Н Е Р Ы

(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении.  
Москва, Армянский пер., 2. Зак. 1384.  
Главлит № Б—12975. Изд. № 3242. Т. 4100.  
Сд. в наб. 25/IX-35 г. Подписано к печ.  
20/X-35 г. Печ. л. 11. В 1 п. л. 38000 из и:

ՀՀ Ազգային գրադարան



NL0392815

ԳԻՒԾ 3 Ռ.

7324